Հայաստանի Գիտությունների
Ազգային Ակադեմիա
Արեւելագիտության Ինստիտուտ

ԱՒԵՏԻՍ ՓԱՓԱԶԵԱՆ

ՀԱՅԵՐԻ ՅԵՂԱՍՊԱՆՈՒԹԻՒՆԸ ԸՍՏ ԵՐԻՏԹՈՒՐՔԵՐԻ ԴԱՏԱՎԱՐՈՒԹԵԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ

ԼՈՍ ԱՆՃԵԼԷՍ
2005

Այս գրքին հրատարակութիւնը
կարելի դարձաւ
նիւթական օժանդակութեամբ
հետեւեալ ազգայիններու՝

ՎԱՐԴԳԷՍ ԵՂԻԱՅԵԱՆԻ

Խաչիկ եւ Սեւան Յակոբեանի

Եւ ի յիշատակ՝

† Զաւէն Կանիմեանի

† Սարգիս եւ Ժագլին Չափարեաններու

† Կարլեն Պարսամեանի

† Երուանդ Իգնատիոսեանի



Փրոֆ. Աւետիս Փափազեան

ᎠᏂᏍᏕᏲᏅᏍᏗᏲᏅᏍᏗᏲᏅᏍᏗ

Գրքում հայերէն թարգմանութեամբ տրուած են 1919 թ. Կոստանդնուպոլսում տեղի ունեցած երիտթուրքական կուսակցութեան ղեկավար գործիչների դատավարութեան այն փաստաթղթերը, որոնք առընչվում են արեւմտահայերի զանգուածային տեղահանութեան ու ջարդերի հետ: Նիւթերը վերցուած են 1919-1920 թթ. Կ. Պոլսում հրատարակուող «Թաֆվիմ-ի վեֆայի» թուրքական պաշտօնաթերթից: Երկրորդ անգամ հրապարակուող փաստաթղթերի այս ամբողջութիւնը, ի թիւս այլ վաւերագրերի, անհերքելիօրէն վկայում է երիտթուրքական կուսակցութեան կենտրոնական կոմիտէի ու կառավարութեան կողմից ծրագրուած հայերի ցեղասպանութեան փաստը, որն այսօր փորձում են ժխտել թուրք պետական գործիչներն ու պատմաբանները:

Նախատեսուած է մասնագէտների եւ ընթերցող լայն շրջանակների համար:

Հրատարակութիւն՝
«ՆՈՐ ՀԱՅԱՍՏԱՆ» Օրաթերթի
Հեռախօս՝ (818) 246-6468
Կլենտէյլ — Գալիֆորնիա

ՊԱՏՄԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹԻՒՆ ՈՒՆԵՑՈՂ ԴԱՏԱՎԱՐՈՒԹԻՒՆ, ՈՐԻ ՎՃԻՌՆԵՐՆ ԱՆԲԵԿԱՆԵԼԻ ԵՆ

1988 թ. Հայաստանի Գիտութիւնների Ակադեմիայի Արեւելագիտութեան Ինստիտուտը լոյս ընծայեց «Հայերի Ցեղասպանութիւնը ըստ երիտթուրքերի դատավարութեան փաստաթղթերի» խիստ արժէքաւոր գիրքը: Այն հրատարակութեան էր պատրաստել, օսմաներէնից հայերէն թարգմանել, ծանօթագրել եւ առաջաբան գրել, վաստակաշատ թուրքագէտ, օսմաներէնի հմուտ գիտակ, Օսմանեան կայսրութեան պատմութեան տարբեր հարցերին նուիրուած մի շարք հետաքրքիր եւ ուշագրաւ ուսումնասիրութիւնների ճանաչուած հեղինակ՝ Աւետիս Փափազեանը: Դա մի անակնկալ էր, իսկական յայտնութիւն ոչ միայն հայ հասարակութեան, անգամ մասնագէտների համար: Հայ հասարակութիւնը եւ գիտական լայն շրջանակները մինչեւ փրոֆեսոր Ա. Փափազեանի կողմից դատավարութեան նիւթերը, այդ թւում եւ նիստերի արձանագրութիւնները հրատարակելը, անտեղեակ էր, որ թուրքական սուլթան Մեհմետ 6-րդ Վահիտէտտինի հրամանով դեռեւս 1919 թ. ստեղծուել էին Ռազմական արտակարգ ատեաններ՝ դատելու համար երիտթուրքական կուսակցութեան ղեկավարներին ու կառավարութեան նախարարներին այն յանցանքների համար, որ նրանք իրագործել էին 1915 թ. հայերի նկատմամբ, որը յետագայում կոչուեց ցեղասպանութիւն:

Թուրքական դատարանը Թուրքիայի օրինական վեհապետի՝ սուլթանի հրովարտակի հիման վրայ, հանգամանօրէն քննարկելով երիտթուրքական պարագլուխների յանցագործութիւնները հայերի, ինչպէս նաեւ կայսրութեան միւս քրիստոնեայ ժողովուրդների՝ ասորիների եւ յոյների նկատմամբ, նրանց առաւել աչքի ընկնող առաջնորդներին՝ Թալաաթին, Էնվերին, Ճեմալին, Նազըմին, Պեհաէտտինին եւ միւսներին դատապարտեց մահուան, իսկ շատ-շատերին էլ՝ բանտարկութեան:

Այս խիստ կարեւոր հանգամանքը հիմք է տալիս նորովի մօտենալ Թուրքիայի կողմից Հայոց Ցեղասպանութեան ճանաչման հարցին:

Կարծում ենք, որ երիտթուրքերի դատավարութեան նիւթերը եւ թուրքական դատարանի վճիռները հիմք են տալիս արտայայտելու այն տեսակէտը, որ թուրքական դատարանը եւ օրինական իշխանութիւնները միջազգային չափանիշներին լրիւ համապատասխան, մահուան են դատապարտել նրանց, ովքեր պատասխանատու են հայերի 1915 թ. ցեղասպանութեան համար: Իսկ դա ոչ այլ ինչ է, քան Հայոց Ցեղասպանութեան ճանաչում եւ դատապարտում՝ թուրքական պաշտօնական իշխանութիւնների կողմից: Յիշենք, որ այդ ժամանակ, 1919-1920 թթ. օրինական իշխանութիւնը պատկանում էր սուլթանին եւ քեմալականները դեռեւս իշխանութիւնը չէին գրաւել: Քեմալականներն այդ ժամանակ դեռեւս իրենցից լոկ շարժում էին ներկայացնում: Հետեւաբար, պատմագիտութեան, այդ թւում եւ հայ պատմագիտութեան կողմից անբացատրելի, եթէ ոչ աններելի բացթողում պէտք է համարել այն պարագան, որ անտեսելով թուրքական օրինական դատարանի օրինական որոշումը, նշւում է, թէ Թուրքիան իբրեւ թէ մինչեւ օրս չի ճանաչել Հայոց Ցեղասպա-

նութիւնը: Այդ տեսակէտն արժանի է վերանայման, քանի որ թուրքական դատարանի որոշումը գալիս է փաստելու, որ թուրքական սուլթանական իշխանութիւնները 1919 թ. արդէն մէկ անգամ ճանաչել են Հայոց Ցեղասպանութիւնը եւ մահուան դատապարտել կայսրութեան բոլոր առաջին դէմքերին, որոնք մօտ 10 տարի, 1908-1918 թթ. կառավարել են Օսմանեան կայսրութիւնը եւ, բնականաբար, պատասխանատու էին նրա ներքին եւ արտաքին քաղաքականութեան համար:

Ուստի այժմ, երբ խօսք է գնում Թուրքիայի կառավարութեան կողմից Հայոց Ցեղասպանութիւնը ճանաչելու մասին, ապա դա աւելի ճիշդ կը լինէր որակել որպէս վերաճանաչում:

Իհարկէ, մենք այնքան միամիտ չենք ակնկալելու, որ մեր տեսակէտը կարող է անվերապահօրէն ընդունուել: Եւ, այնուհանդերձ, հաւատացած ենք, որ ոչ միայն վրիպում, այլեւ կոպիտ սխալ է անտեսել վերոնշեալ դատարանի որոշումը եւ այն շրջանառութեան մէջ չդնել, երբ խօսք է գնում Հայոց Ցեղասպանութեան մասին:

Երիտթուրքերի դատավարութիւնը եւ նրանց առաջնորդների նկատմամբ ընդունուած միանգամայն արդարացի որոշումները հիմք են տալիս իրաւագիտական առումով նորովի մօտենալ նաեւ հայ վրիժառուների գնահատականի հարցին: Հայ վրիժառուները ոչ թէ ահաբեկիչներ են, ինչպէս փորձում է ներկայացնել թուրքական կողմը, այլ արդարադատութիւնն իրականացնող նուիրեալներ: Քանի որ թուրքական իշխանութիւնները չկարողացան ի կատար ածել թուրքական դատարանի որոշումը երիտթուրքերի առաջնորդների մահապատժի վերաբերեալ, որովհետեւ վերջիններս հասցրել էին գաղտնի հեռանալ Թուրքիայից եւ ապաստան գտնել Գերմանիայում, Իտալիայում, Մալթայում,

Վրաստանում կամ Միջին Ասիայում, ապա թուրքական դատարանի վերոնշեալ որոշման իրականացման ամբողջ բեռն իրենց ուսերի վրայ վերցրին ցեղասպանութեան ենթարկուած հայերը: Այսպիսին է պատմական իրողութիւնը: Եւ կարծում ենք, որ այդ հանգամանքը, այսինքն՝ Թալաաթին եւ երիտթուրքական միւս դահիճներին թուրքական դատարանի կողմից մահուան դատապարտելն իր որոշակի դերն է խաղացել Թալաաթին մահապատժի ենթարկած Սողոմոն Թեհլիրեանին գերմանական դատարանի կողմից անպարտ ճանաչելու գործում:

Առաջին հրատարակութիւնից յետոյ անցել է աւելի քան 15 տարի: Այդ ընթացքում լրիւ սպառուեց Հայաստանի համար աննախադէպ հանդիսացող 80 հազար օրինակ տպաքանակը: Եւ այժմ այն հնարաւոր չէ ձեռք բերել: Մինչդեռ եկել են նոր ժամանակներ, տեղի են ունեցել կարեւոր իրադարձութիւններ եւ տեղաշարժեր, կեանք է մտել նոր սերունդ, որը նոյնպէս ուզում է իմանալ Հայոց Ցեղասպանութեան ամբողջական եւ իրական պատմութիւնը, նոր փուլ է սկսուել Հայոց Ցեղասպանութեան միջազգային ճանաչման գործընթացում: Այս բոլոր հանգամանքներն անհրաժեշտ են դարձնում կրկին անդրադառնալ թուրքական դատավարութեանը, որի ամբողջական պատմութիւնը՝ արժէքաւոր ծանօթագրութիւններով ու մեկնաբանութիւններով, ներկայացուած է Ա. Փափազեանի աշխատութեան մէջ:

Հասարակական եւ գիտական այդ պահանջի բաւարարմանն է նպատակաուղղուած Փրոֆ. Աւետիս Փափազեանի «Հայերի Ցեղասպանութիւնը ըստ երիտթուրքերի դատավարութեան փաստաթղթերի» գրքի երկրորդ հրատարակութիւնը, որը, չենք կասկածում, կ'արժանանայ նոյնպիսի ուշադրութեան եւ բարձր գնահա-

տականի, ինչպէս նախորդ՝ առաջին հրատարակութիւնը:
Նա դեռեւս իր պատմական կարեւոր դերակատարումն ունի:

Փրոֆեսոր Նիկոլայ Յովհաննիսեան
Հայաստանի Գիտութիւնների
Ազգային Ակադեմիայի Արեւելագիտութեան
Ինստիտուտի տնօրէն

24 Յունիսի 2005 թ.
Լոս Անճելես

ԵՐԿՈՒ ԽՕՍՔ

Լրացաւ Հայոց Մեծ Եղեռնի 90-ամեայ տարելիցը: 90 տարի առաջ տեղի ունեցաւ 20-րդ դարի առաջին ցեղասպանութիւնը արեւմտահայութեան նկատմամբ:

Դժբախտաբար, արդի թուրքական պատմագրութիւնը, կառավարութիւնն ու պետական գործիչները դեռեւս շարունակում են հերքել եւ ուրանալ Առաջին համաշխարհային պատերազմի ընթացքում տեղի ունեցած հայերի հալածանքներն ու կոտորածները, այն կեղծ պատրուակով, որ իբր հաւաստի փաստեր չկան հայերի ցեղասպանութեան մասին:

Վերջերս, «Թուրքական Պատմութեան Հիմնարկ»ի տնօրէն՝ Եուսուֆ Հալաջօղլուն, կրկին անգամ անդրադառնալով հայերի ցեղասպանութեան մերժման խնդրին, պնդեց, որ այդ խնդիրը պէտք է թողնել պատմաբանների քննարկմանը եւ նոյնիսկ յայտարարեց, որ *«եթէ փաստէք, կ'ընդունենք»:*

Հայոց Մեծ Եղեռնը երբեք սակարկութեան հարց չի կարող լինել: Ճշմարտութիւնը այն է, որ 20-րդ դարի սկզբին մարդկութեան դէմ ուղղուած այդ ծանրագոյն ոճրագործութիւնը ապացուցուած է բազմաթիւ փաստագրական նիւթերով, այդ թւում՝ հաւաստի վաւերագրերով, նամակներով, բարձրաստիճան դիւանագէտների զեկոյցներով, ականատեսների վկայութիւններով, վերապրողների յուշագրութիւններով, ամկողմնակալ պատմաբանների ուսումնասիրութիւններով, պետական բարձրաստիճան գոր-

ծիչների հաստատումներով, աշխարհի մի շարք խորհրդարանների, նահանգային խորհուրդների եւ քաղաքապետարանների ընդունած բանաձեւերով եւ որոշումներով:

Այնպէս որ 1915-1923 թթ. հայերի ցեղասպանութեան պատմական ճշմարտութիւնը հաստատող այդ բոլոր փաստերը վճռականօրէն հերքում են ժամանակակից թուրք պատմաբաններին եւ պետական գործիչներին, որոնք աշխատում են քօղարկել եւ խեղաթիւրել 20-րդ դարի սկզբին Արեւմտեան Հայաստանում եւ առհասարակ ամբողջ Օսմանեան կայսրութիւնում տեղի ունեցած հայերի հալածանքներն ու ցեղասպանութիւնը:

Հայերի ցեղասպանութիւնը նոյնիսկ հաստատում է 1919-1920 թթ. Կ. Պոլսում տեղի ունեցած երիտթուրքական կուսակցութեան ղեկավար գործիչների դատավարութեան փաստաթղթերով, որոնք առնչւում են Արեւմտահայութեան զանգուածային տեղահանութեան եւ ջարդերի հետ:

Այդ դատավարութեան արձանագրութիւններում բերուած փաստերն ու վկայութիւնները լիովին հաւաստի են եւ անվիճելի: Տարօրինակ է, որ այդ դատավարութեան նիւթերը առ այսօր գաղտնի են պահուած թուրք հասարակութիւնից: Ինչո՞ւ, որովհետեւ այնտեղ փաստարկներով ցոյց է տրուած իրականութիւնը: Դատավարութեան ընթացքում, արեւմտահայութեան կոտորածներին վերաբերող մեղադրական ապացոյցները՝ ծածկագիր հեռագրերը, նամակները, հրամանները, ինչպէս նաեւ ականատեսների վկայութիւնները, լիովին բացայայտում են, որ կոտորածները կանխամտածուած բնոյթ են ունեցել, կազմակերպուել են երիտթուրքերի կուսակցութեան կենտրոնական կոմիտէի կողմից եւ անմիջականօրէն իրականացուել «Յատուկ կազմակերպութեան» (Թեշքիլաթ-ը մահսուսէ), բանտերից ազատած արիւնարբու հրոսակների կողմից:

Վերոյիշեալ դատավարութեան արձանագրութիւններն ու որոշումները շատ քիչ տպաքանակով հրատարա-

կուել են այդ օրերին թուրքական պաշտօնական «Թաք-վիմ-ի Վեքայի» թերթի յաւելուածներում (արաբատառ):

Որպէս օսմանագէտ-պատմաբան, այս նիւթերի թարգմանութիւնը, առաջաբանով եւ ծանօթագրութիւններով առաջին անգամ լինելով հրատարակեցինք 1988 թ. Երեւանում ՀՀ ԳԱԱ Արեւելագիտութեան Ինստիտուտի գիտական խորհրդի որոշմամբ: Բնականաբար այն լայն արձագանգ գտաւ Հայաստանում եւ Սփիւռքում, յատկապէս պատմաբանների եւ այլ մասնագէտների կողմից:

Գիրքը 1988 թ. լոյս տեսաւ 80 հազար տպաքանակով եւ կարճ ժամանակում սպառուեց, քանի որ առաջին անգամ հրատարակուող փաստաթղթերը մեծ հետաքրքրութիւն էին առաջացրել ընթերցողների եւ մասնագէտների շրջանակում: Այն թարգմանուեց անգլերէն եւ արաբերէն լեզուներով: Անգլերէնը լոյս տեսաւ 1990 թ. Լոս Անճելեսում, իրաւաբան Վարդգէս Եղիայեանի նախաձեռնութեամբ: Թարգմանիչն է՝ Լեւոն Ֆերմանեանը: Արաբերէնը հրատարակուեց 1992 թ. Հալէպում՝ Ռոպերթ Ճեպեճեանի նախաձեռնութեամբ: Թարգմանիչն է՝ Ալեքսանդր Քեշիշեանը:

Երախտագիտութեամբ պիտի նշենք, որ տուեալ ժամանակ այդ փաստաթղթերը Հայաստանի կենտրոնական պատմութեան արխիւին էր յանձնել ֆրանսահայ հասարակական գործիչ՝ Կարպիս (Ռոժէ) Զրպաշեանը:

Հեղինակը յայտնում է իր խորին շնորհակալութիւնը «Նոր Հայաստան» Օրաթերթի խմբագիր՝ Պրն. Վահան Վահանեանին, որ Մեծ Եղեռնի 90-ամեայ տարելիցի առթիւ սիրայօժար յանձն առաւ վերահրատարակել մեր այս աշխատասիրութիւնը:

ՀԵՂԻՆԱԿ

ԱՌԱՋԱԲԱՆ

Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին, դաժան ճակատագիր էր վիճակուած արեւմտահայութեանը։ 1915–1916 թթ. երիտթուրքական կառավարութեան կիրառած ցեղասպան քաղաքականութեան հետեւանքով, արեւմտահայութիւնը կանգնեց ի սպառ ոչնչացման վտանգի առջեւ։

Զանգուածային տեղահանութիւններն ու կոտորածները Արեւմտեան Հայաստանի քաղաքներում եւ գիւղերում, ինչպէս նաեւ Փոքր Ասիայի տարածքում գտնուող հայաբնակ վայրերում, չէին առնչւում ռազմական նկատառումներով կատարուող միջոցառումների հետ, քանի որ հայութեան բնաջնջման հարցը նախօրօք մշակուած եւ որոշուած էր «Իթթիհատ վէ թերաքքի»(1) (Միութիւն եւ Առաջադիմութիւն) կուսակցութեան կենտրոնական կոմիտէի կողմից։ Հայկական հարցը լուծելու համար, երիտթուրքերն ընտրել էին արեւմտահայութիւնը ի սպառ բնաջնջելու ճանապարհը։ Պատերազմը պատեհ առիթ հանդիսացաւ, որպէսզի նրանք ոչնչացնեն ոչ միայն հայերին, այլեւ հաշուեյարդար տեսնէին քրիստոնեայ միւս ժողովուրդների հետ։

«Ամէնուրեք սկսեցին հաւաքել հայերին, — գրում է Մեվլան Զատէ Ռիֆաթը, — նոյնիսկ առանց հաշուի առնելու հիւանդներին, ծերերին ու երեխաներին։ Նրանց, ովքեր ընդունում էին մահմեդականութիւն, ժամանակաւորապէս դուրս էին հանում քարաւաններից, իսկ միւս-

ներին խմբերով, ժանտարմների հսկողության ներքոյ ուղարկում էին նախատեսուած ճանապարհներով(2)։ Այնուհետեւ այդ անզէն ու անպաշտպան քարաւանները մարդկանց տեսողութիւնից հեռու, ամայի վայրերում ենթարկւում էին հայերի բնաջնջման նպատակով ստեղծուած «Թեշքիլաթ-ը մահսուսէ»-ի (Յատուկ կազմակերպութիւն), հրոսակախմբերի յարձակմանը։ Իսկ հրաշքով ազատուածները, քաղցից եւ ծարաւից ծայրաստիճան հիւծուած եւ ոսկրացած ուրուականների նման յայտնւում էին Միջագետքի եւ Սիրիայի անապատներում։

Արեւմտահայութեան զանգուածային բռնագաղթի ու գազանային կոտորածների լուրը շուտով տարածուեց ամբողջ աշխարհով մէկ՝ ամէնուրեք առաջացնելով բուռն զայրոյթ ու բողոք։ Առաջադէմ մարդկութեան ներկայացուցիչները, առանձին կազմակերպութիւններ, դատապարտում էին երիտթուրքերի գործադրած բարբարոսային ցեղասպանութեան քաղաքականութիւնը եւ պահանջում՝ անյապաղ դադարեցնել այն, տարագրուած հայերին վերադարձնել իրենց բնակավայրերը։ 1915 թ. Մայիսի 24-ին, Անգլիայի, Ֆրանսիայի եւ Ռուսաստանի կառավարութիւնները համատեղ նախազգուշացրին Բարձրագոյն Դրռանը, յայտարարելով հետեւեալը.

«Ամբողջ վերջին ամսուայ ընթացքում, Հայաստանի մէջ տեղի են ունենում հայկական կոտորածներ՝ քրդերի ու թուրքերի կողմից, Օսմանեան իշխանութիւնների բացայայտ թողտուութեամբ, իսկ յաճախ էլ ուղղակի համագործակցութեամբ։ Նոր տոմարով՝ Ապրիլի կէսերին, հայկական կոտորածներ են տեղի ունեցել Էրզրումում, Դերջանում, Պիթլիսում, Մուշում, Սասունում, Զէյթունում եւ ամբողջ Կիլիկիայում։ Վանի շրջակայ հարիւրաւոր գիւղերի բնակիչներ մորթուել են մինչեւ վերջին մարդը։ Բուն Վանում, հայկական թաղը պաշարման մէջ են առել քրդերը։ Միեւնոյն ժամանակ, Կոստանդնուպոլսի թուր-

քական կառավարությունը ձերբակալում եւ աներեւակայելի ճնշումների է ենթարկում հայ ազգաբնակչությանը։ Մարդկության եւ քաղաքակրթության դէմ Թուրքիայի կատարած այս նոր յանցագործությունները նկատի ունենալով, Ռուսաստանի, Ֆրանսիայի եւ Անգլիայի դաշնակից կառավարությունները այսու հրապարակաւ յայտարարում են Բարձրագոյն Դռանը, որ իրենք այդ յանցագործությունների համար անձնական պատասխանատուությունը դնում են թուրքական կառավարության բոլոր անդամների, ինչպէս նաեւ նրա՝ տեղական այն իշխանությունների վրայ, ովքեր մասնակից են դարձել նման կոտորածին»(3)։

Երիտթուրքերի կառավարությունը, սակայն, անողոք դաժանությամբ շարունակեց իրականացնել իր որդեգրած քաղաքականությունը, որի զոհը դարձան աւելի քան մէկուկէս միլիոն հայեր։

Արեւմտահայության բնաջնջման ծրագիրը խարբսխուած էր նախորդ ժամանակներում սուլթանական Թուրքիայի գործադրած ջարդարարական քաղաքականության վրայ։ 1878 թ. Պեռլինի վեհաժողովից յետոյ, երբ Հայկական հարցը միջազգային բնոյթ ընդունեց, սուլթանական կառավարության ազգային ու կրօնական հալածանքները, կեանքի ու գոյքի անապահովությունը, հարկային ծանր լուծն ու գաւառային պաշտօնեաների չարաշահումներն աւելի մեծ չափերի հասան։ «Խիստ հսկողության տակ առնուեցին հայ պաշտօնեաները եւ հայկական հրատարակությունները։ Այդ պահից սովորական երեւոյթ դարձաւ աքսորը։ Կուսակալների կողմից քննության առնուեցին հայոց եկեղեցիների եւ դպրոցների մասին տրուած հրովարտակները։ Վերջին տարիների ընթացքում, փակուեցին այն հայկական դպրոցները, որոնք բացուել էին ոչ թէ հրովարտակով, այլ միայն կառավարության թոյլտուությամբ։ Խստություններ ու բռնություններ գործադրուեցին նաեւ հարկերի գանձման հարցում»(4), — գրում է Թուրք

գործիչ՝ Օսման Նուրին։ Հրահանգ տրուեց մամուլի գրաքննչական վարչութեանը՝ արգելել «Հայաստան» բառի, հայ ժողովրդի պատմութեանը եւ աշխարհագրութեանը վերաբերող անունների յիշատակումը(5)։

Այդ նոյն թուականին, Օսմանեան կայսրութեան մեծ վեզիր, հայատեաց Քեամիլ փաշան, ցինիկաբար յայտարարում էր. «Հայ ազգը վերացնելու, անհետ եւ անճետ ընելու ենք։ Եւ այդ ի գլուխ հանելու համար, բան չի պակսիլ մեզ. ամէն գործիք պատրաստ ունինք՝ քուրդ, չերքէզ, կուսակալ, դատաւոր, հարկահան, ոստիկան, վերջապէս ամենայն ինչ, կրօնական պատերազմ կը հրապարակենք եւ դիւրին պատերազմ՝ այնպիսի ազգի մը դէմ, որ ոչ զէնք ունի, ոչ զինուորութիւն եւ ոչ պաշտպան, երբ ընդհակառակն, մենք զէնք էլ ունինք, զինուորութիւն էլ, աշխարհիս ամենամեծ տէրութիւններէն մէկը (Անգլիան — Ա.Փ.) եւ ամենէն հարուստը մեզ զինակից է եւ մեր Ասիական աշխարհքին երաշխաւոր։ Եւ եթէ այդ հայ ազգը բնաջինջ լինի եւ քրիստոնեայ Եւրոպա կրօնակից մը փնտռէ եւ չի գտնէ տաճկական Ասիոյ մէջ, կը թողու զմեզ հանգիստ եւ այն ատեն կը զբաղինք ներքին գործերով եւ բարեկարգութեամբ»(6)։ Քեամիլ փաշայի այս նենգ մտայղացումը իրօք որ դարձաւ արեւմտահայութեան բնաջնջման հարցում թուրքական պետական քաղաքականութեան առանցքը։

1890-ական թուականներին, Ապտուլ Համիտի նախաձեռնութեամբ կազմակերպուեցին հիմնականում քրդերից կազմուած «Համիտիէ» անկանոն զօրագնդերը, որոնց գլխաւոր նպատակներից մէկն էր հալածել ու կոտորել հայ բնակչութեանը։ Քաղաքային եւ զինուորական իշխանութիւնների տուած հրահանգներով, այս գնդերը յարձակւում էին գիւղերի վրայ։ Գիւղերն այրւում էին, ժողովուրդը կոտորւում էր(7)։

1894-1896 թթ. Սասունում եւ յարակից հայաբնակ

նահանգներում, ինչպէս նաեւ Ստամպուլում, տեղի ունեցան սոսկալի կոտորածներ, որոնք նոյնիսկ թուրք գործիչներ՝ Օսման Նուրիի եւ Սատըկ Շահիտի կողմից բնութագրուեցին, որպէս «ահարկու եղեռն մարդկութեան դէմ»(8)։

Հայերին զանգուածաբար բնաջնջելով եւ նրանց թիւը արհեստականօրէն նուազեցնելով, թուրքական կառավարութիւնը ձգտում էր ազատուել Պեռլինի դաշնագրի 61-րդ յօդուածից, եւ ընդհանրապէս բարենորոգումների պարտադրուած ծրագրերից։

Մինչեւ համիտեան բռնապետութեան տապալումը, երիտթուրքերը աշխատում էին ոչ թուրք ժողովուրդներին ներշնչել այն միտքը, որ 1876 թ. սահմանադրութեան վերահաստատումով կը վերանայ ազգային խտրականութիւնը, եւ բոլոր հպատակները հաւասար կը լինեն օրէնքի առջեւ։ Մինչդեռ, 1909 թ. իշխանութեան գլուխ անցնելուց յետոյ, երիտթուրքերը ոչ միայն մոռացան իրենց տուած խոստումները, այլեւ ժողովուրդների ազգային-ազատագրական շարժման նկատմամբ տրամադրուեցին բացայայտ թշնամանքով։

Երիտթուրքական գաղափարախօսները ամէն կերպ փորձում էին միաձուլել Օսմանեան կայսրութեան ոչ մահմեդական ժողովուրդներին մէկ «օսմանեան ազգութեան» մէջ, որը իրականում զրկում էր ոչ-թուրք ժողովուրդներին ազգային ինքնորոշման արդարացի իրաւունքից։ Երիտթուրքերի ղեկավարները հետեւողականօրէն ջատագովում էին «Օսմանիզմի» գաղափարախօսութիւնը, այն է, որ Օսմանեան կայսրութիւնում, բացի օսմանեան ազգից, ուրիշ ազգութիւններ չկան, կայսրութիւնում մէկ ազգ կայ՝ օսմանցի ազգը։ Ճելալ Նուրին հպատակ ժողովուրդներից բացայայտօրէն պահանջում էր հաշտուել իրենց իրաւազուրկ վիճակի հետ եւ հրաժարուել ազգային ինքնորոշման ձգտումներից. հայերը, արաբները, քրտերը,

ալբանացիները չպէտք է պայքարէին իրենց ազատագրութեան համար, քանի որ կայսրութիւնում տիրապետող կարգերը առաջաւոր ու իտէալական են։ Նա ամէն կերպ գովաբանում էր իսլամը, մատնանշելով, որ այն միաժամանակ բարոյական օրէնսգիրք ու կառավարման ձեւ է(9)։

Իրականում, կայսրութիւնում «իսկական» քաղաքացի կարող էին ճանաչուել թուրքերը, եւ նրանք, ովքեր հաւատափոխ կը լինէին, կը մոռանային սեփական լեզուն եւ կը ձուլուէին թուրքերի հետ։ Դեռեւս 1910 թ. Սալոնիկում կայացած «Միութիւն եւ Առաջադիմութիւն» կուսակցութեան տեղական կոմիտէի գաղտնի նիստում, Թալաաթը յայտարարել է. «Դուք գիտէք, որ սահմանադրութեամբ մահմետականների եւ քրիստոնեաների հաւասարութիւն է հաստատուել, բայց դուք բոլորդ միասին եւ ամէն մէկդ առանձին՝ գիտէք եւ զգում էք նաեւ, որ դա անիրականալի գաղափար է։ Շարիաթը, մեր անցեալի ամբողջ պատմութիւնը, հարիւր հազարաւոր մահմետականների զգացմունքները եւ նոյնիսկ իրենց՝ քրիստոնեաների զգացումը, որոնք յամառօրէն դիմադրում են իրենց օսմանականացման ամէն մի փորձի դէմ, անյաղթահարելի պատնէշ են իսկական հաւասարութեան համար։ Ուստի հաւասարութեան մասին խօսք անգամ չի կարող լինել մինչեւ այն ժամանակ, քանի դեռ մենք յաջողութեամբ չենք պսակել կայսրութեան օսմանականացման մեր նպատակը»(10)։

Երիտթուրքերի կուսակցութեան գլխաւոր զէնքերից էր նաեւ պանթուրքիզմը, որն աշխուժացաւ յատկապէս Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին։ Ճելալ Նուրին, Զիա Գէօքալփը, Ֆուադ Քէօփրիւլիւն եւ երիտթուրքական այլ գործիչներ ամէն կերպ փորձում էին պանթուրքիզմն օգտագործել թուրքալեզու ժողովուրդների վրայ իրենց ազդեցութիւնը տարածելու համար։ Պանթուրքիզմը միաժամանակ Օսմանեան կայսրութեան քրիս-

տոնեայ ժողովուրդներին բռնի ուծացնելու խնդրում երիտթուրքերի ազգայնամոլ քաղաքականութեան մի նոր ուղղութիւն էր(11)։ Այսպիսով, երիտթուրքերը ամբողջապէս որդեգրեցին Ապտուլ Համիտի արիւնարբու քաղաքականութիւնը՝ իրենց դաժանութեամբ գերազանցելով նրան։ Կայսրութիւնում ազգային հարցը լուծելու համար, նրանք ընտրեցին ազգերին ոչնչացնելու ճանապարհը։ Նրանց այս յանցաւոր մտայղացման առաջին դրսեւորումը եղաւ 1909 թուականին Ատանայում եւ Կիլիկիայի մի շարք քաղաքներում հայերի կոտորածը։

Արեւմտահայութիւնը ամենադաժան հալածանքների եւ ֆիզիկական ոչնչացման ենթարկուեց յատկապէս Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին երիտթուրքերի կառավարութեան գործադրած նենգ եւ բարբարոսական քաղաքականութեան հետեւանքով։

Արեւմտահայութեան զանգուածային կոտորածների նախաշեմին տեղի ունեցած Կ. Պոլսի (Ստամպուլ) առաջին մահասարսուռ դէպքերի ժամանակակից Ա. Ալպոյաճեանը գրում է. «Առաջին ազդանշանը ու անդրանիկ սարսափը, որ Կ. Պոլսի բնակչութիւնը անակնկալի մը առջեւ կը դնէր, 1915 Ապրիլ 11 (24)-ի ձերբակալութիւնները եղան։ Մէկ գիշերուան մէջ, Կ. Պոլսոյ մտաւորական դասակարգին ամենէն կարկառուն դէմքերը եւ ժողովուրդին ամէն դասակարգերէն 250 հոգիի չափ անձեր, ձերբակալուեցան եւ Ջանկըրը եւ Այաշ տարագրուեցան»(12)։

Փաստերը վկայում են, որ տեղահանուեց ու աքսորուեց ճակատամերձ գօտիներից ընդհանրապէս շատ հեռու գտնուող շրջանների, գիւղերի եւ քաղաքների հայ բնակչութիւնը։ Այս մասին թուրք պաշտօնեայ Նայիմ պէյի յուշագրութեան մէջ կարդում ենք. «Եփրատի ափերն արտաքսուածները ոչ միայն Ստամպուլի շրջակայքից էին, այլեւ՝ Ռոտոստոյից, Նիկոմեդիայից, Պարտիզակից, Ատաբազարից, Ճիզրէից (Ճեզիրէ), Գոնիայից, մի խօսքով,

90887

նրանք Կեսարիայի եւ Անատոլիայի երկաթգծի երկարութեամբ ընկած տարածքից աքսորուած հայերն էին։ Այս նոր տարագրումը ընդհանուր զարմանքի առիթ տուեց։ Անհասկանալի էր, թէ ինչո՞ւ մարդկանց քշում են Տէր-Զօրի ուղղութեամբ։ Սակայն անհանգստանալու համար առաւել էական պատճառներ կային։ Ռաս-ուլ-Այնում եւ այլուր տեղի ունեցած կոտորածները տարածուեցին նաեւ Մեսքենէում։ Մի քանի տարի շարունակաբար կատարուող կոտորածները գաղտնի չմնացին նաեւ խուլ անապատում։ ...Կառավարութեան նպատակը ամբողջ հայերի ոչնչացումն էր։ Նրանք իրաւունք չունէին այլեւս գոյատեւելու»(13)։

Որ տեղահանութիւնն ու կոտորածը կատարւում էին կանխամտածուած ծրագրով, հաստատւում է նաեւ Մեվլան Զատէ Ռիֆաթի բերած փաստարկներով. «Միութիւն եւ Առաջադիմութիւն» կուսակցութիւնը որոշում կայացրեց՝ ոչ մի մարդ կենդանի չթողնելու պայմանով սպաննել եւ ոչնչացնել հայերին։ Այս հրամանը իրականացնելու համար, նախագահութիւնը ստեղծեց Պեհաէտտին Շաքիր, Դոկտ. Նազըմ եւ Հանրակրթական նախարար՝ Շիւքրի պէյերից կազմուած մի յանձնաժողով՝ տալով «Երեքի գործադիր կոմիտէ» անուանումը։ Այս երեքի գործադիր կոմիտէն «Թեշքիլաթ-ը մահսուսէ» անուան տակ սկսեց բանտերից հաւաքագրել քրէական յանցագործներին եւ ստեղծել չեթէների հրոսակներ։ «Թէշքիլաթ-ը մահսուսէ» պիտակի տակ ստեղծուած այս չեթէների կատարած յանցագործութիւններն ու բռնութիւնները, արատաւորելով թուրք ժողովուրդին աշխարհի հասարակայնութեան առջեւ, արիւնալի եւ բարբարոսական էջեր արձանագրեցին նրա պատմութեան մէջ»(14)։

Գերմանիան եւս յանցաւոր է հայկական ջարդերի համար։ 1915 թ. Յուլիսի 4-ին, թուրքական կառավարութեան ուղղուած գաղտնի գրութեամբ, Գերմանիան լիո-

վին հաւանութիւն է տուել եւ պաշտպանել երիտթուրքերի հայաջինջ ծրագիրը։ Գերմանական հիւպատոսները խրախուսել, իսկ գերմանացի սպաները մասնակցել են երիտթուրքերի վայրագութիւններին։(15) Այդ օրերին բողոքի բուռն ցասումով հանդէս եկած միջազգային բանուորական շարժման ականաւոր գործիչ՝ Կարլ Լիբկնեխտը, անարգանքի սիւնին գամելով Գերմանիայի իմպերիալիստական կառավարութեան դաւադիր գործողութիւնները, նկատում է. «Թուրքական կառավարութիւնը կազմակերպեց հայկական զարհուրելի կոտորածները, ամբողջ աշխարհն այդ գիտէ եւ ամբողջ աշխարհն այդ ոճրագործութեան համար յանցաւոր է համարում նաեւ Գերմանիային, չէ՞ որ Կոստանդնուպոլսում թուրքական կառավարութեանը ղեկավարում են գերմանական սպաները։ Ո՛չ մի բան չգիտեն միայն Գերմանիայում, որովհետեւ գերմանական մամուլի բերանի մէջ դրուած է գելանարակ»(16)։

Տեղահանութեան եւ կոտորածի ընթացքում գործի է դրուել նաեւ հայերին մահմետականացնելու քաղաքականութիւնը։ Այդ քայլը ջատագովել է երիտթուրքական հանրայայտ կին գործիչ՝ Հալիտէ Էտիպը, չնայած աշխատել է ցոյց տալ, որ ինքը դէմ է եղել երեխաներին մահմետականացնելու ծրագրին(17)։ Մինչդեռ նրա ժամանակակիցների վկայութիւններից յայտնի է դառնում, որ Հալիտէ Էտիպը եւս, հայ որբերին հաւաքելով, մահմետականացնում էր եւ դաստիարակում՝ որբանոցներում որպէս թուրքերի»(18)։

Քրիստոնեայ երեխաներին մահմետականացնելով թուրքացնելը նոր երեւոյթ չէր, գալիս էր դեռեւս միջնադարից։

Տեղահանութեան եւ կոտորածների ընթացքում թուրքերն աշխատել են մահմետականացնել յատկապէս Սիրիա տարագրուած հայերին։ Ահա թէ ինչ է գրում այդ

մասին Ֆալիհ Ռըֆքը Ա.թայը. «Չերքէզների, քրտերի եւ միւսների նման հայերի արտաքսումը դէպի Սիրիայի խորքերը նօսրացնելու էր արաբներով խիտ բնակեցուած վայրերը։ Նոյնիսկ մի յանձնաժողով կազմուեց, որպէսզի հայերին եւ տուն եւ հող տրամադրուի՝ մահմետական դառնալու պայմանով»(19)։

Տեղահանելով հայերին, թուրքական իշխանութիւնները նաեւ կեղծ բարբաջանքներով ջանում էին հաւաստիացնել, թէ իբր նրանց թողած հողային ունեցուածքն ու գոյքը պահպանուելու են պետութեան կողմից եւ պատերազմի աւարտից յետոյ կրկին վերադարձուելու են։ Այս կապակցութեամբ թուրքական կառավարութիւնը հայերի ունեցուածքի բացայայտ կողոպուտն ու թալանը աշխատեց «օրինականացնել» մի շարք օրէնքներով, որոնք բնաւ չգործադրուեցին(20)։ «Այսպէս, ժողովուրդին բոլոր շարժական ստացուածքը կը փչանար կամ լաւ եւս է ըսել թուրքերու ձեռքը կ'անցնէր, կառավարութիւնը ոչ մէկ տեղ հոգածու չգտնուեցաւ այդ գոյքերը հաւաքելու կամ դրամի վերածելու»(21), — վկայում է Զաւէն պատրիարքը։

Կ. Պոլսում ամերիկեան դեսպան Մորգենթաուն, այս փաստի մասին վկայում է. «Հազիւ թէ նախկին սեփականատէրերը հեռանային գիւղէն՝ մահմետական մուհաճիրներ — Թուրքիոյ այլ կողմերէն գաղթողներ կը փոխադրուէին հայկական բնակավայրերէն ներս։ Նոյնպէս հայերուն բոլոր արժէքաւոր առարկաները — դրամ, մատանիներ, ժամացոյցներ եւ գոհարեղէններ — կը տարուէին ոստիկանատուներ «ապահով պահուելու համար» մինչեւ հայերուն վերադարձը, եւ ապա կը բաժանուէին թուրքերուն»(22)։

Առկայ են բազմաթիւ հեռագրեր, հրահանգներ, առանձին կարգադրութիւններ, առաքուած՝ երիտթուրքերի կառավարութեան կողմից, որոնք լիովին բացայայտում են հայութեան ունեցուածքը կուլ տալու ծրագիրը(23)։

Հ. Գ. Ինճիկեանի հաշուումներով, կողոպուտի ու ոչնչացման են ենթարկուել 66 քաղաքների ու 2,500 գիւղերի հայ ու քրիստոնեայ ազգաբնակչութիւնը, կողոպտուել ու քանդուել են աւելի քան 2,000 եկեղեցիներ ու վանքեր, 1,500 դպրոցներ եւ վարժարաններ։ Ազգային յատուկ յանձնախումբի տուեալներով, Օսմանեան կայսրութիւնում միայն հայ ժողովրդին հասցուած նիւթական վնասը 1919 թ. կուրսով կազմել է մօտ 15 մլրդ. ֆրանկ(24)։

Առաջին համաշխարհային պատերազմի աւարտից յետոյ, համաշխարհային հասարակութիւնը պահանջում էր պատասխանատուութեան ենթարկել արեւմտահայութեան սպանդը կազմակերպող թուրք ոճրագործներին։ Այդպիսի պահանջով հանդէս եկան նշանաւոր արեւելագէտներ՝ ֆրանսիացի հնագէտ-պատմաբան՝ Ժակ դը Մորգանը, գերմանացի հայագէտ՝ Եոզէֆ Մակուարտը։ Դատապարտող սուր յօդուածներով եւ աշխատութիւններով բողոքի ձայն բարձրացրին տարբեր ազգութիւնների քաղաքական, գիտութեան եւ մշակութային ականաւոր գործիչներ՝ Եոհաննէս Լեփսիուսը, Արմին Վեգները, Մարտին Նիբակէն, Անթուան Մեյէն, Ֆրետերիկ Մակլերը, Ռընէ Պինոնը, Վիկտոր Պերարը, Առնոլտ Թոյնպին, Վալերի Պրիւսովը, Եուրի Վեսելովսկին, Անտրէյ Մանտելշտամը, Հենրի Մորգենթաուն, Հերբերտ Ատամս Կիբբոնսը եւ շատ ուրիշներ։

Հանդէս գալով Մեծ Բրիտանիայի համայնքների պալատում 1918 թ. Նոյեմբերի 12-ին, Ռայթը անգլիական կառավարութիւնից պահանջել է, որ դաշնակիցների ներկայացուցիչները Թուրքիայի հետ խաղաղութեան պայմանները քննարկելիս, յատուկ կանգ առնեն հայկական կոտորածների յանցագործներին պատժելու հարցի վրայ(25)։

Թուրք գործիչների եւ պաշտօնեաների մէջ եւս գտնուել են առանձին մարդիկ, որոնք ոչ միայն կողմնակից չեն եղել հայերին կոտորելու հրէշային ծրագրի իրակա-

նացմանը, նողկանքով ու ատելութեամբ են վերաբերուել տեղի ունեցող վայրագութիւններին, հրաժարուել են կատարելու կենտրոնական կառավարութեան՝ «Միութիւն եւ Առաջադիմութիւն» կուսակցութեան կենտրոնական կոմիտէի գաղտնի հրամանները՝ հայ ժողովրդին տեղահանելու եւ կոտորելու հարցում (այդպիսիները անմիջապէս հեռացուել են պաշտօնից, պատասխանատուութեան ենթարկուել եւ նոյնիսկ ներքին կարգով դատապարտուել մահուան), այլեւ յետագայում ակտիւ գործունէութիւն են ծաւալել կազմակերպելու յանցագործների դատավարութիւնը։

1919 թուականին, մեծ վեզիր Տամատ Ֆերիտ փաշան դատապարտել է երիտթուրքերի կառավարութեան գործադրած յանցագործ ծրագիրը, գտնելով, որ հայերի կոտորածները ծնունդ չեն եղել ցեղային բախումների եւ կամ կրօնական մոլեռանդութեան։ «Ես իմ առջեւ նպատակ եմ դնում փաստերը ձեռքիս ցոյց տալ ամբողջ աշխարհին, թէ ո՞ւմ վրայ է ընկնում իսկական պատասխանատուութիւնը այդ սարսափելի յանցագործութիւնների համար»(26), յայտարարել է նա։

Տեղի տալով բողոքի այս ուժեղ հոսանքին եւ ձգտելով սահմանազատուել երիտթուրքերի վարկաբեկուած վարչակարգից, 1918 թ. Նոյեմբերին, Թէվֆիգ փաշայի գլխաւորութեամբ, երիտթուրքերի կուսակցութեան անդամներից զերծ կազմուած նոր դահլիճը որոշում է կայացնում՝ Օսմանեան կայսրութիւնը առաջին համաշխարհային պատերազմի մէջ ներքաշելու եւ հայերի տեղահանութիւնն ու կոտորածը կազմակերպելու համար դատական պատասխանատուութեան ենթարկել երիտթուրքական կառավարութեան ղեկավարներին, ինչպէս նաեւ՝ «Միութիւն եւ Առաջադիմութիւն» կուսակցութեան կենտրոնական կոմիտէի անդամներին։ Այնուհետեւ, 1918 թ. Դեկտեմբերի 16-ի որոշումով(27) կազմուում են հարցաքննիչ յանձնախմբեր (գլխաւոր նախագահն էր Անգարայի նախկին վալի՝ Մազ-

հար պէյը), որոնք սկսում են հաւաքել արեւմտահայութեան կոտորածներին վերաբերող մեղադրական ապացոյցներ՝ ծածկագրեր, հեռագրեր, պաշտօնական գրութիւններ, հրահանգներ եւ հրամաններ, ինչպէս նաեւ ականատեսների վկայութիւններ։ Օսմանեան կայսրութեան նահանգները բաժանւում են 10 դատաքննչական շրջանների, իւրաքանչիւր շրջանի համար նշանակւում են դատախազներ, հարցաքննիչ դատաւորներ, եւ քարտուղարներ։ Միեւնոյն ժամանակ, մամուլը լայն աշխատանք է ծաւալում յանցագործներին բացայայտելու եւ դատաքննութեան յանձնելու կապակցութեամբ(28)։

Ձերբակալւում են երիտթուրքական մի շարք նախարարներ ու կուսակցութեան ղեկավարներ, շրջանային պատասխանատու քարտուղարներ, լիազօրներ, կուսակալներ, զինուորականներ եւ այլ պաշտօնատար անձինք։ Սակայն հայկական կոտորածների անմիջական մտայղացողներն ու կազմակերպիչները հասցրել էին դիմել փախուստի՝ ապաստան գտնելով Գերմանիայում։

1919 թուականի Յունուարի 8-ին, Կ. Պոլսում կազմըւում են Առաջին, Երկրորդ եւ Երրորդ ռազմական արտակարգ ատեաններ։ Օրէնքը յանցագործներին թէեւ նախատեսում էր դատել ոճրի գործադրուած վայրում, սակայն 1919 թ. Փետրուարի 5-ին, Կ. Պոլսի ռազմական արտակարգ ատեանը Եոզղաթի տեղահանութեան եւ կոտորածի յանցագործութիւնների դատավարութեան առաջին իր նիստում յատուկ որոշում է կայացնում մեղադրեալներին Կ. Պոլսում դատելու մասին(29)։

1919 թուականի Մարտի 8-ին, սուլթան Մեհմետ 6-րդ Վահիտէտտինի (1918-1922), յատուկ հրամանագրով, երիտթուրքական կուսակցական պարագլուխներն ու նախարարները յանձնւում են Կ. Պոլսի ռազմական արտակարգ ատեանի քննութեանը(30)։

Երիտթուրքական կառավարութեան ղեկավարների եւ

«Միութիւն եւ Առաջադիմութիւն» կուսակցութեան կենտրոնական կոմիտէի անդամների դատավարութիւնը ըսկըսւում է 1919 թ. Ապրիլի 28-ին Կ. Պոլսում եւ ընդհատումներով տեւում մինչեւ Յունիսի 26-ը։ Մայիս ամսուն տեղի ունեցած 6 նիստերի(31) ընթացքում, հիմնականում հարցաքննութեան են ենթարկւում «Միութիւն եւ Առաջադիմութիւն» կուսակցութեան կենտրոնական կոմիտէի անդամները, մեծ վեզիր Սայիտ Հալիմ փաշան եւ մի քանի նախարարներ։ Սակայն Մայիսի 28-ին, անգլիական հրամանատարութեան կողմից 77 հոգի բանտից աքսորւում են Մալթա կղզի եւ ընդհատւում է դատաքննութիւնը։ Յունիս ամսին մեղադրական նոր ապացոյցների հիման վրայ շարունակւում է դատաքննութիւնը։ Յունիսեան դատաքննութեան 7 նիստերում, լսւում են պետական պաշտօնական անձանց՝ Փոստի եւ Հեռագրատան նախարար՝ Հիւսէյն Հաշիմ պէյի, սենատի նախագահ՝ Ռիֆաթ պէյի, նաեւ երկրի հոգեւոր առաջնորդներ՝ (Շէյխ-ուլ-իսլամներ), Էսատ, Հայրի եւ Մուսա Քեազիմ էֆենտիների դատաքննութիւնը։ Դատավճիռը կայացւում է 1919 թ. Յուլիսի 5-ին։

Այս դատաքննութիւնների ընթացքում, հեռակայ կարգով մեղադրւում են 11, իսկ դատավարութեան ներկայ 20 կուսակցական պետական բարձրաստիճան գործիչներ։

Հեռակայ կարգով դատի տրուած մեղադրեալներն էին՝

1 Թալաաթ փաշա — Ներքին գործերի նախարար, մեծ վեզիր (1917-1918 թթ.)։

2 Էնվեր փաշա — Ռազմական նախարար։

3 Ճեմալ փաշա — Ծովային նախարար։

4 Պեհաէտտին Շաքիր պէյ — Երիտթուրքական կուսակցութեան կենտրոնական կոմիտէի անդամ, «Թեշքիլաթ-ը մահսուսէ»-ի նախագահ։

5 Դոկտ. Նազըմ պէյ — Կուսակցութեան կենտրոնա-

կան կոմիտէի անդամ, Հանրակրթական նախարար, «Թեշ-քիլաթ-ը մահսուսէ»-ի անդամ։

6 Ճաւիտ պէյ — *Ֆինանսների նախարար։*

7 Սուլէյման Էլպիստանի պէյ — *Հողագործութեան եւ Առեւտրի նախարար* (1915–1917 *թթ.*)։

8 Մուստաֆա Շերեֆ պէյ — *Հողագործութեան եւ առեւտրի նախարար* (1917–1918 *թթ.*)։

9 Օսկան էֆենտի — *Փոստի եւ Հեռագրատան նախարար* (1914–1917 *թթ.*)։

10 Դոկտ. Ռուզուհի էֆենտի — *Կուսակցութեան կենտրոնական կոմիտէի անդամ։*

11 Ազիզ էֆենտի — *Հասարակական անվտանգութեան նախարար, «Թեշքիլաթ-ը մահսուսէ»-ի անդամ։*

Դատարանում ներկայ գտնուող մեղադրեալներ՝

1 Սայիտ Հալիմ փաշա — *Մեզ վեզիր* (1913–1916)։

2 Միտհատ Շուքրի պէյ — *Կուսակցութեան կենտրոնական կոմիտէի գլխաւոր քարտուղար։*

3 Ահմետ Ճեւատ պէյ — *Կ. Պոլսի կայազօրի հրամանատար, «Թեշքիլաթ-ը մահսուսէ»-ի անդամ։*

4 Աթիֆ պէյ — *Անգարայի պատգամաւոր, «Թեշքիլաթ-ը մահսուսէ»-ի անդամ։*

5 Զիա Գէօքալփ — *Կուսակցութեան կենտրոնական կոմիտէի եւ «Թեշքիլաթ-ը մահսուսէ»-ի անդամ։*

6 Քիւչուկ Թալաաթ պէյ — *Կուսակցութեան կենտրոնական կոմիտէի անդամ։*

7 Ռիզա պէյ — *Կուսակցութեան կենտրոնական կոմիտէի եւ «Թեշքիլաթ-ը մահսուսէ»-ի անդամ։*

8 Իպրահիմ պէյ — *Մէճլիսի նախագահ։*

9 Հայրի էֆենտի — *Շէյխ-ուլ-իսլամ։*

10 — Մուսա Քեազիմ էֆենտի — *Շէյխ-ուլ-իսլամ։*

11 — Խալիլ էֆենտի — *Արդարադատութեան եւ Ար-*

տաքին գործերի նախարար, «Թեշքիլաթ-ը մահսուսէ»-ի անդամ։

12 — Ահմետ Նեսիմի պէյ — Արտաքին գործերի նախարար (1917-1918)։

13 — Իսմայիլ Ճանփոլատ պէյ — Ներքին գործերի նախարար (1915-1917 թթ.)։

14 — Ապպաս Հալիմ փաշա — Հասարակական աշխատանքների նախարար (1915-1917 թթ.)։

15 — Ալի Միւնիֆ պէյ — Հասարակական աշխատանքների նախարար (1917-1918 թթ.)։

16 Շիւքրի պէյ — Հանրակրթական նախարար, «Թեշքիլաթ-ը մահսուսէ»-ի անդամ։

17 — Քեմալ պէյ — Պարենաւորման նախարար, կուսակցութեան կենտրոնական կոմիտէի անդամ։

18 — Հիւսէյն Հաշիմ պէյ — Փոստի եւ հեռագրատան նախարար (1917-1918 թթ.)։

19 — Ռիֆաթ պէյ — Սենատի նախագահ։

20 — Մեհմետ Էսատ էֆենտի — Շէյխ-ուլ-իսլամ։

Ըստ դատաքննութեան կարգի, յանձնաժողովի նախագահ գեներալ-լեյտենանտ Մուստաֆա Նազըմ փաշան առաջին հերթին հաստատում է մեղադրեալների ինքնութիւնը, ինչպէս նաեւ նրանց դատապաշտպանների առկայութեան հարցը։ Միեւնոյն ժամանակ յայտարարում է, որ ռազմական արտակարգ ատեաններում, մեղադրեալների պաշտպանութեան համար օրէնքը չի նախատեսում դատավարութեան ընթացքում դատապաշտպանների ներկայութիւնը։ Դատական քարտուղար Շեֆիկ պէյը ընթերցում է մեղադրական եզրակացութիւնը։ Միեւնոյն ժամանակ քրէական օրենսգրքի 372-րդ յօդուածի հիման վրայ տրուում է գլխաւոր դատախազ՝ Մուստաֆա Նազմի փաշայի հաւանութիւնը բացականերին հեռակայ կարգով դատելու մասին։ Մուստաֆա Նազմի փաշան, նկատի ունե-

նալով նաեւ թէ՛ դատասկզբում եւ թէ՛ ընթացքում դատապաշտպանների առարկութիւններն այն մասին «որ նախարարների եւ այլ պետական բարձր պաշտօնեաների հետ առնչուող դատական հարցերը քննարկման են ենթակայ ոչ թէ ռազմական արտակարգ ատեանում, այլ գերագոյն դատարանում», իր ելոյթում նշում է, որ մեղադրական եզրակացութեան մէջ թուարկուած յանցագործութիւնները կատարուել են ոչ թէ կառավարութեան անունից, այլ կուսակցութեան կենտրոնական կոմիտէի որոշումներից ելնելով։

Առաջին եւ յաջորդ մեղադրական եզրակացութիւններում բերուած փաստաթղթերը՝ ծածկագիր հեռագրերը, նամակները, վկայում են, որ արեւմտահայութեան տեղահանութիւններն ու կոտորածները ռազմական կամ կարգապահական միջոցառում չեն եղել, սահմանափակ կամ տեղական բնոյթ չեն կրել, այլ եղել են կանխամտածուած եւ իրականացուել են բացարձակապէս կուսակցութեան կենտրոնական կոմիտէի նախաձեռնութեամբ, յատուկ կենտրոնի հրահանգներով ու գաղտնի հրամաններով։ Մեղադրական եզրակացութիւններում եւ դատական նիստերի ընթացքում հիմնական շեշտը դրուում է արեւմտահայութեան կոտորածի վրայ։

Կովկասեան ճակատի երրորդ բանակի նախկին հրամանատար՝ գեներալ-լեյտենանտ Վեհիբ փաշան դատաքննութեանը ներկայացրած իր վկայութեան մէջ այդ մասին յայտնում է, որ հայերի բնաջնջման եւ ունեցուածքի կողոպտման հարցը վճռուել է «Միութիւն եւ Առաջադիմութիւն» կուսակցութեան կենտրոնական կոմիտէի կողմից, որ երրորդ բանակի շրջակայքում արնախում հրոսակախմբերի կազմակերպողն ու ղեկավարողը՝ Պեհաէտտին Շաքիր պէյն է(32)։

Իսկ Ներքին գործերի նախարարութեան յատուկ գրասենեակի պետ՝ Իհսան պէյը, նոյնպէս վկայում է, որ

երբ ինքը Քիլիսի գայմագամ էր, Ստամպուլից Հալէպ գործուղուած Ապտուլլահատ Նուրի պէյը յայտարարել է, որ [հայերի] տեղահանման հիմնական նպատակը նրանց ոչընչացումն է», որ ինքն այդ հարցով կապի մէջ մտնելով Թալաաթ պէյի հետ, նրանից ուղղակի ստացել է կոտորելու հրաման, որ նա [Թալաաթը] ձգտել է համոզել իրեն, որ դա է երկրին փրկութիւնը(33):

Յետագայում, իր յուշագրութեան մէջ, նոյնիսկ Թալաաթը ընդունում է, որ հայերի տեղահանութեան ժամանակ տեղի են ունեցել բռնութիւններ եւ կոտորածներ(34): Թալաաթը, ինչպէս վկայում է Հալիտէ Էտիպը, խոստովանել է իր անմարդկային արարքը եւ արդարացում է որոնել ազգային շահերի տեսակէտից՝ համոզուած լինելով, որ «այնքան ժամանակ, երբ մի ազգ իր սեփական շահերի համար անում է ամէն ինչ, եւ յաջողւում է, աշխարհն ընդունում է այդ: Ես պատրաստ եմ մեռնելու այդ բանի համար, ինչ կատարեցի եւ ես գիտեմ, որ կը մեռնեմ դրա համար», — յայտարարել է նա(35):

Դատավարութեան 2-րդ, 5-րդ եւ 6-րդ նիստերում հարցաքննութեան է ենթարկւում արեւմտահայութեան կոտորածն իրականացնող «Թեշքիլաթ-ը մահսուսէ»-ն, որը կեանքի էր կոչուել «Միութիւն եւ Առաջադիմութիւն» կուսակցութեան կենտրոնական կոմիտէի անդամների կողմից՝ յատուկ որոշմամբ: Դատաքննութիւնը բացայայտում է, որ «Թեշքիլաթ-ը մահսուսէ»ի յանցագործ գործունէութեանը մասնակցութիւն են ունեցել կուսակցութեան կենտրոնական կոմիտէի գլխաւոր քարտուղար՝ Միտհատ Շիւքրի պէյը, անդամներ՝ Պեհաէտտին Շաքիրը, Դոկտ. Նազիմը, Ռիզա պէյը, Անգարայի պատգամաւոր՝ Աթիֆ պէյը, Հանրակրթական նախարար՝ Շիւքրի պէյը, մէճլիսի նախագահ՝ Խալիլը, Հասարակական անվտանգութեան նախարար՝ Ազիզ պէյը, Կ. Պոլսի կայազօրի հրամանատար՝ Ճեւատը: Յանցագործներին ղեկավարել է Ներքին գործերի

նախարար՝ Թալաաթը։

«Թեշքիլաթ-ը մահսուսէ» անուան տակ գործել են երկու գաղտնի կազմակերպութիւն։ Մէկը եղել է զինուորական կազմակերպութիւն եւ ստեղծուել է Ռազմական նախարարութեան հրամանով։ Ղեկավարն է եղել՝ Սուլէյման Ասքերի պէյը։ Կենտրոնը գտնուել է Կ. Պոլսում։ Դատավարութեան 5-րդ նիստի ժամանակ, մեղադրեալ Աթիֆ պէյը խոստովանում է, որ «Թեշքիլաթ-ը մահսուսէ»-ի համար յատուկ պաշտօնատեղի է եղել Նուրի Օսմանիեում, «Թասֆիր-ի Էֆքեար» թերթի տպարանի դիմաց վարձուած N° 32 տունը»(36)։ Այս կազմակերպութեան խընդիրն է եղել՝ կովկասեան մահմետական ժողովուրդների մէջ Ռուսաստանի դէմ խռովութիւն սերմանելու նպատակով հաւաքագրել Կովկասի տարածքին ծանօթ, տեղի ժողովուրդների լեզուներին տիրապետող մարդկանց եւ խմբերով, գաղտնի ուղարկել սահմանից այն կողմ։

Երկրորդ «Թեշքիլաթ-ը մահսուսէ»-ն գտնուել է Ներքին գործերի նախարարութեան անմիջական տրամադրութեան տակ, եւ Պեհաէտտին Շաքիրի ղեկավարութեամբ իրականացրել է արեւմտահայութեան տեղահանութիւնն ու կոտորածը։ Դա հաստատւում է կուսակցութեան կենտրոնական կոմիտէի անդամ՝ Ռիզա պէյի ցուցմունքով։ «Իմ կարծիքով, — նշում է նա, — Ռազմական նախարարութեան հրամանով կազմակերպուած «Թեշքիլաթ-ը մահսուսէ»-ն գործել է ռազմաճակատում եւ ընդհանրապէս հակառակորդի գտնուած շրջաններում։ Միւս՝ երկրորդ «Թեշքիլաթ-ը մահսուսէ»-ն ստեղծուել է, որպէսզի մի շարք վիլայէթներում, սանճակներում, կազաներում իրականացնի տեղահանութիւնը(37)։

Հետաքննութիւնների նիւթերից պարզւում է նաեւ, որ «Միութիւն եւ Առաջադիմութիւն» կուսակցութեան կենտրոնական կոմիտէի եւ ««Թեշքիլաթ-ը մահսուսէ»-ին վերաբերող կարեւոր գրութիւնները մեծ մասամբ ոչնչա-

ցուել են։ Դրանում հիմնականում մեղաւոր է Դոկտ. Նազըմը։ Նա կոմիտէի գործարքներն ու կատարուած յանցագործութիւնները թաքցնելու նպատակով փախցրել է կուսակցութեան արխիւը։ Սակայն գործադրուած բոլոր ըզգուշութիւններով հանդերձ, (յաճախ հրահանգները տըրուել են բանաւոր), Ռազմական արտակարգ ատեանի ձեռքըն են անցել բաւականաչափ թուով հեռագրեր, նամակներ եւ այլ գրաւոր փաստաթղթեր, որոնք անվիճելիօրէն հաստատում են հայերի տեղահանութեան եւ ոչնչացման ընթացքում «Միութիւն եւ Առաջադիմութիւն» կուսակցութեան կենտրոնական կոմիտէի, Ներքին գործերի նախարարութեան եւ «Թեշքիլաթ-ը մահսուսէ»-ի միջեւ եղած համագործակցութիւնը, ինչպէս նաեւ ցոյց են տալիս, թէ ինչպիսի ակտիւ գործունէութիւն են ծաւալել շրջանային պատասխանատու քարտուղարները «Թեշքիլաթ-ը մահսուսէ»-ի համար քրէական յանցագործներ հաւաքագրելու գործում։

Հարցաքննութեան ընթացքում մեղադրեալներն անընդհատ փորձել են շեղուել ճշգրիտ պատասխաններից։ Խոստովանութիւնից խուսափելու համար, նրանք յաճախ օգտագործել են «չեմ կարողանում յիշել», «յիշողութիւնս թոյլ է» արտայայտութիւնները։ Այնուհանդերձ, խաչաձեւ հարցաքննութեան ժամանակ, որպէս մեղադրական ապացոյց բերուած հեռագրերի, նամակների եւ վկայութիւնների հիման վրայ, լիովին բացայայտուում է իսկութիւնը, այն է՝ որ տեղահանութիւնն ու կոտորածները հաւանութեան են արժանացել կենտրոնական կոմիտէի գաղտնի նիստերից մէկում՝ ձայների մեծամասնութեամբ։

Դատարանը պաշտօնատար անձանց յատկապէս մեղաւոր է ճանաչում, որ իրազեկ լինելով կոտորածների եւ այլ բռնութիւնների մասին, ո՛չ մի գործնական քայլի չեն դիմել դրանք կանխելու գործում։ Ընդհակառակը՝ նպաստել են, որ շարունակուի տեղի ունեցող այդ ողբերգու-

թիւնը։ Այսպէս, Շէյխ-ուլ-իսլամ Մուսա Քեազիմ էֆենտին, որը, որպէս կրօնական առաջնորդ, կարող էր մեծ ազդեցութիւն ունենալ այդ վայրագութիւնները խափանելու խնդրում՝ ո՛չ մի էական քայլի չի դիմել։ Նա թէեւ փորձում է արդարանալ դատարանում, որ ինքը պատասխանատու չէ կառավարութեան անդամների գործադրած յանցագործ արարքների համար, որ մեղաւոր է Ներքին գործերի նախարարութիւնը, սակայն նա խոստովանում է, որ իսլամը եւ կուսակցութիւնը համաձոյլ մի ամբողջութիւն է եւ կուսակցութեան որոշումները ենթակայ են անյապաղ իրականացման, «որ կուսակցութիւնից դուրս գալը նշանակում է իսլամի կրօնից հրաժարուել»(38)։

1919 թուականի Յուլիսի 5-ին արձակուած դատավճռում, շեշտը դրուում է արեւմտահայութեան կոտորածների եւ ունեցուածքի կողոպտման մանրամասնութիւնների վրայ, նշւում է կուսակցութեան կենտրոնական կոմիտէի եւ կառավարութեան ղեկավարների կողմից սահմանադրութեան ոտնահարման փաստերի մասին։ Կարեւոր յանցանշաններից մէկն է համարւում առանց Մէճլիսի որոշման, առաջին համաշխարհային պատերազմին մասնակցելու խնդիրը, ինչպէս նաեւ առեւտրի եւ յատկապէս պարենային հարցում տեղ գտած չարաշահումներն ու սպեկուլացիան։

Քաղաքացիական քրէական օրէնսգրքի 45-րդ յօդուածի առաջին կէտով, դատարանը մահուան վճիռ է կայացրնում Թալաաթի, Էնվերի, Ճեմալի եւ Նազըմի նկատմամբ, իսկ 45-րդ յօդուածի երկրորդ կէտի եւ 55-րդ յօդուածի վերջին կէտի համաձայն, Ճաւիտը, Մուստաֆա Շերեֆը եւ Մուսա Քեազիմը դատապարտւում են 15-ական տարի ժամկէտով աքսորի։ Իբրեւ թէ բաւարար յանցանշաններ չլինելու պատճառաբանութեամբ, ազատ են արձակւում սենատի նախկին նախագահ՝ Ռիֆաթ պէյը, Փոստի եւ Հեռագրատան նախարար՝ Հաշիմ պէյը։ Այս վերջին երկուսի

նկատմամբ դատարանի վճռին յանձնաժողովի ոչ բոլոր անդամներն են եղել համաձայն։ Դատավճռում մոռացութեան են մատնուած դաշնակիցների հովանաւորութեամբ կալանատնից Մալթա կղզի աքսորուած յանցագործները։

«Միութիւն եւ Առաջադիմութիւն» կուսակցութեան շրջանային պատասխանատու քարտուղարների եւ պաշտօնատար անձանց դատաքննութեան նիստերը տեղի են ունենում 1919 թուականի Յունիսի 21-ին, 23-ին, եւ 28-ին։ Դատավճիռը կայացուում է շատ ուշ, այն էլ՝ Կ. Պոլսի Ռազմական Առաջին արտակարգ ատեանի յանձնախմբի կողմից՝ 1920 թ. Յունուարի 8-ին։ Մեղադրական եզրակացութեան եւ դատավճռի տուեալներով ամբաստանւում էին 36 անձինք։

1 Աւնի պէյ — Կուսակցութեան Մանիսայի պատասխանատու քարտուղար։

2 Հասան Սելահէտտին պէյ — Վերակազմեալ կուսակցութեան Պէյօղլուի պատասխանատու քարտուղար։

3 Հիլմի պէյ — Անգարայի պատգամաւոր։

4 Միտհատ պէյ — Կուսակցութեան Բալուի պատասխանատու քարտուղար։

5 Պեսիմ Զուհտի պէյ — Կուսակցութեան Էսկիշեհիրի պատասխանատու քարտուղար։

6 Մեհմետ Ճեմալ պէյ — Կուսակցութեան Հալէպի պատասխանատու քարտուղար։

7 Աղաօղլու Ահմետ — Գարահիսարի պատգամաւոր։

8 Դոկտ. Ահմետ Միտհատ պէյ — Կուսակցութեան Պրուսայի պատասխանատու քարտուղար։

9 Մումթազ պէյ — Սուարիի գայմագամ։

10 Հասան Ֆեհմի պէյ — Սինոպի պատգամաւոր։

11 Սապրի պէյ — Սարուխանի պատգամաւոր եւ Վերակազմեալ կուսակցութեան անդամ։

12 Ճեւտեդ պէյ — Կուսակցութեան Միրկունի պա-

տասխանատու քարտուղարի տեղակալ

13 Սելահէտտին Ճիմճոզ — *Կ. Պոլսի պատգամաւոր։*

14 Հիւսէյն Թոսուն — *Էրզրումի պատգամաւոր եւ ազգային գործակալութեան տնօրէն։*

15 Հասան Նամըք պէյ — *Կուսակցութեան Սալոնիկի պատասխանատու քարտուղար, Ստամպուլի պանքի ներկայացուցիչ։*

16 Ալի Ռիզա — *Կուսակցութեան Պրուսայի պատասխանատու քարտուղարի տեղակալ։*

17 Ապտուլ Քատիր — *Կուսակցութեան Գոնիայի պատասխանատու, քարտուղարի տեղակալ։*

18 Թոտորաքի պէյ — *Գոնիայի գիւղատնտեսութեան տեսուչ։*

19 Սամիհ Ռիֆաթ պէյ — *Գոնիայի վալի։*

20 Սատէտտին պէյ — *Գոնիայի ոստիկանութեան պետ։*

21 Ֆերիտ պէյ — *Կուսակցութեան Գոնիայի ներկայացուցիչ։*

22 Ֆեհմի պէյ — *Ագշեհիրի ճիհանպէյլի պանքի կառավարիչ։*

23 Միւֆթի Զատէ Քեամիլ պէյ — *Ագշեհիրի վալի։*

24 Հասան Պասրի պէյ — *Ագշեհիրի ոստիկանապետի տեղակալ։*

25 Համիտ պէյ — *Կուսակցութեան Ատաբազարի տեղակալ։*

26 Հիւսէյն Նեճատի պէյ — *Հալէպի շրջանի չեթէների առաջնորդ։*

27 Ղանի պէյ — *Կուսակցութեան Սիվասի ներկայացուցիչ։*

28 Միւֆթի Մեհմետ Ալի — *Կուսակցութեան Պոլվատինի ներկայացուցիչ։*

29 Հաճի Աթա պէյ — *Կուսակցութեան Պոլվատինի ներկայացուցիչ։*

30 Գարա Գատը Հասան — *Կուսակցութեան Պոլվա-*

տինի ներկայացուցիչ։

31 Ապտուլ Ղանի պէյ — Կուսակցութեան Էտիրնէի ներկայացուցիչ։

32 Հաճի Ահմետ փաշա — Էնվերի հայրը, կուսակցութեան Էտիրնէի ներկայացուցիչ։

33 Միւնիր պէյ — Կուսակցութեան Գաստամոնուի պատասխանատու քարտուղար։

34 Հասան Ֆեհմի պէյ — Կուսակցութեան Գաստամոնուի պատասխանատու քարտուղարի տեղակալ։

35 Ակեահ պէյ — Գարահիսարի սանիտարական յանձնաժողովի նախագահ։

36 Հայրէտտին պէյ — Գարահիսարի սանիտարական պաշտօնեայ։

1919 Յունիսի 19-ի թուագրութեամբ, մեղադրական եզրակացութեան մէջ մատնանշւում է, որ շրջանային պատասխանատու քարտուղարներն իրենց գործունէութեան ընթացքում, կուսակցութեան կենտրոնական կոմիտէի եւ կառավարութեան կողմից ստացուած բանաւոր եւ գրաւոր գաղտնի հրամանների համաձայն, անօրինական կերպով միջամտել են կառավարութեան գործերին եւ մասնակցել՝ Թալաաթ փաշայի եւ նրա գործընկերների կատարած յանցագործութիւններին։

Պատասխանատու քարտուղարների հարցաքննութեան ընթացքում հիմնական շեշտը նոյնպէս դրւում է արեւմտահայութեան տեղահանութեան, կոտորածների եւ ունեցուածքի կողոպտման հարցի վրայ։ Էտիրնէի պատասխանատու քարտուղարն ու միւս մեղադրեալներն իրենց յանցանքը թեթեւացնելու համար աշխատել են արդարանալու ուղիներ որոնել, որ տեղահանութիւնը կատարուել է իբրեւ թէ օրէնքի հիման վրայ եւ կառավարութեան կարգադրութեամբ։ Յանձնաժողովի նախագահ՝ Մուստաֆա Նազըմ փաշան, հերքելով նրանց կեղծ ցուցմունքները,

բացայատում է, որ տեղահանութիւնը եղել է լոկ պատրուակ՝ իրականացնելու համար հայերի ոչնչացումը։

1920 թուականի Յունուարի 8-ի դատավճռում նշուում է, որ վերոյիշեալ պատասխանատու քարտուղարներից եւ լիազօրներից մի քանիսը օժանդակել են կենտրոնական կոմիտէի նախաձեռնութեանը եւ իրենց մասնաճիւղերում հաւաքագրուած մարդասպանների եւ այլ քրէական յանցագործների միջոցով կազմակերպել են հայերի կոտորածը եւ նրանց ունեցուածքի կողոպուտը։

Քրէական օրէնսդրութեան 45-րդ յօդուածի եւ 55-րդ յօդուածի վերջին կէտի համաձայն՝ Սինոպի պատգամաւոր Հասան Ֆեհմի պէյը, Էտիրնէի պատասխանատու քարտուղար՝ Ապտուլ Ղանի պէյը, Բալուի պատասխանատու քարտուղար՝ Միտհատ պէյը դատապարտուում են տասը տարուց աւելի, իսկ միւսները՝ մի քանի տարի ժամկէտով բանտարկութեան։ Այդ դատավճռում եւս մռայլութեան են մատնուում Մալթա կղզի աքսորուած յանցագործները։

Վերոյիշեալ դատավարութիւնների ընթացքում, ըՍտամպուլի Ռազմական արտակարգ ատեանը մանրամասն հետաքննութիւն էր կատարում նաեւ գաւառներում տեղի ունեցած տեղահանութեան եւ կոտորածների անմիջական իրականացնողների նկատմամբ։ Առաջինը լսւում է Եոզղաթի հայութեան տեղահանութեան եւ կոտորածի գլխաւոր յանցաւորներ՝ Եոզղաթի մութասարրիֆի տեղակալ եւ Պողազլեանի գայմագամ՝ Քեմալ պէյի եւ Եոզղաթի ոստիկանութեան պետ՝ մայոր Թեւֆիկ պէյի կատարած յանցագործութիւնների հարցը։

Եոզղաթը գտնուում էր պատերազմական թատերաբեմից շատ հեռու տարածքում, բայց տեղի հայութիւնը նոյնպէս ենթարկուեց դաժան հալածանքների։ 1919 թ. Ապրիլի 8-ի դատավճռում(39), բերուած մեղադրական ապացոյցները վկայում են, որ տեղի հայութեանը կոտորելու համար, Քեմալ պէյը ոտքի է հանել ոչ միայն իր

տրամադրութեան տակ գտնուող սանճակի թուրքերին, այլեւ կոչ է արել բոլոր մահմեդականներին ոտքի կանգնել հայ ժողովրդին իսպառ ոչնչացնելու համար։ Դատարանը միաձայն մեղաւոր ճանաչելով նրան, կայսերական քրէական օրէնսգրքի 170 եւ 171-րդ յօդուածների հիման վրայ դատապարտում է մահուան, իսկ Թեւֆիկ պէյը նոյն օրէնսգրքի 45-րդ յօդուածով, դատապարտուում է 15 տարուայ տաժանակիր աքսորի։

Տրապիզոնի հայերի տեղահանութեան եւ կոտորածին վերաբերող 1919 թուականի Մայիսի 22-ի դատավճռով մեղադրուում են 8 յանցագործներ։

1 Ճեմալ Ազմի պէյ — Տրապիզոնի վալի։
2 Նայիլ պէյ — Կուսակցութեան Տրապիզոնի պատասխանատու քարտուղար։
3 Մեհմետ Ալի պէյ — Տրապիզոնի հարկային տեսուչ։
4 Նուրի պէյ — Տրապիզոնի ոստիկանութեան պետ։
5 Մուստաֆա էֆենտի — Տրապիզոնի [գաղտնի] գործակալութեան տեսուչ։
6 Թալաաթ պէյ — Տրապիզոնի ոստիկանութեան քընիչի օգնական եւ գայմագամ։
7 Նիազի էֆենտի — Տրապիզոնի հիւրանոցի տնօրէն։
8 Ալի Սայիբ պէյ — Տրապիզոնի բժշկական տեսուչ։

Դատավճռում նշուում է. «Մեղադրեալներ՝ Տրապիզոնի նախկին վալի Ճեմալ Ազմի պէյը, «Միութիւն եւ Առաջադիմութիւն» կուսակցութեան Տրապիզոնի պատասխանատու քարտուղար Նայիլ պէյը, սերտօրէն համագործակցել են գաղտնի հրահանգները իրականացնելու գործում։ Արտաքուստ նրանք իբրեւ թէ գործել են տեղահանութեան օրէնքի համաձայն, մինչդեռ այդ գաղտնի հրահանգների իրականացման ժամանակ նրանք հանդէս են բերել անձնական գործուն միջոցներ՝ հայերին կոտո-

ըելու գործում(40)։

Գործադրուած ծանր յանցագործութիւնների համար դատարանը վերոյիշեալ 170, 171-րդ յօդուածների հիման վրայ, հեռակայ կարգով մահուան է դատապարտել Ճեմալ Ազմի եւ Նայիլ պէյերին։ Դատարանում, ներկայ Տրապիզոնի հարկային տեսուչ՝ Մեհմետ Ալի պէյը դատապարտըւում է տասը տարի ժամկէտով տաժանակիր աքսորի, իսկ միւս մեղադրեալները՝ 1-2 տարուայ բանտարկութեան։

Յայտնի է, որ պատերազմի ընթացքում երիտթուրքերը մի շարք վայրերում դատաստան են տեսել նաեւ արաբների, ասորիների եւ յատկապէս յոյների նկատմամբ։ Պէօյիւք Տերէի (Կ. Պոլսի արուարձաններից), ոչ-մահմետական բնակչութեան տեղահանութեան ժամանակ, հայերի հետ ծանր հալածանքի են ենթարկուել նաեւ յոյները։

1919 թուականի Մայիսի 24-ին, Պէօյիւք Տերէի տեղահանութեանը վերաբերող դատավճռում նշւում է, որ տուեալ շրջանի ղեկավարները բնակչութեան տեղահանութեան ժամանակ, ոտնահարելով մարդկային ամենատարրական իրաւունքները, իրենց անձնական շահերն ու ստոր մտադրութիւնները իրականացնելու համար, բնակչութեանը տրամադրել են պատրաստութեան կարճ ժամանակամիջոց, որպէսզի նրանք ստիպուած լինեն թողնել իրենց ունեցուածքն ամբողջութեամբ եւ հեռանալ։

Պէօյիւք Տերէի դատավճռով, բոլոր մեղադրեալները դատապարտւում են մի քանի տարի ժամկէտներով բանտարկութեան։ Դրանք են՝

1 Ապտուլ Քերիմ պէյ — Պէօյիւք Տերէի ոստիկանապետ։

2 Ռեֆիկ Հըֆզի պէյ — Սալոնիկցի առեւտրական։

3 Ռիզալի Ճելալ էֆենտի — Պէօյիւք Տերէի մուխտար։

4 Հաֆըզ Մահմուտ էֆենտի — Մեծահարուստ առեւտրական։

Դեռեւս երիտթուրքերի կառավարութեան պարագլուխների դատավարութեան ժամանակ, կուսակցութեան կենտրոնական կոմիտէի անդամ եւ «Թեշքիլաթ-ը մահսուսէ»-ի նախագահ՝ Պեհաէտտին Շաքիր պէյը հեռակայ կարգով մեղադրուում է արեւմտահայութեան տեղահանութեան կոտորածների մտայղացման ու հիմնական կազմակերպիչներից մէկը լինելու ծանր յանցանքով: Պեհաէտտին Շաքիր պէյը եւ կուսակցութեան Խարբերդի պատասխանատու քարտուղար՝ Ռեսնելի Նազըմ պէյը իրենց կատարած ծանր յանցագործութիւնների համար դատապարտուում են Խարբերդի հայերի տեղահանութեան եւ կոտորածին վերաբերող 1920 թ. Յունուարի 13-ի դատավճռով: Պեհաէտտին Շաքիր պէյը հեռակայ կարգով դատապարտուեց մահուան, իսկ Ռեսնելի Նազըմ պէյը՝ 15 տարի տաժանակիր աքսորի: Հետաքրքիր է, որ դատավճռի վերջում, դատական ատեանի երեք անդամներ յատուկ նշում են կատարել, որ Ռեսնելի Նազըմ պէյը նոյն աստիճանի յանցագործ է, ինչ Պեհաէտտին Շաքիրը եւ պահանջել են նոյնպէս մահավճիռ կայացնել նրա նկատմամբ:

Այսպիսով, դատավարութեան նիւթերը որոշակի պատկերացում են տալիս արեւմտահայութեան տեղահանութեան եւ կոտորածների կազմակերպման ու իրականացման մասին: Դատավարութիւնը իրականում չլուծեց եւ չէր էլ կարող լուծել մէկուկէս միլիոնից աւելի նահատակուած հայերի արեան եւ միլիարդների հասնող լքեալ գոյքի նիւթական արժէքի հատուցումը: Հայ ժողովուրդը զրկուեց իր բնօրրանից՝ Արեւմտեան Հայաստանից:

Դատաւորները, ի հարկէ ոչ բոլոր դէպքերում, ցուցաբերեցին անհրաժեշտ հետեւողականութիւն: Նրանցից շատերը, կապուած լինելով երիտթուրքերի հետ, յաճախ հակուած էին չխորանալ կատարուած փաստերի մէջ եւ չընդունել խիստ որոշումներ: Դատաքննութեան ընթաց-

քում թոյլ են տրուել թերացումներ։ Օրինակ՝ շրջանային պատասխանատու քարտուղարների դատավարութիւնը տեղի է ունեցել 1919 թ. Յունիս ամսին, մինչդեռ դատավճիռը ձգձգուելով հաստատուել է 1920 թ. Յունուարին։ Եթէ հեռակայ կարգով դատի տրուած մեղադրեալների նկատմամբ մահուան դատավճիռ կայացնելու խնդրում տարակուսանք չի առաջանում, ապա ներկայ գտնուող յանցագործների հանդէպ պատիժ սահմանելու հարցում հանդէս է բերուել աւելորդ հանդուրժողականութիւն։

Այդ օրերին, իթթիհատականները զանազան նենգ որոգայթներ են լարել, խանգարելու համար դատավարութեան բնականոն ընթացքը։ Յատկապէս ջանացել են ազդել Ռազմական ատեանի անդամների վրայ՝ թեթեւացնելու մեղադրեալների յանցանքը։ Կ. Պոլսում լոյս են տեսնում մի քանի կեղծ հրապարակումներ, որոնց հեղինակները փորձում են ապացուցել, որ հայերն են իբրեւ բռնութիւններ գործադրել թուրքերի նկատմամբ(41)։

Կուսակցութեան կենտրոնական կոմիտէի անդամների եւ երիտթուրքական պետական գործիչների դատավարութեան վերջում, գլխաւոր դատախազի օգնական Ռեշատ պէյը իր ընդարձակ ելոյթում, քաղաքական նենգ նպատակներով կանգ է առել հայ-թուրքական յարաբերութիւնների անցեալի իրադարձութիւնների վրայ, մեղադրել՝ հայերին, իրենց ազատագրական պայքարի համար, յայտարարելով, որ «Ֆրանսիական բուրժուական մեծ յեղափոխութիւնից յետոյ, երբ Յունաստանը անկախութիւն ձեռք բերեց, հայերը մի ազատ Հայաստան հիմնելու նպատակով սկսեցին ապստամբական շարժումներ ծաւալել օսմանեան պետութեան դէմ, առանց մտածելու, որ Օսմանեան կայսրութեան ոչ մի տարածքում, հայերը մահմետականութեան հետ համեմատած մեծամասնութիւն չեն կազմել»(42)։ Ռեշատ պէյը ամբոխավար կերպով անտեսում է այն հանգամանքը, որ հայերն ապրում էին իրենց հայրե-

նիքում։

Ռեշատ պէյը 1909 թուականի Ատանայի ողբերգական դէպքերը նոյնպէս հետեւանք է համարում հայերի ապըստամբական շարժման։ Իսկ առաջին համաշխարհային պատերազմի ընթացքում, իբր հայերը թիկունքից սպառնացել են թուրքական բանակի գործողութիւններին։ Այսպիսի կեղծ յայտարարութիւններից յետոյ, այնուհանդերձ Ռեշատ պէյը իր ելոյթի վերջում ստիպուած խոստովանում է, որ հայերի նկատմամբ գործադրուած տեղահանութեան օրէնքը ի չարն է գործադրուել, տեղահանութեան է ենթարկուել նոյնիսկ ռազմաճակատից հեռու գտնուող վիլայէթների հայ բնակչութիւնը, եւ գործադրուած բռնութիւնների հետեւանքով տեղի է ունեցել այդ ողբերգութիւնը։

Հարկ է նշել, որ արեւմտահայերի բեկորների հալածանքի, բնաջնջման քաղաքականութիւնը շարունակուեց նաեւ յետագայում՝ քեմալականների վարած ազգայնական շարժման շրջանում։ 1919–1922 թուականներին, նրանք զանգուածային նոր կոտորածներ կազմակերպեցին Արեւմըտեան եւ Արեւելեան Հայաստանում, Կիլիկիայում եւ Թուրքիայի մի շարք վայրերում, որոնց զոհ գնացին մօտ 250 հազար հայեր։

Մեր օրերում, թուրքական կառավարող շրջաններն ու պատմաբանները յամառօրէն շարունակում են մերժել արեւմտահայութեան հանդէպ կատարուած ցեղասպանութիւնը եւ ընդհանրապէս ձգտում են զանազան միջոցներով եւ հակագիտական հրատարակութիւններով նենգափոխել հայ ժողովրդի պատմութիւնը։ Նրանց կարծիքով «հայ–թուրքական բախումները» իբր առաջ են եկել մեծ պետութիւնների խարդաւանքների հետեւանքով, որ 1915–1916 թթ. հայերն են բռնութիւն գործադրել թուրքերի նկատմամբ։ Իսկ 1919 թ. Պոլսում տեղի ունեցած երիտթուրքերի պարագլուխների դատաքննութիւնը համարում

են իթթիհատականների եւ իթիլաֆականների միջեւ գոյութիւն ունեցող միջկուսակցական ոխակալութեան արդիւնք։

Հակառակ թուրք կեղծարարների գործադրած չարամիտ ջանքերի, համաշխարհային հասարակական կարծիքը դատապարտել եւ դատապարտում է հայ ժողովրդի նկատմամբ կատարուած յանցագործութիւնը։ Բնականաբար, պատերազմի աւարտից յետոյ, երիտթուրքերի պարագլուխների դատավարութիւնը խոշոր երեւոյթ էր արեւմտահայութեան նկատմամբ տեղի ունեցած հալածանքներն ու ցեղասպանութիւնը համայն մարդկութեան առաջ բացայայտելու տեսանկիւնից։

* * *

Դատավարութիւնների արձանագրութիւններն ու որոշումները 1919-1920 թթ. շատ քիչ տպաքանակով հրատարակուեցին թուրքական պաշտօնական «Թաքվիմ-ի վեքայի»(43), թերթի յաւելուածներում (արաբատառ)։ Բոլոր անուանաթերթերը կրում են հետեւեալ խորագիրը. «Նորին մեծութիւն փատիշահի 1335 թ. (1919) Մարտի 8-ի կայսերական հրամանով կազմուած ռազմական արտակարգ ատեանի դատավարութեան արձանագրութիւնը»։ Թերթերի յաւելուածների պատճէնները պահւում են Հայաստանի կենտրոնական պետական պատմական արխիւում, (ֆոնտ 450, ցուցակ N° 52)։

Առայսօր երիտթուրքերի դատավարութեան նիւթերի առանձին մասեր հրապարակուել են ֆրանսերէն, ռուսերէն եւ հայերէն լեզուներով։ Ֆրանսիացի հեղինակ Ժան-Մարի Կարզուն, 1975 թ. հրատարակած իր «Ընդօրինակելի ցեղասպանութիւն. Հայաստան, 1915»(44) արժէքաւոր աշխատութեան յաւելուածում, թուրքերէն բնագրից պատշաճ մակարդակով թարգմանուած՝ բերել է Եոզղաթի, Տը-

բապիզոնի եւ Խարբերդի հայերի տեղահանութեան եւ կոտորածների պատասխանատուների դատավարութեան վճիռները։ Երիտթուրքական կառավարութեան ղեկավարների եւ «Միութիւն եւ Առաջադիմութիւն» կուսակցութեան կենտրոնական կոմիտէի անդամների դատավարութեան մեղադրական եզրակացութեան ռուսերէն թարգմանութիւնը (ֆրանսերէնից) առաջին անգամ գիտական շրջանառութեան մէջ դրուեց ակադեմիկոս Մ.Գ. Ներսիսեանի եւ պատմական գիտութիւնների դոկտոր Ռ.Գ. Սահակեանի կազմած «Հայերի գենոցիդը Օսմանեան կայսրութեան մէջ»(45) փաստաթղթերի ժողովածուում, որտեղ որոշ կրճատումներով բերուած են նաեւ Տրապիզոնի եւ Խարբերդի հայերի տեղահանութեան ու կոտորածների պատասխանատուների վերաբերեալ կայացած դատավճիռները։ Եոզղաթի տեղահանութեան եւ կոտորածի պատասխանատուների դատավճիռը արեւմտահայերէն է թարգմանել հայր Գրիկէրը (Հայր Գրիգոր Կէրկէրեան), «Եոզղատի հայասպանութեան վաւերագրական պատմութիւնը»(46) շահեկան աշխատութեան մէջ։ Գրիկէրը բերել է նաեւ Եոզղաթի դատաքննութեանը վերաբերող մի շարք վաւերագրական նիւթերի թարգմանութիւններ՝ թուրքերէն բնագրերով։ Դատավարութեանը վերաբերող առանձին նիւթերի հայերէն (համառօտագրուած), թարգմանութիւնները՝ 1919–1920 թթ. մամուլից քաղուած, բերուած են նաեւ Ճ. Ս. Կիրակոսեանի «Երիտթուրքերը պատմութեան դատաստանի առաջ» գրքում։

Ստորեւ՝ ամբողջութեամբ հրապարակւում են բնագրից հայերէն թարգմանուած «Միութիւն եւ Առաջադիմութիւն» կուսակցութեան կենտրոնական կոմիտէի անդամների, երիտթուրքական կառավարութեան ղեկավարների, կուսակցութեան շրջանային պատասխանատու քարտուղարների, պաշտօնեաների դատաքննութեան նիւթերը, որոնք առնչւում են արեւմտահայութեան տեղահանու-

թեան եւ կոտորածների հետ։ Թարգմանութեան մէջ չեն ընդգրկուած կուսակցութեան համագումարների, կարգապահական հարցերի, ինչպէս նաեւ պարենային եւ առեւտրի խնդրում տեղի ունեցած չարաշահումներին վերաբերող նիւթերը։

Իհարկէ, դատաքննութեան նիւթերը ամբողջական չեն, քանի որ հարցաքննութիւնների բոլոր արձանագրութիւնները չեն հրապարակուել «Թաքվիմ-ի վեքայի»-ի յաւելուածներում։ Արեւմտահայութեան տեղահանութեան եւ կոտորածին վերաբերող վաւերագրական նիւթերը (հեռագրեր, հրահանգներ, մեղադրեալների նախնական հարցաքննութեան արձանագրութիւններ, ականատեսի վկայութիւններ եւ այլն), ամփոփուած են եղել ռազմական արտակարգ ատեանի 293 թղթապանակներում(47)։ Բնական է, որ դրանց ամբողջական հրատարակումը առաւել մանրամասն կը բացայայտէր երիտթուրքերի գործադրած վայրագութիւնները։

Դատաքննութեան նիւթերը թարգմանելիս աշխատել ենք հարազատ մնալ բնագրին։ Վերջում տրուած են անհրաժեշտ ծանօթագրութիւններ։

Սուլթան Մեհմետ 6րդ Վահիտէտտին
(Գահակալութիւնը՝ 1918–1922 թթ.)

ՄԱՍՆ ԱՌԱՋԻՆ

ԵՐԻՏԹՈՒՐՔԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԵԱՆ ՂԵԿԱՎԱՐՆԵՐԻ ԵՒ «ՄԻՈՒԹԻՒՆ ԵՒ ԱՌԱՋԱԴԻՄՈՒԹԻՒՆ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԿՈՄԻՏԷԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ ԴԱՏԱՎԱՐՈՒԹԻՒՆԸ

ՆՈՐԻՆ ՄԵԾՈՒԹԻՒՆ ՓԱՏԻՇԱՀԻ 1335 Թ. (1919) ՄԱՐՏԻ 8-Ի ԿԱՅՍԵՐԱԿԱՆ ՀՐԱՄԱՆՈՎ ԿԱԶՄՈՒԱԾ ՌԱԶՄԱԿԱՆ ԱՐՏԱԿԱՐԳ ԱՏԵԱՆԻ ԴԱՏԱՎԱՐՈՒԹԵԱՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹԻՒՆԸ(1)

Նախագահ՝ գեներալ-լեյտենանտ Մուստաֆա Նազըմ փաշա.

Անդամներ՝ գեներալ-մայոր Զեքի փաշա,
Գեներալ-մայոր Մուստաֆա փաշա,
Գեներալ-մայոր Ալի Նազըմ փաշա,
Գնդապետ՝ Ռեճեպ Ֆերտի պէյ,
Գերագոյն դատախազ՝ Մուստաֆա Նազմի պէյ։

ԱՌԱՋԻՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹԻՒՆ
1335 թ. (1919), Ապրիլի 28, Երկուշաբթի

Դատի տրուած ներկայ գտնուող մեղադրեալների անունները — Սայիտ Հալիմ փաշա, Խալիլ պէյ, Ահմեթ Նեսիմի պէյ, Իպրահիմ պէյ, [Քիւչիւկ](2) Թալաաթ պէյ, Ռիզա պէյ, Միտհատ Շիւքրի պէյ, Զիյա Գէօքալփ պէյ, Քեմալ պէյ, Ճեւատ պէյ, Ալթիֆ պէյ։

Հեռակայ կարգով դատի տրուած մեղադրեալների անունները — Թալաաթ էֆենտի, Էնվեր էֆենտի, Ճեմալ էֆենտի, Դոկտ. Նազըմ էֆենտի, Դոկտ. Պեհաէտտին Շաքիր էֆենտի, Դոկտ. Ռուզուհի էֆենտի, Ազիզ էֆենտի։

Նախագահ — *Ձերդ մեծութեան անո՞ւնը։*
Սայիտ Հալիմ փաշա — *Մեհմեթ Սայիտ Հալիմ։*
Նախագահ — *Հայրանո՞ւնը։*
Սայիտ Հալիմ փաշա — *Հալիմ։*
Նախագահ — *Քանի՞ տարեկան էք։*
Սայիտ Հալիմ փաշա — *Յիսունվեց։*
Նախագահ — *Որտե՞ղ էք ծնուել։*
Սայիտ Հալիմ փաշա — *Գահիրէում։*
Նախագահ — *Որտե՞ղ էք բնակւում։*
Սայիտ Հալիմ փաշա — *Եէնի Քէօյում։*(3)
Նախագահ — *Ի՞նչ կրթութիւն ունէք։*
Սայիտ Հալիմ փաշա — *Բարձրագոյն։*
Նախագահ — *Ամուսնացա՞ծ էք։*
Սայիտ Հալիմ փաշա — *Այո՛։*
Նախագահ — *Նախկինում դատուածութիւն ունեցե՞լ էք։*
Սայիտ Հալիմ փաշա — *Ո՛չ։*
Նախագահ — *Նստէ՛ք։ Ձերդ մեծութեան անունը։*
Խալիլ պէյ — *Խալիլ։*
Նախագահ — *Հայրանո՞ւնը։*

Խալիլ պէյ — *Սալիհ։*
Նախագահ — *Քանի՞ տարեկան էք։*
Խալիլ պէյ — *Քառասունչորս։*
Նախագահ — *Որտե՞ղ էք ծնուել։*
Խալիլ պէյ — *Միլաս*(4) *քաղաքայում։*
Նախագահ — *Որտե՞ղ էք բնակւում։*
Խալիլ պէյ — *Ընշանթաշում*(5)։
Նախագահ — *Ձեր կրթութի՞ւնը։*
Խալիլ պէյ — *Բարձրագոյն։*
Նախագահ — *Նախկին եւ ներկայ պաշտօ՞նը։*
Խալիլ պէյ — *Մէճլիսի նախկին նախագահ։*
Նախագահ — *Ամուսնացա՞ծ էք։*
Խալիլ պէյ — *Այո՛, ամուսնացած եմ։*
Նախագահ — *Նստէ՛ք։ Ձեր անո՞ւնը։*
Ահմետ Նեսիմի պէյ — *Ահմետ Նեսիմի։*
Նախագահ — *Նստէ՛ք։ Հայրանո՞ւնը։*
Ահմետ Նեսիմի պէյ — *Իպրահիմ։*
Նախագահ — *Քանի՞ տարեկան էք։*
Ահմետ Նեսիմի պէյ — *Քառասուներեք։*
Նախագահ — *Որտե՞ղ էք ծնուել։*
Ահմետ Նեսիմի պէյ — *Հանիայում, Կրետէ* [*Կղզի*]։
Նախագահ — *Որտե՞ղ էք բնակւում։*
Ահմետ Նեսիմի պէյ — *Ջալալ-օղլու, Մահմուտիէ պո-ղոտայում*(6)։
Նախագահ — *Ձեր կրթութի՞ւնը։*
Ահմետ Նեսիմի պէյ — *Բարձրագոյն։*
Նախագահ — *Նախկին եւ ներկայ պաշտօ՞նը։*
Ահմետ Նեսիմի պէյ — *Արտաքին գործերի նախարար։*
Նախագահ — *Նախկինում դատուածութիւն ունեցե՞լ էք։*
Ահմետ Նեսիմի պէյ — *Ո՛չ, էֆենտի։*
Նախագահ — *Նստէ՛ք։ Ձեր անո՞ւնը։*
Աթիֆ պէյ — *Աթիֆ։*

Նախագահ — Նստէ՛ք։ Հայրանո՞ւնը։
Աթիֆ պէյ — Իպրահիմ։
Նախագահ — Քանի՞ տարեկան էք։
Աթիֆ պէյ — Երեսունեօթ։
Նախագահ — Որտե՞ղ էք ծնուել։
Աթիֆ պէյ — Ջանաքքալէում(7)։
Նախագահ — Որտե՞ղ էք բնակւում։
Աթիֆ պէյ — Գատը Քէօյում(8)։
Նախագահ — Նախկին եւ ներկայ պաշտօ՞նը։
Աթիֆ պէյ — Անգարայի նախկին պատգամաւոր։
Նախագահ — Ձեր կրթութի՞ւնը։
Աթիֆ պէյ — Բարձրագոյն։
Նախագահ — Նախկինում դատուածութիւն ունեցե՞լ էք։
Աթիֆ պէյ — Ո՛չ, էֆենտի։
Նախագահ — Նստէ՛ք։ Ձեր անո՞ւնը։
Իպրահիմ պէյ — Իպրահիմ։
Նախագահ — Նստէ՛ք։ Հայրանո՞ւնը։
Իպրահիմ պէյ — Մեհմետ Սապիր։
Նախագահ — Քանի՞ տարեկան էք։
Իպրահիմ պէյ — Յիսունութ։
Նախագահ — Որտե՞ղ էք ծնուել։
Իպրահիմ պէյ — Ստամպուլում։
Նախագահ — Որտե՞ղ էք բնակւում։
Իպրահիմ պէյ — Փաշա-պաղչէ, Ինճիր Քէօյում(9)։
Նախագահ — Ձեր կրթութի՞ւնը։
Իպրահիմ պէյ — Բարձրագոյն։
Նախագահ — Նախկինում դատուածութիւն ունեցե՞լ էք։
Իպրահիմ պէյ — Փառք Աստծոյ, չունեմ
Նախագահ — Նախկին եւ ներկայ պաշտօ՞նը։
Իպրահիմ պէյ — Աւագանի եմ։ Նախկինում պետական խորհրդի նախագահ։

Նախագահ — Նստէ՛ք։ Ձեր անո՞ւնը։

Թալաաթ պէյ — Թալաաթ։

Նախագահ — Հայրանո՞ւնը։

Թալաաթ պէյ — Թահիր։

Նախագահ — Քանի՞ տարեկան էք։

Թալաաթ պէյ — Երեսունուրթ։

Նախագահ — Որտե՞ղ էք ծնուել։

Թալաաթ պէյ — Պեշիկթաշում(10)։

Նախագահ — Ձեր կրթութի՞ւնը։

Թալաաթ պէյ — Բարձրագոյն։

Նախագահ — Նախկին եւ ներկայ պաշտօ՞նը։

Թալաաթ պէյ — «Միութիւն եւ Առաջադիմութիւն» կուսակցութեան կենտրոնական կոմիտէի անդամ։

Նախագահ — Նախկինում դատուածութիւն ունեցե՞լ էք։

Թալաաթ պէյ — Ո՛չ։

Նախագահ — Ձեր ինքնութի՞ւնը։

Ռիզա պէյ — Իմը յայտնի է։ Տրապիզոնի տեղահանութեան ընթացքում յայտնել էի(11)։

Նախագահ — Ձեր անո՞ւնը։

Միտհատ Շիւքրի — Միտհատ Շիւքրի։

Նախագահ — Նստէ՛ք։ Հայրանո՞ւնը։

Միտհատ Շիւքրի — Մեհմետ Շիւքրի։

Նախագահ — Քանի՞ տարեկան էք։

Միտհատ Շիւքրի — Քառասունհինգ։

Նախագահ — Որտե՞ղ էք ծնուել։

Միտհատ Շիւքրի — Սալոնիկում։

Նախագահ — Որտե՞ղ էք բնակւում։

Միտհատ Շիւքրի — Նուրի Օսմանիէյում(12)։

Նախագահ — Նախկին եւ ներկայ պաշտօ՞նը։

Միտհատ Շիւքրի — Եղել եմ Պուրսուրի պատգամաւոր։

Նախագահ — Նախկինում դատուածութիւն ունեցե՞լ էք։

Միտհատ Շիւքրի — Ո՛չ, էֆենտի։
Նախագահ — Նստէ՛ք։ Ձեր անո՞ւնը։
Ճեւատ պէյ — Ահմետ Ճեւատ։
Նախագահ — Հայրանո՞ւնը։
Ճեւատ պէյ — Մուստաֆա։
Նախագահ — Քանի՞ տարեկան էք։
Ճեւատ պէյ — Քառասունեօթ։
Նախագահ — Որտե՞ղ էք ծնուել։
Ճեւատ պէյ — Գազանլըքում։(13)
Նախագահ — Որտե՞ղ էք բնակւում։
Ճեւատ պէյ — Պայազէտի շրջանում։(14)
Նախագահ — Ձեր կրթութի՞ւնը։
Ճեւատ պէյ — Աւարտել եմ հրետանային ուսումնարանը։
Նախագահ — Նախկին եւ ներկայ պաշտօ՞նը։
Ճեւատ պէյ — Նախկինում եղել եմ մայրաքաղաքի կայազօրի հրամանատար։
Նախագահ — Նախկինում դատուածութիւն ունեցե՞լ էք։
Ճեւատ պէյ — Ո՛չ, էֆենտի։
Նախագահ — Նստէ՛ք։ Ձեր անո՞ւնը։
Զիյա Գէօքալպ — Զիյա Գէօքալպ։
Նախագահ — Հայրանո՞ւնը։
Զիյա Գէօքալպ — Թեւֆիկ։
Նախագահ — Քանի՞ տարեկան էք։
Զիյա Գէօքալպ — Քառասուներեք։
Նախագահ — Որտե՞ղ էք ծնուել։
Զիյա Գէօքալպ — Տիարպեքիրում։
Նախագահ — Որտե՞ղ էք բնակւում։
Զիյա Գէօքալպ — Ջաղալ-օղլույում(15)։
Նախագահ — Ձեր կրթութի՞ւնը։
Զիյա Գէօքալպ — Բարձրագոյն։
Նախագահ — Նախկին եւ ներկայ պաշտօ՞նը։
Զիյա Գէօքալպ — Նախկինում եղել եմ համալսարանի

դասախօս։

Նախագահ — Նախկինում դատուածութիւն ունեցե՞լ էք։

Զիյա Գէօքալփ — Այո՛, մի քաղաքական հարցով։

Նախագահ — Ո՞ր դատարանում։

Զիյա Գէօքալփ — Թաշ-Քըշլայի(16) դատարանում։

Նախագահ — Ստէ՛ք։ Ձեր անո՞ւնը։

Քեմալ պէյ — Քեմալ։

Նախագահ — Հայրանո՞ւնը։

Քեմալ պէյ — Ալրիֆ։

Նախագահ — Քանի՞ տարեկան էք։

Քեմալ պէյ — Քառասուն։

Նախագահ — Որտե՞ղ էք ծնուել։

Քեմալ պէյ — Ստամպուլում։

Նախագահ — Որտե՞ղ էք բնակւում։

Քեմալ պէյ — Նուրի Օսմանիէյում։

Նախագահ — Ձեր կրթութի՞ւնը։

Քեմալ պէյ — Բարձրագոյն։

Նախագահ — Նախկինում դատուածութիւն ունեցե՞լ էք։

Քեմալ պէյ — Ոչ՛ էֆենտի։

Նախագահ — Նախկին եւ ներկայ պաշտօ՞նը։

Քեմալ պէյ — Եղել եմ Պարենաւորման նախկին նա-խարար։

Նախագահ — Ստէ՛ք։ Ձեր անո՞ւնը։

Շիւքրի պէյ — Շիւքրի։

Նախագահ — Հայրանո՞ւնը։

Շիւքրի պէյ — Հիւսէյն։

Նախագահ — Որտե՞ղ էք ծնուել։

Շիւքրի պէյ — Քաստամոնուում։

Նախագահ — Քանի՞ տարեկան էք։

Շիւքրի պէյ — Քառասուներեք։

Նախագահ — Որտե՞ղ էք բնակւում։

Շիւքրի պէյ — Շիշլիում(17)։

Նախագահ — Նախկին եւ ներկայ պաշտօ՞նը։

Շիւքրի պէյ — Նախկինում եղել եմ Հանրակրթական նախարար։

Նախագահ — Նախկինում դատուածութիւն ունեցե՞լ էք։

Շիւքրի պէյ — Ոչ՝ էֆենտի։

Նախագահ — (Խօսքն ուղղելով քարտուղարին) — Փախուստի մէջ գտնուողներից որեւէ մէկը ներկայացե՞լ է, թէ՞ ոչ։ Կարդացէ՛ք [որոշումը]։

ՈՐՈՇՈՒՄ

«Միութիւն եւ Առաջադիմութիւն» կուսակցութեան կենտրոնական կոմիտէի եւ Մէճլիսի գլխաւոր խորհրդի փախուստի մէջ գտնուող անդամներից նախկին մեծ վեզիր Թալաաթ փաշան, զինուորական շարքերից վտարուած նախկին Ռազմական նախարար Էնվեր էֆենտին, նախկին Ծովային նախարար Ճեմալ էֆենտին, Հանրակրթական նախկին նախարար՝ Դոկտ. Նազըմ պէյը, Դոկտ. Պեհաէտտին Շաքիր պէյը, Դոկտ. Ռուզուհի պէյը, եւ նախկին Հասարակական անվտանգութեան տեսուչ Ազիզ պէյը մեղադրւում են [երկիրը] պատերազմի մէջ ներքաշելու, «Թեշքիլաթ-ը մահսուսէ»-ի («Յատուկ կազմակերպութիւն»), հետ սերտ առընչութիւն ունենալու եւ այլ յանցագործութիւններ կատարելու համար։ Դատարան ներկայանալու համար քրէական օրէնսգրքի 371-րդ յօդուածի համաձայն, նախագահութեան կողմից յատկացուել էր 10 օր։ Այդ ընթացքում չներկայանալու դէպքում, նրանք համարւում են օրինազանցներ, եւ դատավարութիւնը նրանց նկատմամբ ընթանալու է հեռակայ կարգով։ Այսպիսով, նրանք, չներկայանալով դատավարութեան, զրկւում են քաղաքացիական իրաւունքից՝ ունեցուածքի բռնագրաւումով, եւ այդ կապակցութեամբ նրանք երբեւէ իրաւունք չունեն դատական հայց ներկայացնելու։ Դատավարութեան ընթացքում մեղադրեալ-

ների թաքստոցները իմացողները պէտք է յայտնեն դատարանին, իսկ արդարադատութեան պաշտօնակատարները պարտաւոր են անյապաղ ձերբակալելու նրանց։ Գլխաւոր դատախազութեան կողմից վերոյիշեալներին կալանքի տակ առնելը եւ ունեցուածքի բռնագրաւումը բխում է քրէական օրէնսգրքի 372 յօդուածից։

Գլխաւոր դատախազ Մուստաֆա Նազմի պէյ — Նշէ՛ք ամսաթիւը։

Դատական քարտուղար — Ապրիլ 14։

Գլխաւոր դատախազ — Առայսօր չեն ներկայացել, ուստի պահանջում եմ նրանց դատել հեռակայ կարգով։

Նախագահ — Նորին մեծութիւն Սայիտ Հալիմ փաշա՛, Ճելալետտին Արիֆ եւ Հասան Հայրի պէյերը ձեր դատապաշտպաննե՞րն են։

Սայիտ Հալիմ փաշա — Այո՛, էֆենտի։

Նախագահ — Շատ լաւ։ Խալիլ պէյ-էֆենտի. Էսատ եւ Քեազիմ պէյերը, ինչպէս նաեւ Թահսին էֆենտին ձեր դատապաշտպաննե՞րն են։

Խալիլ պէյ — Այո՛, էֆենտի։

Նախագահ — Ահմետ Նեսիմի պէ՛յ. Շաքիր եւ Էսատ Մուհլիս պէյերը ձեր դատապաշտպաննե՞րն են։

Ահմետ Նեսիմի պէյ — Այո՛, էֆենտի։

Նախագահ — Հանրակրթութեան նախկին նախարար Շիւքրի պէյ էֆենտի՛. Սատէտտին Ֆերիտ պէյը ձեր դատապաշտպա՞ն է։

Շիւքրի պէյ — Այո՛, էֆենտի։

Նախագահ — Իպրահիմ պէյ էֆենտի՛. դուք ո՞ւմ էք դատապաշտպան ընտրել։

Իպրահիմ պէյ — Մահիր, Եուսուֆ, Ճեմալ եւ Քատրի պէյերին։

Նախագահ — Քեմալ պէ՛յ. Սատէտտին, Էմին Ատիլ, Ահմետ Ռամիզ եւ Հասան Հայրի պէյերը ձեր դատապաշտպաննե՞րն են։

Միտհատ Շիւքրի պէյ — Այո՛, ինչպէս նաեւ Սատէտտին Ֆերիտ եւ Ռամիզ պէյերը։

Նախագահ — Այստեղ նրանց անունները չկան, ուրեմն՝ նրանք եւս ձեր դատապաշտպաններն են։

Միտհատ Շիւքրի պէյ — Այո՛, էֆենտի։

Նախագահ — Զիա Գէօքալպի պէ՛յ. Հայտար Ռիֆաթ եւ Իսմայիլ Թեւֆիկ պէյերը ձեր դատապաշտպանն՞ե՞րն են։

Զէյա Գէօքալպի — Այո՛, էֆենտի։

Նախագահ — Փաստաբան էֆենտինե՛ր, ռազմական ատեաններում, աւելի ճիշդ՝ ռազմական արտակարգ ատեաններում մեղադրեալների պաշտպանութիւնը դիւրացնելու կամ անհրաժեշտութեան դէպքում՝ նրանց օժանդակելու համար օրէնքը երբեւէ չի ստիպել եւ ընդհանրապէս անհրաժեշտ էլ չի եղել դատավարութեան ընթացքում դատապաշտպանների ներկայութիւնը։ Այնպէս որ, այս դատավարութեան բացարձակ արդար եւ անշահախնդիր ընթացքը վկայակոչելու համար Ռազմական ատեանը թոյլատրեց, որ այն ընթանայ դռնբաց։ Այնուհանդերձ, ստիպուած ենք ձեզ զգուշացնելու, որ այս թոյլտուութիւնը չչարաշահէք եւ մինչեւ հարցաքննութեան աւարտը հակառակ օրէնքի որեւէ միջամտութիւն չկատարէք եւ բացարձակ լուռ մնալով՝ ունկնդրէք։

(Դիմելով դատական քարտուղարին)

— Խնդրեմ, կարդացէք մեղադրական եզրակացութիւնը։

(Մեղադրական եզրակացութիւնը ընթերցում է դատական քարտուղար՝ Շէֆիք պէյը)։

ՄԵՂԱԴՐԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹԻՒՆ

Մանրամասն քննարկեցինք հարցաքննութեան վերաբերող փաստաթղթերը, ինչպէս նաեւ Ռազմական ատեանի գլխաւոր դատախազութեան վերոյիշեալ որոշումը, որը վերաբերում է լուծարքի ենթարկուած «Միութիւն եւ

Առաջադիմութիւն» կուսակցութեան նախագահ՝ Սայիտ Հալիմ փաշայի, Մէճլիսի գլխաւոր խորհրդի անդամներ՝ Թալաաթի, Ճեմալի, Իպրահիմի, Շիւքրիի, Խալիլի, Ահմետ Նեսիմիի, կուսակցութեան գլխաւոր քարտուղար՝ Միտհատ Շիւքրիի, կենտրոնական կոմիտէի անդամներ՝ Ստամպուլի պատգամաւոր Քեմալի, Զիյա Գէօքալպի, Դոկտ. Ռուզուհիի, Քիւչիւկ Թալաաթի, ինչպէս նաեւ նոյն կոմիտէի անդամներ եւ «Թեշքիլաթ-ը մահսուսէ»-ի ղեկավարներ՝ Դոկտ. Պեհաէտտին Շաքիրի, Դոկտ. Նազըմի, Ռիզայի եւ նոյն կազմակերպութեան գործադիր կոմիտէի անդամներ՝ նախկին Հասարակական անվտանգութեան տնօրէն՝ Ազիզ պէյի եւ մայրաքաղաքի նախկին պարետ՝ Ճեւատ պէյի դատաքննութեանը։

Դատական փաստաթղթերը վկայում են, որ «Միութիւն եւ Առաջադիմութիւն» կուսակցութեան կենտրոնական կոմիտէն միաժամանակ բաղկացած է եղել երկու յատուկ կազմակերպութիւններից, որոնցից մէկը գործել է հրապարակայնօրէն՝ կուսակցութեան ներքին կանոնադրութեան եւ ծրագրի համաձայն, իսկ միւսը գործել է ընդյատակեայ եւ գաղտնի հրահանգներով։ Փաստերը, որոնք հաստատում են այդ կոմիտէի վերոյիշեալ ազդեցիկ ղեկավարների պատասխանատուութիւնը, վկայում են, որ կոմիտէն, նրա իրաւական դէմքը, մեղադրւում է օրինազանցութեան, չարաշահումների եւ մի շարք կոտորածներ կատարելու յանցանքով։ Ստորեւ բերուած փաստարկները լիովին ապացուցում են նրանց գործադրած յանցագործութիւնների չափը։

Անցած 1330 (1914) թուականի Յուլիսին, կուսակցութեան ազդեցիկ ղեկավարների, այդ թւում՝ ներկայումս զինուորական շարքերից վտարուած, փախուստի մէջ գտնուող Էնվերի, Ճեմալի, Թալաաթի եւ միւս գործընկերների մասնակցութեամբ տեղի ունեցած խորհրդակցութիւնից անմիջապէս յետոյ, երբ պատերազմ յայտարարուեց, նրանք

ձգտեցին օգտագործել այն առիթը, որ Եւրոպան զբաղուած է համաշխարհային պատերազմով եւ աշխատեցին ահաբեկութեամբ, բռնի ուժով լուծել այնպիսի հարցեր, որոնք կարելի էր հարթել հանդարտօրէն, արդար եւ առողջ բանականութեամբ։ Այդպիսով, իրենց ճակատագրական գործունէութեամբ ստեղծեցին անվերջ խռովայոյզ վիճակ՝ խիստ ծանրացնելով ժողովրդի կացութիւնը։

Արտաքուստ նրանք այնպէս էին ձեւացնում, թէ իբր պայքարում են ազգային շահերի համար, մինչդեռ իրականում՝ հետապնդում էին միայն իրենց անձնական շահը եւ պատերազմի հետ կապուած ծանր հոգսեր ստեղծելով՝ աշխատում էին լռեցնել ժողովրդին։ Իրենց նենգ դիտաւորութիւնները իրականացնելու համար, նրանք ի վերջոյ կարողացան երկիրը ներքաշել համաշխարհային պատերազմի մէջ։ Ռազմական գործողութիւնների ընթացքում, իրենց գաղտնի ծրագրերը իրականացնելու համար, սկսեցին աշխուժացնել գաղտնի կոմիտէների գործունէութիւնը։ Այսպէս, յանցագործներին բանտերից ազատ արձակելով, ստեղծուեց «Թեշքիլաթ-ը մահսուսէ»-ն, որն իր գաղտնի հրամաններն ու հրահանգները ստանում էր Ստամպուլում ստեղծուած յատուկ կոմիտէից, որի կազմի մէջ մտնում էին Հասարակական անվտանգութեան տնօրէն՝ Ազիզ պէյը, կուսակցութեան կենտրոնական կոմիտէի անդամներ՝ Աթիֆ եւ Դոկտ. Նազըմ պէյերը։ Կոմիտէի որոշումները հաստատւում եւ կեանքի էին կոչւում Ռազմական սպայակոյտի կամ Ստամպուլի կայազօրի հրամանատար՝ Ճեւատ պէյի կողմից։

«Թեշքիլաթ-ը մահսուսէ»-ի գործակալներին եւ ընդհանրապէս նրա գործունէութեան շրջաններն առաքւում էին հսկայական գումարներ։

Դոկտ. Պեհաէտտին Շաքիրը «Թեշքիլաթ-ը մահսուսէ»-ի ղեկավարներին տուել էր ծածկագրի բանալին, տրամադրել՝ ինքնաշարժեր, դրամական մեծ գումարներ

եւ այլ անհրաժեշտ զինամթերք։ Այս ձեւով նա սկսել էր գաղտնապէս իրագործել «Միութիւն եւ Առաջադիմութիւն» կուսակցութեան ծրագրերը։

Առանձին շրջաններ ուղարկուած այս կազմակերպութեան գործակալներից մի քանիսը, իրենց ղեկավարների ցուցմունքներով, ինչպէս նաեւ «Միութիւն եւ Առաջադիմութիւն» կուսակցութեան այլ վայրերի կոմիտէների ներկայացուցիչներն ու պետական պաշտօնեաները, իբրեւ թէ կուսակցութեան հրամանները կատարելու մղումով, կամ էլ որոշ մարդկանց գործադրած հարկադրանքի ներքոյ, առանց ազգի եւ հաւատքի խտրականութեան, սկսեցին ժողովրդին կոտորել, կողոպտել, ունեցուածքը այրել եւ շատերին տանջամահ անել։ Ջնայած որ ահաբեկման սլաքը հիմնականում ուղղուած էր հայերի դէմ, այնուհանդերձ տուժեցին նաեւ [կայսրութեան] այլ տարրերն ու մեծ թուով թուրքեր։(18)

Ներկայ հետաքննութեան գլխաւոր հարցն այն է, որ հայերի տեղահանութեան ընթացքում, տարբեր ժամանակներում եւ զանազան վայրերում տեղի ունեցած յանցագործութիւնները եւ յատկապէս իւրաքանչիւր յանցագործութեան նկատմամբ օրէնքի հիման վրայ կատարուած քննութիւնները ցոյց են տալիս, որ դրանք ոչ թէ սահմանափակ կամ տեղական բնոյթ են ունեցել, այլ կանխամտածուած իրականացուել են վերոյիշեալ անձերից բաղկացած եւ միասնական ուժ հանդիսացող «յատուկ կենտրոնի» բանաւոր հրահանգներով եւ գաղտնի հրամաններով։ Գրաւոր ապացոյցների, փաստաթղթերի եւ հաւաստի վկայութիւնների հետաքննութեան արդիւնքը հետեւեալն էր։ «Միութիւն եւ Առաջադիմութիւն» կուսակցութեան ղեկավարների կողմից սկզբնական շրջանում պատերազմական գործողութիւններին մասնակցելու համար ստեղծուած «Թեշքիլաթ-ը մահսուսէ»-ն, ինչպէս պարզ երեւում է մեղադրական փաստաթղթերից, բացառապէս գաղտնի բնոյթ

էր կրում, եւ նրա բուն նպատակը յանցագործ արարքներ կատարելն էր։ Այդ գաղտնի ցանցը ղեկավարում էին կենտրոնական կոմիտէի անդամներ՝ Դոկտ. Նազըմը, Պեհաէտտին Շաքիրը, Աթիֆը, Ռիզան եւ Հասարակական անվտանգութեան նախկին տնօրէն՝ Ազիզ պէյը։ Սրանցից Պեհաէտտին Շաքիր պէյի կենտրոնը Էրզրում քաղաքն էր, որտեղից նա ղեկավարում էր արեւելեան վիլայէթների ուժերը։ Ազիզ, Աթիֆ եւ Նազըմ պէյերը գործում էին Ստամպուլում, որոնց արարքները հաստատում եւ կեանքի էր կոչում մայրաքաղաքի կայազօրի հրամանատար՝ Ճեւատ պէյը։ Պեհաէտտին Շաքիր պէյին ուղղուած № 150 Գաղտնի կարգադրութիւնը բովանդակում է հետեւեալը. «Կոմիտէն պահանջում է, որպէսզի գալաթացի Խալիլը պատժուի։ Աւանդադրուած դրամը վերցուելու է փոստատնից եւ անհրաժեշտութեան դէպքում բաժանուելու է բընակչութեանը» (տե՛ս գործ № 10, փաստաթուղթ (№ 1)(19)։

Այս փաստաթուղթը ստորագրել են Ազիզ, Աթիֆ եւ Նազըմ պէյերը եւ վաւերացուած է Ճեւատի ստորագրութեամբ։ Ներքեւում գրուած է նաեւ «Դրդապատճառը՝ խարդաւանք. դրամ հաւաքելն է»։ Վերոյիշեալ կարգադրութեան հետ ուղարկուած է նաեւ մի ծածկագիր հեռագիր «Ա. Ճեւատ» ստորագրութեամբ, որտեղ ասուած է. «Արտուին, Պեհաէտտին Շաքիր պէյին, վերծանել անճամբ»։

Խալիլ, Նազըմ, Աթիֆ եւ Ազիզ պէյերի ստորագրութիւններով Միտհատ Շիւքրի պէյին ուղղուած № 59 գրութիւնը ցոյց է տալիս, որ փախուստի մէջ գտնուող Էնվեր պէյի հօրեղբայր՝ Խալիլ փաշան, Ստամպուլի կայազօրի հրամանատար եղած ժամանակ, նոյնպէս ընդգրկուած է եղել «Թեշքիլաթ-ը մահսուսէ»-ի մէջ, որ տուեալ կազմակերպութիւնը ներքին կապ է ունեցել «Միութիւն եւ Առաջադիմութիւն» կուսակցութեան հետ։ Այդ ապացուցում է նաեւ Խալիլ պէյի Իզմիտի քաղաքագլխին ուղարկած № 67 հեռագրով, որտեղ խօսւում է կալանաւորներին

բանտից ազատելու, առաջնորդներ նշանակելու եւ այլ ծրագրերի մասին (տե՛ս գործ N° 10, փաստաթուղթ N° 4)։

1330 (1914) թուականի Նոյեմբերի 16-ին, Խալիլ պէյի՝ Ռազմական գերատեսչութեանն ուղղուած N° 68 գրութիւնից պարզւում է, որ կործանիչ սարքերը ուղարկուած են «Թեշքիլաթ-ը մահսուսէ»-ի համար։ Այս կազմակերպութեան վերաբերող թղթապանակներում գտնւում են նաեւ համանման այլ փաստաթղթեր։

Հետաքննութիւնից պարզւում է նաեւ, որ «Թեշքիլաթ-ը մահսուսէ»-ին եւ կուսակցութեան կենտրոնական կոմիտէին վերաբերող կարեւոր գրութիւնները մէջտեղից վերացուած են։ Հաւաստի ապացոյցները վկայում են նոյնպէս, որ Թալաաթ պէյի պաշտօնանկութիւնից առաջ Ներքին Գործերի նախարարութիւնից Հասարակական անվտանգութեան նախկին տնօրէն՝ Ազիզ պէյին ուղղուած հրահանգներն ու այլ կարեւոր թղթակցութիւնները ետ չեն վերադարձուել (տե՛ս գործ N° 31)։ Պարզւում է նաեւ, որ կուսակցութեան կենտրոնական կոմիտէն, դեռեւս պատերազմ յայտարարելուց առաջ, նպատակադրուած է եղել պատերազմի մէջ մտնելու։ Այս պարագան անհերքելիօրէն հաստատւում է 1330 (1914) թուականի Օգոստոսի 17-ի կուսակցութեան գլխաւոր քարտուղար՝ Միտհատ Շիւքրի պէյի ստորագրութիւնը կրող գրութիւնից, որը Էրզրումի քաղաքագլխի միջոցով յանձնուել է Պեհաէտտին Շաքիր պէյին։

Տիարպեքիրում խոշտանգումներն ու կոտորածները տեղի են ունեցել փախուստի մէջ գտնուող Թալաաթ պէյի դըրդմամբ։ Այն հաստատւում է Տէր-Զօրի մութասարրիֆ՝ Ալի Սուատ պէյի կողմից յիշեալ Թալաաթ պէյին ուղարկուած ծածկագիր հեռագրի բովանդակութիւնից, ուր խօսւում է վալիին եւ կոմիսար Մեմտուհին իր համհարզի հետ մահապատժի ենթարկելու անհրաժեշտութեան մասին։ Վերծանուած պատասխան ծածկագիր հեռագրում կայ «ի պահ

դնել» նշումը։ (Գործ № 8, փաստաթուղթ № 1)։

Ներքին գործերի նախարարութեան յատուկ գրասենեակի պետ՝ Իհսան պէյը հաստատում է, որ այն ժամանակ, երբ ինքը գտնուելիս է եղել Քիլիսի գայմագամի պաշտօնում, Ստամպուլից Հալէպ գործուղուած Ապտուլահատ Նուրի պէյը յայտարարել է, որ «տեղահանման հիմնական նպատակը [հայերի] ոչնչացումն է» եւ աւելացրել է նաեւ, որ ինքն այդ հարցով կապի մէջ մտնելով Թալաաթ պէյի հետ, նրանից ուղղակի ստացել է կոտրածի հրաման, որ նա [Թալաաթը] ձգտել է համոզել իրեն, որ դա՛ է երկրի փրկութիւնը։ (Տե՛ս հարցաքննութեան փաստաթղթերը, էջ 15)։

Բալուի քաղաքագլուխ՝ Միւֆիտ պէյը 1331 (1915) Սեպտեմբերի 11-ի թուագրութեամբ, Ներքին Գործերի նախարարութեան ուղարկած ծածկագիր հեռագրով հաղորդել է, որ «Միութիւն եւ Առաջադիմութիւն» կուսակցութեան Պրուսայի պատասխանատու քարտուղար Դոկտ. Միտհատ պէյը դեռեւս Բալուի պատասխանատու քարտուղար եղած ժամանակ, Ջանկըրիից դէպի Բալուի մութասարրիֆութիւն ուղարկած հեռագրով յայտնել է, որ Անգարայի վիլայէթից աքսորուած հայերի ընդհանուր թիւը հասել է 61,000-ի, որ այդ տեղահանութիւնը նպատակայարմար է նախ տեղի մահմեդականների թիւը կայունացնելու, միւս կողմից էլ, այն յետագայում նպաստաւոր կը լինի Բալուի համար (գործ № 8, փաստաթուղթ № 2)։ Այս փաստը վկայում է, որ տեղահանութիւնը ռազմական կամ կարգապահական միջոցառում չի եղել, այլ այն տեղի է ունեցել զուտ կոմիտէի ցանկութեամբ եւ նախաձեռնութեամբ, ինչից եւ ներշնչուել է Միտհատ պէյը։

Կարճ ժամանակով, Ջանկըրիում գտնուող այս անձը հեռուից չէր կարող տպաւորութիւն ունենալ Անգարայի վիլայէթի բնակչութեան մասին։ Նա սխալ կարծիք ունէր

նաեւ իր վիլայէթի բնակչութեան մասին։ Զանկըրին մտնում է Քաստամոնուի մէջ եւ այդտեղի մահմետականները շրջակայ վայրերում տեղի ունեցող դէպքերին վերաբերուել են ատելութեամբ։ Նոյնիսկ մի օր, մի խումբ մեծամեծներ եւ աւագանիներ իրենց միւֆթիի հետ դիմել են քաղաքագլուխ Ռեշիտ փաշային հետեւեալ խօսքերով. «Շրջակայ վիլայէթներից հայերին իրենց երեխաներով միասին մորթուող անասունների նման քշում են դէպի լեռները եւ այնտեղ՝ կոտորում։ Մենք չենք ուզում, որ մեր վիլայէթում այդպիսի բան կատարուի։ Մենք վախենում ենք Աստծոյ ցասումից։ Պետութիւնը ոչ թէ դաժանութեամբ է կառավարւում, այլ բանականութեամբ։ Խնդրում ենք, որպէսզի մեր վիլայէթում այդպիսի կոտորած տեղի չունենայ»։ Այս անձինք, արտասուալի աչքերով հեռացել են քաղաքագլխի մօտից, խօսք առնելով, որ իրենց վիլայէթում նման արարք չկատարուի։ (Այս մասին արձանագրուած է վկայութիւնների երկրորդ մասի 15րդ էջում)։

Ստորեւ բերւում է Էրզրումի վիլայէթի վալի՝ Թահսին պէյի 1331 (1915) Յուլիսի 15-ի թուագրութեամբ ծածկագիր հեռագիրը, ուր խօսւում է «Թեշքիլաթ-ը մահսուսէ»-ի եւ նրա հետ համագործակցող ժանտարմների կողմից հայերի հանդէպ գործադրուած բռնութիւնների եւ վայրագութիւնների մասին. «Ֆայիք անունով մի լեյտենանտ տիրացել է Արապեանի չորս աղջիկներին, իսկ լեյտենանտ Քեամիլ էֆենտին՝ յափշտակել է 1863 լիրա գումար, 35 բեռ ապրանք եւ մեծ քանակութեամբ գոհարեղէն։ Դրամի յափշտակութիւնը եւ կանանց հանդէպ գործադրուած բռնութիւնները չափազանց ամօթալի եւ քաջութեան հետ ոչ մի առնչութիւն չունեցող երեւոյթներ են։ Անհրաժեշտ է այդ վայրագութիւններին վերջ տալ, յատկապէս «Թեշքիլաթ-ը մահսուսէ» անուան տակ բոլոր կողմերում դեգերող հրոսակներին։ Խարբերդի վալին հաղորդում է, որ բոլոր ճանապարհները լի են կանանց եւ

երեխաների դիակներով, որոնց չեն հասցնում թաղել։ Լաւ կը լինի, որ մենք պաշտպանենք մեր անցեալի քաջութեան նկարագիրը»։ (Գործ № 8, փաստաթուղթ № 4)։ Փախուստի մէջ գտնուող Թալաաթ պէյին ուղղուած այս հեռագիրը, պահւում է Մէճլիսի 5-րդ բաժնի թղթապանակում։ Այս հեռագիրը հաստատում է, Տէր-Զօրի քաղաքագլուխ Ալի Սուատ պէյի վերոյիշեալ ծածկագիր հեռագրում արտայայտուած գաղտնի նպատակները։

Ստորեւ բերւում է Էրզրումի «Թեշքիլաթ-ը մահսուսէ»-ի նախագահ՝ Պեհաէտտին Շաքիր պէյի ստորագրութեամբ, Խարբերդի վալի Սապիթ պէյին եւ Նազըմ պէյին ուղղուած ծածկագիր հեռագրի բովանդակութիւնը, որի ֆոթոպատճէնը գտնւում է № 9 գործում։

«Եղբայր իմ, մեզ պարզորոշ տեղեկացրէք, այդտեղից ուղարկուող հայերին զտո՞ւմ էք, թէ՝ ոչ։ Վտանգաւոր մարդկանց, որոնց վտարման ու աքսորի մասին յայտնել ենք, ոչնչացնո՞ւմ էք, թէ՝ ճամբու էք դնում»։

Այս փաստը ցոյց է տալիս, որ մինչեւ այսօր փախուստի մէջ գտնուող վերոյիշեալ Ռեսնէլի Նազըմ պէյը, այդ ժամանակ «Միութիւն եւ Առաջադիմութիւն» կուսակցութեան Խարբերդի քննիչ-լիազօրը լինելով, գաղտնի կապ է ունեցել «Թեշքիլաթ-ը մահսուսէ»-ի հետ եւ զբաղուել է հայերի բնաջնջման գործով։

Սամսոնի պատասխանատու քարտուղար Ռուշդի պէյի ստորագրութեամբ «Միութիւն եւ Առաջադիմութիւն» կուսակցութեան կենտրոնական կոմիտէին ուղղուած հեռագիրը, ինչպէս նաեւ Միտհատ Շիւքրի պէյի կողմից «Թեշքիլաթ-ը մահսուսէ»-ի ներկայացուցիչ՝ Դոկտ. Նազըմին հասցէագրուած 1330 (1914) Դեկտեմբերի 16-ի թուագրութիւնը կրող հետեւեալ բովանդակութեամբ հեռագիրը՝ «55 հոգուց բաղկացած չեթէների 5-րդ խումբը Թուֆան աղայի գլխաւորութեամբ, մոթորային նաւով ուղարկէք», լիովին հաստատում է, որ կուսակցութեան

կոմիտէն կապուած է եղել «Թեշքիլաթ-ը մահսուսէ»ի հետ եւ այլ վայրերում գտնուող նրա մասնաճիւղերը վաղուց ի վեր զբաղուած են եղել հրոսակախմբեր պատրաստելու գործով։

«Միութիւն եւ Առաջադիմութիւն» կուսակցութեան Պալըքեսիրի քննիչ-լիազօր Մուսայի ստորագրութեամբ 1330 (1914) Նոյեմբերի 20-ի թուագրութեամբ Միտհատ Շիւքրի պէյին եւ դոկտ. Նազըմին հասցէագրուած նամակների բովանդակութիւնից լիովին բացայայտուում է, որ կուսակցութեան կենտրոնական կոմիտէն համագործակցել է Ներքին Գործերի նախարարութեան հետ՝ հրոսակախմբեր պատրաստատելու գործում։

Կուսակցութեան Պրուսայի ներկայացուցչի 1330 (1914) թուականի Դեկտեմբեր 19-ին, կենտրոնական կոմիտէին ուղարկուած գրութիւնը նոյնպէս հաստատում է, որ բանտերից դուրս բերուած յանցագործներն ու աւազակներն ընդգրկուելու են «Թեշքիլաթ-ը մահսուսէ»-ի մէջ։ Եւ այս կապակցութեամբ, սկզբնական շրջանում, ջանք գործադրուեց միամիտ մարդկանց համոզելու, որ այդ աւազակախմբերը իբրեւ թէ մասնակցելու են պատերազմական գործողութիւններին։ Մինչդեռ վերոյիշեալ ապացոյցներն ու բոլոր փաստաթղթերը ցոյց են տալիս, որ այդ հրոսակախմբերը ստեղծուած էին տեղահանուած [հայերի] քարաւանները կոտորելու եւ ոչնչացնելու նպատակով։

Լիովին ապացուցուած է, որ այդ կոտորածները տեղի էին ունենում Թալաաթ, Էնվեր եւ Ճեմալ պէյերի անմիջական հրամաններով եւ գիտութեամբ (գործ 11)։ 1331 (1915) Յուլիսի 21-ի թուագրութիւնը կրող Թալաաթ պէյի ծածկագիր հեռագիրը, որն ուղղուած է Տիարպեքիրի, Խարբերդի, Ուրֆայի եւ Տէր-Զօրի վալիներին եւ մութասարրիֆներին, հրահանգում է ճանապարհներին մնացած դիակները թաղելու, լքեալ գոյքը վառելու եւ ընդհանրապէս դիակները ձորերը, գետերը եւ լճերը չգցելու

մասին։

Զորրորդ բանակի հրամանատար՝ Ճեմալ պէյի 1331 (1915) Յուլիսի 1-ի թուագրութեամբ, Տիարպէքիրի վալիին ուղղուած մի այլ հեռագրից ենթադրւում է, որ Եփրատ գետի հարաւային մասում, Ջրի երեսին յայտնուող դիակները կարող են ապստամբական(20) շարժման ընթացքում սպաննուած հայեր լինեն, ուստի պահանջւում է, որ դրանք հաւաքուեն եւ թաղուեն իրենց բնակավայրերում (գործ 11, փաստաթուղթ N° 3)։

Ի պատասխան Ճեմալ պէյին, 1331 (1915) Յուլիս 3-ի թուագրութեամբ, «անձամբ» նշումը կրող հեռագրում ասուած է. «Եփրատը առնչութիւն չունի մեր վիլայէթի հետ, հաւանական է, որ այդ դիակները գալիս են Էրզրումի եւ Խարբերդի կողմերից։ Այստեղ, ապստամբութեան ընթացքում սպաննուածների դիակները գցւում են ամայի վայրերում գտնուող խոր քարայրները կամ էլ այրւում են։ Թաղելը բացառուած է»։

Տէր-Զօրի նախկին մութասարրիֆ Ալի Սուատ պէյը, համանուն լիվան ուղարկուող հայերի ճակատագրի մասին տեղեկութիւն տալով, նշել է, որ Հալէպի հեռագրական գործակալութիւնում աշխատող «Թասվիր-ի Էֆքեար»(21) թերթի նախկին թղթակից՝ Աքեահ պէյը Տէր-Զօրի մութասարրիֆ Սալիհ Զէքի պէյի հետ զրուցելիս, հարցրել է. «Քո մասին ասում են, որ 10 հազար հայ ես ոչնչացրել, ճի՞շդ է»։ Ի պատասխան այդ հարցումի, Զէքի պէյը պարծենալով ասել է. «Ես նամուս ունեմ, 10 հազարը ի՞նչ է որ, մի քիչ վերեւ բարձրացիր». (տե՛ս գործ 6 եւ 14՝ փաստաթուղթ N° 4, ինչպէս նաեւ գործ 11, փաստաթուղթ N° 1)։

Խարբերդի վալիի կողմից Մալաթիայի մութասարրիֆին ուղարկուած ծածկագիր հեռագրի առաջին մասում հաղորդւում է, որ ճանապարհներին շատ մեծ թուով դիակներ կան, եւ նրանք կարող են վտանգաւոր հետե-

ւանքներ ունենալ։ Խորհուրդ է տրուում զգուշացնել Ներքին Գործերի նախարարութեանը, որպէսզի վճռական քայլեր ձեռնարկուի այս հարցը անուշադրութեան մատնող պատօնեաներին պատժելու համար։ Նշուում է նաեւ, որ անհրաժեշտ է մի քանի ազդեցիկ ղեկավարների տրամադրութեան տակ բաւարար թուով ժանդարմներ նշանակել՝ սահմանի ներսում գտնուող բոլոր դիակները թաղելու համար։ 1331 (1915) Սեպտեմբերի 15-ի թուագրութեամբ, Ռեշիտի կողմից Ներքին Գործերի նախարարութեանն ուղարկուած ծածկագիր հեռագրում նշուում է, որ Տիարպէքիրից արտաքսուած հայերի թիւը հասնում է հարիւր քսան հազարի, որը ցոյց է տալիս կատարուած գործողութեան ծաւալն ու նշանակութիւնը (գործ 12, փաստաթուղթ N° 1)։

Երրորդ բանակի հրամանատար՝ Մահմուտ Քեամիլի ստորագրութիւնը կրող հեռագրում նշուած է, որ հայերից որեւէ մէկին հովանաւորող մահմետականը մահապատիժի է ենթարկուելու իր բնակավայրում, եւ տունն էլ հրդեհուելու է։ Եթէ հովանաւորողը պետական պաշտօնեայ լինի, ապա գործից վտարուելով՝ դատուելու է զինուորական դատարանով։ Իսկ եթէ զինուորական լինի, ապա որպէս յանցագործ՝ կանգնելու է բարձր ատեանի առաջ, (գործ 13, փաստաթուղթ N° 1)։ Այս խստութիւնները ցոյց են տալիս, թէ ինչու տուեալ վայրի մահմետականները եւ մանր պաշտօնեաները չէին կարողանում տեղի ունեցող դազանութիւնների առջեւն առնել։

Տրապիզոնի նախկին պատգամաւոր՝ Հաֆըզ Մեհմետ պէյի տուած ցուցմունքից (գործ N° 15), բացայայտուում է, թէ ինչպէս հայերին Սեւ ծովի ափերին նաւ նստեցնելով խեղդամահ են արել։ Նոյնիսկ այս ողբերգութեան մասին, երբ ինքը յայտնել է Թալաաթ պէյին, վերջինս ոչ մի քայլ չի ձեռնարկել [Տրապիզոնի] վալի Ճեմալ Ազմիի նկատմամբ։ Այս հանգամանքն առաւել եւս ծանրացնում է

Թալաաթ պէյի յանցագործութիւնը։

Էրզրումի վալի Միւնիր պէյի 1331 (1915) Դեկտեմբերի 14-ի թուագրութիւնը կրող ծածկագիր հեռագիրը (գործ N° 16), ցոյց է տալիս, որ հակառակ նախկին վալի Թահսին պէյի գործադրած ջանքերին, Էրզրումից Քըզիլ ճանապարհով ուղարկուած հայերի քարաւանները կոտորածի են ենթարկուել կենտրոնական կոմիտէի անդամ՝ Պեհաէտտին Շաքիր պէյի կազմած հրոսակախմբերի եւ տերսիմցիների(22) կողմից։

Ճեմալ Ասաֆ պէյի գրաւոր ցուցմունքի մէջ (գործ N° 18), նշուած է, թէ ինչպէս տեղահանուածները կոտորածի են ենթարկուել քուրդ Ալոյի աւազակախմբերի կողմից, որը կազմակերպել էր Զանկըրրի կուսակցութեան նախկին պատասխանատու քարտուղար, այժմ առեւտրական՝ Ճեմալ Օղուզ պէյը։ Այս հանգամանքը եւս ցոյց է տալիս, թէ ինչպէս կենտրոնական կոմիտէն այս խընդրում համագործակցել է կուսակցութեան [չրջանային] ներկայացուցիչների հետ։

Յատկապէս ուշադրութեան արժանի տեղեկութիւններ կան գնդապետ Խալիլ Ռիճայ պէյի ընդարձակ տեղեկագրում, որը կազմուած է որոշակի անուններով եւ փաստացի վկայութիւնների հիման վրայ (տե՛ս գործ N° 2) էջ 1)։ Այսպէս, Անգարայի տեղահանութեան ընթացքում, «Միութիւն եւ Առաջադիմութիւն» կուսակցութեան տեղական ակումբի վարիչի մօտ ուղարկելով Թայիբ անունով մէկին, կենտրոնական կոմիտէն հրահանգել է, որպէսզի պաշտօնից հեռացուեն զինուորական առողջապահութեան հայ ծառայողները։ Մեմտուհ Շեվքէթ պէյը եւ նրա եղբայր Ռաֆեթ պէյը, այդ ժամանակամիջոցին Անգարայում լինելով, գործակցել են կենտրոնական կոմիտէի հետ եւ ձեռք բերել հսկայական կարողութիւն։ Տեղեկագրում նշւում է, թէ ինչպէս կուսակցութեան ներկայացուցիչ-քարտուղար Նեջատի պէյը միջամտել է

Անգարայի տեղահանութեան գործին եւ այդ խնդրում իր եռանդուն մասնակցութիւնն է ունեցել նաեւ յիշեալ վիլայէթի նախկին ոստիկանապետ մանաստիրցի՝ Պեհաէտտին պէյը։

Այն ժամանակ, երբ տեղի ռազմական դատարանը մեղադրական գործ է յարուցել վերոյիշեալ Պեհաէտտին պէյի նկատմամբ, նրան շտապ կանչել են Ստամպուլ։ Հակառակ Ներքին գործերի նախարարութեան ներկայացրած պահանջին, նրան վերաբերող հետաքննութեան փաստաթղթերը մնացել են տեղում։ Յետագայում, նրա գործը քննարկուել է Ռազմական նախարարութիւնում, եւ այդպիսով վերջինս ազատուել է դատաքննութիւնից։

Հետաքննութեան արդիւնքների համաձայն, նրանք, ովքեր քննադատել եւ չեն մասնակցել կատարուող ողբերգութիւններին, համարուել են հայրենիքի դաւաճաններ, իսկ [մանաստիրցի] Պեհաէտտինի նման ակտիւ գործիչներն արժանացել են չափից աւելի հովանաւորութեան։ Նոյնիսկ Ներքին Գործերի նախկին նախարար Թալաաթ պէյը յիշեալ [մանաստիրցի] պէյին յատուկ ծանուցագրով ծառայութեան է ուղարկել արեւելեան զօրքերի օպերատիւ զօրախմբի հրամանատար՝ Վեհիպ փաշայի մօտ։ Միաւժամանակ նա աշխատել է Սամսոնի ռազմական ատեանում, այնուհետեւ նոր նշանակում ստանալով, մեկնել է անյայտ ուղղութեամբ։ (Նրա մասին տրուած ցուցմունքները գտնուում են Վեհիպ փաշային վերաբերող թղթապանակում)։

Փաստերը ցոյց են տալիս, որ Քաստամոնուի վալի Ռեշիտ փաշան ծածկագիր հեռագիր է ստացել Պեհաէտտին Շաքիր պէյից, ուր նշուած է եղել, որ հայերի տեղահանութեան հարցը խիստ անհրաժեշտութիւն է (տես գործ N° 2, էջ 13)։ Իսկ կուսակցութեան Քաստամոնուի քարտուղար՝ Հասան Ֆեհմի էֆենտին, չնայած, որ իր ժամանակին զգուշացրել է [Ներքին Գործերի] նախարարութեանը տեղի ունեցող տեղահանութեան, կոտորածի եւ

այլ վայրագութիւնների մասին, սակայն նրա գործադրած ջանքերը մնացել են ապարդիւն։

«Միութիւն եւ Առաջադիմութիւն» կուսակցութեան գումարած մի ժողովում, նախագահը «թաքրիր» է ներկայացրել Թալաաթ պէյին, ուր նկարագրուած են եղել հայերի հանդէպ գործադրուած դաժանութիւններն ու կոտորածները, եւ այս կապակցութեամբ պահանջել է դատաքննութեան ենթարկել կուսակցութեան մի շարք շրջանային պատասխանատու քարտուղարների, այդ թւում՝ Դոկտ. Ռեշիտին, Ճեմալ Ազմիին, Սապիթին, Մուամմերին, Աթիֆին եւ կալանատների ընդհանուր տնօրէն՝ Իպրահիմ պէյին։ Մինչդեռ Թալաաթ պէյը մի կողմ է շպրտել այդ թաքրիրը, ակնարկելով, որ այն պահուի։

Իզմիրի պատգամաւոր Իհսան Օննիկ էֆենտիի ցուցմունքում նշուած է, որ ինքը Իզմիրի «Սպորտինգ կլուբ»ի մէջ Թալաաթ պէյին ասել է, որ Դոկտ. Նազըմը եւ իր գործընկերներն են իսկական բռնութիւն գործադրողները, Թալաաթը պատասխանել է. «Ես այստեղացիներին միւսներին նման կ'ենթարկէի նոյն ճակատագրին» (տե՛ս գործ № 3)։

Վեհիպ փաշայի վկայութեան մէջ (տե՛ս գործ № 7, էջ 3), նշւում է, որ հայերի նկատմամբ կատարուած վայրագութիւններն ու կոտորածները, նրանց ունեցուածքի թալանն ու կողոպուտը որոշուած է եղել «Միութիւն եւ Առաջադիմութիւն» կուսակցութեան կենտրոնական կոմիտէի կողմից։ Եւ այդ կոտորածների, ինչպէս նաեւ բոլոր գազանութիւնների իրագործման համար, Պեհաէտտին Շաքիր պէյը Երրորդ բանակի շրջանում պատրաստել է յատուկ մարդասպաններ եւ անձամբ ղեկավարել նրանց։ Նոյնիսկ պետութեան ղեկավարները ենթարկուել են Պեհաէտտին Շաքիրի հրամաններին եւ հրահանգներին։ Երրորդ բանակի կողմից կատարուած բոլոր բռնութիւնների, խարդաւանքների եւ բանսարկութիւնների մտայղա-

ցողը նոյնպէս եղել է Պեհաէտտին Շաքիրը։ Նրա կողմից հաւաքագրուած մարդկանց մի մասը եղել են մահապատժի ենթակայ յանցագործներ, իսկ մի մասն էլ՝ առնախում ժանտարմներ... Գրաւոր բերուած բոլոր ցուցմունքները մեղադրական հաւաստի ապացոյցներ են, ուղղուած «Միութիւն եւ Առաջադիմութիւն» կուսակցութեան կենտրոնական կոմիտէի եւ Մէճլիսի անդամների դէմ։

Հարցաքննութեան վերաբերող փաստաթղթերի 6-րդ էջում նշուած է, որ Սուլէյման Նազիֆ պէյը Պաղտատից դէպի Տիարպեքիրի սահմանամերձ շրջանները գալու ժամանակ, դիակների գարշահոտութիւնից փակել է քիթը(23)։ Երբ Ճեմալ փաշան հարցում է կատարել Թալաաթ պէյին, Գոնիայի նախկին վալի Ճելալ պէյի Հալէպից հեռացուելու մասին, վերջինս պատասխանել է, որ հայկական հարցին վերաբերող իր տեսակէտը համընկնում է կենտրոնական կառավարութեան տեսակէտի հետ, որ Դոկտ. Նազըմի կողմից ուղարկուած պատգամաւոր Ալի Ռիզայի նշանակման հարցը վճռուած է եղել կենտրոնական կոմիտէում մանրամասն քննարկուելուց յետոյ։

[Ճելալ պէյի](24) հեռացման պատճառը այս ձեւով բացատրուելուց յետոյ, երբ [Ճեմալ փաշան] այս հարցի վտանգաւորութեան մասին Ստամպուլում զգուշացրել է Թալաաթին եւ Նազըմին, նրանց պատասխանել են, որ դա անհրաժեշտ է եւ օգտակար։ Դոկտ. Նազըմը նոյնիսկ ասել է, որ այս նախաձեռնութիւնը վերջնականապէս կը լուծի արեւելեան հարցը։

Հայրի էֆենտին իր վկայութեան մէջ նշում է, որ ինքը ամէն ջանք գործադրել է այդ բոլորը կանխելու, բայց եւ այնպէս տեղահանութեան եւ կոտորածին հակառակուելու համար իրեն եւս հեռացրել են պաշտօնից (Հարցաքննութեան թղթապանակ, էջ 17)։ Քաղաքացիական հետաքննութեան յանձնաժողովի նախկին վալի Մազհար պէյը հեռացուել է պաշտօնից, իսկ Տիարպեքիրի վալին,

ոչնչացրել է իր երկու գայմագամներին, այն բանի համար, որ նրանք դէմ են եղել [հայերի] տեղահանութեանը, ինչպէս նաեւ արաբների դէմ գործադրուող բռնութիւններին ու սպանութիւններին։

Հարցաքննութեան վերաբերող թղթապանակի 34, 38, 43 էջերում տրուած է Ֆինանսների նախարարութեան եկամուտի բաժնի ընդհանուր տնօրէն՝ Լութֆի պէյի ցուցմունքը, որը վերաբերում է կուսակցութեան Տրապիզոնի պատասխանատու քարտուղար՝ Նայիլ պէյի գործունէութեանը, ինչպէս նաեւ Տրապիզոնում կատարուած ողբերգութեանը եւ պատասխանատուներին։

Պեհաէտտին Շաքիր պէյի Էրզրումից Անթալիայի մութասարրիֆին ուղարկած ծածկագիր հեռագրում նշուած է. «Էրզրումի, Վանի, Պիթլիսի, Տիարպեքիրի, Սիվասի, Տրապիզոնի շրջաններում ո՛չ մի հայ չի մնացել, բոլորը արտաքսուել են Մոսուլի եւ Տէր-Զօրի կողմերը։ Իսկ դուք ի՞նչ էք անում Անթալիայում»։

Անթալիայի նախկին մութասարրիֆ Սապուր Սամի պէյը իր բացատրագրում (հարցաքննութեան թղթապանակ, էջ 44), նշում է, որ այս հեռագրի պատճէնը ինքն ուղարկել է Թալաաթ պէյին, բայց ոչ մի պատասխան չի ստացել։ Անգարայի տեղահանութեան եւ այդ տեղի կուսակցութեան պատասխանատու քարտուղար՝ Նեճատի պէյի մասին Ռատի պէյի տուած տեղեկութիւնները բաւարար ապացոյցներ են այդ ամբաստանութիւնը հաստատելու համար։

Պեհաէտտին Շաքիր պէյը, Ներքին Գործերի նախարար Թալաաթ պէյի միջոցով ծածկագիր հեռագիր է ուղարկել կենտրոնական կոմիտէ։ «Թեշքիլաթ-ը մահսուսէ»-ի փաստաթղթերի թղթապանակներից մէկում յայտնաբերուած եւ 69 համարի տակ վերծանուած այդ հեռագրի հակառակ կողմում, որպէս պատասխան, գրուած է հետեւեալը. «Քանի որ այլեւս այդտեղ գործ չունէք, Ար-

տուինից առաւել կարեւոր մի պաշտօն ստանձնելու համար շտապ շարժուէք դէպի Տրապիզոն։ Այստեղից մեկնող Եակուբ Ճեմիլ(25) պէյը ձեզ կը բերի անհրաժեշտ հրահանգն ու առաջադրանքը»։

Այս [հեռագիրը] լիովին հաստատում է նրանց միջեւ գոյութիւն ունեցող ներքին կապն ու համագործակցութիւնը(26)։

Մեղադրուող նախարարները հարցաքննութեան ընթացքում պատճառաբանել են, որ իրենց գործը ըստ պաշտօնավարութեան, լսուելու է ոչ թէ Ռազմական ատեանում, այլ սահմանադրական սկզբունքով կազմուած Գերագոյն դատարանում։ Աւելորդ է բացատրել, որ նրանց կողմից յիշատակուած 92-րդ յօդուածը «նախարարի կամ նախարարների խորհրդի անդամի պաշտօնավարութեամբ» վերաբերում է քաղաքական յանցագործութեանը։ Սահմանադրական օրէնսգրքի 33-րդ յօդուածի համաձայն, նախարարներին սովորական յանցագործութիւն կատարելու, կամ մասնակցութիւն ունենալու դէպքում, ոչ մի արտօնութիւնից օգտուելու իրաւունք չի վերապահւում։ Նման յանցագործութիւնները քննելու հարցը մտնում է սովորական դատարանների իրաւասութեան մէջ։ Արտակարգ դրութիւն յայտարարուած շրջաններում, քաղաքացիական օրէնքների եւ դատարանների փոխարէն, իրաւասութիւն են ձեռք բերում ռազմական ատեանները։

Սպանութիւններին եւ բռնագրաւումներին վերաբերող յօդուածների հաստատումը մտնում է Ռազմական ատեանի իրաւասութեան մէջ եւ ըստ մեղադրական եզրակացութեան բովանդակութեան, պաշտօնի հարցում ոչ մի վերապահութիւն չի կատարուելու։

Այսպիսով, մեղադրեալների դատապաշտպանների կողմից առաջ քաշուած դատական անիրաւասութեան հարցը վերացւում է։ Վերեւում բերուած փաստերի ու վկայութիւնների հիման վրայ, Դոկտ. Պեհաէտտին Շաքիր, Դոկտ.

Նազըմ, Ալթիֆ, Ռիզա, Ճեւատ, Ազիզ, Էնվեր, Ճեմալ եւ Թալաաթ պէյերը, որպէս յանցագործութեան անմիջական մասնակիցներ՝ մեղադրւում են քրէական օրէնսգրքի 45-րդ յօդուածի առաջին կէտով եւ 171-րդ յօդուածով(27)։ Սայիտ Հալիմ փաշան, Միտհատ Շիւքրի, Դոկտ. Ռուզուհի, Քիւչիւկ Թալաաթ, Զիյա Գէօքալպ, Քեմալ, Ահմետ Նեսիմի, Շիւքրի, Իպրահիմ, Խալիլ պէյերը, չնայած որ անմիջական մասնակցութիւն չեն ունեցել կատարուած յանցագործութիւններին, անուղղակիօրէն մասնակցել են վերոյիշեալ յանցագործութիւններին, որի համար էլ մեղադրւում են քրէական օրէնսգրքի 45-րդ յօդուածի երկրորդ մասով։ Մեղադրեալների դատաքննութեան գործը ներկայացւում է Ստամպուլի կայսերական Ռազմական ատեանին, իսկ մեղադրական փաստաթղթերի մանրամասն հետաքննութիւնը՝ նոյն ատեանի դատախազութեան(28)։

10 Ռեջեպ 1335 թ. [1919, թ. Ապրիլի 12]։

Նախագահ — «Միութիւն եւ Առաջադիմութիւն» կուսակցութեան անդամներ հանդիսացող այս անձինք ընդհանուր ժողովի եւ կենտրոնական կոմիտէի որոշմամբ ընթացան սխալ ճանապարհով եւ, յատկապէս օգտուելով համաշխարհային պատերազմի ճգնաժամից, իրենց մոլի նպատակներն ու տհաճ թուացող հարցերը ձգտեցին իրագործել հապճեպօրէն եւ դաժանութեամբ։ Ո՛չ մի ողջամիտ մարդ չէր կարող համաձայնուել նրանց գործադրած այդ արարքների հետ։ Նրանք արտաքուստ ցոյց էին տալիս, թէ իբր պաշտպանում են ազգային շահերը եւ ապահովում՝ երկրի ամբողջականութիւնը, մինչդեռ իրականում իրենց նախաձեռնած գործողութիւններով մեծ դժուարութիւններ ստեղծեցին պետութեան քաղաքականութեան եւ տընտեսութեան ասպարէզում։ Այդ ձեւով, ընդհանուր զօրահաւաքի կապակցութեամբ բոլոր կողմերում յայտարա-

րուած արտակարգ դրութիւնից օգուտ քաղելով, սկսեցին ժողովրդին բարոյապէս ճնշել, բռնութիւններ գործադրել եւ մեծ դժուարութիւններ ստեղծել պետութեան կառավարման գործում։ Խօսքի ազատութեան նշոյլն անգամ չէր մնացել։ Ժողովրդին հասցուած վնասը չափ ու սահման չունէր։ Միւս կողմից, իրենց դիւային ծրագրերը իրականացրին իրենց իսկ կազմակերպած մարդասպան հրոսակախմբերի միջոցով։ Գործադրուած դաժան արարքները ոչ միայն առնչութիւն չունեն օսմանեան օրէնքների եւ կանոնադրութիւնների հետ, այլեւ անհամատեղելի են մեր հաւատքին(29)։ Բնական է, որ այդ բազում բռնութիւններն ու վայրագութիւնները խոր ատելութիւն առաջացրին մարդկանց սրտերում։ Արդ, որպէս անմիջական մասնակիցներ, դուք եւս մեծ դեր էք խաղացել այդ յանցագործութիւնների խնդրում, որի համար էլ մեղադրւում էք։ Ուշադիր եղէք, այդ մեղադրանքը բացայայտուելու եւ ապացուցուելու է դատախազի կողմից (*խօսքն ուղղելով դատախազին*)՝ խնդրեմ։

Դատախազ Մուստաֆա Նազմի պէյ — Դատարանում ներկայ գտնուողների եւ բացակաների ամբաստանութեանը վերաբերող քրէական յօդուածները պարզաբանուած են մեղադրական եզրակացութիւնում։ Իսկ մեղադրանքին վերաբերող բոլոր փաստաթղթերն ու վկայութիւններն անուանական կարգով դասաւորուած են թղթապանակների մէջ։ Ես կարծում եմ, որ աւելորդ ժամանակ չվատնելու համար անհրաժեշտութիւն չկայ այդ բոլորի վրայ կրկին կանգ առնելու եւ այսօրուայ համար նշանակուած դատաքննութիւնը յետաձգելու յաջորդ օրուան։ Հարցաքննութեան ընթացքում ճշմարտութիւնը բացայայտուել է կատարելապէս։ Այնուհանդերձ դատաքննութեան կարեւորութեան եւ նրա միայն արդարութեան վրայ հիմնուելու փաստը ապացուցելու նկատառումով, ուզում եմ մի քանի խօսք եւս աւելացնել։ Յայտնի է, որ ազգերի համ

մատեղութիւնը, պետութիւնների գոյատեւումը ուղղակի առնչւում են իրաւունքի, արդարութեան եւ հաւասարութեան կատարեալ ապահովութեան հետ։ Հետեւաբար, մի երկրում իրաւունքի եւ արդարութեան առկայութեամբ է պայմանաւորուած այդ երկրի հասարակական կեանքի գոյատեւումը։ Այդ գործօնների բացակայութեան դէպքում, հասարակութիւնը չի կարող յարատեւել։ Տարիներէ ի վեր Օսմանեան կայսրութեան մէջ տարբեր ազգութիւնների առկայութիւնը մեծ դժուարութիւններ է յարուցել եւ դժբախտաբար երբեմն նրանք իրար բախուելով, արիւնալի էջեր են արձանագրել նրա պատմութեան մէջ(30)։ Օսմանեան օրէնսդրութեան, օսմանցու խղճին անյարիր այնպիսի յանցագործութիւններ են տեղի ունեցել, որոնք երբեւէ չէին կարող ընդունուել սուլթանութեան եւ մեծ խալիֆայութեան կողմից։ Օսմանեան օրէնքները, որոնց թարգմանն եմ ես այսօր, երբեք չեն կարող հանդուրժել եւ ներել այդ բոլորը։ Օսմանեան տարածքում անպատիժ մնացած յանցագործութիւններն պատժուելու են Օսմանեան օրէնքի համապատասխան յօդուածներով։ Պիտի հատուցուի զոհ գնացած անմեղ մարդկանց արիւնը եւ արդարութիւնը տենչացող Օսմանեան ժողովուրդներն ի վերջոյ պիտի հասնեն դրան։ Իրականում, Օսմանեան տարածքում գտնուող երկրները ծարաւի են արդարութեան։ Դարերի ընթացքում, իսլամի բոլոր աւանդոյթների աստիճանաբար թուլացման հետեւանքով, այդ երկրները չեն կարողացել, ինչպէս հարկն է, օգտուել նրա իրաւական կանոններից։ Իրաւունքն ու արդարութիւնը վերականգնելու ներշնչանքով է, որ մահմեդականները, քրիստոնեաները եւ բոլոր ազգութիւններն ամէն կերպ նեցուկ են կանգնել 1908 թուականի սահմանադրութեանը։ Չնայած այդ բանին, որ բոլոր մտաւորականներն ու գիտակից մարդիկ իրենց ուժերով ջանացին վերահաստատել սահմանադրութիւնը, աւա՜ղ, արդարութեան եւ իրաւունքի

պաշտպանութեան փոխարէն երկրում ծայր առան անթիւ անհամար վատ երեւոյթներ, որոնց հետեւանքով էլ օսմանեան ազգութիւնները սկսեցին իրարից մեկուսանալ։ Յուսախաբ եղան նաեւ բազմաթիւ հայրենասէր անձինք։ Սահմանադրութեան հռչակումից յետոյ, «Միութիւն եւ Առաջադիմութիւն» կուսակցութեան թելադրանքով կատարուած սպանութիւնները, աւերուածութիւնները, վայրագութիւնները, չարաշահումները ծանր հետեւանքներ թողեցին ժողովրդի վրայ։ Օսմանեան պետութեան համար մեծ աղէտ եղան նաեւ համաշխարհային պատերազմի ընթացքում տեղի ունեցած արիւնայեղութիւններն ու կոտորածները։

Բարբարոսաբար իրականացուած կոտորածները, անարգ չարաշահումները, դժբախտաբար, նոյնպէս վերագրւում են «Միութիւն եւ Առաջադիմութիւն» կուսակցութեան կենտրոնական կոմիտէին, նրա լիակազմ ժողովներին եւ «Թեշքիլաթ-ը մահսուսէ»-ի գործունէութեանը։ Եւ այս անձնաւորութիւնները դատի են տրուած ոչ թէ նախարարի պաշտօնում գտնուելու համար, այլ «Միութիւն եւ Առաջադիմութիւն» կուսակցութեան մէջ ղեկավար դիրք ունենալու եւ կենտրոնական կոմիտէի անդամ լինելու հանգամանքով։ Կոտորածների եւ չարաշահումների հետեւանքով, օսմանցիների արժանապատուութեան վրայ ընկած արիւնոտ հետքերը, օսմանցիների ճակատը մրոտած սեւ բծերը կարելի է ջնջել միմիայն արդարութեան գրչով։ Եւ այս ձեւով ջնջելու համար նրանց դէմ յայտարարւում է ճիհատ։ Պատժուելու են յանցագործութիւն կատարած մահմետական թէ քրիստոնեայ անձինք։ Դատախազութիւնը չի կոչուած միակողմանի հետաքննութիւններ կատարելու։ Բոլոր դատախազութիւնների նման, մենք եւս պատրաստ ենք բողոքները քննարկելու եւ լսելու տուժած կողմի գանգատները։ Լինի մահմետական կամ քրիստոնեայ, օսմանցու թափած արիւնը անհատոյց չի մնալու։

Այդ աղէտալի բախումների ընթացքում, մահմեդական սպաննող քրիստոնեայ օսմանցիների նկատմամբ նոյնպէս հետաքննութիւն եմ կատարելու(31)։ Այնպէս որ, յանցագործները պատժուելու են, եւ արկածախնդրական պատերազմի պատճառով անմեղ մարդկանց կորցրած արիւնը հատուցուելու է այս բարձր ատեանում։ Ամբողջ մահմեդական աշխարհի խալիֆ, օսմանցիների փատիշահ՝ Նորին Մեծութիւն Մեհմետ խանը(32) հաստատակամօրէն վճռել է, որ լիովին վերականգնուի իսլամի արդարութիւնը։ Նոյն նպատակն է հետապնդում նաեւ ներկայիս կառավարութիւնը։ Մի խօսքով, Օսմանեան ազգութիւնները խորը վստահութիւն են տածում իրենց փատիշահի արդարացի որոշման եւ այս Բարձր Ատեանի(33) արդարադատ գործունէութեան նկատմամբ։ Համոզուած ենք, որ դատական այս յանձնաժողովը գործադրելու է իր բոլոր կարողութիւնները՝ հիմնուելով միմիայն խղճի եւ արդարութեան վրայ։ Բնական է, որ արդար դատարանի վրայ չի կարելի քաղաքական վրէժխնդրութեան նկատառումներով ճընշում գործադրել եւ կամ վերապահումներ անել։ Ո՛չ մի պետութիւն կամ քաղաքակիրթ ժողովուրդ Օսմանեան պետութիւնից եւ դատարանից ցայսօր չեն պահանջել եւ չեն էլ կարող պահանջել՝ որպէսզի պատժի ենթարկուած յանցագործը արդարացուի։ Մեզանից պահանջւում է, յանուն մարդկային իրաւունքի պաշտպանութեան, գործադրել արդարադատութիւնը։ Նոյնիսկ մեծ խալիֆները յարգանքով գլուխ են խոնարհել իսլամի արդարադատութեան առաջ։ Օսմանեան դատարանի եւ դատաւորների առաջ նոյն վերաբերմունքը պիտի ունենան նաեւ նախարարներն ու վեզիրները։

Մեղադրական եզրակացութիւնում ցոյց տրուած եւ անմիջական իրենց հեղինակութեամբ կատարուած յանցագործութիւնների համար մեղադրւում են՝ Դոկտ. Պեհաէտտին Շաքիրը, Նազըմը, Աթիֆը, Ռիզան, Ճեւատը,

Ազիզը, Էնվերը, Ճեմալը եւ Թալաաթը։ Այս յանցագործութիւններին անուղղակիօրէն մասնակցութիւն ունենալու համար մեղադրւում են՝ Միտհատ Շիւքրին, Դոկտ. Ռուզուհին, Քիւչիւկ Թալաաթը, Զիյա Գէօքալփը, Քեմալ պէյը, Սայիտ Հալիմ փաշան, Ահմետ Նեսիմին, Շիւքրին, Իպրահիմը եւ Խալիլը։ Օսմանեան արդարադատութեան հիման վրայ պահանջում եմ սրանց ենթարկել դռնբաց դատաքննութեան։

(Նախագահից ձայն է խնդրում դատապաշտպան Ճելալէտտին Արիֆ պէյը)։

Ճելալէտտին Արիֆ պէյ — Տուեալ դատաքննութեան՝ այս Բարձր Ատեանի իրաւասութեան մէջ մտնելու հարցը, ըստ օրէնքի քննարկելու անհրաժեշտութիւն է զգացւում։ Ցայտնի է, որ Սայիտ Հալիմ փաշան, Խալիլ, Նեսիմի, Իպրահիմ եւ Շիւքրի պէյերը նախարարներ են եղել նախկին կառավարութեան մէջ։ Եթէ ուշադրութիւն դարձնենք սահմանադրութեան պետական նախարարներին վերաբերող 31 եւ 33րդ յօդուածներին, ապա կը տեսնենք, որ նախարարների եւ այլ պետական բարձր պաշտօնների հետ առնչուող դատական գործերը քննարկուելու են միմիայն Գերագոյն դատարանում, իսկ պաշտօնից դուրս իրենց անձին վերաբերող դատական գործերը կարող են լսուել ընդհանուր դատարաններում։ Սահմանադրութեան 23րդ յօդուածն ասում է. «Իւրաքանչիւր անձի դատական գործը լսուելու է միմիայն օրէնքով հաստատուած դատարաններում»։ Այսպիսով, նախարարների գործը, օրէնքի նշած այդ կէտերի համաձայն, պէտք է լսուի Գերագոյն դատարանում(34)։

Դատախազ՝ Մուստաֆա Նազմի պէյ — [Դատապաշտպանների] կողմից առաջ քաշուած պաշտօնի եւ իրաւասութեան հարցի մասին ես եւս ուզում եմ յայտնել իմ տեսակէտը (ձայներ՝ չի լսւում)։ Այս դատաքննութիւնը Ռազմական ատեանում կամ սահմանադրութեան մէջ

նշուած Գերագոյն դատարանում լսելու հարցը բխում է այդ յանցագործութիւնները պաշտօնավարութեան ընթացքում կատարելու կամ չկատարելու հանգամանքից։ Ինչպէս բացայայտուեց մեղադրական եզրակացութիւնում, ցոյց տրուած յանցագործութիւնները տեղի են ունեցել ոչ թէ պաշտօնավարութեան բերումով, այլ կենտրոնական կոմիտէի, ինչպէս նաեւ նրա լիակազմ ժողովների գործադրած յանցագործութիւններին մասնակից դառնալու հանգամանքով։ Հետեւաբար, այս դատավարութիւնը պաշտօնավարութեան հիման վրայ մեկնաբանելու խնդիրը բացառուած է։ Խմբակային յանցագործութեան մասնակից դառնալու Իպրահիմ պէյի խնդիրը դեռեւս պարզորոշ չէ։ Մեզ տեղեկացրին, որ նախարարների խորհրդից մի շարք փաստաթղթեր յանձնուելու են դատախազութեանը։ Դատաքննութեան ընթացքում յանցանքի միմիայն պաշտօնավարութեան հետ կապ ունենալը եթէ հաստատուի, ապա այդ ժամանակ տուեալ կէտին ուշադրութիւն կը դարձուի։ Այլ դէպքում պաշտօնի եւ իրաւասութեան հարցը բնաւ օրակարգի հարց չի կարող դառնալ, քանի որ առկայ փաստերը վկայում են, որ այդ դատավարութիւնը մտնում է ձեր իրաւասութեան մէջ։ Մեղադրական եզրակացութիւնում փաստերը ցոյց են տալիս, որ գործադրուած յանցագործութիւններն անձնական բնոյթ են ունեցել։ Եթէ դատավարութեան ընթացքում [հարցն] այլ բնոյթ ընդունի, ապա այդ հանգամանքը նկատի կ'առնուի։

Նախագահ — Մենք մեր վճիռը կը յայտնենք անհրաժեշտ քննարկումից յետոյ։

Takvim-i Vekai, 27 Nisan 1335 (1919) № 3540 (ilave)

ԵՐԿՐՈՐԴ ԴԱՏԱՎԱՐՈՒԹԻՒՆ(35)

1335 (1919) թ. Մայիսի 4
[Ստամպուլի նախկին կայազօրի հրամանատար,
«Թեշքիլաթ-ը մահսուսէ»-ի անդամ՝
Ահմետ Ճեւատ պէյի հարցաքննութիւնը]

Նախագահ — *Համաշխարհային պատերազմի ընթացքում կուսակցութեան կողմից կազմակերպուած «Թեշքիլաթ-ը մահսուսէ»ի մէջ որեւէ պաշտօն ունեցե՞լ էք։*

Ճեւատ պէյ — [1914 թ.] *Դեկտեմբերի կէսերին ընդունեցի մայրաքաղաքի կայազօրի հրամանատարի պաշտօնը, դրա հետ առնչուող հրշէջային գունդը եւ այլ զօրամասեր։ Ինձ յետոյ ասացին, որ դրանք Ռազմական նախարարութեան հետ կապ ունեցող «Թեշքիլաթ-ը մահսուսէ»-ի [զօրագնդերն են]։*

Նախագահ — *Ինչպիսի՞ն էր այդ «Թեշքիլաթ»-ը։*

Ճեւատ պէյ — *Ես չգիտեմ, թէ մինչեւ իմ ընդունելը, այն ե՞րբ է կազմակերպուել։ Սկզբում, նրա ղեկավարը Սուլէյման Ասքերի պէյն էր, յետոյ Խալիլ պէյը նշանակուեց։ Նրանից յետոյ էլ ես ընդունեցի։ Ինձ յանձնուած ռազմամթերքի եւ զինուորական գործողութիւնների ծրագրերն իրագործելու համար ես միջնորդի դեր էի կատարում Ռազմական նախարարութեան պաշտօնեաների միջեւ։ Այդ գործողութիւններն իրագործելու համար կային բաւականաչափ թւով սպաներ, որոնք ծառայում էին զանազան մասնաճիւղերուն։ Այդ ժամանակ նրանց շարքերում էին գտնւում նաեւ Դոկտ. Նազիմը, Աթիֆ պէյը եւ*

Հասարակական անվտանգութեան տնօրէն՝ Ագիզ պէյը։

Նախագահ — Բացատրութիւն տուէք «Թեշքիլաթ-ը մահսուսէ»-ի մասնաճիւղերի մասին։

Ճեւատ պէյ — Այդ ժամանակ յատկապէս զբաղուած էինք Կովկասի գործերով։

Նախագահ — Քանի՞ մասնաճիւղ կար։

Ճեւատ պէյ — Իմ պաշտօնավարութեան ընթացքում զբաղուած էինք միայն կովկասեան գործողութիւններով եւ մէկ էլ Թրիբոլիի հարցերով։

Նախագահ — Այն բաժանուած էր արդեօ՞ք մասնաճիւղերի։

Ճեւատ պէյ — Այո՛, բաժանուած էր եւ իւրաքանչիւր մասնաճիւղերի համար նշանակուած էր մի սպայ։

Նախագահ — Ի՞նչ պարտականութիւններ ունէին այդ մասնաճիւղերը։

Ճեւատ պէյ — Մասնաճիւղերի պարտականութիւնը Կովկասի ներսում մի շարք կամաւորական կազմակերպութիւններ ստեղծելն էր։

Նախագահ — Ո՞ր մասնաճիւղի մասին է խօսքը։

Ճեւատ պէյ — Կովկասի մասնաճիւղի։

Նախագահ — Ինչպէ՞ս հասկանալ. «Թեշքիլաթ-ը մահսուսէ»-ին հետեւում էր մի կազմակերպութիւն, իսկ ելեւմտական հաշիւներին մի ա՞յլ կազմակերպութիւն։ Բացատրութիւն տուէ՛ք, ելեւմտական հաշիւներին, ռոճիկներին, համազգեստին հետեւելը ո՞ր մասնաճիւղերի պարտականութեան մէջ էր մտնում։

Ճեւատ պէյ — Դրանց համար նշանակուած էին մի շարք սպաներ, որոնք յետագայում միացան [զինուորական] անձնակազմին։ Ռիզա անունով մէկը հաշուետու էր Կովկասի «Թեշքիլաթ-ը մահսուսէ»-ին։

Նախագահ — Ես հարցնում եմ կենտրոնական [կոմիտէի] «Թեշքիլաթ-ը մահսուսէ»-ի մասին։ Ձեր գործընկերներից ովքե՞ր էին գտնուում նրա կազմում։

Ճեւատ պէյ — Մեծարգոյ փաշա, նրանք անմիջականօրէն իմ տրամադրութեան տակ չէին գտնւում։ Կայազօրի հրամանատարութիւնը եւ նրանց ղեկավարութիւնը տարբեր պաշտօնատներում էին կատարում իրենց պարտականութիւնները։

Նախագահ — Մի՞թէ նրանց պաշտօնավարութիւնը ձեր համեմատ տարբեր բնոյթ էր կրում։

Ճեւատ պէյ — Այո՛, էֆենտի։

Նախագահ — Որտե՞ղ էր գտնւում ձեր պաշտօնատեղին։

Ճեւատ պէյ — Կայազօրի հրամանատարութիւնը գըտնըւում էր Ռազմական նախարարութիւնում։

Նախագահ — Իսկ «Թեշքիլաթ-ը մահսուսէ»-ի պաշտօնատեղին որտե՞ղ էր գտնւում։

Ճեւատ պէյ — Նուրի Օսմանիէի կողմերում։

Նախագահ — Այդ գործերով զբաղուող քանի՞ մասնաճիւղ կար այնտեղ։

Ճեւատ պէյ — Արիֆ պէյ անունով մէկը կար, որը հետեւում էր միայն Մակեդոնիայի գործերին։

Նախագահ — Բնութագրէ՛ք Արիֆ պէյին։

Ճեւատ պէյ — Խօսքը գապիդան Արիֆ պէյի մասին է։ Ռիզա անունով մի գապիդան կար, որը լայն արտօնութիւններ ունէր։ Կար Մուխտար պէյ անունով մի այլ գապիդան, ինչպէս նաեւ գայմագամ Հիւսամէտտին պէյը։

Նախագահ — Սրանք ի՞նչ պաշտօն ունէին։

Ճեւատ պէյ — Ղեկավարում էին ռազմական գործողութիւնները։

Նախագահ — Քիչ առաջ ձեր կողմից նշուած Դոկտ. Նազըմ պէյը եւ նրա գործընկերները ի՞նչ պարտականութիւն ունէին։

Ճեւատ պէյ — Նրանք ընդգրկուած էին կամաւորներ հաւաքագրելու գործին։ Դրա համար էլ գտնւում էին այնտեղ։

Նախագահ — Նրանք ի՞նչ կապ ունէին ձեզ հետ։

Ճեւատ պէյ — Ոչ մի կապ, էֆենտի։

Նախագահ — Եթէ ոչ մի կապ չունէին, ինչո՞ւ էին ձեզ մօտ գտնւում։

Ճեւատ պէյ — Նրանք մեզ մօտ չէին գտնւում։

Նախագահ — Այսինքն ձեր պաշտօնատեղիում։

Ճեւատ պէյ — Նրանք «Թեշքիլաթ-ը մահսուսէ»-ի պաշտօնատանն էին գտնւում։

Նախագահ — Դուք այնտեղ չէ՞իք լինում։

Ճեւատ պէյ — Ես հազուադէպ էի այնտեղ լինում։

Նախագահ — Գնալ-գալու ժամանակ ձեզ հետ չէ՞ին տեսակցում։

Ճեւատ պէյ — Տեսակցում էին։

Նախագահ — Ի՞նչ հարցերի կապակցութեամբ։

Ճեւատ պէյ — Մի շարք անձեր եւ կամ կամաւոր ջոկատներ Կովկաս ուղարկելու համար։

Նախագահ — Այդ անձերը, զինուորական չլինելով հանդերձ, ինչպէ՞ս էին ղեկավարում այդ գործերը։

Ճեւատ պէյ — Հաւանական է, զինուորական անձնակազմի հետ կապ չունեցող կամաւորներ հաւաքագրելու խնդրով։

Նախագահ — Այդ կապակցութեամբ գրաւոր հրահանգ կա՞ր։

Ճեւատ պէյ — Ես նրանց էի հաղորդում Ռազմական նախարարութիւնից ստացուած հրամանի այն մասերը, որոնք վերաբերւում էին իրենց։

Նախագահ — Յատուկ հրահանգ չկար, այդպէս չէ՞։

Ճեւատ պէյ — Ես նրանց էի հաղորդում Ռազմական նախարարութեան օբերաթիւ գործողութիւնների մասնաճիւղից եւ գլխաւոր շտաբից ստացուած հրամանները։

Նախագահ — Ո՞ւմ էիք հաղորդում այդ հրամանները։

Ճեւատ պէյ — Այդ հրամանները տրւում էին կայազօրի հրամանատարութեան անունով։ Կայազօրի հրամանա-

տարութեան միջոցով էլ մի օրինակ ուղարկւում էր նրանց։

Նախագահ — Ո՞ւմ էր ուղարկւում։

Ճեւատ պէյ — «Թեշքիլաթ-ը մահսուսէ»-ին։

Նախագահ — «Թեշքիլաթ-ը մահսուսէ»-ի որեւէ մասնաճիւղի՞ն։

Ճեւատ պէյ — Ո՛չ, էֆենտի, «Թեշքիլաթ-ը մահսուսէ»ի գրասենեակին։ Նրանք եւս փաստաթղթեր, թղթապանակներ ունէին եւ ընդունում էին այդ հրամանագրերը։ Երբեմն մի շարք վաւերագրեր ետ էին վերադարձնում, երբեմն էլ պահանջում՝ որոշ վաւերագրերի պատճէնները։

Նախագահ — «Թեշքիլաթ-ը մահսուսէ»-ի մէջ ցուցագրուածները զինուորականութեան հետ որեւէ առնչութիւն ունէ՞ին։

Ճեւատ պէյ — Ռազմական գործողութիւնների [կենտրոնից] նշանակուած սպաներ կային։

Նախագահ — Սպաներից բացի զինուոր կա՞ր։

Ճեւատ պէյ — Մի խումբ զինուորներ կային, որոնք ծառայում էին վարձատրութեամբ։

Նախագահ — Նրանք ի՞նչ առնչութիւն ունէին զինուորական [պարտադիր] ծառայութեան հետ։

Ճեւատ պէյ — Ստացուած հրամանի համաձայն ծառայութեան էին վերցնում զինուորականութեան հետ առընչութիւն չունեցող մարդկանց։

Նախագահ — Ո՞վ էր հոգում նրանց սնունդը, համազգեստը եւ զինամթերքի ծախսերը։

Ճեւատ պէյ — Մեզ մօտ գտնուողները դռնապահ եւ սահմանափակ թուով ծառաներ էին։

Նախագահ — Ճակատ գնացողների զինումը եւ ռազմամթերքով ապահովումը ձեր միջոցո՞վ էր կատարւում։

Ճեւատ պէյ — Նրանց կարիքների ապահովումը մասամբ կատարում էինք մենք, անհրաժեշտ պաշտօնատեղիներ դիմելու միջոցով։

Նախագահ — Իսկ միւս մասը ինչպէ՞ս էր կատարւում։

Ճեւատ պէյ — Մի շարք սովորական գործողութիւնները իրենք էին կատարում։

Նախագահ — Դուք ասացիք մասամբ։ Իմ հարցը վերաբերում է ուտելիքին, հագնելիքին եւ զինամթերքին։ Այդ ծախսերը ո՞վ էր հոգում։

Ճեւատ պէյ — Էֆենտի, բոլորն էլ այնտեղից էր կատարւում(36)։

Նախագահ — Այս խնդրի հետ առնչւող [մարդկանց] ի՞նչ միջոցներով էիք ուղարկում։

Ճեւատ պէյ — Կամաւորների ջոկատը կազմակերպելուց յետոյ, Ռազմական նախարարութեան հրահանգի համաձայն, ենթարկւում էր բանակի հրամանատարութեանը։ Իմ պաշտօնավարութիւնից առաջ մի քանի խմբեր գնացել էին Կովկաս։ Իսկ պաշտօնավարութեան ընթացքում նրանք գնում էին բանակի հրամանատարութեան կարգադրութեամբ։

Նախագահ — (...)(37)։

Ճեւատ պէյ — Սպանների եւ զինուորների համար մի ցուցակ կազմուելով՝ յանձնւում էր իրենց։ Ինքնաթիռներում նրանց ապահովում էին ուտելիքով։ Այնուհետեւ անցնում էին բանակի շարքերը։ Միայն թէ զինուորական ծառայութեան հետ առնչութիւն չունեցողների ընտանիքներին այստեղ ռոճիկ էր յատկացւում։ Սրանց մի մասն էլ զինապարտների նման վերցւում էին ծառայութեան, բայց վարձատրւում էին իրենց պաշտօնատեղիներից։

Նախագահ — Սրանց ընդհանուր թիւը միշտ չէ, որ որոշակի է եղել։ Այդ մասին ձեզ տեղեկութիւն տալի՞ս էին, թէ ոչ։

Ճեւատ պէյ — Ո՛չ, էֆենտի, թղթապանակներում բազմաթիւ հրամաններ կան այն մասին, որ [այդ խմբերը] գնալուց յետոյ բոլորովին թղթակցութիւն չունենան այստեղի հետ։ Նոյնիսկ հրահանգ էր եղել, որ կօշիկ եւ այլ

անհրաժեշտ իրերը ստանան բանակից։

Նախագահ — Իրենց կատարած գործունէութեան մասին տեղեկութիւն տալի՞ս էին, թէ ոչ։

Ճեւատ պէյ — Ո՛չ,

Նախագահ — «Թեշքիլաթ-ը մահսուսէ»-ի հրամանատարների նշանակումը այստե՞ղ էր կատարւում։

Ճեւատ պէյ — Իմ պաշտօնավարութեան ընթացքում, մեկնող ջոկատների հրամանատարները այստեղից էին նշանակւում։

Նախագահ — Կարո՞ղ էր պատահել, որ այդ հրամանատարները փոփոխութեան ենթարկուէին իրենց գտնուած վայրերում։

Ճեւատ պէյ — Նկատի ունենալով, որ նրանք իրենց պարտականութիւնները կատարելու էին բանակի շարքերում [հրամանատարները] նշանակւում էին այստեղից։

Նախագահ — Ռազմաճակատներում գտնուող «Թեշքիլաթ-ը մահսուսէ»-ի ջոկատները, բացառապէս բանակի հրամանատարութե՞ան էին ենթարկւում։

Ճեւատ պէյ — Անկասկած, էֆենտի, նրանք մտնում էին բանակի անձնակազմի մէջ։ Մինչեւ այսօր էլ նրանց մի մասը գտնւում է այդ զօրագնդերում։ Նրանց կազմը համալրւում էր զինուորներով, բանակի հրամանատարութեան կողմից, եւ այդ ձեւով էլ շարունակում էին ծառայութիւնը։

Նախագահ — Ասում են, որ «Միութիւն եւ Առաջադիմութիւն» կուսակցութեան կենտրոնական կոմիտէի անդամներից մի քանիսը(38) այդ ջոկատների գլուխն անցած, որոշակի գործողութիւններ են ծաւալել։ Ճի՞շդ է։

Ճեւատ պէյ — Դա տեղի չի ունեցել իմ պաշտօնավարութեան ընթացքում։ Տուեալ ժամանակ, ես գտնւում էի Եւրոպայում։ Դա տեղի է ունեցել իմ բացակայութեան ժամանակ։

Նախագահ — Որքա՞ն ժամանակ պաշտօնավարեցիք։

Ե՞րբ հեռացաք պաշտօնից։

Ճեւատ պէյ — Պաշտօնի անցայ 1330 [1914] թուականի Դեկտեմբերի սկզբին, իսկ [1918] թուականի վերջերին թողեցի մայրաքաղաքի կայազօրի հրամանատարութիւնը։

Նախագահ — Եւրոպայում եղաք։

Ճեւատ պէյ — Այո՛, ընդհանուր զօրահաւաքի ընթացքում գտնուում էի Եւրոպայում։ 1330 թ. [1914] Դեկտեմբերին նշանակուեցի մայրաքաղաքի կայազօրի հրամանատար։

Նախագահ — Ձեզանից առաջ ո՞վ էր ղեկավարում «Թեշքիլաթ-ը մահսուսէ»-ն։

Ճեւատ պէյ — Ինձանից առաջ մայրաքաղաքի կայազօրի հրամանատարը՝ Խալիլ պէյն(39) էր։ Այդ ժամանակ...։

Նախագահ — Խալիլ պէյի ղեկավարութե՞ան ժամանակ։

Ճեւատ պէյ — Այո՛, էֆենտի։

Նախագահ — Այդ «Թեշքիլաթ»-ը զինուորական հրամանատարութեան կողմի՞ց էր ստեղծուել։

Ճեւատ պէյ — Մի ժամանակ այն ստեղծուեց Ռազմական նախարարութիւնում։

Նախագահ — [Կուսակցութեան] կենտրոնական կոմիտէն ի՞նչ ձեւով է օժանդակել այդ «Թեշքիլաթ»-ին։

Ճեւատ պէյ — Ես չեմ յիշում, թէ կենտրոնական կոմիտէն ի՞նչ օժանդակութիւն է ցոյց տուել։ Մեծարգոյ փաշա, կենտրոնական կոմիտէն ոչ մի օժանդակութիւն ցոյց չի տուել։

Նախագահ — Այդ դէպքում, ի՞նչ դրդապատճառներով են Դոկտ. Նազիմ պէյը եւ միւսները ենթարկուել ձեզ։

Ճեւատ պէյ — Երբ ես պաշտօնի անցայ, նրանք արդէն գտնուում էին դրա կազմում։ Մեծարգոյ փաշա, ես տեղեկութիւն չունեմ [նշանակումների] մասին։

Նախագահ — Այդ ջոկատների կազմը նուազել է։ Ցեւտագայում, որտեղի՞ց էր այն համալրուում։

Ճեւաստ պէյ — Կամաւոր ջոկատները անցնում էին բանակի...։

Նախագահ — Մի՞թէ բանակում կամաւոր ջոկատներ կայի՞ն։

Ճեւաստ պէյ — Նրանք մտնում էին բանակի անձնակազմի մէջ։

Նախագահ — Այդ մասին ասացիք։ Շատ լաւ, կազմը նուազելու դէպքում, այն որտեղի՞ց էր համալրւում։

Ճեւաստ պէյ — Այստեղից չէր համալրւում։

Նախագահ — Շատ լաւ, որտեղի՞ց էր կատարւում։

Ճեւաստ պէյ — Այն համալրւում էր ծառայութեան համար բանակ եկած զինուորներից։

Նախագահ — Նրանք այդպէս խառը ձեւո՞վ էին ծառայում։

Ճեւաստ պէյ — Մեծարգոյ փաշա, ես ինքս էլ չգիտեմ։ Միայն թէ մի քանի ջոկատներ, իբրեւ թէ բանակում ծառայելու համար, սպաների եւ զինուորների հետ...

Նախագահ — Ցանձնուել են մի շարք վալիների տրամադրութեանը։ Այդ հրամանը ի՞նչ ձեւով էք տուել։

Ճեւաստ պէյ — Ես տեղեկութիւն չունեմ։ Կարելի է ստուգել իմ պաշտօնավարութեան ընթացքում կամաւոր մեկնած ջոկատների թղթապանակները։ Նրանց գտնուած եւ ծառայած վայրերի մասին կարելի է տեղեկանալ նաեւ նրանց հրամանատարներից։

Նախագահ — Պատերազմական դրութեան պատճառով նրանց թիւը բնական է, որ նուազում էր։ Այդ ուղղութեամբ ինչպիսի՞ միջոցներ էիք ձեռնարկում։

Ճեւաստ պէյ — Ստամպուլից մեկնելուց յետոյ մենք ոչ մի յարաբերութիւն չէինք ունենում նրանց հետ։

Նախագահ — Եթէ ձեր պաշտօնավարութիւնը միմիայն այստեղի համար էր, ուրեմն դրանք ստեղծուած պէտք է լինէին պատերազմի սկզբում մի քանի ամիսների համար։ Բայց նրանց գործունէութիւնը շարունակուել է։

Միթէ դուք իրազեկ չպէ՞տք է լինէիք իրենց յետագայ գործերի ընթացքի մասին։

Ճեւատ պէյ — Մեծարգոյ փաշա, նրանց գործունէութիւնը չի շարունակուել։ Ռազմական նախարարութիւնից ստացուած հրամանի համաձայն, կամաւոր «Թեշքիլաթ»-ի [գործունէութեանը] վերջ է տրուել։

Նախագահ — Այդ ե՞րբ։

Ճեւատ պէյ — Յունուար ամսուայ ընթացքում։ Այդ մասին Ռազմական նախարարութեան կողմից բանակներին եւ զօրամիաւորումներին ուղղուած հրամանի մի օրինակը գտնւում է ինձ մօտ։

Նախագահ — Ո՞ր թուականին։

Ճեւատ պէյ — 1330 [1914] թուականի...։

Նախագահ — Այդ թուականից յետոյ մի՞թէ «Թեշքիլաթ»-ը լուծարքի ենթարկուեց։

Ճեւատ պէյ — Ստացուած հրամանագրում նշուած էր գոյութիւն ունեցող ջոկատները ուղարկելու մասին։ Բանակի հրամանատարներին առաքուած գրութիւնը նոյնութեամբ ուղարկել էին ինձ։

Նախագահ — Ինչպէ՞ս էր այդ շրջաբերականի բովանդակութիւնը։

Ճեւատ պէյ — «Բանակի հրամանատարներին, առաջին, երկրորդ, երրորդ, չորրորդ եւ հինգերորդ զօրամիաւորների եւ Իզմիրի շրջանի հրամանատարներին։ Չեթէների կազմակերպութեանը(40) տրուած Ռազմական նախարարութեան հրամանի բովանդակութիւնը հետեւեալն է։

«Թեշքիլաթ»-ի չեթէների համալրուած [ջոկատները] ուղարկել նշանակուած վայրերը։ Մինչ այդ ուղարկուածները շարունակելու են ծառայել [բանակում]։ Այնուհետեւ վերջ է տրուելու չեթէների ստեղծմանը։ Ուղարկուած զինուորները բաժանել զօրամասերին եւ կամ պահեստային գումարտակներին»։

Այս հրամանը տրուելուց յետոյ, առկայ [ջոկատները]

ուղարկուեցին եւ այդ աշխատանքներին վերջ տրուեց։

Նախագահ — Ո՞ր թուականին։

Ճեւատ պէյ — 1330 (1915) թուականի Յունուարի 21-ին։

Նախագահ — Ո՞վ է ստորագրել։

Ճեւատ պէյ — Բանակի հրամանատարութեան շտաբի անունից՝ Պիհիճը։

Նախագահ — Տուէ՛ք դրա պատճէնը։

Ճեւատ պէյ — Այդ իմ դատապաշտպանի մօտ է։

Նախագահ — Ձեր ընթերցածը տուէք, դուք միւսը վերցրէք։

Դատապաշտպան Խուլուսի պէյ — Հրամմեցէ՛ք։

Նախագահ — (Խօսքն ուղղելով քարտուղարին) Կարդացէ՛ք։

ՌԱԶՄԱԿԱՆ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹԵԱՆ
ԲԱՆԱԿԻ
ՍՊԱՑԱԿՈՑՏ

ՄԱՅՐԱՔԱՂԱՔԻ
ԿԱՅԱԶՕՐԻ
ՀՐԱՄԱՆԱՏԱՐՈՒԹԵԱՆԸ
ՍՏԱՄՊՈՒԼ, 1330 թ.
[1915 Յունուարի 21]
№ 1117

Ի պատասխան 17 Նոյեմբեր 1330 (1914) թուակիր № 159 գրութեան։

1. Բանակի հրամանատարներին, առաջին, երկրորդ, երրորդ, չորրորդ եւ հինգերորդ զօրամիաւորներին եւ Իզմիրի շրջանի հրամանատարներին։

Ձեթէնների կազմակերպութեանը տրուած Ռազմական նախարարութեան հրամանի բովանդակութիւնը հետեւեալն է.

«Թեշքիլաթ»-ի չեթէնների համալրուած [ջոկատները] ուղարկել նշանակուած վայրերը։ Մինչ այդ ուղարկուածները շարունակելու են ծառայել [բանակում]։ Այսուհետեւ չեթէնների ստեղծմանը։ Ուղարկուած զինուորները բաժանել զօրամասերին եւ կամ պահեստային

գումարտակներին։

Նախագահ — Այստեղ ոչինչ չի ասուած չհամալրուած «Թեշքիլաթ»-ի [ջոկատների] մասին։ Խօսւում է միայն համալրուածների մասին եւ ոչ մի նշում չկայ չհամալրուած [ջոկատների] մասին։ Ի՞նչ միջոցներ ձեռնարկեցիք։ Դրանց ցրեցի՞ք, թէ՞, ըստ ձեր անձնական հայեցողութեան, գործեցիք։

Ձեւատ պէյ — Բնական է որ նրանք չընդգրկուեցին [«Թեշքիլաթ»-ի] մէջ, այլ յանձնուեցին բանակի տրամադրութեանը եւ պահեստային զօրամասերին։

Դատապաշտպան Խուլուսի պէյ — Մեծարգոյ փաշա, այդ մասին նշուած է ստորեւ բերուած կէտերում։

Նախագահ — (Խօսքն ուղղելով արձանագրող քարտուղարին) — Որ այդպէս է, կարդացէ՛ք։

2. Բանտարկեալներին ու դատապարտուածներին բանակի մէջ ընդգրկելու եւ նրանց ծառայութեան մասին կազմւում է յատուկ օրէնք(41), որի հրապարակումից յետոյ [վալիները] գործելու են ըստ օրէնքի։ Ըստ տեղեկագրերի, տարբեր բանտերից ուղարկուած 2267 անձերի մասին առայժմ անհրաժեշտութիւն չկայ որեւէ գործողութիւն ձեռնարկելու։

3. Մի յատուկ նպատակի գործադրման համար կազմակերպուող 531 հոգիանոց ջոկատը անհրաժեշտ է համալրել եւ ուղարկել նշուած վայրը(42)։

4. Պաթումից եւ շրջակայքից եկած գաղթականներից դեռեւս այստեղ գտնուող 335 անձանց անհրաժեշտ է տրամադրել 3-րդ բանակի հրամանատարութեանը։

«Թեշքիլաթ-ը մահսուսէ»-ի
յանձնաժողովին ծանօթանալուց
յետոյ վերադարձնել։
1330 թ.
[1914] Նոյեմբերի 25

Բանակի սպայակոյտի
հրամանատարութեան անունից
[ստորագրել է] Պիհիճը։
Ծանօթացուել է [1914 թ.
Նոյեմբերի] 26-ին
պատասխանատու քարտուղար

Նախագահ — Այստեղ այդպիսի բան չկայ, չհամալրուած [ջոկատները] ի՞նչ արեցիք։ Ցրեցի՞ք, թէ՞ համալրեցիք։ Դրա մասին այստեղ նշում չկայ։ Այս հրամանագիրը նախապէս տրուած հարցումի պատասխանն է։ Այնպէս, որ սա Ռազմական նախարարութիւնից տրուած հրամանկամ հրահանգ չէ։

Ճեւատ պէյ — Հաւանական է, որ սրա պատճառաբանութիւնը գտնուի թղթապանակներում։ Անշուշտ, Ռազմական նախարարութիւնից մի հրաման չեղած, մայրաքաղաքի կայազօրի հրամանատարութիւնը չէր կարող նրանց մասին հրաման արձակել։

Նախագահ — Նրանք ինչպիսի՞ զէնքերով եւ ի՞նչ ռազմամթերքով էին զինուած։

Ճեւատ պէյ — Նրանք զինուած էին Ռազմական նախարարութիւնից, բանակի շտաբից յատկացուած զէնքերով։

Նախագահ — Ի՞նչ մակնիշի եւ տեսակի [զէնքերով]։

Ճեւատ պէյ — Որքան ես յիշում եմ, սկզբում տրուածը «մարթին»(43) էր։

Նախագահ — Նրանք հեծեալներ կամ թնդանօթաձիգեր ունէի՞ն։

Ճեւատ պէյ — Ո՛չ, էֆենտի։

Նախագահ — Բեռներ եւ ծանրութիւններ տեղափոխելու յարմարանքնե՞ր։

Ճեւատ պէյ — Ո՛չ, էֆենտի։

Նախագահ — Սրանց հրամանատարները ուղղակի Ռազմական նախարարութեան հե՞տ էին կապւում, թէ՞ ձեզ հետ։

Ճեւատ պէյ — Հաւանական է, որ նրանց կապը բանակի հրամանատարների հետ էր։

Նախագահ — Ուղղակի նրա՞նց հետ։

Ճեւատ պէյ — Բանակի հրամանատարութեան հետ ուղղակի կապուելու իրաւունք չունէին։

Նախագահ — Նրանց գլխավերեւում գտնուող յատուկ հրամանատարներն ինչ ձեւով էին կապի մէջ մտնում

կենտրոնի հետ։

Ճեւատ պէյ — Իհարկէ, այդպիսի կապ գոյութիւն ունեցել է։ «Թեշքիլաթ-ը մահսուսէ»-ի մէջ այդ թղթակցութիւնները պահող պաշտօնեաներ կային։ Ես չեմ կարողանում յիշել, թէ ի՞նչ ձեւով էր կատարւում այդ կապը։

Անգարայի նախկին պատգամաւոր, «Յատուկ կազմակերպութեան» անդամ Աթիֆ պէյի հարցաքննութիւնը

Նախագահ — Ինչպէ՞ս ստեղծուեց «Թեշքիլաթ-ը մահսուսէ»-ն։

Աթիֆ պէյ — Պալքանեան պատերազմի վերջերին, Սուլէյման Ասքերի պէյը ծառայում էր Արեւմտեան Թրակիայում։ Այնտեղ միեւնոյն նպատակի համար նրա հետ աշխատակցել էին մի շարք գործընկերներ։ [Պատերազմից] յետոյ, սրանք դեռեւս ծառայելու համար ոչ մի տեղ չէին նշանակուել։ Երբ ընդհանուր զօրահաւաք յայտարարուեց, նրանց միջոցով ստեղծուեց «Թեշքիլաթ-ը մահսուսէ»-ն։ Զօրահաւաքի ընթացքում, երբ գործերը շատացան, չորս հոգի, մի յանձնաժողովի ձեւով հաւաքուեցինք ռազմական նախարարութիւնում։ Այդ թւում՝ ես, Սուլէյման Ասքերի պէյը, Դոկտ. Նազիմը, ինչպէս նաեւ Հասարակական անվտանգութեան տնօրէնը։

Նախագահ — Ասացէք նաեւ Հասարակական անվտանգութեան տնօրէնի անունը։

Աթիֆ պէյ — Ազիզ պէյ, էֆենտի... Տուեալ վայրերի իրադրութեան ծանօթ հայրենասէր մարդկանց ուղարկեցինք Ռուսաստանի խորքերը եւ նրանց միջոցով մի «Թեշքիլաթ» ստեղծեցինք մահմեդական բնակչութեան շրջանում։ Մեր բանակը այնտեղ մտնելու դէպքում, այդ «Թեշքիլաթ»-ը օժանդակութիւն էր ցոյց տալու եւ ընդհանրապէս հետեւելու էր ռուսական բանակի տեղաշար-

ժերին։ Միեւնոյն ժամանակ, պահեստներն ու այլ կենտրոնատեղիները պայթեցնելու համար ուղարկեցինք անհրաժեշտ ռազմամթերք։ Այսպիսով, [ռազմական] գործողութիւնները ծաւալուելու ընթացքում, ռազմաճակատի թոյլ մասերում, այսինքն՝ ապակենտրոնացուած զինուորական շրջաններում, հայրենիքը պաշտպանելու համար կամաւոր հիմունքներով ստեղծեցինք մի «կազմակերպութիւն»։ էֆենտի, մօտաւորապէս 5–6 ջոկատներ ուղարկեցինք, որոնք անձնուիրաբար ծառայելով հայրենիքին՝ երկար ժամանակ պաշտպանեցին ծովեզերեայ եւ այլ թոյլ վայրերը։

Նախագահ — Ինչի՞ց էր կազմուած կայազօրի հրամանատարութեան տակ գտնուող «Թեշքիլաթ»-ը։

Ալթիֆ պէյ — Մեր յանձնաժողովը գտնուում էր այս-պիսի վիճակում։ Ռազմական նախարարութեան հետ մեր կապը, մեր որոշումների հաղորդումը կատարուում էր Սուլէյ-ման Ասքերի պէյի միջոցով։ Նրա գնալուց յետոյ, կարճ ժամանակով մայրաքաղաքի պարետային հրամանատարութիւնում նշանակուեց Խալիլ պէյը։ Յետագայում, նա էլ մի զինուորական դասակի հետ մեկնեց [ռազմաճակատ]։ Այնուհետեւ պարետային հրամանատարութիւնում նշանակուեց Ճեւատ պէյը։ Թրիփոլիում(44) եւ այլ վայրերում յատուկ սպաների ղեկավարութեան տակ մասնաճիւղեր ունէինք։ Այսինքն՝ «Թեշքիլաթ»-ը ունէր իր մասնաճիւղերը, այնպէս որ, մեր յանձնաժողովը գտնուում էր օրինական վիճակում։

Նախագահ — «Թեշքիլաթ»-ը քանի՞ մասնաճիւղ ունէր։

Ալթիֆ պէյ — էֆենտի, ընդհանուր թիւը չեմ կարողանում լաւ յիշել, կարծեմ չորս մասնաճիւղ ունէր՝ Ռումելիի, Կովկասի, Աֆրիկայի եւ Թրիփոլիի մասնաճիւղերը։

Նախագահ — «Թեշքիլաթ-ը մահմուսէ»-ն որքա՞ն ժամանակ գոյութիւն ունեցաւ։ Ե՞րբ կազմալուծուեց։

Ալթիֆ պէյ — Կարծեմ այն կազմալուծուեց զինադադարի ժամանակ։ 1331 (1915) թուականի Ապրիլի վերջերին մենք ցրուեցինք։ Այդ թուականին, էնվեր փաշայի նշա-

նակումով՝ պաշտօնավարում էր Ճեզաիրցի Ալի պէյը։ Նա ռոճիկով, այսինքն՝ պաշտօնապէս էր նշանակուած, իսկ մենք ծառայում էինք անվճար։ Այդ ժամանակ էլ մեր յանձնաժողովի պարտականութիւնը աւարտուեց։

Նախագահ — Ո՞ր թուականին։

Աթիֆ պէյ — 1331 (1915) թուականի Ապրիլի վերջին։

Նախագահ — Մինչեւ այդ թուականը ձեր կապը [Ռազմական] նախարարութեան հե՞տ էր։

Աթիֆ պէյ — Նախարարութիւնը մեզ արտօնութիւն էր տուել։ Կապը գոյութիւն ունէր(45)։

Նախագահ — Բնական է, որ այստեղից ուղարկուող ջոկատների ընդհանուր թիւը պիտի պահպանուէր։ Ինչպէ՞ս էր կատարւում նրանց համալրումը։

Աթիֆ պէյ — Նրանք ենթարկւում էին բանակին։ Նրանց համալրումը կատարւում էր բանակի կողմից։ Միառժամանակ յետոյ, այսինքն մի քանի ամիս յետոյ, նրանք անցնում էին բանակի անձնակազմի շարքերը։ Մեզ հետ ոչ մի առնչութիւն չունէին։ Նոյնիսկ առաջին հերթին գնացողներից մնացել էր 50 հոգի։ Նրանց թիւը կատարելապէս նուազեց, քանի որ նրանք կռուեցին հերոսաբար։

Նախագահ — Ստացւում է այնպէս, որ կանոնաւոր զօրքը գտնւում էր խառը վիճակում։

Աթիֆ պէյ — Այո՛, մասամբ այդպէս էր։ Յատկապէս վերջերս, Տրապիզոնի շրջակայքում, համարեա թէ այդպէս էր։

Նախագահ — Դուք գիտէ՞ք, որ մի շարք վիլայէթներում այդ ջոկատներից մի քանիսը ենթարկուել են վալիների հրամանատարութեանը։

Աթիֆ պէյ — Ո՛չ, էֆենտի, երբեք վալիների հրամանատարութեանը չեն տրուել։ Միմիայն, սահմանամերձ շրջանում գտնուող վիլայէթների վալիները, այդ թւում՝ Տրապիզոնի եւ Էրզրումի վալիները, օգնութիւն են ցու-

ցաբերել։ Այսինքն՝ նրանք մի տեսակ համարւում էին այդ վայրերի «Թեշքիլաթ-ը մահսուսէ»-ի մասնաճիւղերի անդամները։ Տուեալ վայրերում, մի քանի մասնաճիւղեր էին ստեղծուել։ Յետագայում դրանք էլ վերացուեցին։

Նախագահ — Այդ գործողութիւնների ընթացքում նրանք երբեւէ ձեզ չե՞ն դիմել։

Աթիֆ պէյ — Սկզբնական շրջանում, «Մեզ զինուորներ ուղարկէք» ասելով, մի քանի դիմողներ եղան։ Յետագայում Ռազմական նախարարութիւնը յայտնեց, որ «Դուք մի խառնուէք [«Թեշքիլաթ»-ի] գործունէութեանը, նրանք ենթարկւում են բանակներին»։ Մենք չմիջամտեցինք։ Միմիայն սկզբնական շրջանում որոշ համագործակցութիւն է եղել։

Նախագահ — Հաղորդման խնդրում եղած պահանջարկը նրանք ուղղակիօրէն ձե՞զ էին ներկայացնում։

Աթիֆ պէյ — Ո՛չ, էֆենտի, չեմ յիշում։

Նախագահ — Երբեւէ փող ուղարկուե՞լ է, թէ՞ ոչ։

Աթիֆ պէյ — Փող ուղարկուելը չեմ կարողանում յիշել։

Takvim-i Vekayi, 4 Mayis 1335 (1919) № 3543

ԵՐՐՈՐԴ ԴԱՏԱՎԱՐՈՒԹԻՒՆ(46)
1919 թ. Մայիսի 6

«Միութիւն եւ Առաջադիմութիւն» կուսակցութեան կենտրոնական կոմիտէի քարտուղար Միտհատ պէյի հարցաքննութիւնը(47)

Դատախազ՝ Մուստաֆա Նազմի պէյ — Տեղահանութեան եւ կոտորածի հարցում, կուսակցութեան կենտրոնական կոմիտէն ինչպիսի՞ դիրքորոշում ունէր։

Միտհատ Շիւքրի պէյ — Տեղահանութեան հարցի մասին չգիտեմ, որովհետեւ այն տեղի է ունեցել զինուորական տեսանկիւնից, ինչ որ պատերազմական գործողութիւնների հետ կապուած։ Ուստի այդ հարցի մասին ոչինչ չգիտեմ։ Կոտորածի հարցում, կենտրոնական կոմիտէն եւ բոլոր ընկերներս կատարելապէս դէմ էինք։ Նոյնիսկ շատ էինք նեղւում, երբ հեռաւոր տեղերից կոտորածի վայրերից եկած մարդկանցից այդպիսի լուրեր էինք առնում։ Ես անձամբ այդ մասին զեկուցեցի Ներքին Գործերի նախարարութեանը՝ յայտնելով. «Իմացանք, որ այդպիսի վատ արարքներ են տեղի ունենում, դա ճիշդ բան չէ...»։ Իմ զեկոյցին, Ներքին նախարարութիւնից տրուեց հետեւեալ պատասխանը. «Ստուգող յանձնաժողով եմ ուղարկելու, վստահ եղէք, հանգիստ եղէք, այդ արարքները կանխուելու են՝ մի քանի հարիւր հոգի ձերբակալուեցին եւ յանձնուեցին ռազմական ատեանին, մի քանիսը մահուան են դատապարտուելու»։ Այդ ձեւով ինձ կատարելապէս հանդարտեցրին, ասելով նաեւ, որ «դրա համար անհանգստանալու պատճառ չկայ»։

Կենտրոնական կոմիտէի անդամ Զիա Գէօքալպի հարցաքննութիւնը

Նախագահ — «Միութիւն եւ Առաջադիմութիւն» կուսակցութեան եւ «Թեշքիլաթ-ը մահսուսէ»-ի միջեւ ինչպիսի՞ կապ կար։

Զիա Գէօքալպ — «Թեշքիլաթ-ը մահսուսէ»ի հետ «Միութիւն եւ Առաջադիմութիւն» կուսակցութիւնը կապ չունէր։ Այն ստեղծուած էր Ռազմական նախարարութեան կողմից եւ կատարելապէս գտնւում էր նրա տրամադրութեան տակ։ «Թշեքիլաթ-ը մահսուսէ»-ն Ռազմական նախարարութեան հսկողութեան ներքոյ մի պաշտօնական հիմնարկութիւն էր։ Մենք տեղեակ չենք տեղահանութեան

եւ կոտորածի հետ նրա ունեցած առնչութեան մասին։ Այդ մասին մեզ ոչ մի տեղեկութիւն չի հասել։

Նախագահ — Կոտորածի մասին կենտրոնական կոմիտէն ոչ մի բան չէ՞ր լսում։

Զիա Գէօքալպ — Շատ ուշ։ Իսկական եղելութեան մասին մեզ պարզ տեղեկութիւն չէր հասնում, մեզ շատ թերթեւ լուրեր էին գալիս։

Նախագահ — Ի՞նչ ձեռնարկեցիք այդ կապակցութեամբ։

Զիա Գէօքալպ — Այդ խնդրի հետ կապուած՝ կենտրոնական կոմիտէն պաշտօնապէս մի բան ձեռնարկելու իրաւասութիւն չունէր, սակայն կենտրոնական կոմիտէի անդամները անձամբ դիմում էին Ներքին Գործերի նախարարութեանը կամ էլ միւս նախարարներին, հարցնելով այդ խնդրի առաջ գալը կամ ինչ ձեւով տեղի ունենալը եւ ցանկանում էին, որ այդ կանխուի։ Իր հերթին, Ներքին Գործերի նախարարութիւնը պատասխանում էր, որ մի շարք ստուգող յանձնաժողովներ են ուղարկուած, ուր ըստեղծուած են ռազմական ատեաններ եւ հետաքննութիւններ են կատարւում։

Նախագահ — «Միութիւն եւ Առաջադիմութիւն» կուսակցութեան պատգամաւորները եւ պատասխանատու քարտուղարները մի շարք վայրերում մասնակցութիւն են ունեցել եւ նոյնիսկ հիմնական դեր են խաղացել [տեղահանեցել եւ նոյնիսկ հիմնական դեր են խաղացել կենտրոնական եւ կոտորածի] խնդրում։ Այս մասին մի՞թէ կենտրոնական կոմիտէն տեղեակ չէր։

Զիա Գէօքալպ — Ո՛չ։

Նախագահ — Օրինակ, Պեհաէտտին Շաքիր պէյը, Դոկտ. Նազըմ պէյը, գիտէ՞ք, որ իրականում իրենք են կազմակերպել [կոտորածները]։

Զիա Գէօքալպ — Տեղեակ չեմ։

Նախագահ — Ինչպէ՞ս կարող է պատահել, որ կենտրոնական կոմիտէն այդ մասին տեղեկութիւն չունենայ։ Զէ՞

որ նրանք անձամբ շրջագայել են վիլայէթներում, սանճաքներում եւ անհրաժեշտ կարգադրութիւններ արել։

Զիա Գէօքալփ — Մենք տեղեակ չէինք, այլապէս անհրաժեշտ միջոցներ կը ձեռնարկէինք։

Նախագահ — Կենտրոնական կոմիտէի իրազեկ լինելու մասին բաւականաչափ թուով գրաւոր ապացոյցներ կան։

Զիա Գէօքալփ — Վիլայէթներից համագումարներին եկած պատգամաւորներն այդ մասին ոչ մի բան չեն ասել։ Մենք ո՞ւրտեղից կարող էինք տեղեկանալ։

Նախագահ — Կենտրոնական կոմիտէի անդամների վիլայէթ գործուղուելու հարցին համագումա՞րն էր հաւանութիւն տալիս։

Զիա Գէօքալփ — Համագումար եկածները, եթէ իմանային, որ նման մարդիկ միջամտել են վիլայէթներում տեղի ունեցած այդ դէպքերին, անշուշտ մեզ կ'ասէին այդ մասին։ Համագումարում մէկը ձայն վերցնելով կ'ասէր, որ Պեհաէտտին Շաքիր պէյը այսպէս է արել եւ կամ Նայիլ պէյը այնպէս է արել։ Բնական է, որ դրա հիման վրայ էլ անհրաժեշտ միջոցներ կը ձեռնարկուէին։ Սակայն ո՛չ վիլայէթներից եկած պատգամաւորները, ո՛չ էլ պատուիրակները այդպիսի տեղեկութիւն չեն տուել։ Ոչ մի բան չեն յայտնել նաեւ կենտրոնական կոմիտէին(48)։

Նախագահ — Սրանից հասկացւում է, որ նրանք այդ մասին պէտք է, որ անպայման տեղեկութիւն տային։ Բայց, պարզւում է, որ այստեղի կենտրոնն ու արտաքին մասնաճիւղերը միաձայն հաւանութիւն են տուել այդ գործի իրականացմանը։

Զիա Գէօքալփ — Ինչպէ՞ս կարող է պատահել, էֆենտի։ Այդքան պատգամաւորների միջից մի՞թէ մէկը չէր կարող լուր տալ այդ մասին։

Նախագահ — Բնական է, որ անհրաժեշտ կը լինէր լուր տալ, քանի որ հնարաւոր չէր՝ գտնուել վիլայէթում եւ իրազեկ չլինել կոտորածի մասին։ Օրինակ, Տրապիզո-

նում գտնուող Նայիլ պէյը կոտորածին ականատես լինելով, ինչպէ՞ս կարող էր վերադառնար այստեղ եւ ոչինչ չասէր այդ բոլորի մասին։ Ուրեմն, նշանակում է, որ [կենտրոնական կոմիտէն] ոչ միայն իրազեկ է եղել, այլ հաւանութիւն է տուել այդ խնդրին։

Զիա Գէօքալպ — Անշուշտ, 300 հոգուց բաղկացած համագումարի մէջ պէտք է, որ իրազեկ մարդիկ գտնուէին։ Եւ նրանց մէջ կարող էին լինել այնպիսիները, որոնք համամիտ չլինէին կոտորածին։ Ձեր ասածի նման, մուսալ վայրերում կարող էր մէկը համամիտ լինել, իսկ միւսը ոչ։ Հասկանալի է, որ այդպիսի մարդիկ եղել են եւ նրանք պէտք է, որ այդ մասին տեղեկացնէին։

Նախագահ — Իսկ դուք ասում էք, որ այդ մասին տեղեկութիւն չեն տուել։ Մինչդեռ դրանով ապացուցւում է, որ այդ հարցին միաձայն հաւանութիւն է տրուած եղել։ Այնպէս որ, համագումարում գտնուող 300 անձերը բոլորն էլ այդ մտքին են եղել։

Զիա Գէօքալպ — Ինչպէ՞ս կարող է լինել։ Չէ՞ որ նրանք տարբեր վայրերից են գալիս եւ նրանց մէջ եղել են տարբեր կրթութեան հայեր, յոյներ, հրեաներ։ Մի խօսքով, նրանց մէջ եղել են բոլոր ազգութիւններին պատկանող անձինք։ Մի՞թէ նրանք կարող էին հաւանութիւն տալ այդ խնդրին։

Նախագահ — Հասկանալի է, որ կոտորածը բոլոր վայրերում տեղի չի ունեցել։ Այն վիլայէթներում, որտեղ կուսակցութեան [կուսակցութեան] մասնաճիւղի տորած է եղել, այդտեղի անդամն է պատգամաւոր ընտրուել։ Եւ համագումարին եկողներն էլ նրանք են, ովքեր իրազեկ էին կոտորածին։

Զիա Գէօքալպ — Ոչ-մահմեդական պատգամաւորներ են եղել, մի՞թէ նրանք էլ հաւանութիւն են տուել։

Նախագահ — Իրենց տեղամասերում ընտրուած եւ «Միութիւն եւ Առաջադիմութիւն» կուսակցութեան համագումարին եկածներից, օրինակ՝ 20 հոգու համամիտ լի-

նելը, չի նշանակում, որ համագումարի բոլոր 300 մասնակիցներն էլ համամիտ են եղել։

Զիա Գէօքալփ — Ինչպէս մի քիչ առաջ ասացինք, համագումարում մէկը պիտի ասէր, որպէսզի կենտրոնական կոմիտէն տեղեակ լինէր կոտորածի մասին։ Այդ ժամանակ մենք էլ կ'իմանայինք։

Նախագահ — Կուսակցութեան գլխաւոր քարտուղար Միտհատ Շիւքրի պէյն ասաց, որ կենտրոնական կոմիտէն թեթեւակի տեղեակ է եղել կոտորածի մասին եւ դիմել է Ներքին գործերի նախարարութեանը, որ այն կանխուի։

Զիա Գէօքալփ — Այո՛, այդ ես էլ ասացի։

Նախագահ — Այդ դէպքում, ինչպէ՞ս է, որ [կենտրոնական կոմիտէն] իրազեկ չի եղել։

Զիա Գէօքալփ — Այդ մասին ես էլ ասացի, բայց թէ գործնականում ովքե՞ր էին կոտորածի մեղսակիցները…։

Նախագահ — Հետաքննութեան ընթացքում կը բացայայտուի։

Զիա Գէօքալփ — Մենք այդ մասին տեղեկացանք շատ ուշ։ Լուրերը արագօրէն չէին հասնում։

Նախագահ — Այդ շրջանների պատգամաւորներին եւ պատասխանատու քարտուղարներին պէտք է յանցագործ համարենք, այդպէս չէ՞։

Զիա Գէօքալփ — Եթէ նրանց կատարած յանցանքը հաստատուէր։

Նախագահ — Ոչ մէկինը չհաստատուե՞ց։

Զիա Գէօքալփ — Խարբերդի պատասխանատու քարտուղարի վերաբերեալ մի բողոք էր եկել։ Պարզելու համար, մի պաշտօնեայ ուղարկեցինք։ Նա էլ գրեց, որ ոչ մի բան չկայ։ Յամենայն դէպս, ինչ որ բան եղել է, որ հետաքննող յանձնաժողովը իր զեկուցագրում պահանջում էր նրա պաշտօնանկութիւնը։ Մենք էլ անմիջապէս ընդունեցինք այն։

Նախագահ — Կենտրոնական կոմիտէն ինչպիսի՞ տե-

սակէտ ունէր կոտորածի մասին։ Դէմ էր, թէ՞ կողմ։

Զիա Գէօքալփ — Անշուշտ դէմ էր։

Նախագահ — Ինչո՞ւ այդ կապակցութեամբ վճիռ չէք կայացրել։ Այդ հարցը քննարկե՞լ էք։

Զիա Գէօքալփ — Այդ լուրերը առնելուց յետոյ բոլորն էլ անիծում եւ ատելութեամբ էին խօսում այդ մասին։

Նախագահ — Տեսնո՞ւմ էք, պարզւում է, որ կենտրոնական կոմիտէն իրազեկ է եղել։

Զիա Գէօքալփ — Թեթեւակի եւ շատ ուշ լուր առնելով...։

Նախագահ — Ուշ կամ կանուխ, իրազեկ լինելուց յետոյ, ի՞նչ որոշումներ ընդունուեց։

Զիա Գէօքալփ — Անշուշտ դիմեցինք նախարարներին, նրանք էլ հետաքննող յանձնաժողով ուղարկեցին, ռազմական դատարաններ ստեղծուեցին, ստուգումներ կատարուեցին։

Նախագահ — Շատ լաւ, այդ որոշման կամ միջոցառմանը հետամուտ եղա՞ք։ Դուք վստա՞հ էք, որ այդպիսի նախաձեռնութիւններ կատարուել են։

Զիա Գէօքալփ — Եթէ սուտ տեղեկութիւններ տային, ինչպէ՞ս կարող էինք վճիռ կայացնել։

Նախագահ — Ուրեմն, միջոցառումնե՞ր եղել են։

Զիա Գէօքալփ — Յանձնաժողովների գնալը տեսնում էինք։ Այդ յանձնաժողովները նշանակւում էին այստեղ եւ այնուհետեւ ուղարկւում վիլայէթները։

Նախագահ — Շատ լաւ։ Դուք իւրաքանչիւր վիլայէթում ներկայացուցիչներ ունէիք։ Այդ յանձնաժողովների գործունէութիւնը ստուգւո՞ւմ էր նրանց միջոցով, թէ՞ ոչ։

Զիա Գէօքալփ — Մի շարք մարդիկ այնտեղ դատի են տրուել, մահուան են դատապարտուել։ Այս բոլորի մասին տեղեկութիւն առնում էինք։ Բնական է, որ գործերին վերաբերող փաստաթղթերը գտնւում են զինուորական դա-

տարաններում։

Դատախազ Մուստաֆա Նազմի պէյ — Ինչպէ՞ս կարող էք ապացուցել, որ կոտորածի հարցում դուք դէմ էք եղել։ Ի՞նչ էք ձեռնարկել այդ ուղղութեամբ։

Նախագահ — Պատասխանէք դատախազի հարցին։

Զիա Գէօքալպ — Բազմաթիւ անգամ բողոքարկել ենք նախարարներին եւ մենք ենք պատճառ հանդիսացել, որ-պէսզի այդ յանձնաժողովները ուղարկուեն... Ուրիշ ի՞նչ կարող էինք անել։

Նախագահ — Ձեր դիմումը բանաւո՞ր էր կատարուում, թէ՞ գրաւոր։

Զիա Գէօքալպ — Անշուշտ բանաւոր, քանի որ պաշտօնապէս միջամտելու իրաւասութիւն չունէինք։ Կենտրոնական կոմիտէն պաշտօնապէս չէր կարող միջամտել։

Նախագահ — Ի՞նչ էք կարծում, տեղի ունեցած այդ վատ արարքների համար պաշտօնեաների հետաքննութեան ենթարկելը միթէ չէ՞ր մտնում ձեր պարտականութեան մէջ։

Զիա Գէօքալպ — Տեղեկանալուց յետոյ, անշուշտ կատարում էինք։

Նախագահ — Գործնականում ի՞նչ էք արել այս հարցի կապակցութեամբ, ո՞ր պատասխանատու քարտուղարին յանդիմանեցիք կամ պատժեցիք։

Զիա Գէօքալպ — Ինչպէս մի քիչ առաջ ասացի, լսեցինք, որ Պրուսայի մեր պատասխանատու քարտուղարը [հայերի] լքեալ գոյքից մի տուն է վերցրել։

Նախագահ — Տան հարցը ուրիշ է։ Կոտորածի վերաբերեալ...։

Զիա Գէօքալպ — Այդ մասին լսեցինք։ Այն, ինչ-որ լսում էինք, բնական է, քննարկում էինք։

Նախագահ — Տեղեկանալով այս մասին, նախարարներին դիմեցի՞ք արդեօք։ Այդ մասին խօսէ՛ք։

Զիա Գէօքալպ — Էֆենտի, իմացանք, որ կոտորած է

տեղի ունենում, բայց մեզ չտեղեկացրին, որ այդ կոտորածների հետ մեր պատասխանատու քարտուղարները կապ ունեն։ Մենք կարող էինք քննութեան ենթարկել միայն մեր պատասխանատու քարտուղարների գործերը։

Takvim-i Vekayi, Mayis 1335 (1919) № 3517

ՉՈՐՐՈՐԴ ԴԱՏԱՎԱՐՈՒԹԻՒՆ (49)
1335 (1919) թ. Մայիսի 8

Զիա Գէօքալպի հարցաքննութիւնը (50)

Նախագահ — Կուսակցութեան մի շարք ներկայացուցիչներ, գնալով Սիվաս, Քաստամոնու, Երզինճան, Եոզղաթ եւ այլ վիլայէթներ, որոշակի հրահանգներ են տուել։ Դուք տեղեկութիւն ունէ՞ք այդ մասին։

Զիա Գէօքալպ — Ո՛չ։

Նախագահ — Պեհաէտտին Շաքիր պէյը ծածկագիր ունեցե՞լ է, թէ՞ ոչ։

Զիա Գէօքալպ — Կենտրոնական կոմիտէն ծածկագիր չի ունեցել, ուստի նա էլ չպէտք է ունենար։

Նախագահ — Յատուկ օգտագործելու համար նրան ծածկագիր է տրուել եւ դրանով մի շարք վայրեր գաղտնի հրամաններ է ուղարկել։ Ի՞նչ կ'ասէք այդ մասին։

Զիա Գէօքալպ — Տեղեակ չեմ։

Նախագահ — Դուք կատարելապէս վստա՞հ էք, որ կենտրոնական կոմիտէն չի իմացել այդ մասին։

Զիա Գէօքալպ — Ես չեմ լսել։

Ռիզա պէյի հարցաքննութիւնը

Նախագահ — Ռիզա պէյ, ասում են, որ երկու տեսակ «Թեշքիլաթ-ը մահսուսէ» է եղել։ Մէկը գործել է Ռազ-

մական նախարարութեան, իսկ միւսը՝ «Միութիւն եւ Առաջադիմութիւն» կուսակցութեան կողմից։ Դուք ո՞ր մէկի հետ էք աշխատել։

Ռիզա պէյ — Ես չգիտեմ, որ երկու տեսակի «Թեշքիլաթ-ը մահսուսէ» է եղել։ Մինչեւ զօրահաւաքը, ես գտնըւում էի Տրապիզոնում։ Դեռեւս, պատերազմը սկսուելուց առաջ այդտեղ էին ուղարկում որոշ մարդկանց։ Ես նրանց ուղարկեցի Կովկաս։ Երբ պատերազմը սկսուեց, իմ ձեռքի տակ 3,000 վրացի կար։ Ես ենթարկւում էի բանակի հրամանատարութեանը։

Նախագահ — Պեհաէտտին Շաքիր պէյը մի շարք լիվաններ շրջագայելով՝ գաղտնի հրամաններ է տուել։ Դուք տեղեակ չէ՞ք այդ մասին։

Ռիզա պէյ — Ո՛չ, տեղեակ չեմ։

Նախագահ — Պեհաէտտին Շաքիր պէյը ծածկագիր ունեցե՞լ է, թէ՞ ոչ։

Ռիզա պէյ — Չգիտեմ։

Նախագահ — Գիտէ՞ք, որ Պեհաէտտին Շաքիր պէյի այդ շրջագայութիւնից յետոյ սկսել են տեղի ունենալ [հայերի] տեղահանութիւնն ու կոտորածները։

Ռիզա պէյ — Ես յետագայում, այստեղ իմացայ այդ մասին։(51)

Takvim-i Vekayi, 8 Mayis 1335 (1919) № 3549

ՀԻՆԳԵՐՈՐԴ ԴԱՏԱՎԱՐՈՒԹԻՒՆ(52)

Ճեւատ պէյի հարցաքննութիւնը

Նախագահի կարգադրութեամբ արձանագրող քարտուղարը ընթերցում է Ճեւատ պէյի կողմից գրուած հեռագրերը։

ՊԵՀԱԷՏՏԻՆ ՇԱՔԻՐ ՊԷՅԻՆ

Կոմիտէն պահանջում է գալաթացի Խալիլին պատժել։ Աւանդաղրուած դրամը փոստատնից վերցնելով՝ անհրաժեշտութեան դէպքում բաժանուելու է բնակչութեանը(53)։

Նազըմ, Աթիֆ, Ազիզ
Համաձայնեցուած է, Ճեւատ

1330 թ. (1915) Յունուարի 8
Դրդապատճառը՝ խարդաւանք՝ դրամ հաւաքելն է։

ՏՐԱՊԻԶՈՆԻ ՎԻԼԱՅԷԹԻՆ

Քաղաքային կազմակերպութեան տնօրէն՝ Ահմետ Էյուպ պէյին եւ գործընկերներին յանձնելու համար, հեռագրով 50 օսմանեան լիրա է ուղարկուած։ Շտապ վերադառնալու մասին իրենց ծանուցէք։

Ստամպուլի պարետ՝ Ճեւատ
1331 թ. (1915) Մարտի 7

Նախագահ — Մի հեռագիր էլ կայ, ուր նշուած է դրամ չուղարկելու մասին։ Մինչդեռ, այստեղ դրամ ուղարկելու մասին հեռագիր է տրուած։ Այդ դրամը ինչո՞ւ տուիք այդ մարդկանց։

Ճեւատ պէյ — Մեծարգոյ փաշա, բոլորովին չեմ յիշում։

Նախագահ — «Թեշքիլաթ-ը մահսուսէ»-ն ձեր տրամադրութեան տակ եղած ժամանակ զինուորական կազմակերպութիւն է եղել, մինչդեռ, դուք դրամը ուղարկել էք ոչ զինուորական պաշտօնեաներին։ Բացի այդ, հեռագրի ներքեւի մասում լուսանցքային նշում կայ, ուր ասուում է, որ այդպիսի կարեւոր հեռագրի բնագիրը ըստ օրէնքի վերադարձուում է, որ այն վերաբերում է «Թեշքիլաթ-ը մահսուսէ»-ին եւ անհրաժեշտ է թաքցնել։ Ի՞նչ է նշանակում այս (կարդում է հեռագիրը)։

ԹԵՇՔԻԼԱԹ-Ը ՄԱՀՍՈՒՍԷ-ԻՆ

Ըստ օրէնքի, հեռագրերի բնագրերը վերադարձուում են, բայց

պահէք այնտեղ։

Ճեւատ

1915 թ. Յունուարի 8

Նախագահ — Խալիլ փաշայի կողմից Միտհատ Շիւքրի պէյին ուղարկուած հեռագրերը, որոնք կարդացուելու են հիմա, պարզորոշ ցոյց են տալիս, որ «Թեշքիլաթ-ը մահսուսէ»-ի եւ կենտրոնական կոմիտէի միջեւ ներքին կապ է գոյութիւն ունեցել։ (Քարտուղարը կարդում է)։

ՄԻՏՀԱՏ ՇԻՒՔՐԻ ՊԷՅ ԷՖԵՆՏԻՆ

Յարգելի եղբայրս,

Իզմիտի, Պրուսայի, Պանտրմայի, Պալըքէսերի եւ այլ վայրերի պատասխանատու քարտուղարների միջոցով մէկ շաբաթուայ ընթացքում, յատուկ մարդկանց գաղտնապէս հաւաքելու հնարաւորութեան մասին խնդրուած էր տեղեկութիւն տալ։

Ազիզ, Աթիֆ, Նազըմ, Խալիլ

13 Թեշրին-ի սանի 1330 թ.
[1914 թ. Նոյեմբերի 13]

ԻԶՄԻՏԻ ՄՈՒԹԱՍԱՐՐԻՖՈՒԹԵԱՆ

Առաջնորդ նշանակուած երեք հոգու ընտանիքներին հնգական տասնհինգ լիրա տուէք։ Դրամը գտնուում է փոստատանը։ Այս հեռագիրը ցոյց տուէք առաքիչ պաշտօնեային։ Զեթէի անուան տակ ցանկութիւն ունեցող 100 հոգուն ճամբու դրէք զինուորի անուան տակ եւ այդ մասին տեղեկացրէք մեզ։ Բանտարկեալների ազատ արձակման մասին նախարարութիւնից(54) հրաման է տրուելու։

Խալիլ

16 Թեշրին-ի սանի 1330 թ.
[1914 թ. Նոյեմբերի 16]

Ճեւատ պէյը կցկտուր պատասխաններ է տալիս, որ ինքը Եւրոպայում է գտնուել տուեալ ժամանակ եւ կապ չի ունեցել այդ բոլորի հետ

Նախագահ — «Թեշքիլաթ-ը մահուսէ»-ի ստեղծման մասին կայսերական հրամանագիր եղե՞լ է, թէ՞ ոչ։

Ճեւատ պէյ — Զգիտեմ։

Նախագահ — Ինչպէ՞ս կարող է պատահել, որ առանց կայսերական հրամանագրի մի հիմնարկութեան կից մի մասնաճիւղ ստեղծուի։

Ճեւատ պէյ — Տեղեկութիւն չունեմ։

Նախագահ — Ինչպէ՞ս թէ տեղեկութիւն չունէք։ Առանց ձեր ծառայութեան նպատակը իմանալու, ինչպէ՞ս էք պաշտօնավարել այդ հիմնարկում։

Ճեւատ պէյ — Ռազմական նախարարութեան կողմից նշանակուած պաշտօնեաներ, սպաներ են եղել։

Նախագահ — Պեհաէտտին Շաքիր պէյի կողմից Ներքին Գործերի նախարարութեան Թալաաթ պէյին ուղղուած մի հեռագիր կայ, որը ցոյց է տալիս, որ Պեհաէտտին Շաքիր պէյը կապ է ունեցել «Թեշքիլաթ-ը մահուսէ»-ի հետ։ Նոյնիսկ միջամտել է պատերազմական գործերի։ Կարդացէ՛ք։ (Քարտուղարը կարդում է)։

ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ՝ ԹԱԼԱԱԹ ՊԷՅԻ ՄԻՋՈՑՈՎ [ՅԱՆՁՆԵԼ] ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԿՈՄԻՏԷ

Իսմայիլ Հաքքը(55) պէյի ժամանումից յետոյ, իմ պարտականութիւնը աւարտուած համարելով՝ պատրաստուում էի Արտուինում գտնուող զինուորական ուժերի գլուխը անցնել։ Երբ, մասամբ տեղ հասաւ «Թեշքիլաթ-ը մահուսէ»ի համար յատկացուած ռազմամթերքը։ Իսմայիլ Հաքքը պէյի հետ տեսակցեցի։ Ես այն կարծիքին եմ, որ անգործութեան մատնուած մարթիններին, եթէ աշխատանքային գումարտակներում գտնուող մահմեդականներին բաժանուի, Ապա Արտուինից մինչեւ Մուրղուլ գտնուող եւ բոլոր միջոցներից զուրկ «Թեշքիլաթին» որոշակի ուժով օգնած կը լինեմ(56)։ Բաէնի կողմերում 250-ի մօտ հեծեալներ ունեմ, սրանց Արտուին տեղափոխելու կամ բանակի թիկունքում, թեւերին օժանդակելու հարցում դեռեւս վճիռ չէ արձակուած։

Պեհաէտտին Շաքիր պէյ

Հեռագրի հակառակ երեսին գրուած է

ՊԵՀԱԷՏՏԻՆ ՇԱՔԻՐ ՊԷՅԻՆ

17 թեշրին-ի սանի 1330 թ.
[1914 թ. Նոյեմբերի 17]

Քանի որ այդտեղ այլեւս անելիք չունէք, Արտուինից շտապ շարժուէք դէպի Տրապիզոն, առաւել կարեւոր մի պաշտօն ըստանձնելու համար։ Այստեղից եկող Եակուբ Ճեմիլ պէյը ձեզ կը բերի անհրաժեշտ հրահանգն ու առաջադրանքը։

Նախագահ — Տեսնո՞ւմ էք, որ Պեհաէտտին Շաքիր պէյը «Թեշքիլաթ»ը մահսուսէ»-ի հետ սերտ յարաբերութեան մէջ է եղել։ Նոյնիսկ զինուորական տեղաշարժերի մասին կարծիք է յայտնել։ Յետոյ, ձեզ չի գրում, այլ Ներքին Գործերի նախարարութեան։

Ճեւատ պէյ — Իմ պաշտօնավարութեան ընթացքում գնացողները կանոնաւորապէս կազմակերպուած զօրախմբեր են եղել։ Ես այդպիսիներին եմ ուղարկել։ Աւելի ուշ գնացողների մասին տեղեկութիւն չունեմ։

Նախագահ — Հիմա այս հեռագրից ի՞նչ էք հասկանում։ Մի՞թէ չի հասկացւում, որ Պեհաէտտին Շաքիր պէյը «Թեշքիլաթ-ը մահսուսէ»-ի մէջ պաշտօնավարութիւն է ունեցել։

Ճեւատ պէյ — Վսեմափայլ փաշա, այո՛, հասկացւում է։

Նախագահ — Յետոյ, ձեզ ուղղուած հեռագիրը, լինի «Թեշքիեաթ-ը մահսուսէ»-ի հրամանատարութեան կամ նախագահութեան կողմից, կարեւոր չէ։ Այդ պաշտօնը ինչ-որ ձեւով ստանձնել է։ Զարմանալին այն է, որ հեռագիրը ձեզ չի յղում, այլ Ներքին Գործերի նախարարութիւն։ Այս հանգամանքն առանձին ուշադրութեան արժէք է տալիս։ Դուք ինչպէ՞ս էք մեկնաբանում այդ։

Դատապաշտպան [*Խուլուսի պէյը*] ուզում է իմանալ հեռագրի տարեթիւը: Նախագահը պատասխանում է. — 17 Թեշրին-ի Սանի 1330 թ. (1914 թ. Նոյեմբերի 17):

Խուլուսի պէյ — *Այն ճեւատ պէյի պաշտօնավարութեան ընթացքում չի եղել:*

Նախագահ — *Այո՛, մենք չենք ասում, որ այն տեղի է ունեցել ճեւատ պէյի պաշտօնավարութեան ընթացքում: Մենք մատնացոյց ենք անում հեռագրի թալաաթ պէյին ուղղուած լինելը: Բացի այդ, շատ պարզ երեւում է «Թեշքիլաթ-ը մահսուսէ»-ի եւ Պեհաէտտին Շաքիր պէյի միջոցով կենտրոնական կոմիտէի միջեւ գոյութիւն ունեցող կապը: Մի՞թէ դուք եւս չէք հաստատում այդ:*

ճեւատ պէյ — *Ինչպէս ասացի, ես կարծում էի, որ այդ պաշտօնեաները, որոնց հետ ես գործակցում եմ, Ռազմական նախարարութիւնից են: Ես չէի կարծում, որ նրանք այլ պարտականութիւններ ունեն այստեղ:*

Նախագահ — *Դուք ո՞ր թուականին ստանձնեցիք այդ պաշտօնը:*

ճեւատ պէյ — 15 *Կանուն-ի էվվել* 1330 *թուականին* (1914 *թ. Դեկտեմբերի* 15):

Նախագահ — *Ուրեմն, մօտաւորապէս մէկուկէս ամսուայ տարբերութիւն կայ:*

ճեւատ պէյ — *Այո՛, էֆենտի: Ես չգիտեմ, թէ դրանից յետոյ ի՞նչ եղաւ: Արտահանի կամ Կովկասի ռազմական գործողութիւններն այլ ընթացք ունեցան: Հրաման եղաւ, որպէսզի մերոնք անցնեն Երրորդ բանակի հրամանատարութեան տակ: Նոյնիսկ հաղորդագրութիւն եղաւ, որ այլեւս կամաւորական կազմակերպութեան անհրաժեշտութիւնը չկայ...:*

Միտհատ Շիւքրի պէյի հարցաքննութիւնը

Նախագահ — *Օգոստոսի* 17 *թուագրութեամբ, էրզը-*

ըումի վալիի միջոցով ծածկագիր հեռագիր էք ուղարկել, որից պարզւում է, որ կենտրոնական կոմիտէն խառնուել է պետական գործերին։ Ի՞նչ կ՚ասէք այդ մասին։

(Քարտուղարը կարդում է հեռագիրը)։

ԷՐԶՐՈՒՄԻ ՎԱԼԻԻ ՄԻՋՈՑՈՎ [ՅԱՆՁՆԵԼ] ՊԵՀԱԷՏՏԻՆ ՇԱՔԻՐ ՊԷՅԻՆ

Այստեղ, մի քանիսի կողմից տրուած տեղեկութիւններից, ինչպէս նաեւ 1330 (1914) Օգոստոսի 15 թուակիր ձեր գրութիւնից պարզւում է, որ հայերը հաւակնութիւն չունեն մեզ հետ միատեղ ռազմական գործողութիւններին մասնակցելու։ Ուստի ձեռնարկուող բոլոր միջոցները պէտք է գաղտնի պահուեն նրանցից։ Պետութիւնը եւ կուսակցութիւնը փափաքում են, որ մեր հայրենակիցները մնան ապահով։ Այս ուղղութեամբ ցանկալի է, որ անհրաժեշտ ջանք գործադրուի՝ նրանց սրտերը հանգիստ պահելու համար։(57)

Միտհատ Շիւքրի պէյ

Միտհատ Շիւքրի պէյ — Այո՛, էֆենտի, ճիշդ է, յիշում եմ։ Նախապէս ինձանից այդպիսի բան հարցրել էին։ Ինչպէս ասացի, Պեհաէտտին Շաքիր պէյը զօրահաւաքի ժամանակ, պատերազմ յայտարարելուց առաջ, հայրենիքին ծառայելու նպատակով՝ գնացել էր այնտեղ։ Մենք տեւապէս յարաբերութեան մէջ էինք գտնւում նրանց հետ եւ հաղորդում՝ որպէսզի նրանք եւս պատրաստուեն պատերազմին եւ ջանք գործադրեն հայրենիքը պաշտպանելու խնդրում։ Սակայն պարզւում է, որ տեղի ունեցած բանակցութիւնները յաջողութիւն չեն ունեցել, քանի որ նրանք ասել են. «Մենք չենք կարող բացէիբաց թուրքերի հետ ընկերակցել, պատերազմ ծագելու դէպքում՝ չէզոք ենք մնալու»։ Բնական է, որ նրան բաց հեռագիր ուղարկելը պատշաճ չէր կարող համարուել, ուստի կենտրոնական կոմիտէի պատասխան հեռագիրը առաքեցինք Ներքին Գործերի նախարարութեան միջոցով, որտեղ ասուած

էր. «Տեսակցէ՛ք նրանց հետ, եւ աշխատէ՛ք, ինչպէս որ հարկն է, մեղմութեամբ համաձայնութեան գալ»։ Մեր այս վարմունքը կառավարութեան հետ առնչութիւն չունի։ Այն գրուած է եղել պատերազմը սկսելուց առաջ, օսմանեան ազգութիւնների միջեւ բարեկամական յարաբերութիւններ սերմանելու միտումով։

Նախագահ — Թէկուզ եւ [պատերազմից] առաջ գրուած լինի, չէ՞ որ դուք դրանով միջամտել էք [կառավարութեան] գործերին։

Միտհատ Շիւքրի պէյ — Մեծարգոյ փաշա, ի՞նչ միջամտութեան մասին է խօսքը։ Մենք տեւապէս շփման մէջ ենք եղել հայերի հետ։ Բոլոր ընտրութիւնների ընթացքում, թեկնածուների առաջադրումը կատարել ենք Դաշնակցութեան հետ միատեղ։ Նրանք ձայն են տուել մեր թեկնածուներին, մենք էլ՝ նրանց։ Այնպէս որ, ընտրուել է ցանկալի թուացող թեկնածուն։ Ինչպէս նշուեց, մենք նախաձեռնեցինք, որպէսզի պատերազմի ընթացքում համագործակցենք իրար հետ։ Բայց այդ միջոցները յաջողութիւն չունեցան։ Նրանց չհամաձայնելու մասին մենք տեղեկացանք յետագայում։ Այնուամենայնիւ, կրկին գրեցինք, որ լաւ վերաբերմունք ցուցաբերուի նրանց հանդէպ։ Դա մտնում է, ոչ թէ կառավարութեան, այլ կուսակցութեան պարտականութիւնների մէջ։

Նախագահ — Պատերազմ յայտարարելուց առաջ, ուրեմն այդպիսի մտադրութի՞ւն ունէիք։

Միտհատ Շիւքրի պէյ — Ինչպիսի՞, էֆենտի։

Նախագահ — Պատերազմ յայտարարելուց առաջ, ուրեմն նախօրօք գիտէիք, որ մտնելու էք պատերազմի մէջ։

Միտհատ Շիւքրի պէյ — Ո՛չ, էֆենտի, զօրահաւաք յայտարարելու հետեւանքով կարելի էր ամէն ինչ սպասել։ Զօրահաւաք յայտարարելը մի՞թէ «պատրաստ եղիր» չի նշանակում։

Նախագահ — Տուեալ ժամանակ, պետութեան դիրքո-

ըոշումը զինուած չէզոքութեան մէջ մնալն էր։ Ուստի զօրահաւաք յայտարարելը անհրաժեշտութիւն էր։

Միտհատ Շիւքրի պէյ — Չէզոքութի՞ւն, էֆենտի։

Նախագահ — Այո, դա զինուած չէզոքութիւն էր։ Զօրահաւաք յայտարարելը անպայման պատերազմի մէջ մտնել չէ։

Միտհատ Շիւքրի պէյ — Ո՛չ, էֆենտի. [զօրահաւաք] յայտարարուել է, որպէսզի Ռուսաստանի կողմից յարձակում լինելու դէպքում գտնուենք պատրաստ վիճակում(58)։

Նախագահ — Կարդացէ՛ք։

(Ընթերցում է Պեհաէտտին Շաքիր պէյի կողմից Ներքին Գործերի Նախարար՝ Թալաաթ պէյի միջոցով կենտրոնական կոմիտէին ուղղուած վերոյիշեալ հեռագիրը)։

Նախագահ — Տեսնում էք, որ կենտրոնական կոմիտէն ոչ միայն մասնակցել է ռազմական գործողութիւններին, այլեւ հանդէս է եկել որոշ նախաձեռնութիւններով։

Միտհատ Շիւքրի պէյ — էֆենտի, կենտրոնական կոմիտէն հանդէս է եկել միջնորդի դերում։ Ես ինքս վստահ եմ, որ այն ուղղուած է եղել «Թեշքիլաթ-ը մահսուսէ»-ին, քանի որ գործերին հետեւելու համար մեզ ամէն տեղերից գրութիւններ էր գալիս։

Նախագահ — Անցեալում ասել էիք, որ ծածկագիր չունէք։

Միտհատ Շիւքրի պէյ — Ծածկագիր չունենք, այդ մեր ծածկագիրը չէ։

Նախագահ — Այսինքն, Ներքին Գործերի նախարարութիւն գրելու փոխարէն, կարող էր ուղղակի ձեզ գրել։

Միտհատ Շիւքրի պէյ — Ներքին Գործերի նախարարութիւն գրելուց հասկացւում է, որ մենք ծածկագիր չենք ունեցել։ Ուղղակի Ներքին Գործերի նախարարութիւն առաքելը դրա վառ ապացոյցն է։

Նախագահ — Շատ լաւ, ի՞նչ նպատակ է հետապնդել Ներքին Գործերի նախարարութեանը միջնորդագրելով։

Ստացու�մ է այնպէս, որ նման ձեւով կատարուելը ստիպողական անհրաժեշտութիւն է։

Միտհատ Շիւքրի պէյ — Բացէիբաց չի կարողացել գրել։ Գաղտնի գրելու համար էլ դիմել է այդտեղի վալիին։

Նախագահ — Կարդացէ՛ք, [հեռագրի] հակառակ կողմում գրուած հրահանգը։

ՊԵՀԱԷՏՏԻՆ ՇԱՔԻՐ ՊԷՅԻՆ

Քանի որ այդտեղ այլեւս անելիք չունէք, Արտուինից շտապ շարժուէք դէպի Տրապիզոն, առաւել կարեւոր մի պաշտօն ստանձնելու համար։ Այդտեղից եկող Եակուբ Ճեմիլ պէյը ձեզ կը բերի անհրաժեշտ հրահանգն ու առաջադրանքը։

1914 թ. Նոյեմբերի 17։

Միտհատ Շիւքրի պէյ — Այո՛, էֆենտի, ինչպէս ձեզ յայտնի է, Դոկտ. Նազըմը եւս ընդգրկուած էր «Թեշքիլաթ-ը մահսուսէ»ի մէջ։ Ջնայած, որ բաւական ժամանակ է անցել, բայց յիշում եմ։ Կովկասի կողմերը դուրս գալու համար յարձակման պիտի անցնէին։ Եակուբ Ճեմիլ պէյի եւ այլ ուժերի հետ միանալով, գնալու էին այդ յարձակումը իրագործելու։ Կարծում եմ, այդ կապակցութեամբ էլ տուեալ պատասխանն ենք գրել։

Նախագահ — Շատ լաւ, այդ հրահանգը դո՞ւք էք գրել։

Միտհատ Շիւքրի պէյ — Շատ հաւանական է, որ «Թեշքիլաթ-ը մահսուսէ»-ից կամ Ռազմական նախարարութիւնից, կամ էլ մի այլ տեղից գրուած լինի։ Այո, մի տեղից անհրաժեշտ եղել է, որ գրել են։ Ըստ երեւոյթին, այնտեղ գտնուող Պեհաէտտին Շաքիր պէյի հարցումի հիման վրայ գրուել է կենտրոնական կոմիտէին կից գտնուող մի հաստատութիւնից։ Պեհաէտտին Շաքիր պէյին տրուած հրահանգից այդպէս է երեւում։ Այդ է եղել նրա պաշտօնը։

Այսինքն՝ տուեալ գործին ուղղակիօրէն մասնակցութիւն չունենալ։ Ձեմ կարողանում մտաբերել, թէ այդ ստորագրութիւնները ո՞ւմ են պատկանում։

Նախագահ — Դուք ասացիք, որ Պեհաէտտին Շաքիրը «հայրենիքին ծառայելու» նպատակով պարտականութիւն էր ստանձնել, ուրեմն՝ մինչեւ այդ պարտականութեան աւարտը ձեզ հետ յարաբերութիւն չպէտք է ունենար։ Մինչդեռ նա իր յարաբերութիւնը չի խզում եւ անընդհատ ձեզ է գրում։

Միտհատ Շիւքրի պէյ — Շատ հաւանական է էֆենտի, չէ՞ որ նա կենտրոնական կոմիտէի անդամ էր։ Բայց նա այնտեղ չի գնացել կենտրոնական կոմիտէի հետ առընչուող մի պաշտօնով։ Նա գնացել է մի այլ պարտականութիւն կատարելու։ Նման գրութիւններ միայն Շաքիր պէյից չենք ստացել, այլ մի շարք տեղերից եւս։ Պատասխանները տարբեր տեղեր էին ուղարկւում։ Մեր աշխատակիցներից մէկը այդ գործին հետամուտ լինելով, գրում էր պատասխանները։ Որեւէ գրութեան ուղղակի մեզ գալը չի նշանակում, որ այն ուղարկողի հետ մենք յարաբերութեան մէջ ենք եղել։ Պեհաէտտին Շաքիր պէյի հեռագիրն էլ, ահա, այդպիսին է եղել։ Այսինքն՝ կենտրոնական կոմիտէն այդպիսի գործերով չի զբաղուել։

Նախագահ — Իսկ ո՞րն է դրա իմաստը։

Միտհատ Շիւքրի պէյ — Իմաստը երեւի «հայրենիքի ծառայութեան» մէջ լինելն է։

Նախագահ — Ասում են, որ դա ցոյց է տալիս, «Թեշքիլաթ-ը մահսուսէ»-ի եւ կենտրոնական կոմիտէի միջեւ գոյութիւն ունեցող կապը։

Միտհատ Շիւքրի պէյ — Ո՛չ, էֆենտի։ Նման թղթեր մեզ գալիս էին նաեւ ուրիշ տեղերից։ Օրինակ՝ «Կարմիր մահիկին» վերաբերող մի շարք գրութիւններ էինք ստանում։ Պատասխանն ուղարկում էինք «Կարմիր մահիկին», որն էլ իր հերթին գրութիւն էր ուղարկում համապա-

տասխան կազմակերպութեանը։ Օրինակ, շրջաբերականներ էինք ստանում «Որբանոցային կազմակերպութիւնից», ուր նշուած էր լինում՝ «Գրէք ձեր մասնաճիւղերին, որպէսզի նրանց օգնեն»։ Որբանոցը կատարելապէս ինքնուրոյն կազմակերպութիւն լինելով հանդերձ, մեզ գրութիւն էր ուղարկում, յայտնելով, որ մի շարք տեղերում պակասորդ ունեն։ Մենք էլ գրում էինք մեր մասնաճիւղերին, խընդրելով, որ նրանց պակասորդները փոխհատուցուեն։ Դա չի նշանակում, որ որբանոցի եւ կենտրոնական կոմիտէի միջեւ կապ գոյութիւն ունի։ Դա ցոյց է տալիս, որ նրանք միայն իրար հետ փոխօգնութեան մէջ են գտնուել պատերազմի ընթացքում։ Դրա մէջ վնասակար մի բան եթէ նկատէի, ես ընթացք չէի տայ։ Բոլոր դէպքերում, դրա իմաստը միջնորդ լինելու մէջ է։ Նոյնիսկ կենտրոնական կոմիտէում պաշտօն չունենալու դէպքում էլ, եթէ նման գրութիւն անցնէր ձեռքս, կը գնայի, ջանք կը թափէի, պատասխանը կը գրէի եւ կ'ուղարկէի։ Բոլորովին չէի պատկերացնում, որ յետագայում նման վիճակի առաջ կը կանգնեմ։

Նախագահ — Սուլէյման Ասքերի պէյը ի՞նչ յարաբերութիւն ունի կենտրոնական կոմիտէի հետ։

Միտհատ Շիւքրի պէյ — Նա միշտ էլ զինուորական է եղել։ Պարզ է, որ սպաների հետ կենտրոնական կոմիտէն չի կարող յարաբերութիւններ ունենալ։

Նախագահ — Նրա կողմից Պեհաէտտին Շաքիր պէյին ուղղուած մի հեռագիր կայ, որը լիովին ցոյց է տալիս «Թեշքիլաթ-ը մահսուսէ»-ի հետ նրա ունեցած համագործակցութիւնը։

Միդհատ Շիւքրի պէյ — Մեծարգոյ փաշա, ինչպիսի՞ կապ։

Նախագահ — Կարդացէ՛ք։

(Արձանագրող քարտուղար Շեֆիք պէյը ընթերցում է)։

ԷՐԶՐՈՒՄԻ ՎԻԼԱՅԷԹԻՆ

Վերծանել անձամբ

Ծածկագիրը ուղղուած է
Պեհաէտտին Շաքիր պէյին.

Տրապիզոնի Ռիզա պէյը ընտրուած է Էրզրումի կենտրոնական կոմիտէի անդամ։ Ռիզա պէյի փոխարէն որպէս պատասխանատու քարտուղար ուղարկուելու է Մեմտուհ պէյը։

Սուլէյման Ասքերի

3 Թեշրին-ի սանի 1330 թ.
[1914 թ. Նոյեմբերի 9]

Նախագահ — *Կենտրոնական կոմիտէին է գրել։*

Միտհատ Շիւքրի պէյ — *Սուլէյման Ասքէրի պէյը «Թեշքիլաթ-ը մահսուսէ»-ից է գրել։ Գրել է Էրզրումի հասցէով։ Արդէն Պեհաէտտին Շաքիր պէյը կապ ունի «Թեշքիլաթ-ը մահսուսէ»-ի հետ, այդպէս չէ՞, էֆենտի։ Ռիզա պէյը կենտրոնական կոմիտէի [անդամ] ընտրուելու կապակցութեամբ, մենք դիմել ենք «Թեշքիլաթ-ը մահսուսէ»-ին։ «Գրէ՛ք Պեհաէտտին Շաքիր պէյին, որպէսզի Տրապիզոնցի Ռիզա պէյին ուղարկի մեզ մօտ, քանի որ նա ընտրուած է կենտրոնական կոմիտէի անդամ։*

Նախագահ — *Ի՞նչ նպատակով Սուլէյման Ասքերի պէյը միջնորդ է հանդիսանում։ Այնպէս է հասկացուում, որ նրանց միջեւ ներքին կապ է գոյութիւն ունեցել։*

Միտհատ Շիւքրի պէյ — *Չէ՞ որ Պեհաէտտին պէյը կապուած է եղել «Թեշքիլաթ-ը մահսուսէ»-ի հետ։ Պեհաէտտին Շաքիր պէյը զօրահաւաքից յետոյ հայրենիքին ծառայելու նպատակով գնաց ռազմաճակատ։ Հետեւաբար՝ նա ենթարկուելու էր Սուլէյման Ասքերի պէյին։ Ուստի մենք խնդրել էինք Սուլէյման Ասքերի պէյին, որպէսզի Ռիզա պէյին ուղարկի այստեղ։ Բաւական ժամանակ է անցել, լաւ չեմ յիշում։*

Նախագահ — *Ռիզա պէյին ուղարկում են Էրզրումի*

կենտրոնական կոմիտէ։

Միտհատ Շիւքրի պէյ — Էրզրումում կենտրոնական կոմիտէ չկայ։

Նախագահ — Հեռագրում այդպէս է գրուած։

Միտհատ Շիւքրի պէյ — Սուլէյման Ասքերի պէյը «Թեշքիլաթ-ը մահսուսէ»-ի գործերին իրազեկ չլինելու պատճառով, այդպէս սխալ է գրել։

Նախագահ — Կարդացէ՛ք հեռագիրը։

(Արձանագրող քարտուղար Շեֆիք պէյը կարդում է հեռագիրը)։

«ՄԻՈՒԹԻՒՆ ԵՒ ԱՌԱՋԱԴԻՄՈՒԹԻՒՆ» [ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ] ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԿՈՄԻՏԷԻՆ

Ցարգանքներով տեղեկացնում ենք, որ 55 հոգուց բաղկացած 5րդ չեթէների [խումբը](59) Արտուինից՝ Թուֆան աղայի հրամանատարութեամբ հենց նոր ճանապարհ դրեցինք մոթորով(60)։

Սամսոնի պատասխանատու-քարտուղար Ռուշտի

16 Կանուն-ի Էվվել 1330 թ.
[1914 թ. Դեկտեմբերի 16]

Եղբօրս՝ Դոկտ. Նազըմ պէյ Էֆենտիին ՄԻՏՀԱՏ ՇԻՒՔՐԻ

Միտհատ Շիւքրի պէյ — Մի քիչ առաջ ասացի, որ մենք եւս պատասխանատու քարտուղարներին գրել էինք, որ հայրենիքին ծառայելու համար ցանկութիւն ունեցող մարդկանց, որպէս կամաւորներ հաւաքագրեն «Թեշքիլաթ-ը մահսուսէ»-ի համար։ Որքան մեզ յայտնի է, այս Ռուշտի պէյը գաբիդանի կոչում ունէր եւ հրամանատար էր մի զինուորական դասակի։ Ըստ երեւոյթին, այնտեղ կամաւորներ է հաւաքել եւ մեզ ուղարկելու մասին տեղեկութիւն է տուել։ Յետագայում իմացանք, որ Ռուշտի պէյը շատ գործեր ունի եւ խիստ ծանրաբեռնուած է։ Լսեցինք նաեւ, որ աւազակներին հետապնդելու համար մութասարրիֆ

ՐԻՖի կողմից ընդգրկուել է ժանտարմական գործերի մէջ։ Կանչեցինք մեզ մօտ։ Խիստ զբաղուած եւ մեր վարած քաղաքականութիւնից կտրուած լինելով՝ հեռացրինք պատասխանատու քարտուղարի պաշտօնից։ «Թեշքիլաթ-ը մահսուսէ»-ն այդ մասին կարող է մանրամասն տեղեկութիւն տալ։

Նախագահ — Ասում էք, որ կենտրոնական կոմիտէն «Թեշքիլաթ-ը մահսուսէ»-ի հետ առնչութիւն չի ունեցել, բայց եւ այնպէս հասկացուում է, որ նա յաճախակի միջամտել է նման գործերին։

Միտհատ Շիւքրի պէյ — Այո՛, մենք կապի մէջ էինք բոլոր հաստատութիւնների հետ։ Մեզ մօտ եկած գրութիւնները ուղարկում էինք համապատասխան կազմակերպութիւններին, ինչպէս, օրինակ՝ «Կարմիր Մահիկ»ին, որբանոցին, Ներքին Գործերի նախարարութիւն եւ այլ տեղեր։

Սիրլիվա Մուստաֆա փաշա (յանձնաժողովի անդամ). — Կենտրոնական կոմիտէն ուղղակի զբաղուել է «Թեշքիլաթ-ը մահսուսէ»-ի գործերով։ Կամաւորներ է ուղարկել։ Նշում է, որ այս կապակցութեամբ հրաման տուեցինք պատասխանատու քարտուղարներին, պատուիրակներին», ուրեմն «Թեշքիլաթ-ը մահսուսէ»-ն հիմնականում ստեղծուած է եղել ձեր կողմից, կենտրոնական կոմիտէի կողմից։

Միտհատ Շիւքրի պէյ — Ոչ, մեծարգոյ փաշա։ Պատերազմի ընթացքում, իւրաքանչիւր մարդու պարտականութիւնն էր՝ իր կարողութեան չափ մինչեւ պատերազմի աւարտը օգտակար լինել իր հայրենիքին։ Արդէն պատերազմը յայտարարուելուց յետոյ մեր ընկերների մեծ մասը սկսեց զբաղուել զինուորական, հայրենիքին ծառայելու գործերով՝ իւրաքանչիւրն ըստ իր կարողութեան։ Այդ Ռուշտի էֆենտի ասուած անձնաւորութիւնը, որպէս զինուորական՝ առաւել շատ է զբաղուել, նոյնիսկ պաշտօնավարել է ժանտարմական ոստիկանութիւնում։ Այդ

մասին տեղեկանալով, մենք կանչեցինք նրան եւ խիստ զբաղուածութեան համար հեռացրինք պաշտօնից։

Նախագահ — Ձեր քարտուղարութեան ընթացքում, ինչո՞ւ հոգատար վերաբերմունք չէք ունեցել Դոկտ. Նազըմի կողմից յափշտակուած փաստաթղթերի նկատմամբ։ Կուսակցութեան քաղաքական գործունէութեանը վերաբերող այդ կարեւոր փաստաթղթերը մէջտեղից վերացնելը ցոյց է տալիս, որ [կուսակցութիւնը] առնչութիւն է ունեցել մի շարք գաղտնի գործարքների հետ։ Այս մասին ի՞նչ կ՝ասէիք։

Միտհատ Շիւքրի պէյ — Ցաւօք սրտի [նրա] մեկնելուց յետոյ տեղեկացայ այդ մասին։ Մէկ օր յետոյ մեկնել էր այստեղից։

Նախագահ — Շատ լաւ։ Բայց չէ՞ որ այդ բանին աւելի շուտ պէտք է հետամուտ լինէիք։

Միտհատ Շիւքրի պէյ — Երբեք մտքովս չէր անցնում, որ փաստաթղթերը առնելով՝ հետը կը տանի։

Նախագահ — Ուրեմն փաստաթղթերը նախապէս պէտք է հաւաքուած, պատրաստուած լինէին, որ բոլորը միատեղ առնէր ու գնար։

Միտհատ Շիւքրի պէյ — Էֆենտի, արդէն կուսակցութիւնը վերակազմելու ընթացքում բոլոր փաստաթղթերը սնդուկների մէջ էինք դասաւորել։ [Այդ ժամանակ] մենք նկատեցինք, որ նա առանձնացնում էր Փարիզում գտնուելու ընթացքում Ահմետ Ռիզա պէյի(61) հետ ունեցած թղթակցութիւնները։ Ըստ երեւոյթին, դրանք է փնտրելու, տակնուվրայ արել, եւ, չկարողանալով գտնել՝ բոլորը միատեղ վերցնելով՝ գնացել է։

Նախագահ — Ուրեմն նախապէս զգացել էք, որ Դոկտ. Նազըմը փախուստի է դիմելու։

Միտհատ Շիւքրի պէյ — Ո՛չ, էֆենտի։

Նախագահ — Հապա, ինչո՞ւ էր ուզում վերցնել։

Միդհատ Շիւքրի պէյ — Հրաժարական տալով՝ խզեց

իր յարաբերությունը կուսակցության հետ։ Հրաժարական տալու ժամանակ ասաց. «Այս փաստաթղթերը կարեւոր են եւ վերաբերում են ինձ։ Ես չեմ ցանկանում, 20–25 տարի առաջ Փարիզում գտնուելու ընթացքում իմ աշխատանքին վերաբերող փաստաթղթերն այստեղ մնան։ Ես իմ յարաբերությունները խզում եմ։ Նոյնիսկ այսուհետեւ համագումարներին էլ չեմ մասնակցելու»։ Շատ լաւ, ասացինք։ Բայց, երբեք չէի պատկերացնում, որ բոլոր փաստաթղթերը կը վերցնի։

Նախագահ — Այդ փաստաթղթերը այդպէս անփութօրէն նրան տալու իրաւասութիւնը ունէ՞իք։

Միտհատ Շիւքրի պէյ — Էֆենտի, դրանք իր փաստաթղթերն էին, ինքն էր տուել։

Նախագահ — Բայց, չէ՞ որ դրանք կուսակցության փաստաթղթերի մէջն էին մտել։

Միտհատ Շիւքրի պէյ — Ո՛չ, էֆենտի, նշուած էր, որ այդ նիւթերը օգտագործուելու են կուսակցության պատմությունը շարադրելու ժամանակ։ Այսինքն՝ այդ փաստաթղթերը պիտի օգտագործուէին «Միութիւն եւ Առաջադիմություն» կուսակցության ստեղծման, նրա տարբեր փուլերից անցնելու պատմությունը շարադրելու ընթացքում։

Նախագահ — Անցեալ օրը, ձեր տուած ցուցմունքի ժամանակ, խօսեցիք Իպրահիմ եւ պահեստի սպայ՝ Ճաֆեր էֆենտիների մասին։ Դուք գիտէ՞ք արդեօք, թէ ներկայումս նրանք որտեղ են գտնուում։

Միտհատ Շիւքրի պէյ — Նրանք պէտք է, որ ԸՍտամպուլում լինեն։

Նախագահ — Ո՞ր կողմերում, հասցէն գիտէ՞ք։

Միտհատ Շիւքրի պէյ — Կարծում եմ, որ Իպրահիմ էֆենտին բնակուում է Պեշիկթաշում, իսկ քարտուղար Ճաֆեր էֆենտին՝ Ֆաթիհում կամ էլ Ճահանկիրի շրջանում։ Ճիշդ հասցէն չգիտեմ։

Նախագահ — Ասում են, որ պատերազմ յայտարարելուց յետոյ «Միութիւն եւ Առաջադիմութիւն» կուսակցութիւնը ձեռնամուխ է եղել [ժողովրդից] նպաստ հաւաքելու գործին։ Այդ նպաստը ինչո՞ւ հաւաքուեց, գումարը որքա՞նի հասաւ եւ ի՞նչ նպատակի համար ծախսուեց։

Միտհատ Շիւքրի պէյ — Այսի՞նքն, էֆենտի։

Նախագահ — Պատերազմ յայտարարելուց յետոյ, որոշ նպաստներ են հաւաքուել։

Միտհատ Շիւքրի պէյ — «Միութիւն եւ Առաջադիմութիւն» կուսակցութեան համա՞ր է հաւաքուել։

Նախագահ — Այո՛։

Միտհատ Շիւքրի պէյ — Լուր չունեմ, տեղեկութիւն չունեմ։

Նախագահ — Այդ հասոյթից որոշ գումար է ծախսուել։ Այդ դրամը ի՞նչ ձեւով էք ծախսել։

Միտհատ Շիւքրի պէյ — Այո՛, էֆենտի. մօտ 400,000 ղուրուշի չափ մի գումար էր, որը յետագայում պահ տուրուեց պանքերում։ Ձեր ասածը այդ գումարի մասի՞ն է արդեօք։

Նախագահ — Այդ է, թէ՞ այդ չէ, չգիտեմ։ Բացատրութիւն տուէք։

Միտհատ Շիւքրի պէյ — Իմ իմացածը այդ գումարի մասին է։ Ինչպէս գիտէք, պատերազմ յայտարարելուց առաջ, հացի խնդիրը բաւականին դժուարացել էր։ Այդ կապակցութեամբ, քաղաքապետարանը որոշեց գնացուցակ սահմանել։ Բայց այդ գնացուցակը արդիւնաւէտ չեղաւ։ Յետագայում այդ գործով զբաղուեց քաղաքապետարանը։ Հացի խնդրին հետեւելու համար դիմեցին նաեւ Քեմալ պէյին։ Նա պարտաւորուեց այդ գործին հետեւել համա-տեղութեան կարգով։ Նա ասաց, որ «Ես հացը վաճառելու եմ այս գնով», իսկ քաղաքապետարանն էլ հաւանութիւն տուեց այդ գնին(62)։

Զիա Գէօքալպի հարցաքննութիւնը

Նախագահ — Զիա պէյ, դուք «Եէնի մեճմուա» (Նոր հանդէս) խորագրով հանդէս հրատարակո՞ւմ էք։

Զիա Գէօքալպ — «Եէնի Մէճմուա»-ն հանդէս է, ես նրան թղթակցում եմ(63)։

Նախագահ — Այդ հանդէսում ինչ-որ թուրանիզմին(64) վերաբերող մի յօդուած ունէք։ Այդ յօդուածում օսմանիզմի(65) փոխարէն նախապատուութիւնը տրւում է թուրանիզմին։ Այս խնդրի վերաբերեալ բացատրէք ձեր տեսակէտը։

Զիա Գէօքալպ — «Ի՞նչ է թուրանը» վերնագրով մի յօդուած ունեմ, որտեղ ցոյց եմ տալիս, որ այսօրուայ պատկերացումով այն կուլտուրական թուրան է։ Այսինքն՝ օսմանեան թուրքերը պէտք է մէկ կուլտուրա ստեղծեն։ Յետագայում, միւս թուրքերը (թիւրքալեզու ժողովուրդները — Ա.Փ.) այն ընդունելու դէպքում, կը ստացուի կուլտուրական թուրան։ Եւ դա նպաստաւոր կը լինի նաեւ Օսմանեան պետութեան համար, քանի որ նախ կը զարգանայ Օսմանեան երկրի հիմքը հանդիսացող թրքութիւնը։ Բնական է, որ կը զօրանայ նաեւ պետութիւնը, յետագայում էլ ամբողջ թրքութիւնը, որոնք կ'ընդունեն օսմանեան թուրքերէն լեզուն։ Ատրպէյճանի թուրքերը արդէն սկսել են կուլտուրական թուրանի ուղղութեամբ աշխատել։ Թուրքերէն լեզուի տարածումը, օսմանեան գրականութեան, որպէս ազգային գրականութիւն ընդունելը, բոլոր թուրքերին հոգով-սրտով կապելու է մեզ հետ։ Բոլոր թուրքերը ընթերցելու են մեզ մօտ լոյս տեսած ստեղծագործութիւնները։ Թերթերի եւ գրքերի ընթերցողները եթէ շատանան, բնական է, որ գրողները, գրականագէտներն իրենց ստեղծագործութիւններից առաւել շատ օգուտ կը քաղեն։ Ահա այդ յօդուածը սկզբից մինչեւ վերջ գրուած է այս նպատակի համար եւ պարզ ցոյց է

տրուած, որ այն նպաստաւոր կը լինի օսմանիզմի համար։

Նախագահ — Այդ հանգամանքը արդեօք չի՞ գրգռի ոչ-մահմեդական ազգութիւններին։

Զիա Գէօքալպ — Ո՛չ, էֆենտի, բոլոր օսմանեան ազգութիւններն իրենց մշակոյթի մէջ ազատ են։ Այսինքն՝ իւրաքանչիւրը կարող է իր մայրենի լեզուով գրականութիւն հրատարակել։ Այնպէս որ, այս կարգը փոխանակ նրանց վշտացնելու, պէտք է որ գոհացնի։ Այդ ազգութիւնները կ՚ատեն այն մարդկանց, որոնք ասում են, թէ թուրքական ազգ, թուրքական կուլտուրա գոյութիւն չունի, այլ կայ միմիայն օսմանեան լեզու եւ օսմանեան կուլտուրա։ Այսինքն՝ նրանք միւս ազգերին չեն ճանաչում եւ ասում են, որ գոյութիւն ունի միմիայն օսմանեան ազգ։ Մինչդեռ իմ համոզմունքով «օսմանեան» անուանումը վերաբերում է միայն պետութեանը, այսինքն՝ Օսմանեան պետութեանը։ Եւ այդ պետութեան մէջ ընդգրկուած են արաբ, թուրք, հայ եւ այլ ազգութիւններ։ Այս հանգամանքը հաստատում է իւրաքանչիւրի ինչ ազգութիւն լինելը եւ միեւնոյն ժամանակ կ՚ապահովի Օսմանեան պետութեան հզօրութիւնը։ Անհրաժեշտ է նկատի ունենալ, որ Օսմանեան պետութիւնը, որպէս յենարան, կարող է ունենալ ազգերի միջեւ գոյութիւն ունեցող միութիւնն ու փոխադարձ յարգանքը։ Իսկ եթէ յայտարարուի, որ բոլորս օսմանցի ենք եւ ազգութիւն չունենք, ապա ազգութիւնների միջեւ չի կարող միասնականութիւն լինել։ Հասկանալի է, որ միւս ազգերը կը մերժեն այս թեզը։

Նախագահ — Տեղահանութեան հարցը ի՞նչ ձեւով քննարկուեց կենտրոնական կոմիտէում։

Զիա Գէօքալպ — Բոլորովին չքննարկուեց։ Պատերազմին վերաբերող օրէնքներն արդէն հրամանագրի ձեւն ունէին։ Դրանք կազմուում էին պատերազմի պատճառով։ Այն կուսակցութեան ծրագրի հետ առնչութիւն չունի։ Անհրաժեշտութիւնից ելնելով, հարիւրաւոր օրէնքներ էին

կազմում։

Նախագահ — Շատերը ասում են, որ այն վճռուած է եղել «Միութիւն եւ Առաջադիմութիւն» կուսակցութեան կենտրոնական կոմիտէում, մի շարք ղեկավարների մը-տայղացմամբ եւ որոշմամբ։

Զիա Գէօքալպ — Ճիշդ չէ։

Նախագահ — Առաջին հերթին այն տեղի է ունեցել Պեհաէտտին Շաքիր պէյի եւ Դոկտ. Նազըմի հրահրմամբ։

Զիա Գէօքալպ — Կենտրոնական կոմիտէո՞ւմ։

Նախագահ — Այո՛, կենտրոնական կոմիտէում եւ ձայ-ների մեծամասնութեամբ։ Եւ այս հարցը կենտրոնական կոմիտէի կողմից քաջալերուելով՝ նրանք ներգործել են Ռազմական նախարարութեան վրայ եւ իրականացնել այն։

Զիա Գէօքալպ — Կենտրոնական կոմիտէում այդ մա-սին ոչ մի խօսք չի եղել։

Նախագահ — Տեղահանութեան ընթացքում, մի շարք վայրերում կոտորածներ են տեղի ունեցել, կողոպուտ եւ յափշտակութիւն։ Կենտրոնական կոմիտէն մնացել է դի-տորդի դերում եւ ոչ մի որոշում չի ընդունել այդ մասին։

Զիա Գէօքալպ — Կենտրոնական կոմիտէն բաւական ուշ իմացաւ։ Այն էլ՝ ոչ բոլորի, այլ մասնակի դէպքերի մասին։ Կենտրոնական կոմիտէն տեղեկանալուց յետոյ պահանջեց, որպէսզի Ներքին Գործերի եւ Ռազմական նա-խարարութիւններն արգելեն այդ բոլորը եւ յանցագործ-ներին էլ պատժեն։ Մենք պաշտօնապէս կառավարութեան գործերին միջամտելու իրաւասութիւն չունէինք։ Ուստի այդ ձեւով պահանջ ներկայացրինք։ Այդ հարցումին վրայ մեզ պատասխանեցին, որ մի շարք հետաքննող յանձնա-ժողովներ են ուղարկել եւ որոշ միջոցներ ձեռնարկել։ Մեր հարցադրումներին միշտ այդ ձեւով էին պատասխանում։

Նախագահ — Ցամենայնդէպս, տեղահանութիւնն ու կոտորածը շարունակում էր իրագործուել։ Այդպէս չէ՞։

Զիա Գէօքալպ — Այդ արարքներին ո՞վ կարող էր

արդելք հանդիսանալ։

Նախագահ — Կուսակցութեան պատգամաւորները համեմատաբար կարեւորութիւն չներկայացնող հարցերի նկատմամբ, նախարարների խորհրդում կառավարութիւնից անմիջապէս բացատրութիւն են պահանջել։ Այդ ինչպէ՞ս է եղել, որ այս կարեւոր խնդիրը ձեր կողմից անուշադրութեան է մատնուել։

Զիա Գէօքալպ — Կենտրոնական կոմիտէն պատգամաւորների հետ ոչ մի յարաբերութիւն չունի։ Պատգամաւորներն ունէին առանձին կազմակերպութիւն, որը նախագայում կինում կոչւում էր «Ընդհանուր պիւրո», այն ընդունեց «Կառավարող յանձնաժողով» անուանումը։ Այսպիսին էր նախարարների խորհրդի կազմակերպութիւնը։ Պատգամաւորներին կառավարողը այդ յանձնաժողովն էր։

Նախագահ — Այո՛, այդպէս է։ Սակայն նշուեց, որ կենտրոնական կոմիտէն իր ցանկութիւնները իրականացրել է ձեր միջոցով, կամ էլ ձեր միւս պատգամաւորներին ասացին, որ «կենտրոնական կոմիտէում հաւանութեան արժանացած խնդիրները մենք աշխատում էինք իրագործել նախարարների խորհրդում գտնուող կուսակցականների միջոցով»։ Այսպիսով, ինչպէս երեւում է, նրանք եռանդագին զբաղուել են բոլորովին կարեւորութիւն չներկայացնող գործերով։

Զիա Գէօքալպ — Նրանք գործել են անձնական նախաձեռնութեամբ։

Նախագահ — Կարեւորութիւն չներկայացնող խնդիրների համար նրանք ամէն ջանք գործադրել են, իսկ ինչո՞ւ կոտորածի հարցով ոչ մի բան չեն նախաձեռնել նախարարների խորհրդում։ Այստեղից եզրակացւում է, որ կենտրոնական կոմիտէն հաւանութիւն է տուել կոտորածին։

Զիա Գէօքալպ — Ո՛չ, էֆենտի· կենտրոնական կո-

միտէն ղեկավարում էր «Թեշքիլաթ-ը հարիճիէն» («Արտաքին կազմակերպութիւն»)։ Պատգամաւորներին փրոփականտելը արգելուած էր։ Սակայն անձնապէս ծանօթ պատգամաւորների հետ կարող էին որոշ հարցերի մասին խօսել։ Կենտրոնական կոմիտէն ուղղակի չէր կարող նը-րանց փրոփականտել։ Փրոփականտելը չէր մտնում նրա իրաւասութեան մէջ։ Ցեղոյ պաշտօնները առանձնացուած էին։ «Թեշքիլաթ-ը թեշերրու»-ի («Շարիաթի կազմակերպութիւն») եւ «Թեշքիլաթ-ը հարիճէ»-ի կառավարող յանձնաժողովները տարբեր էին։

Աթիֆ պէյի հարցաքննութիւնը

Նախագահ — «Թեշքիլաթ-ը մահսուսէ»-ի ստեղծման մասին կայսերական հրամանագիր տրուե՞ց, թէ՞ ոչ։

Աթիֆ պէյ — Ո՛չ, էֆենտի։

Նախագահ — Դուք ասացիք՝ «պաշտօնական հաստատութեան մասնաճիւղ»։ Առանց կայսերական հրամանի արդեօ՞ք կարող էր պաշտօնական հաստատութեան մասնաճիւղ գոյութիւն ունենալ։

Աթիֆ պէյ — Ժամանակաւոր յանձնաժողով լինելու համար, այն ստեղծուել էր Ռազմական նախարարութեան կողմից։ Բնական է, որ այդ մասին իրազեկ էին նաեւ Ներքին Գործերի նախարարը, մեծ վեզիրը եւ միւսները։

Նախագահ — Նախարարների խորհրդի որոշմա՞մբ։

Աթիֆ պէյ — Հաւանական է, էֆենտի։

Նախագահ — Դուք այնտե՞ղ էիք «Թեշքիլաթ-ը մահսուսէ»-ի ստեղծումից առաջ։

Աթիֆ պէյ — Այնտեղ էի, էֆենտի։ Այդ մասին ինձ տեղեկութիւն տուեց Ռազմական նախարարը։

Նախագահ — «Թեշքիլաթ-ը մահսուսէ»-ի ստեղծման հրամանը ինչպէ՞ս եղաւ, գրաւո՞ր։

Աթիֆ պէյ — Ո՛չ, գրաւոր չի եղել, այլ՝ բանաւոր։ Այդ

մասին առաջին հերթին տեղեկություն տուեց Սուլէյման Ասքերի պէյը։ Նա տեսակցել էր Ռազմական նախարարի հետ։ Յետոյ Ռազմական նախարարը ինձ կանչեց իր մօտ, նա էլ բանաւոր յայտնեց այդ մասին։ Ես էլ ընդունեցի։ Սակայն Ազիզ պէյին այդ մասին հրաման է տուել Ներքին Գործերի նախարարը։ Այստեղից կռահում եմ, որ Ներքին Գործերի նախարարն էլ գիտէր այդ մասին։

Նախագահ — Ձեր պաշտօնավարութեան հարցը կարող էր բանաւոր տեղեկացուել։ Իսկ մի հաստատութեան հիմնադրումը չէր կարող բանաւոր կատարուել։ Անպատճառ որեւէ նախարարութեան հրամանը անհրաժեշտ էր։

Աթիֆ պէյ — Ըստ երեւոյթին, այդպիսի մի հրաման եղել է։

Նախագահ — Դուք այնտեղ չէ՞իք դրա ստեղծումից առաջ։

Աթիֆ պէյ — Այնտեղ էի։

Նախագահ — Այս մասին ձեզ հրաման չեկա՞ւ։ Ինչպէ՞ս կարող է որեւէ հաստատութիւն առանց հրամանի հիմնուել։

Աթիֆ պէյ — Ձեմ յիշում, էֆենտի։

Նախագահ — Սուլէյման Ասքերի պէյը ի՞նչ յարաբերութեան մէջ էր «Թեշքիլաթ-ը մահսուսէ»-ի հետ։

Աթիֆ պէյ — Նա յանձնաժողովի նախագահն էր։ Որոշումները յայտնում էր Ռազմական նախարարութիւն եւ ստանում՝ անհրաժեշտ հրահանգներ։

Նախագահ — Որտե՞ղ էր նրա պաշտօնատեղին։

Աթիֆ պէյ — Նրա համար յատուկ պաշտօնատեղի էր վարձուած Նուրի Օսմանիէյում։ «Թասվիր-ի Էֆքեար» տպարանի դիմաց, N° 32 տանը։

Նախագահ — Նա դրամարկղ ունէ՞ր։

Աթիֆ պէյ — Ի՞նչ։

Նախագահ — «Թեշքիլաթ-ը մահսուսէ»-ին յատկացուած դրամարկղ գոյութիւն ունէ՞ր։

Աթիֆ պէյ — *Այո՛։*

Նախագահ — *Դրամագլուխ ունէ՞ր։*

Աթիֆ պէյ — *Անկասկած։*

Նախագահ — *Սկզբնական շրջանում որքա՞ն գումար էր յատկացուած։*

Աթիֆ պէյ — *Քանակը չգիտեմ։*

Նախագահ — *Ո՞րտեղից էիք վերցնում այդ գումարը։*

Աթիֆ պէյ — *Կարծեմ դրա մասին ասացի։ Մի քանի անգամ ստացել են Ազգային պաշտպանութեան նախարարութիւնից։ Աւելի շատ ստանում էին ռազմական գաղտնի հաստատութիւններից։*

Նախագահ — *Փոխարէնը՝ ստացական տրւո՞ւմ էր։*

Աթիֆ պէյ — *Միգուցէ։*

Նախագահ — *«Թեշքիլաթ-ը մահսուսէ»-ի եւ կենտրոնական կոմիտէի միջեւ ոչ մի կապ գոյութիւն չունէր, այդպէս չէ՞։*

Աթիֆ պէյ — *Ո՛չ, ո՛չ մի կապ գոյութիւն չունէր։*

Նախագահ — *Այժմ կարդացուելու են մի շարք հեռագրեր եւ թղթակցութիւններ։*

Աթիֆ պէյ — *Կարող է թղթակցութիւն լինի, բայց դրանք չեն կարող այդ կապը հաստատել։*

Նախագահ — *(Խօսքն ուղղելով քարտուղարին)՝ կարդացէ՛ք։*

ՕՍՄԱՆԵԱՆ «ԻԹԹԻՀԱՏ ՎԷ ԹԵՐԱՔՔԻ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ ԻԶՄԻՐԻ ՎԻԼԱՅԷԹԻ ԿԵՆՏՐՈՆ *№ 9*

«ԻԹԹԻՀԱՏ ՎԷ ԹԵՐԱՔՔԻ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԿՈՄԻՏԷԻՆ

Շտապ

Ցարգելի եղբայրնե՛ր,

Բերղամայի կազայում, Ռեշատիէ նահիէի անձնատուր

եղած աւազակներից չեչէն Համիտ աղան օժանդակութիւն է խնդրել, ասելով, որ Կովկասի(...)(66) վիլայէթի բնակիչներից մի քանի հայրենակիցների հետ նպատակադրուել է օգնել բանակին։ Եթէ իրեն թոյլ տրուի, ապա Տիարպեքիրում մի կարեւոր «Թեշքիլաթ» ստեղծելով, շարժուելու է դէպի սահման։ Ցոյսով ենք, որ յիշեալը կարող է այդ ձեւով ծառայութիւն մատուցել։ Կարծում ենք, որ նրանց առաքումը կարող է երկու տեսանկիւնով(67) օգտակար լինել հայրենիքի համար։

Թանկագին եղբայրներ, հայրենասիրական նախաձեռնութիւն համարելով, խնդրում եմ ձեր թոյլտուութիւնը՝ այո կամ ոչ։ Պատասխանէք հեռագրով։

Իզմիրի միւֆթի՝ Զուհտի Զատէ Ահմետ

23 Թեշրին-ի Սանի 1330 թ.
[1914 թ. Նոյեմբերի 23]

(Այնուհետեւ նախագահը ընթերցել է տալիս վերոյիշեալ հեռագրերը)։

Նախագահ — Ընթերցուած բոլոր հեռագրերը ցոյց են տալիս, որ «Թեշքիլաթ-ը մահսուսէ»-ի եւ կենտրոնական կոմիտէի միջեւ ներքին կապ է եղել։

Ալիֆ պէյ — Ո՛չ։

Նախագահ — Ինչպէ՞ս թէ ոչ։

Ալիֆ պէյ — Ցիշողութիւնս թոյլ է, չեմ կարող պատասխանել։ Եթէ մէկ առ մէկ հարցնէք, կարող եմ ապացուցել, որ կապ գոյութիւն չի ունեցել։

Նախագահ — [Կենտրոնական կոմիտէն] նոյնիսկ միջամտել է զինուորական գործողութիւններին։

Ալիֆ պէյ — Պեհաէտտին Շաքիր պէյը «Թեշքիլաթ»-ը մահսուսէ»-ի ուղղակի պաշտօնատար անձը լինելով...։

Նախագահ — Շատ լաւ, չէ՞ որ Միտհատ Շիւքրի պէյին է գրում։

Աթիֆ պէյ — Ուղղակի մեզ հետ թղթակցելու հնարաւորութիւն չի ունեցել, ուստի նրա միջոցով է ուղարկել։

Նախագահ — «Ներքին Գործերի նախարարութեան միջոցով Միտհատ Շիւքրի պէյին» գրելու փոխարէն, թող ձեզ գրէր։

Աթիֆ պէյ — Եթէ չի գրել՝ դրանում ինքն է մեղաւոր։

Նախագահ — Ուրեմն այդպէս է ցանկացել եւ այդպէս էլ գրե՞լ է։

Աթիֆ պէյ — Էֆենտի, նա այնքան էլ կարգ ու կանոնի հետեւող մարդ չէր։ Երբեմն ինքնուրոյն գործեր էր կատարում։ Ոչ մէկը չի կարող ապացուցել, որ «Թեշքիլաթ-ը մահսուսէ»-ն կուսակցութեան հետ յարաբերութեան մէջ է եղել։

Նախագահ — Ինչո՞ւ։

Աթիֆ պէյ — Թող միւս հեռագրերը կարդան։

(Ընթերցւում է Խալիլ, Նազըմ եւ Ազիզ պէյերի ստորագրութիւններով Միտհատ Շիւքրի պէյին ուղղուած հեռագիրը)։

Աթիֆ պէյ — Սա ցոյց չի տալիս, որ կապ է գոյութիւն ունեցել։ Ես նախապէս էլ ասել եմ, որ կամաւորների ստեղծման հարցում, դրսում՝ կազմակերպութիւններ չունենալու պատճառով, որոշեցինք օգտուել այլ վայրերում գտնուող [կուսակցութեան] պատասխանատու քարտուղարներից։ Ուստի այդ մասին գրեցինք կուսակցութեան կենտրոնական կոմիտէին։

Նախագահ — Շատ լաւ, գրողը ո՞վ էր։

Աթիֆ պէյ — Մեր յանձնաժողովը։

Նախագահ — Բայց չէ՞ որ այդ յանձնաժողովը ուղղակի հրաման է տալիս կուսակցութեան։

Աթիֆ պէյ — Դա հրաման չէ։ Նրանց միջնորդութիւ-

նից օգտուելու համար է, որ դիմել ենք։

Նախագահ — Շատ լաւ, ասենք թէ նման դիմում կարող էիք անել։ Բայց չէ՞ որ այդ թղթակցութիւնը կարող էիք ուղղակի անել։

Աթիֆ պէյ — Ուղղակի թղթակցութիւն ունեցել ենք պատասխանատու քարտուղարների հետ։ Այստեղ գրում ենք Միտհատ Շիւքրի պէյին։(68)

Ռիզա պէյի հարցաքննութիւնը(69)

Նախագահ — Ձեր ցուցմունքից այնպէս է հասկացուում, որ տեղահանութիւնն ու կոտորածը իրականացնող ջոկատների, զինուորական միաւորումների մէջ գտնուել են նաեւ «Թեշքիլաթ-ը մահսուսէ»ին պատկանող խմբաւորումներ։

Ռիզա պէյ — Եթէ թոյլ տաք, այդ էլ կը բացատրեմ։ Ես այդ հարցում ինչ-որ սխալ արտայայտութիւն եմ տեսնում։ Իմ կարծիքով, գոյութիւն է ունեցել մի «Թեշքիլաթ-ը մահսուսէ», որը կազմակերպուել է Ռազմական նախարարութեան հրամանով եւ գործել է ռազմաճակատում եւ ընդհանրապէս հակառակորդի գտնուած շրջաններում։ Ուզում եմ այս հարցը բացատրել ըստ իմ համոզմունքի։ Միւս՝ երկրորդ «Թեշքիլաթ-ը մահսուսէ»-ն ստեղծուել է, որպէսզի մի շարք վիլայէթներում, սանջակներուն, կազաներում իրականացնի տեղահանութիւնը, ունենալով, որ այդ վայրերում ժանտարմական ոստիկանութիւնը բաւարար ուժ չի ունեցել այն գործադրելու։ «Թեշքիլաթ-ը մահսուսէ»-ի ստեղծած խմբերը բոլորովին կապ չունէին ժանտարմական ուժերի հետ, ի հարկէ հադա, առանձին հարց է։ Օրինակ՝ հայերին գիւղերից հաւաքելու եւ տարագրելու խնդրում ժանտարմական ուժերը չէին բաւարարում։ Ինչպէս գիտէք, բանակը ժանտարմին իր հետ ռազմաճակատ էր տարել։ Որեւէ գիւղի տեղա-

հանութեան համար ուղարկուում էր երկու ժանտարմ, իսկ նրանց օգնելու համար էլ նշանակուում էին տուեալ գիւղին կամ շրջանին ծանօթ ձեռնհաս եւ փորձառու մի քանի մարդիկ։ Հաւաքագրում էին։ Եւ դա անուանում էին «Թեշքիլաթ-ը մահսուսէ»։ Ահա այս գործը շփոթման մէջ էր դրուում մեծ նպատակի համար ստեղծուած «Թեշքիլաթ-ը մահսուսէ»-ի հետ։

Նախագահ — Շատ լաւ, այդ ձեւով մէջտեղ եկած «Թեշքիլաթ-ը մահսուսէ»-ն ո՞վքեր էին կառավարում, վալիներ՞ը։

Ռիզա պէյ — Դրանք բոլորն էլ տեղական բնոյթ ունէին։

Նախագահ — Տեղական լինելով հանդերձ, կառավարումը ո՞ւմ ձեռքին էր գտնուում, վալիների՞, թէ՞ պատասխանատու քարտուղարների։ Այս հանգամանքը բացատրէ՛ք։

Ռիզա պէյ — Բացատրելու եմ ըստ իմ հայեցողութեան, քանի որ անձամբ ներկայ չեմ գտնուել։ Դրանք, այնտեղ, որտեղ ստեղծուել են, կառավարուել են այդ շրջանի քաղաքացիական առաջնորդների կողմից։ Տուեալ վայրի պատասխանատու քարտուղարները անպաշտօն խառնուել են այդ գործերին, դրանք ուղղակիօրէն տեղական բնոյթ ունեցող գործեր են եղել։ Մեծարգոյ փաշա, կենտրոնական կոմիտէն դրանից տեղեակ չի եղել։

Նախագահ — Կենտրոնական կոմիտէն զինուելու համար տուել է իր համաձայնութիւնը, նոյնիսկ այդ մասին հրամաններ է արձակել։ Այդ բոլորը առկայ են փաստաթղթերի մէջ։ Ձեր կողմից այդպիսի բան տեղի ունեցե՞լ է արդեօք։

Ռիզա պէյ — Ոչ, ես նախապէս ասել էի, թէ իմ ռազմամթերքը ինչպիսի վիճակում էր գտնուում։

Takvim-i Vekayi, 12 Mayis 1335 (1919) № 3554

ՎԵՑԵՐՈՐԴ ԴԱՏԱՎԱՐՈՒԹԻՒՆ(70)
(1335 թ. (1919) Մայիսի 14)

Միտհատ Շիւքրի պէյի հարցաքննութիւնը։

Նախագահ — *Միտհատ Շիւքրի պէյ. ասում են, որ կոտորածի խնդրում [կուսակցութեան] պատասխանատու ներկայացուցիչները ազդեցութիւն են բանեցրել մի շարք վալիների եւ մութասարրիֆների վրայ, նոյնիսկ չհնազանդողներին պաշտօնազրկել են, ճի՞շդ է արդեօք։*

Միտհատ Շիւքրի պէյ — *Մի քանիսի հեռացումը կատարուել է մեր կողմից։ Այսինքն՝ վալին կամ մութասարրիֆը գրել են մեզ՝ խորհրդակցելու նպատակով, մի շարք գործերի մասին։ Մենք չենք թողել, որ նրանք այդ գործերի մէջ խառնուեն։*

Նախագահ — *Պատասխանատու ներկայացուցիչնե՞ը։*

Միտհատ Շիւքրի պէյ — *Այո՛։*

Նախագահ — *Այդպէս չէ։ Ձեր մի շարք պատասխանատու ներկայացուցիչները պաշտօնից հեռացրել են վալիներին։*

Միտհատ Շիւքրի պէյ — *Ձեմ կարծում, որ այդպէս եղած լինի։*

Նախագահ — *Ինչպէ՞ս թէ։*

Միտհատ Շիւքրի պէյ — *Էֆենտի, մեր ներկայացուցիչները մի՞թէ կարող էին պաշտօնից հեռացնել վալիներին։*

Նախագահ — *Տեղահանութեան եւ կոտորածին վերա-*

բերող հրամաններին չհնազանդելու համար, Անգարայի վալի՝ Մազհար պէյը, եւ Քաստամոնուի վալի՝ Ռեշիտ փաշան անմիջապէս պաշտօնանկ են արուել։

Միտհատ Շիւքրի պէյ — Մազհար պէյին չեմ ճանաչում։ Նրա պաշտօնանկութեան մասին տեղեկութիւն չունեմ։ Ռեշիտ փաշան բարեկամս է, 15 տարուց ի վեր նրան ճանաչում եմ։ Չեմ կարծում, որ պատասխանատու ներկայացուցչի ցուցմունքով հեռացուած լինի պաշտօնից(71)։ Ընդհակառակը, նա հեռացուել է պաշտօնից հիւանդութեան պատճառով։ Նա եղել է իմ 15 տարուայ մտերիմ ընկերը։ Ինձ երբեւէ չի ասել, որ ինքը հեռացուել է պաշտօնից պատասխանատու քարտուղարի ցուցմունքով։

Նախագահ — Ձեր պատասխանատու քարտուղարը նրան չի հեռացրել։ Դա կատարուել է նրա զեկուցագրի հիման վրայ։

Միտհատ Շիւքրի պէյ — Ո՛չ, էֆենտի. պատասխանատու քարտուղարը պէտք է, որ ինձ գրէր այդ մասին, իսկ ես նրա պարկեշտութեան մասին լաւ կարծիք ունենալու համար չէի կարող հաւանութիւն տալ այդ խնդրին։

Նախագահ — Ձեր պատասխանատու քարտուղարները կարո՞ղ էին արդեօք որեւէ հարցով ուղղակի դիմել Ներքին Գործերի նախարարութեանը։

Միտհատ Շիւքրի պէյ — Ո՛չ, էֆենտի, չէին կարող։ Այդ մասին եթէ իմացուէր, նրանք կը հեռացուէին իրենց պարտականութիւնից։ Եթէ մենք տեղեկանայինք, որ նրանք որեւէ հարցով դիմել են Ներքին Գործերի կամ մի այլ նախարարութեանը, ապա անմիջապէս կը հեռացնէինք։ Դա մտնում էր մեր իրաւասութեան մէջ։ Նրանց խիստ հրաման էր տրուած, որ նման թղթակցութիւնների առկայութեան դէպքում...

Նախագահ — Մեր ձեռքի տակ այնպիսի փաստաթղթեր կան, որոնք ցոյց են տալիս, որ Պեհաէտտին Շաքիր, Դոկտ. Նազըմ պէյերը թղթակցութիւն են ունեցել

Ներքին Գործերի նախարարութեան հետ։

Միտհատ Շիւքրի պէյ — Գործի՞ն վերաբերող։

Նախագահ — Այո՛։

Միտհատ Շիւքրի պէյ — Կարող է. միգուցէ Դոկտ. Նազիմը ինքնագլուխ է կատարել այդ։

Նախագահ — Թղթակցել է նաեւ Պեհաէտտին Շաքիր պէյը, այդ մասին տեղեկութիւն չունէ՞ք։

Միտհատ Շիւքրի պէյ — Կարող է պատահել, էֆենտի։

Նախագահ — Որ այդպէս է, ինչո՞ւ առանց արտօնութեան, ինքնագլուխ կերպով նման արարքների համար...։

Միտհատ Շիւքրի պէյ — Բայց դա տեղի է ունեցել նախքան իմ քարտուղարութիւնը։

Նախագահ — Առանց հաւանութեան, միթէ այդ դիմումները կարող էին այդպէս յաճախակի կրկնուել։

Միտհատ Շիւքրի պէյ — Ըստ երեւոյթին, անհրաժեշտութիւն է զգացուել, էֆենտի։ Սրանից 6–7 տարի առաջ, նոյնիսկ մի քանի պատասխանատու քարտուղարներ ընտրուել են իրենց շրջաններից։ Մեզ յայտնեցին, որ այդպիսիները որոշ հարցերով դիմել են նախարարութիւններին։ Նրանք այդ գրութիւնները ուղարկել էին մեզ, եւ մենք նկատողութիւն անելով գրել էինք, որ կրկնուելու դէպքում, նրանք կը հեռացուեն իրենց պարտականութիւններից։ Օրինակ՝ Եակուպ Ճեմիլ պէյը դատապարտուել էր Ռազմական ատեանի կողմից, նրա համար, որ Ատանայում գտնուելու ընթացքում նա մի քանի բաներ էր յայտնել Մուամմեր պէյին։ Մուամմեր պէյն էլ այդ մասին գրել էր մեզ։ Ուստի, մենք անմիջապէս նրան հեռացրինք իր պարտականութիւններից։ Վալիի գործերին միջամտելու համար, մենք նրան հեռացրել էինք մեր անձնակազմից։ Միգուցէ, ինչ-որ բան եղել է, որ ես տեղեկութիւն չունեմ։ Այդ մասին ոչինչ չեմ կարող ասել։

Նախագահ — Անգարայի վալի Մազհար պէյը նոյնպէս մի շարք այդպիսի հրամաններ է ստացել։ Այդտեղ դնա-

ցող կուսակցութեան գլխաւոր քարտուղարներից, Աթիֆ պէյի թելադրանքով, նա անմիջապէս հեռացուել է պաշտօնից, իսկ նրա տեղ վալի է նշանակուել Աթիֆ պէյը։

Միտհատ Շիւքրի պէյ — Կուսակցութիւնը Աթիֆ պէյ անունով քարտուղար չի ունեցել։

Նախագահ — Այդպէս են յայտնել։ Գուցէ կուսակցութեան անդամներից մէկը լինի։

Միտհատ Շիւքրի պէյ — Անդամներից չէ, էֆենտի։ Աթիֆ պէյը այդ ժամանակ կենտրոնական կոմիտէի մէջ չէր։

Նախագահ — Ինչ որ է, կուսակցութեան կողմից ուղարկուել է Աթիֆ պէյը եւ մի շարք գաղտնի հրահանգներ է տուել վալիին։ Մազհար պէյն էլ մերժել է։ Յաջորդ օրը Մազհար պէյը հեռացուել է պաշտօնից, իսկ նրա տեղ նշանակուել է Աթիֆ պէյը։

Միտհատ Շիւքրի պէյ — Բոլորովին տեղեկութիւն չունեմ։ Ես տեսակցել եմ նրա հետ, եթէ այդպիսի բան լինէր, ինձ կ'ասէր անպայման։

Նախագահ — Այդ բոլորի մասին մեզ վկայութիւն է տուել Մազհար պէյը։

Միտհատ Շիւքրի պէյ — Կարող է պատահել, էֆենտի։ Ինձ այդպիսի բան չի ասել, կարող էք իր ներկայութեամբ ստուգել։ Ես հիմա եմ տեղեկանում, որ Աթիֆ պէյը այդպիսի հրաման է տուել։

Նախագահ — Նոյնը պատահել է նաեւ Ռեշիտ փաշայի եւ Եոզղաթի մութասարրիֆ՝ Ճեմալ պէյի հետ։

Միտհատ Շիւքրի պէյ — Բոլորովին տեղեկութիւն չունեմ, էֆենտի։

Նախագահ — Պատերազմի ընթացքում, կուսակցութեան որոշումով բռնագրաւուել են օտարազգի մի շարք դպրոցներ։ Այդ մասին տեղեկութիւն ունէ՞ք արդեօք։

Միտհատ Շիւքրի պէյ — Կենտրոնական կոմիտէի որոշումո՞վ։

Նախագահ — *Այո՛։*

Միդհատ Շիւքրի պէյ — *Բոլորովին ոչ։*

Նախագահ — *Միգուցէ Ստամպուլի կենտրոնի որոշումով։*

Միտհատ Շիւքրի պէյ — *Մեծարգոյ փաշա, չեմ կարծում։ Դա բոլորովին հնարաւոր չէր։ Ես չեմ լսել, որ որեւէ դպրոց բռնագրաւուի կամ փակուի։ Դրա համար հիմք էլ չի եղել։*

Նախագահ — *Եւ այդ շինութիւնները այլեւս չեն օգտագործուել տնօրինողների կողմից։ Որոշ տեղեր քանդել են, իսկ որոշ բաներ էլ աւելացրել։*

Միտհատ Շիւքրի պէյ — *Բոլորովին տեղեկութիւն չունեմ։ Այդպիսի բան չեմ կարողանում յիշել։*

Նախագահ — *Մի նամակ կայ, կարդացէ՛ք։*

(Քարտուղարը կարդում է)։

Յարգարժան եղբայրս,

Կառավարութեան փոփոխման հետեւանքով Անվտանգութեան ընդհանուր տնօրէնի մօտ չուզեցի երկար մնալ։ Իմ ցանկութեան ընդառաջելով՝ Ստոքհոլմի դեսպանատան առեւտրական կցորդը 7,500 դուրուշ ռոճիկ եւ 2,500 դուրուշ էլ աւելիով գումար յատկացրեց։ Արտաքին Գործերի նախարարութիւնից ստացայ մինչեւ Մարտ ամսուայ սկիզբը ինձ յատկացուած ռոճիկն ու յարակից գումարը։ Մէկ ամսից աւելի է, ինչ գտնուում եմ Վիեննայում։ Պեռլինի ճանապարհը այնքան էլ ապահով չլինելու պատճառով, ստիպուած եղայ մնալ այստեղ։ Վաղը մեկնելու եմ Պեռլին, այնտեղից էլ Ստոքհոլմ։ Առողջութիւնս շատ լաւ է։ Երբեմն այցելում եմ Հիւսէյն Հիլմի փաշային(72)։ Անցեալ օրը ինքը եւ աղջիկը ծանր հիւանդութիւն անցկացրին։ Հիմա կազդուրուել են։ Կարելի է ասել, որ յեղափոխական շարժումների ընթացքում ոչ մէկի քիթը չարիւնուեց Վիեննայում։ Յեղափոխութիւնից 5–6 օր յետոյ եկայ Վիեննա։ Ամէնուրեք հանդարտ է։ Մի նամակ էլ կը գցեմ Ստոքհոլմից։ Օտար մամուլից իմացայ, որ հակառակորդը(73) գրաւել է Ատանայի վիլայէթը, բայց ներքին կառավարումը մնացել է մեր ձեռքին։ Այս նամակը ուղարկում եմ Օսման պէյի միջոցով։ Հարկային վարչութեան ընդհանուր տնօրէն Սբրրի պէյը երկու ամիս է, ինչ գտնուում է Վիեննայում։ Ճանապարհը

պարհները փակ լինելու պատճառով, Վիեննա ժամանած ուղեւորները սպասողական դրութեան մէջ են... Առայժմ՝ այսքան։

Եղբայրդ՝ Ազիզ(74)

Նախագահ — Կարողացա՞ք մտաբերել։

Միտհատ Շիւքրի պէյ — Ազիզ պէյին ճանաչում եմ։

Նախագահ — Ո՞րտեղ գտնուելը...

Միտհատ Շիւքրի պէյ — Վիեննայից է գրում։

Նախագահ — Հիմա ո՞ւր է, ո՞րտեղ է գտնուում։ Ո՞վ է այս նամակը ձեզ բերող՝ Օսման պէյը։

Միտհատ Շիւքրի պէյ — Ես չեմ ստացել այդ նամակը։ Առաջին անգամ եմ տեսնում։ Միգուցէ փոստատունն է վերցրել։ Ես յետագայում իմացայ, որ Ազիզ պէյը մեկնել է այստեղից։ Նոյնիսկ մեկնելուց առաջ փնտռել է ինձ։

Նախագահ — Ո՞վ է այս Օսման պէյը, կարողացա՞ք յիշել։

Միտհատ Շիւքրի պէյ — Մի Օսման պէյ կար, որը Եուսուֆ Ռատի պէյի եղբայրն էր։ Նա՞ է արդեօք։

Նախագահ — Կարդացէ՛ք ծրարի վրայ գրուածը։

(Արձանագրող Շեֆիք պէյը կարդում է)։

Ներքին Գործերի Նախարարութեան իրաւաբան-խորհրդատու Օսման փաշա էֆենտի։

Միտհատ Շիւքրի պէյ — Ճանաչում եմ, շատ լաւ եմ ճանաչում։

Նախագահ — Սայիտ Հալիմ փաշայի դղեակում տեղի ունեցած ժողովում, Սեւ Ծովի պատահարի պատճառով պատերազմ յայտարարուելու մասին անշուշտ տեղեակ էք։

Միտհատ Շիւքրի պէյ — Այո՛, լսել եմ։ Բայց Սայիտ Հալիմ փաշան ասաց, որ ինքը կ՚աշխատի կանխել։

Նախագահ — Այդ [պատերազմի] հրամանը ի՞նչ ձեւով հաղորդուեց եւ ինչպիսի՞ն էր ձեր համոզմունքը այդ

մասին։

Միտհատ Շիւքրի պէյ — Մեզ տեղեկացրին։

Նախագահ — Շատ լաւ, ինչպէ՞ս տեղեկացրին։

Միտհատ Շիւքրի պէյ — Հինգ տարի առաջ եղած բանը ինչպէ՞ս բացատրեմ։ Յիշողութիւնս անքան էլ գօրաւոր չէ։

Նախագահ — Նոյնութեամբ մի ասէք, այլ ինչ ձեւով տեղի ունենալը։

Միտհատ Շիւքրի պէյ — Մեծ վեզիրի ջղագրգիռ վիճակից հասկացայ, որ նա պատերազմի կողմնակից չէր։ Նա ասում էր, որ պատերազմի մէջ մտնելը լաւ բան չէ։

Նախագահ — Այդ դէպքը ինչպէ՞ս տեղի ունեցաւ։

Միտհատ Շիւքրի պէյ — Մանրամասն բացատրութիւն չտուեցին։ [Մեծ վեզիրը] ասաց հետեւեալը. «Սեւ Ծովում ինչ-որ բախում է տեղի ունեցել։ Մի նաւ են պատրաստել մեզ յանձնելու համար(75)։ Բայց ես աշխատելու եմ պատերազմը կանխել եւ մի քանիսին էլ պատժել։ Այժմ շփման մէջ եմ դեսպանութիւնների հետ։ Նրանց վստահեցրել եմ, որ մնալու ենք չէզոք։ Թէ ինչ արդիւնքի կը հասնեմ, չգիտեմ։ Բոլոր դէպքերում, դուք հաղորդէք ձեր ակումբներին(76) եւ բոլորին, որ պատերազմ տեղի չի ունենալու»։

Նախագահ — «Այդ մարդուն պիտի պատժեմ» ասելով, ո՞ւմ նկատի ունէր։

Միտհատ Շիւքրի պէյ — Այսինքն ասաց. «Դեսպանութիւններին կը վստահեցնենք, որ մի սխալութիւն է եղել, հետաքննութիւն կը կատարենք»(77)։

Նախագահ — Դուք ասել էիք, որ կենտրոնական կոմիտէի եւ «Թեշքիլաթ-ը մահուսէ»-ի միջեւ կապ գոյութիւն չունի։ Մինչդեռ, այս նամակից, որը հիմա կարդացուեցաւ է, հասկացւում է գոյութիւն ունեցող կապը։ Ի՞նչ կ՝ասէք։ Կարդացէ՛ք։

(Արձանագրող քարտուղար Շեֆիք պէյը ընթերցում է

Համակը):

ՄԻՏՀԱՏ ՇԻԼՔՐԻ ՊԷՅ ԷՖԵՆՏԻՆ

Յարգելի եղբայրս,

Պատասխանում եմ երէկ ստացուած 1330 (1914) Նոյեմբերի 15 թուագրութիւնը կրող գրութեանը։

Սրանից մէկ շաբաթ առաջ, Ներքին Գործերի նախարարութիւնից մութասարրիֆութեանս մի հրաման եկաւ, որ իմ լիվայի մէջ գտնուող չերքէզներից, բանտարկեալներից եւ այլ մարդկանցից, մօտ 200 հոգի հաւաքեմ եւ ուղարկեմ Կովկասում չեթէյութիւն անելու համար։ Այս գործը արդէն նախաձեռնուել է եւ հաւաքում ենք մարդկանց։ Առանց մանրամասնութիւնների մէջ մտնելու, մենք դրանց կը հաւաքենք եւ կ'ուղարկենք մի քանի օրուայ ընթացքում։ Այն ձեւով եւ պայմանով, ինչ կենտրոնական կոմիտէն է պահանջում՝ մեզ մօտ քիչ մարդիկ կը գտնուեն։ Կովկասի ժողովուրդներից Կարասիի լիվայում միայն չերքէզներ կան։ Լեզգի, չեչէն, վրացի կամ այլ ժողովուրդներից մարդ չկայ։ Այստեղ գտնուող չերքէզները, համարեա թէ ո՛չ ռուսերէն գիտեն, ո՛չ էլ ծանօթ են Կովկասի տարածքին եւ ո՛չ էլ երբեւէ եղել են այնտեղ։ Բայց եւ այնպէս զինուորական ծառայութեան մէջ չգտնուող եւ պահանջուած նկարագրով համարձակ մարդիկ կը գտնուեն։

Մենք կարող ենք մի քանի հարիւր (300–400) չերքէզ հաւաքագրել եւ ուղարկել, որոնք չեթէյութիւն կ'անեն բանակի առաջամասերում։ Միայն կապ հաստատելու համար, եթէ սահմանափակ թւով մարդկանց կարիքը զգացուի, ապա տարրական կրթութեամբ 5–10 հոգի կարելի է գտնել, որոնք քիչ թէ շատ կը կարողանան Կովկասի գիւղերում երկու խօսք ասել եւ [ժողովրդին] գրգռել։ Այդ մարդկանց անունները եւ բնակավայրերը արձանագրուած են։ Յետագայում, եթէ անհրաժեշտութիւն եւ հրաման լինի, մի քանի օրուայ ընթացքում կ'ուղարկենք։ Նրանք խօսքի տէր եւ յարգանքի արժանի մարդիկ են։ Չնայած Ներքին Գործերի նախարարութեան եւ բարձր յանձնաժողովի(78) պահանջածը տարբեր դասի մարդիկ են, բայց անհրաժեշտութեան դէպքում կը վարուենք, ինչպէս հարկն է։ Սպասում ենք ձեր պատասխանին։

Էֆենտի եղբայրս, պատրաստ եմ ձեր հրամանները կատարելու(79)։

Յարգանքներով՝ ձերդ Պալըքէսիրի տեսուչ՝ Մուսա։

20 Թեշրին-ի Սանի 1330 թ.
[1914 թ. Նոյեմբերի 20]

Շտապ ծանուցել Դոկտ. Նազըմ էֆենտի եղբօրս։

1914 թ. Նոյեմբերի 22

ՄԻՏՀԱՏ ՇԻՒՔՐԻ ՊԷՅ

Հաղցնել միատեսակ։ Անհրաժեշտ ծախսերը կատարել այդ վայրի բնակչութեան հաշուին եւ ուղարկել այստեղ։ Չինուելու են այստեղ։ Բարձր յանձնախմբի պահանջի դէպքում, նրանց ստուգումը կատարուելու է Եակուբ [Ճեմիլ] պէյի կողմից։

Միտհատ Շիւքրի պէյ — Ինչպէս ասել էի նախօրօք, կենտրոնական կոմիտէն ջանացել էր օժանդակել տուեալ պատերազմին։ Կովկասեան ժողովուրդների մէջ խռովութիւն սերմանելու համար անհրաժեշտ էր ուղարկել այդ տեղերին ծանօթ, լեզուներին տիրապետող մահմեդական մարդկանց։ Այս կապակցութեամբ, «Թեշքիլաթ-ը մահսուսէ»-ն ցանկացել էր, որպէսզի կենտրոնական կոմիտէն իր մասնաճիւղերի միջոցով հարցում կատարի եւ պատասխաններն էլ տեղեկացնի իրենց։ Մենք էլ հայրենասիրական նուիրումով կատարել ենք այդ յանձնարարականը եւ ստացուած պատասխանները նոյնութեամբ յայտնել «Թեշքիլաթ-ը մահսուսէ»-ին։ Մենք անձնապէս չենք զբաղուել այդ հարցով։

Նախագահ — Այնտեղ պարզ երեւում է, որ բարձր յանձնախմբի եւ Ներքին Գործերի նախարարութեան հրահանգները չեն համապատասխանում իրար։

Միտհատ Շիւքրի պէյ — Հնարաւոր է, որ Ներքին Գործերի նախարարութիւնը գրած լինի այլ դասի մարդկանց վերաբերեալ։ Ես ստոյգ չգիտեմ այդ մասին։

Նախագահ — Բարձր յանձնախումբ ասելով, ըստ երեւոյթին, նկատի ունէք ձեր կենտրոնական կոմիտէն։

Միտհատ Շիւքրի պէյ — Բնական է, որ իմ կողմից գրուած լինելու համար, պատասխանատու քարտուղարը չէր

կարող զանազանել։ «Թեշքիլաթ–ը մահուսէ»–ն ինչ դասի մարդկանց անհրաժեշտութեան մասին որ գրել է, մենք էլ նոյնութեամբ հաղորդել ենք մեր ակումբներին։ Մենք յայտնել էինք, որ մեր փնտռած մարդիկ՝ նամուսի տէր, լեզու իմացող, Կովկասի իրավիճակին ծանօթ եւ հեղինակութիւն վայելով անձնաւորութիւններ լինեն։ Իսկ Ներքին Գործերի նախարարութիւնը մութասարրիֆներից պահանջել է այլ մարդիկ(80)։ Ահա այս կապակցութեամբ մեզ հարցում են կատարել։ Այստեղից չի հասկացւում, որ «Թեշքիլաթ–ը մահուսէ»–ն կապ է ունեցել կենտրոնական կոմիտէի հետ։ Վստահ եղէք, որ կենտրոնական կոմիտէն բազմաթիւ թղթակցութիւններ էր ստանում այնպիսի հիմնարկութիւններից, ինչպիսիք են՝ որբանոցները, «Կարմիր մահիկ»ը, Լուսաւորութեան նախարարութիւնը եւ այլն։ Բնական է, որ ամէն մի գրութիւն չէր կարող իրար նման լինել։ Հետեւաբար, ես այն մտքին եմ, որ պատերազմի ընթացքում այս արարքը արժանի էր գնահատանքի։ Երբեք չէի կարծում, որ դրա համար յետագայում դատարանում կ'ենթարկուեմ յանդիմանութեան։ Այս արարքը գնահատման արժանի երեւոյթ էր, որովհետեւ ժամանակը այնպիսին էր, որ իւրաքանչիւր մարդ պէտք էր սրտանց ջանք թափէր երկրի պաշտպանութեան համար։ Այս արարքին, որ կողմից էլ մօտենաս, արժանի է գնահատանքի, նման ծառայութիւն կատարելը իւրաքանչիւրի համար հայրենասիրական պարտականութիւն էր։

Նախագահ — Կարդացէ՛ք։

(Արձանագրող քարտուղար Շեֆիք պէյը ընթերցում է)։

ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԿՈՄԻՏԷԻ ՅԱՐԳԱՐԺԱՆ ՅԱՆՁՆԱԽՄԲԻՆ

Սիրելի եղբայրներ,

Պատասխանում ենք 1914 Սեպտեմբերի 15-ի թուագրութեամբ ստացուած գաղտնի հրամանագրերին։

Սրանից առաջ բազմաթիւ նամակներ էին եկել բարձր յանձնախմբի կողմից, ուր նշուած էր սահմանների վրայ չեթէյութիւն անելու համար Սուլէյման Ասքերի պէյին անհրաժեշտ մարդկանց մասին։ Ներկայումս, ըստ երեւոյթին, դրա անհրաժեշտութիւնը զգացուել է, որ շտապ հրաման է առաքուել այդ գործը կազմակերպելու եւ անհրաժեշտ մարդկանց ուղարկելու։ Երկու օր առաջ էլ, Ներքին Գործերի նախարարութիւնից վիլայէթին ուղարկուած ծածկագիր եկաւ, որը հրամայում էր՝ մէկ շաբաթուայ ընթացքում երկու հարիւր հոգի պատրաստել եւ ուղարկել։ Միւֆթի պէյի(81) հետ տեսակցելուց յետոյ անցանք գործի։ Արդէն 200 հոգու ցուցակը կազմել ենք, բայց երբ ուշադրութիւն դարձուեց «զինծառայութեան հետ առնչութիւն չունենալու» նշման վրայ, բնականօրէն, վերոյիշեալ թիւը պակասեց։ Կառավարութիւնը(82) պահանջում է, որ դատապարտեալներն ու աւազակային նկարագիր ունեցողները նոյնպէս ուղարկուեն, բայց ձեր կողմից նշուած «առաւել լաւ նկարագիր ունեցող անձանց ուղարկելու» պահանջի վրայ, եթէ ուշադրութիւն դարձուի՝ այդ մարդկանց թիւը նոյնպէս կը նուազի։

1893 եւ 1894 թուականների ծնուածներն արդէն ընդգրկուած են զինուորական ծառայութեան մէջ։ 19-ից մինչեւ 45 տարեկան զինապարտների շարքերից նման անհրաժեշտ մարդկանց ընտրելը բաւականին դժուար է լինելու։ Ինչպէս երեւում է, դատապարտուածների եւ աւազակային նկարագիր ունեցող մարդկանց հաւաքագրելն ու ուղարկելը օրէնքը գործադրելու տեսանկիւնից թոյլատրելի է, եւ այս հանգամանքը առաւել նպաստաւոր կը լինի երկրում հանդարտութիւն պահպանելու համար։ Զինապարտների, ոչ-մահմեդականների եւ ընդհանրապէս 20-40 տարեկան մարդկանց մէջ կան բազմաթիւ նուիրուած մարդիկ։ Կառավարութեան ցանկութեամբ, եթէ դատապարտուածների ու աւազակային նկարագիր ունեցողների հետ միւս զինապարտները եւս ընդգրկուեն, ապա հնարաւոր կը լինի չեթէյութեան համար Պրուսայի վիլայից հաւաքագրել 500-ից մինչեւ 1,000 հոգի։ Եթէ այս ծրագրին հաւանութիւն տաք, պատասխանէք (այո կամ ոչ), հեռագրով։ Բոլոր դէպքերում, ես նախապատրաստական աշխատանքներ եմ կատարում, եւ համաձայն՝ հրահանգի, պատրաստ եմ ներկայացնելու հաւաքագրուած մարդկանց ցուցակը։

Յարգանքներով՝ Իպրահիմ

19-9-1330 թ.
[1914 թ. Սեպտեմբերի 19]

(Օսմանեան Իթթիհատ վէ Թերաքքի կուսակցութեան Պրուսայի վիլայէթի կենտրոնի կնիքը։)

Միտհատ Շիւքրի պէյ — *Ո՞ւմ է յղուած, էֆենտի։ Բնական է, որ «Թեշքիլաթ-ը մահսուսէ»-ին։*

Նախագահ — *Որեւէ մէկի նկատմամբ յղում կա՞յ։*

Շեֆիք պէյ — *Ո՛չ, չկայ*(83)։

Աթիֆ պէյի հարցաքննութիւնը

Նախագահ — *Աթիֆ պէյ, «Միութիւն եւ Առաջադիմութիւն» կուսակցութեան պատասխանատու քարտուղարները մի շարք վիլայէթներում եւ մութասարրիֆութիւններում կոտորածին վերաբերող գաղտնի հրահանգներ են տուել վալիներին եւ մութասարրիֆներին, որոնցից մի քանիսը չեն հնազանդուել։ Այդ մասին յայտնուել է կենտրոնական կոմիտէ, որտեղից եւ շտապ հրաման է տրուել պաշտօնազրկելու մասին։*

Աթիֆ պէյ — *Տեղեկութիւն չունեմ։ Բայց լսել եմ, որ կատարուած հետաքննութիւնների հիման վրայ մի քանիսը հեռացուել են պաշտօնից։ Այս կապակցութեամբ, Պրուսայի ներկայացուցիչը անմիջապէս հեռացուել է...*

Նախագահ — *Ո՛չ, բողոքը ձեր պատասխանատու քարտուղարի մասին չէ, այլ վալիների։ Այն վալիները եւ մութասարրիֆները, որոնք հրաժարուել են կատարելու ձեր պատասխանատու քարտուղարների հրահանգները, պաշտօնազրկուել են։*

Աթիֆ պէյ — *Ո՛չ, այդպիսի բան չեմ լսել։ Ոչ մի տեղեկութիւն չունեմ։*

Նախագահ — *Օրինակ՝ Անգարայի վալի՝ Մազհար պէյը, Քաստամոնուի վալի՝ Ռեշիտ փաշան, կոտորածի հրամանները չկատարելու համար, անմիջապէս հեռացուել են պաշտօնից։ Այդ մասին չէ՞ք լսել։*

Ալիֆ պէյ — Միայն Ռեշիտ փաշայի մասին եմ լսել։ Մի օրէնք հանեցին տարիքաւոր վալիները փոխարինելու մասին։ Այդ պատճառով է, որ նա հեռացաւ պաշտօնից, յետոյ էլ պատգամաւոր դարձաւ։

Նախագահ — Անգարայի վալի Մազհար պէյը կենտրոնական կոմիտէի կողմից ուղարկուած Ալիֆ պէյի կարգադրութիւնը չկատարելու համար, յաջորդ օրը պաշտօնազրկուել է, իսկ նրան փոխարինել է Ալիֆ պէյը։ Այդպէս են վկայում։ Այդ Ալիֆ պէյը դո՞ւք էք։

Ալիֆ պէյ — Ո՛չ, ես Անգարա չեմ գնացել, միւս Ալիֆ պէյն է(84)։

Նախագահ — Հնարաւոր է։ Այդ մասին տեղեկութիւն չունէ՞ք։

Ալիֆ պէյ — Ո՛չ։

Նախագահ — Դուք չէ՞ք լսել այդպիսի մի պաշտօնում նշանակուելը։

Ալիֆ պէյ — Անգարայի վալիի պաշտօ՞նի համար։

Նախագահ — Այո՛։

Ալիֆ պէյ — Նշանակում եղաւ։

Նախագահ — Շատ լաւ։ Այդ նշանակման դրդապատճառը քննարկման նիւթ չդարձա՞ւ։

Ալիֆ պէյ — Զգիտեմ։

Նախագահ — Այդ պաշտօնի նշանակման խնդրին դուք չէ՞ք մասնակցել։

Ալիֆ պէյ — Ո՛չ։

Նախագահ — Ռեշիտ փաշան, ինչպէս նաեւ Եոզղաթի մութասարրիֆ Ճեմալ պէյը, այս պատճառով են պաշտօնազրկուել։ Այդ կապակցութեամբ որեւէ բան լսե՞լ էք։

Ալիֆ պէյ — Ո՛չ, էֆենտի։

Նախագահ — Պատերազմի ընթացքում բռնագրաւուել են օտար պետութիւններին պատկանող մի շարք շինութիւններ։ Ի՞նչ գիտէք այդ մասին։

Ալիֆ պէյ — Այո՛, լսել եմ, էֆենտի։ Կառավարու-

թեան կողմից բռնագրաւուել են հակառակորդ պետութիւններին պատկանող շինութիւնները։ Այդ որոշումը տրուել է կառավարութեան կողմից։ Բռնագրաւուել են Լուսաւորութեան [նախարարութեան] կողմից։

Նախագահ — Ասում են, որ այդ որոշումը կայացուել է կուսակցութեան կողմից։

Աթիֆ պէյ — Չեմ լսել։

Նախագահ — Այդ շինութիւնները ենթարկուել են որոշակի փոփոխութեան։ Այսինքն՝ այդ շէնքերի որոշ մասերը քանդուել եւ որոշ տեղերն էլ փոփոխութեան են ենթարկուել։ Այդ մասին տեղեկութիւն ունէ՞ք։

Աթիֆ պէյ — Լսել եմ...

Նախագահ — Ընթերցուելու է երկու փաստաթուղթ։ Լսէ՛ք եւ յայտնէք ձեր կարծիքը։

[Արձանագրող քարտուղարը կարդում է վերոյիշեալ վաւերագրերը]։

Աթիֆ պէյ — Նախօրօք յայտնել էի, որ [Ստամպուլից] դուրս առանձին կազմակերպութիւններ չունենալու պատճառով, «Թեշքիլաթ-ը մահսուսէ»-ն որոշել էր օգտուել կուսակցութեան մասնաճիւղերից։ Այդ մասին ես խնդրել էի Միտհատ [Շիւքրի] պէյին։ Միտհատ Շիւքրի պէյն էլ գրել է։ Սա դրա պատասխանն է։

Նախագահ — Դուք ասացիք, որ «Թեշքիլաթ-ը մահսուսէ»-ն կապուած է եղել զինուորականութեան հետ։ Եթէ այդպէս է, ապա նման մարդիկ հաւաքագրուելու էին զինուորական մասնաճիւղերի կողմից։ Համազգեստը, պարենաւորումը, ճանապարհածախսը, զինումը եւ այլ ծախսերը հոգացուելու էին նրանց կողմից։ Այս գրութիւնից հասկացւում է, որ այդ գործը կատարուել է հանգանակութեան միջոցով։ Յետոյ այդ գործին միջամտել է Ներքին Գործերի նախարարութիւնը։ Հրամանները տուել է

կենտրոնական կոմիտէն։ Դուք շատ լաւ գիտէք, որ Ռազմական նախարարութեան գործերի մէջ նման բաներ չեն կարող տեղի ունենալ։

Աթիֆ պէյ — էֆենտի, մենք մտել էինք մի մեծ պատերազմի մէջ։ Պետութիւնը կենաց մահու պայքար էր մղում։ Ռազմական նախարարութիւնը զբաղուած էր միմիայն իր բանակներով։ Նա մտածել էր օգտուել այսպիսի ազգային ուժերից, եւ այդ հարցում օգնելու համար, նախատեսել էր մեզ։ Բնական է, որ մենք էլ օգտուեցինք այդ յատուկ ուժերից։

Նախագահ — Ուրեմն «Թեշքիլաթ-ը մահսուսէ»-ն ստեղծուել է կենտրոնական կոմիտէի կողմից։

Աթիֆ պէյ — Ո՛չ թէ ստեղծուել, այլ մասամբ օժանդակել է նրա գործունէութեանը։

Նախագահ — Ծառայութի՞ւն է մատուցել։

Աթիֆ պէյ — Այո՛։

Նախագահ — Բայց եւ այնպէս [կուսակցութեան] կենտրոնական կոմիտէի եւ Ներքին Գործերի նախարարութեան կողմից տրուած հրամանների միջեւ հակասութիւններ գոյութիւն ունեն։

Աթիֆ պէյ — Հակասութիւն չկայ, էֆենտի։ Մենք ուզում էինք ուղարկել յատկապէս տուեալ վայրին ծանօթ մարդկանց։ Ուզում էինք այնտեղ չեթէներ պատրաստել։ Այսինքն՝ ամէն տեսակից էլ ուզում էինք։

Նախագահ — Զհասկացայ։

Աթիֆ պէյ — Ներքին Գործերի նախարարութեան հետ հակասութիւն չունէինք։ Մենք՝ այսինքն «Թեշքիլաթ»-ը մահսուսէ»-ն ուզում էր, որ այն լինի ընդհանուր եւ ամբողջական։

Նախագահ — (Խօսքն ուղղելով արձանագրող քարտուղարին)՝ Կարդացէ՛ք։

(Քարտուղարը կարդում է վաւերագրերի վերնագիրը)։

Նախագահ — Տեսնո՞ւմ էք. վերնագրում ասուած է «Կենտրոնական կոմիտէի յարգարժան յանձնախմբին»։

Աթիֆ պէյ — Ո՛չ, էֆենտի. պատասխանատու քարտուղարները անձամբ Միտհատ պէյին են գրում։ «Կենտրոնական կոմիտէ» ասւում է, բայց այն ուղղուած է Միտհատ պէյին։

Նախագահ — Քիչ առաջուայ ընթերցուածը ուղղուած էր Միտհատ պէյին։ (Խօսքն ուղղելով արձանագրող քարտուղարին)՝ Կարդացէ՛ք։

(Քարտուղարը կրկին ընթերցում է միւս փաստաթղթերը)։

Նախագահ — Տեսնո՞ւմ էք, այստեղ կենտրոնական կոմիտէի եւ Ներքին Գործերի նախարարութեան հրահանգների միջեւ հակասութիւն կայ։ Մէկը ուզում է հաւաքագրել յանցագործներին եւ օգտագործել նրանց այդ գործերի մէջ, մինչդեռ միւսը՝ սրան հակառակ կարծիք է յայտնում։ Ի՞նչ կ՚ասէք այդ մասին։

Աթիֆ պէյ — Այդպիսի տարաձայնութիւն կարող էր լինել։

Նախագահ — Կենտրոնական կոմիտէն չի բաւարարւում հրահանգ տալով, այլ միջամտելով՝ ասում է. «Այս գործը այսպէս կամ այնպէս արէ՛ք»։

Աթիֆ պէյ — Այո՛, իր կարծիքն է յայտնում։

Նախագահ — Կենտրոնական կոմիտէի հրահանգը կարո՞ղ էր արդեօք պատասխանատու քարտուղարների կողմից քննարկման նիւթ դառնալ։ Չէ՞ որ այն յանձնարարական հրահանգ էր։

Աթիֆ պէյ — Կենտրոնական կոմիտէի հրահանգը, բնական է, մի յանձնարարական է, պատասխանատու քարտուղարներն էլ իրենց կարծիքն են յայտնում այդ մասին։

Նախագահ — Պատասխանատու քարտուղարն իր կար-

ծիքն էր գրում, բայց հասկացուում է, որ Ներքին Գործերի նախարարութեան տուած հրահանգները հակասում են ձեր այնինչ թուագրութիւնը կրող պահանջին։ Եթէ «Թեշքիլաթ-ը մահսուսէ»-ի անձնակազմները հաւաքագրուել են Ներքին Գործերի նախարարութեան կողմից, հապա ինչո՞ւ կենտրոնական կոմիտէն դրան հակառակ հրաման է տուել։ Այս փաստաթղթերում գրուած է հակառակ լինելու մասին։ Ձեր ներկայացուցիչը հարցնում է ինչ անելու մասին։ Ներքին Գործերի նախարարութիւնը կողմնակից է «Թեշքիլաթ-ը մահսուսէ»-ի հետ, իսկ կենտրոնական կոմիտէն այլ կարծիք է տալիս։ Դուք ինչպէ՞ս լուծեցիք այդ հարցը։

Աթիֆ պէյ — Էֆենտի՛, մեզ իրաւունք էր տրուած այդ մարդկանց այստեղ բերելուց յետոյ պարենաւորել, զինել եւ ուղարկել։ Ըստ երեւոյթին, Ռազմական նախարարը հայցել է Ներքին Գործերի նախարարի օժանդակութիւնը եւ ասել, որ այս բոլորը կատարուի Ներքին Գործերի նախարարի միջոցով։ Հաւանական է, որ նրան բացատրել են այդպէս։ Ներքին Գործերի նախարարն էլ այդպէս է գրել, իսկ մենք աւելի մանրամասն ենք գրել։ Այդպիսի տարբերութիւններ կարող են լինել։

Նախագահ — Այս երկու հեռագրերը ուղղուած են ձեզ։ Դուք ինչպէ՞ս վարուեցիք։

Աթիֆ պէյ — Ձեմ կարողանում յիշել։ Միգուցէ այդ գործին վերաբերող մի բան գտնուի թղթապանակների մէջ։ Հինգ տարի առաջ տեղի ունեցած դէպք է, մանրամասնութիւնները չեմ կարող յիշել։

Նախագահ — Յանցագործներին բանտից հանեցի՞ք։

Աթիֆ պէյ — Պիտի հանուէին, յետոյ ասուեց, որ այն Այս շատ կարեւոր է՝ գլխաւոր հարցերից մէկը։

օրինականացուի։ Այս կապակցութեամբ օրէնք կազմուեց եւ որքան գիտեմ՝ բանտերից հանուեցին այդ օրէնքի հիման վրայ։ Այդպիսի յանցագործների ուղարկումը ընդունուած է նաեւ այլ երկրներում։

Նախագահ — *Այդ ուրիշ հարց է. դուք ո՞ր կողմն էիք պաշտպանում։*

Աթիֆ պէյ — *Բոլորովին չեմ յիշում*(85)։

Takvim-i Vekai, 14 Mayis 1335 (1919) № 3557

ՆՈՐԻՆ ՄԵԾՈՒԹԻՒՆ ՓԱՏԻՃԱՀԻ 1335 Թ. (1919) ՄԱՐՏԻ 8-Ի ԿԱՅՍԵՐԱԿԱՆ ՀՐԱՄԱՆՈՎ ԿԱԶՄՈՒԱԾ ՌԱԶՄԱԿԱՆ ԱՐՏԱԿԱՐԳ ԱՏԵԱՆԻ ԴԱՏԱՎԱՐՈՒԹԵԱՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹԻՒՆԸ(86)։

Նախագահ՝ գեներալ-լեյտենանտ Նազըմ փաշա,
Անդամներ՝ գեներալ-մայոր Զեքի փաշա,
Գեներալ-մայոր Մուստաֆա փաշա,
Գեներալ-մայոր Ալի Նազըմ փաշա,
Գնդապետ՝ Ռեճեպ Ֆերտի պէյ։
Գերագոյն դատախազի օգնական՝ Ֆերիտուն պէյ։

ԱՌԱՋԻՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹԻՒՆ(87)
1335 Թ. (1919) Յունիս 3

Դատի տրուած ներկայ գտնուող մեղադրեալների անունները — *Սայիտ Հալիմ փաշա, Հայրի էֆենտի, Մուսա Քեազիմ էֆենտի, Խալիլ պէյ, Ահմետ Նեսիմի պէյ, Իսմայիլ Ճանփոլատ պէյ, Ապպաս Հալիմ փաշա, Իպրահիմ պէյ, Շիւքրի պէյ, Մուստաֆա Շերեֆ պէյ, Քեմալ պէյ, Ալի Միւնիֆ պէյ, Հիւսէյն Հաշիմ պէյ։*

Հեռակայ կարգով դատի տրուած մեղադրեալների անունները — *Թալաաթ էֆենտի, Էնվեր էֆենտի, Ճեմալ էֆենտի, Դոկտ. Նազըմ պէյ։*(88)

Նախագահ — (Խօսքն ուղղելով Մուսա Քեազիմ էֆենտիին)՝ Ձեր անունը։

Նախկին Շէյխ-ուլ Իսլամ Մուսա Քեազիմ էֆենտի — *Մուսա Քեազիմ։*

Նախագահ — *Հայրանո՞ւնը։*

Մուսա Քեազիմ էֆենտի — *Իպրահիմ։*

Նախագահ — *Քանի՞ տարեկան էք։*

Մուսա Քեազիմ էֆենտի — *Յիսունուլթ։*

Նախագահ — *Որտե՞ղ էք ծնուել։*

Մուսա Քեազիմ էֆենտի — *Թորթումում։*

Նախագահ — *Որտե՞ղ էք բնակւում։*

Մուսա Քեազիմ էֆենտի — *Ճերրախ փաշա*(89)։

Նախագահ — *Ներկայ պաշտօ՞նը։*

Մուսա Քեազիմ էֆենտի — *Աւագանի։*

Նախագահ — *Նախկին պաշտօ՞նը։*

Մուսա Քեազիմ էֆենտի — *Շէյխ ուլ-իսլամ։*

Նախագահ — (*Խօսքն ուղղելով Ռիֆաթ պէյին*)՝ *Ձեր անո՞ւնը։*

Սենատի նախկին նախագահ Ռիֆաթ պէյ — *Ռիֆաթ։*

Նախագահ — *Հայրանո՞ւնը։*

Ռիֆաթ պէյ — *Հաճի Ահմետ։*

Նախագահ — *Քանի՞ տարեկան էք։*

Ռիֆաթ պէյ — *Վաթսուներկու։*

Նախագահ — *Որտե՞ղ էք ծնուել։*

Ռիֆաթ պէյ — *Ատանայում։*

Նախագահ — *Որտե՞ղ էք բնակւում։*

Ռիֆաթ պէյ — *Շիշլիում։*(90)

Նախագահ — *Ձեր կրթութի՞ւնը։*

Ռիֆաթ պէյ — *Միջնակարգ։*

Նախագահ — *Ներկայ պաշտօ՞նը։*

Ռիֆաթ պէյ — *Աւագանի։*

Նախագահ — *Նախկին պաշտօ՞նը։*

Ռիֆաթ պէյ — *Սենատի նախագահ։*

Նախագահ — (*Խօսքն ուղղելով Հաշիմ պէյին*)՝ *Ձեր անո՞ւնը։*

Փոստի եւ Հեռագրատան նախկին նախարար Հաշիմ պէյ — *Հիւսէյն Հաշիմ։*

Նախագահ — *Հայրանո՞ւնը։*

Հաշիմ պէյ — *Մեհմետ Նասեր։*

Նախագահ — *Քանի՞ տարեկան էք։*

Հաշիմ պէյ — *Քառասունհինգ։*

Նախագահ — *Որտե՞ղ էք ծնուել։*

Հաշիմ պէյ — *Ստամպուլում։*

Նախագահ — *Որտե՞ղ էք բնակւում։*

Հաշիմ պէյ — *Իւսկիւտար, Սուլթան Թեւֆիքի թաղում։*

Նախագահ — *Ձեր կրթութիւնը։*

Հաշիմ պէյ — *Բարձրագոյն։*

Նախագահ — *Ներկայ պաշտօ՞նը*

Հաշիմ պէյ — *Ներկայումս պաշտօն չունեմ։*

Նախագահ — *Նախկին պաշտօ՞նը։*

Հաշիմ պէյ — *Փոստի եւ Հեռագրատան նախարար։*

Նախագահ — *(Խօսքն ուղղելով արձանագրող քարտուղար Շեֆիք պէյին), Կարդացէ՛ք միւսներին վերաբերող որոշումը։*

ՌԱԶՄԱԿԱՆ ԱՐՏԱԿԱՐԳ ԱՏԵԱՆԻ ՎՍԵՄԱՓԱՅԼ ՆԱԽԱԳԱՀՈՒԹԵԱՆԸ

Տեղեկացնում ենք, որ դատաքննութեան համար պահանջուող անձերը [Մայիս] ամսի 28-ին՝ Չորեքշաբթի օրը, ժամը 2։30-ին յանձնուել են անգլիական հրամանատարութեան կողմից ուղարկուած մի մայորի տրամադրութեանը։(91)

1919 *թ. Մայիսի* 28

Ստամպուլի կալանատան տեսուչ՝ Սեյիտ

Նախագահ — *(Խօսքն ուղղելով դատախազին)՝ Ի՞նչ կարծիքի էք։*

Դատախազի օգնական Ֆերիտուն պէյ — Բանտում

կալանքի տակ գտնուող Սայիտ Հալիմ փաշան(92) եւ նրա միւս գործընկերները Մեծ Բրիտանիոյ դիւանագիտական ներկայացուցչութեան կողմից վերցուելով, տարուել են անյայտ ուղղութեամբ։ Քրէական օրէնսգրքի կանոնագրութեան համաձայն պահանջում եմ այդ մարդկանց դատաքննութիւնը կարճել։

Նախագահ — Այս հարցը անհրաժեշտ է քննարկել։

(Դատական յանձնախումբը դուրս է գալիս եւ որոշ ժամանակ անց կրկին վերադառնում է դահլիճ)։

Նախագահ — (Խօսքն ուղղելով արձանագրող քարտուղար Շեֆիք պէյին)՝ Վճիռը կարդացէ՛ք։

Ստամպուլի կալանատան տեսչութեան կողմից եկած տեղեկագիրը, քննարկուելուց յետոյ, պարզուեց որ մեղադրեալներ՝ նախկին մեծ վեզիր Սայիտ Հալիմ փաշան, նախկին Հասարակական Աշխատանքների նախարար՝ Ապպաս Հալիմ փաշան, նախկին Շէյխ ուլ-իսլամ՝ Հայրի էֆենտին, նախկին Արտաքին Գործերի նախարար՝ Խալիլ պէյը, նախկին Արդարադատութեան նախարար՝ Իպրահիմ պէյը, նախկին Արդարադատութեան նախարար՝ Իսմայիլ Ճանպէյը, նախկին Ներքին Գործերի նախարար՝ Իսմայիլ պէյը(93), նախկին Հասարակական աշխատանքներ՝ Ալի Միւնիֆ պէյը, նախկին Հանրակրթարի նախարար՝ Շիւքրի պէյը, նախկին Պարենաւորման նախարար՝ Քեմալ պէյը, ինչպէս նաեւ կալանքի տակ գտնուող միւս 77 մեղադրեալները, դաշնակից պետութիւնների կողմից վերցուելով, տեղափոխուել են մի այլ վայր։ Այդ իսկ պատճառով կայացուեց հետեւեալ որոշումը։

Նկատի ունենալով, որ վերոյիշեալները, անկախ իրենց կամքից չեն կարող ներկայանալ [դատարան], առայժմ նրանց հանդէպ յարուցուած դատաքննութիւնը կարճուում է։ Առեւտրի եւ Հողագործութեան նախարար՝ Մուստաֆա

Շերեֆ պէյի մասին առ այսօր որեւէ տեղեկութիւն չկայ։ Ուստի, մինչեւ նրա ներկայանալը, դատավարութիւնը ըստ օրէնքի յետաձգւում է։

Նախագահ — Կարդացէ՛ք մեղադրական եզրակացութիւնը։

ՄԵՂԱԴՐԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹԻՒՆ(94)

... Ոմն գալաթացի Խալիլի մահուան վճիռը(95) բովանդակող փաստաթղթից պարզ երեւում է, որ կենտրոնական կոմիտէի անդամները, նրա [շրջանային] պատասխանատու քարտուղարներն ու ներկայացուցիչները անիրաւասու ընդգրկուած են եղել կուսակցութեան պարագլուխների գաղտնի խմբաւորման կազմում։ Իսկ Մէճլիսի ընդհանուր կազմը բաղկացած է եղել կենտրոնական կոմիտէի անդամներից, նախարարներից եւ մի քանի պատգամաւորներից։ Այդպիսով, Մէճլիսի անդամների կարեւոր մասը, եթէ բաղկացած լինի կուսակցութեան նման գաղտնի խմբաւորում ունեցող պարագլուխներից, ապա լիովին ակներեւ կը դառնայ նրա բուն էութիւնը։ Յատկապէս մեղադրեալ Իսմայիլ Ճանփոլատ պէյի խոստովանութիւնից պարզ երեւում է, որ կառավարութեանը վերաբերող հարցերը յաճախակի քննարկման նիւթ են դարձել կուսակցութեան կենտրոնական կոմիտէում։ Այս պարագան ցոյց է տալիս, թէ ի՛նչ աստիճանի ազդեցութիւն է ունեցել կենտրոնական կոմիտէն եւ ինչպէ՛ս է միջամտել պետական գործերին։

Ձեռնարկուող միջոցառումներին, ընթացիկ քննարկումներին եւ ընդունուած որոշումներին վերաբերող, եւ որպէս ապացոյց հանդիսացող արձանագրութիւնները անյայտացնելու եւ կամ թաքցնելու երեւոյթից կարելի է եզրակացնել, որ կենտրոնական կոմիտէն եւ ընդհանուր Մէճլիսը զանազան թաքուն գործերով համագործակցել են

իրար հետ։ Յատուկ օրէնքի(96) համաձայն, այլ վայրեր տարագրուողների քարաւանները ենթարկուել են յատուկ նպատակով կազմակերպուած հրոսակախմբերի յարձակումներին եւ ոչնչացուել, իսկ նրանց ունեցուածքն ու կահկարասին՝ ենթարկուել կողոպուտի։ Եւ այդ [արարքները] երկիրը հասցրել են ծայրաստիճան խռովայոյզ եւ տագնապալի մի իրավիճակի։ Իսկ կառավարութիւնը ոչ միայն չի պատժել եւ արգելել այդ կոտորածներն ու կողոպուտները սանձազերծող յանցագործներին, այլ ընդհակառակը, պաշտօնից հեռացրել է այն վալիներին եւ մութասարրիֆներին, որոնք պատասխանատուութիւնը իրենց վրայ յանձն առնելով, հրաժարուել են գործադրել այդ տեղահանութիւններն ու կոտորածները։

Մի առանձին համայնք կազմող ամբողջ ժողովուրդին այդ ձեւով կոտորելը, բնաջնջելը եւ ունեցուածքի յափշտակութիւնը մտայղացուել եւ իրագործուել է կուսակցութեան այդ գաղտնի խմբաւորման արնախում [մարդկանց] կողմից։ Եւ այդ խմբաւորման պարագլուխներն են եղել կուսակցութեան կենտրոնական կոմիտէի անդամներ՝ Պեհաէտտին Շաքիր, Դոկտ. Նազըմ, Ռիզա եւ Ալիֆ պէյերը։ Ձեռք բերուած եւ վերծանուած ծածկագիր հեռագրերից պարզւում է, որ այս չարագործ յանձնախումբը(97) իշխող դիրք է ունեցել պետութեան վրայ, իսկ կառավարութիւնն էլ պարզ խաղալիք էր դարձել նրանց անարգ մտայղացումները իրագործելու խնդրում։

Նախկին մեծ վեզիր Իզզեթ փաշայի Ռազմական նախարարութիւնից հրաժարական տալու դրդապատճառը նոյնպէս հանդիսացել է պետական կառավարման մէջ մի հանրահաբեկչական ներքին ուժի ազդեցութեան արդիւնքը։ Սահմանադրութեան սկզբունքները կատարելապէս ոտնահարուած էին այդ տարօրինակ պետութեան մէջ, երբ Էնվեր եւ Ճեմալ էֆենտիները նշանակուեցին Ռազմական եւ Ծովային նախարարների պաշտօններում, կառավարութեան

ղեկը կատարելապէս անցաւ նրանց իշխանութեան ձեռքը։ Այդպիսով, մեծ ազդեցութիւն բանեցնելով օրինական կառավարութեան վրայ, սկսեցին բացայայտօրէն գործադրել իրենց քմահաճ ցանկութիւններն ու նպատակները։

«Միութիւն եւ Առաջադիմութիւն» [կուսակցութեան] կենտրոնական կոմիտէի անարգ եւ նենգ մտայղացումներն ու հիմնական ծրագրերը կեանքի են կոչուել մեծ վեզիր Թալաաթ էֆենտիի՝ Էնվերի եւ Ճեմալի կողմից։ Ի սկզբանէ, կուսակցութեան որոշումների իրագործմանը հոգեպէս եւ ամբողջ էութեամբ նուիրուել են նաեւ նախկին մեծ վեզիր՝ Սայիտ Հալիմ փաշան, նախկին Շէյխ ուլ-իսլամ՝ Հայտար էֆենտին, Հանրակրթական նախկին նախարար՝ Շիւքրի պէյը, Արդարադատութեան նախկին նախարար՝ Խալիլ պէյը, Պետական խորհրդի նախկին նախագահ՝ Իպրահիմ պէյը, Արտաքին Գործերի նախկին նախարար՝ Ահմետ Նեսիմի պէյը եւ Պարենաւորման նախկին նախարար՝ Քեմալ պէյը։ Ինչպէս վերեւում մանրամասն բացայայտուեց, սրանց սերտ համագործակցութիւնը առաջ է բերել մի ահաբեկչման ուժ, որը եւ գերիշխել է օրինական կառավարութեան վրայ։ Այսպիսով, ժողովրդի մէջ վախ ու սարսափ տարածելով՝ երկրի կառավարումը բռնի ուժով շեղել են իր օրինական ընթացքից։ Վերոյիշեալ յանցագործ արարքներն առնչւում են կայսերական քրէական 55-րդ յօդուածի 5-րդ մասի եւ 45-րդ յօդուածի բովանդակութեան հետ։ Այդ մեղադրանքով էլ նրանց գործը դատաքննութեան է ենթարկւում Ռազմական արտակարգ ատեանում։

Նախկին Շէյխ ուլ-իսլամ Մուսա Քեազիմ էֆենտիի եւ Հասարակական Աշխատանքների նախկին նախարար՝ Ապպաս Հալիմ փաշայի կողմից կատարուած յանցագործութեան աստիճանը դեռեւս չի բացայայտուած։ Փոստի եւ Հեռագրատան նախկին նախարար՝ Հիւսէյն Հաշիմ պէյի, Ալի Միւնիֆ պէյի եւ Մուստաֆա Շերեֆ պէյի նա-

խարարի պաշտօնում աւելի ուշ նշանակուելու, ինչպէս նաեւ Իսմայիլ Ճանփոլատ պէյը իր վարած պաշտօնում կողմնակի միջամտութիւններից դժգոհութիւն յայտնելով՝ հեռանալու հանգամանքները, հիմք են տալիս կարճելու նրանց նկատմամբ յարուցուած դատական գործը։

Կալանքի տակ գտնուող միւս անձանց նկատմամբ այլ հարցանշաններ չլինելու դէպքում, ազատ արձակման պահանջ է ներկայացուելու։

1335 թ. (1919) Մայիսի 22

ՈՐՈՇՈՒՄ

Տարբեր աստիճաններով դատաքննութեան ենթարկելու որոշում է կայացուել «Միութիւն եւ Առաջադիմութիւն» կուսակցութեան այն անդամների եւ ղեկավարների նկատմամբ, որոնք ամբաստանուել էին մայրաքաղաքում եւ այլ վայրերում կանխամտածուած կերպով կազմակերպուած կոտորածների, կողոպուտի, գիւղերի աւերման, տների եւ մարդկանց հրկիզման, բռնաբարութեան եւ այլ դաժանաբարոյ յանցագործութիւնների համար։

Փախուստի մէջ գտնուող մեղադրեալներ՝ Թալաաթ, Ճեմալ եւ Էնվեր էֆենտիների եւ նրանց միւս մեղսակիցների նկատմամբ 1919 թ. Ապրիլի 12 թուագրութիւնը կրող մեղադրականի հիման վրայ կատարուած դատաքննութեան ընթացքում, Ռազմական արտակարգ ատեանը իրազեկ դարձաւ տեղի ունեցած այլ յանցագործութիւններին եւս, եւ քրէական օրէնսգրքի 331-րդ յօդուածի հիման վրայ, որոշեց մանրակրկիտ հետաքննութիւն կատարել փախուստի մէջ գտնուող յիշեալ մեղադրեալների, նրանց մեղսակիցների, այդ թւում՝ մեծ վեզիր Սայիտ Հալիմ փաշայի, Խալիլ, Իպրահիմ, Քեմալ, Ահմետ Նեսիմի, Ահմետ Շիւքրի պէյերի, ինչպէս նաեւ նախապէս դատա-

րան չներկայացած միւս մեղսակիցների նկատմամբ։ Դատաքննութեան ենթարկելու այս պահանջը հաստատուել էր նաեւ գլխաւոր դատախազութեան 1335 (1919) թուականի Մայիսի 3-ի մեղադրական եզրակացութեամբ։ Այսպիսով, յանձնախումբը մանրակրկիտ քննարկեց հարցաքննութեան նիւթերն ու ներկայացուած մեղադրականները։

Ցայտնի է, որ «Միութիւն եւ Առաջադիմութիւն» կուսակցութիւնը ստեղծուել էր քաղաքական նպատակներով ու այդ ուղղութեամբ կազմուել էր մի կանոնադրութիւն։ Կուսակցութիւնը քաղաքական ուղղութիւնից բացի ունեցել է նաեւ լեգալ եւ անլեգալ զանազան կազմակերպութիւններ։ Օրինակ՝ «Թեշքիլաթ-ը մահսուսէ»-ն ստեղծուել է [կուսակցութեան] ամենաազդեցիկ անդամներ՝ Դոկտ. Նազըմի, Աթիֆի, Պեհաէտտին Շաքիրի եւ նրանց միւս գործընկերների ամենասերտ աջակցութեամբ։ Բացի այդ, կենտրոնական կոմիտէի անդամ՝ Քեմալ պէյի եւ նրա գործընկերների մասնակցութեամբ կազմուել է նաեւ մի «պարենային յանձնախումբ»։

Վերոյիշեալ մեղադրականում(98) մանրամասն նկարագրուած է կուսակցութեան կենտրոնական կոմիտէի եւ նրա յանձնախմբերի գործունէութիւնը եւ այստեղ այդ բոլորը վերստին կրկնելու անհրաժեշտութիւնը չկայ։ Որպէս ապացոյց՝ բերուած գրութիւններից պարզւում է, որ «Միութիւն եւ Առաջադիմութիւն» կուսակցութեան կենտրոնական կոմիտէն իր գաղտնի նպատակներն ու ծրագրերը բոլոր ազգերի նկատմամբ հետեւողականօրէն իրագործելու համար դիմել է ահաբեկչական տարբեր միջոցների։ Նոյնիսկ իր գաղափարներին եւ ծրագրերին հակառակող անձանց նկատմամբ կայացրել է մահապատժի վճիռ, ինչպէս օրինակ՝ գալաթացի Խալիլը եւ միւսները։ Իսկ նրանց պաշտօնում նշանակել է իր մտերիմ կուսակցականներին։ Եւ այդպէս, օգտուելով պատերազմական իրավիճակից բխող արտակարգ դրութիւնից՝ նենգ խար-

դաւանքներով դիզել հսկայական հարստութիւն։

«Թանին»(99) թերթի 1332 (1917) թուականի Սեպտեմբերի 24-ի 2809 համարում, համագումարին վերաբերող նիւթերից բացայայտօրէն երեւում է, որ կուսակցութիւնն իր վրայ էր վերցրել Ստամպուլի պարենաւորման բոլոր հարցերը։ Եւ զարմանալի չէ, որ այդ նախաձեռնութիւնից յետոյ, ժողովուրդն ընկաւ ծայրաստիճան թշուառութեան եւ ծանր կացութեան մէջ։ Մէկ տարուայ ընթացքում հաւաքուած 700.000 լիրա փոխառութեան գումարը եւս օգտագործուեց կուսակցութեան քըմահաճ ծախսումների համար։

«Միութիւն եւ Առաջադիմութիւն» կուսակցութեան յանցագործ արարքներից մէկն էլ կենտրոնական կոմիտէի մտայղացմամբ եւ որոշմամբ կազմուած տեղահանութեան օրէնքն էր, եւ դրա գործադրման հետեւանքով, Օսմանեան կայսրութեան բոլոր կողմերում առաջ եկած ողբերգութիւնը։ Լիովին ապացուցուած է, որ արեւելեան բոլոր վիլայէթներում տեղի ունեցած տեղահանութիւնը կեանքի էր կոչուել «Միութիւն եւ Առաջադիմութիւն» կուսակցութեան ղեկավար անդամներից կազմուած «Թեշքիլաթ-ը մահսուսէ»-ի յանձնախմբի կողմից, որի նախագահը այդ շրջանում, Պեհաէտտին Շաքիր պէյն էր։ Իսկ այդ խնդրի իրագործման համար էլ Պեհաէտտին Շաքիր պէյը օգտագործել էր «Միութիւն եւ Առաջադիմութիւն» կուսակցութեան շրջանային պատասխանատու քարտուղարներին, լիազօրներին եւ քննիչներին։

Այսպիսով, «Միութիւն եւ Առաջադիմութիւն» կուսակցութիւնը, անտեսելով երկրի գործադիր իշխանութիւնների իրաւասութիւնները, ահաբեկչական ուժի միջոցով, իր ձեռքն է վերցրել երկրի ամբողջ կառավարումը եւ երբեմն մի առանձին ժողովրդի, երբեմն էլ ամբողջ Օսմանեան կայսրութեան ժողովուրդների նկատմամբ իրագործել իր կործանարար նպատակներն ու ծրագրերը։ 1324

(1908) թուականից ի վեր երկրում տեղի ունեցող տարօրինակ իրադարձութիւնները եւ յատկապէս պալքանեան պատերազմի ընթացքում առաջ եկած ողբերգական դէպքերը նրանց մոլի տենչանքների իրականացման արդիւնքը հանդիսացան։

Կուսակցութիւնը իր թաքուն նպատակներն ու ծրագրերը իրագործելու համար, Էնվեր պէյին նշանակեց Ռազմական նախարարի պաշտօնում։ Իսկ նախկին մեծ վեզիր Ահմետ Իզզեթ փաշայի քանիցս հրաժարական տալը նոյնպէս առնչւում է կուսակցութեան ահաբեկչական գործունէութեան հետ։ [Հայերի] տեղահանութեան ընթացքում, մի շարք վիլայէթների վալիներին յատուկ հրահանգներ տալու գաղափարը նոյնպէս կուսակցութեան կենտրոնական կոմիտէի մի քանի անդամների չարանենգ մտայղացումների արդիւնքն է։ Եւ վերջապէս, նրանց օրինազանց գործարքները հաստատւում են Էրզրումի վալի՝ Թահսին պէյի տուած ցուցմունքներով, ինչպէս նաեւ մի շարք պաշտօնատար անձանց, այդ թւում՝ Եոզղաթի մութասարրիֆ Ճեմալ պէյին, Քաստամոնուի վալի՝ Ռեշիտ փաշային եւ Անգարայի վալի՝ Մազհար պէյին պաշտօնազրկելու ապացոյցներով։

Գաւառներում կատարած իր ահաբեկչական արարքներին զուգընթաց, կուսակցութիւնը սերտ միջամտութիւն է ունեցել նաեւ կենտրոնական կառավարութեան գործունէութեանը։ Պետական նախարարների ընդհանուր Մէճլիսի մէջ խցկել է իր ազդեցիկ անդամներին եւ անիրաւաւոր մասնակցել զանազան հարցերի քննարկումներին։ Այսպէս, ընդհանուր Մէճլիսում մասնակցել է Պրեստ-Լիդովսկի հաշտութեան պայմանագիրը(100) կնքելու հարցի քննարկմանը։ Կանոնաւորապէս միջամտել է պարենային հարցի քննարկումներին եւ սահմանել՝ իւրայատուկ հսկողութիւն։ Կարծիքներ է փոխանակել պատերազմական իրավիճակի հետ առնչուող հարցերում, եւ ինչպէս բացա-

յայտուեց մեղադրեալների մի քանիսի խոստովանութիւններից, երկրի համար կենաց մահու նշանակութիւն ունեցող համաշխարհային պատերազմի մասնակցելու խընդրում, իր ծրագիրները իրագործելու համար, կուսակցութեան պարագլուխները հաւաքուել են մեծ վեզիրի ծովեզերեայ դղեակում եւ կայացրել վերջնական վճիռ։

Կուսակցութեան ասպարէզ գալուց յետոյ, գործադրուած արտակարգ բռնութիւններին զուգընթաց, զանազան պատրուակներ են ստեղծել երկրի ժողովուրդներին թշնամացնելու ուղղութեամբ։ Հետեւանքը եղել է այն, որ մահմետական եւ ոչ-մահմետական տարրերը ստիպուած լքել են իրենց բնակավայրերը եւ գաղթել այս ու այն կողմ։ Դարերից ի վեր հաշտ ու խաղաղ ապրող Անատոլիայի(101) ժողովուրդների մէջ սերմանել են փոխադարձ թշնամանք եւ ոխակալութիւն։ Եւ այս իրավիճակը ստեղծողներն ու գործադրողներն եղել են կուսակցութեան կենտրոնական կոմիտէի անդամներն ու նրանց հետ համագործակցող շրջանային պատասխանատու քարտուղարները։ Լիովին ապացուցուած է, որ [կայսրութեան] բոլորները։ Լիովին ապացուցուած է, որ [կայսրութեան] բոլորի տարրերի միջեւ փոխադարձ ոխակալութեան խորացումը բխել է կենտրոնական կոմիտէի ընդունած որոշումներից եւ կատարած գաղտնի գործարքներից։

Այստեղ, ընթերցուած նախորդ [մեղադրականից] եւս պարզուեց, որ կուսակցութիւնը իր թաքուն նպատակներն ու ծրագրերը իրականացնելու համար դիմել է ամէն մի միջոցի եւ այդ ասպարէզում կարողացել է բռնութեամբ իրեն ենթարկել կառավարութեան գործադիր մարմինները մի եւ ինքնիշխանութեան հասնել՝ պետութեան մէջ մի նոր պետութիւն ստեղծելու մոլուցքով տարուած։

Այսպիսով, օրինական կառավարութեան մէջ մի առանձին ահաբեկչական ուժ ստեղծելու, կառավարութիւնը իր օրինական ուղուց շեղելու, եւ այլ յանցագործութիւններ կատարելու համար, բաւարար չափով յանցանշանների

առկայութեան հիման վրայ, ստորեւ յիշուած անձինք մեղադրուում եմ քրէական օրէնսգրքի 45-րդ յօդուածի համաձայն՝ 55-րդ յօդուածի վերջին մասով։ Այդ թւում կուսակցութեան գլխաւոր նախագահ, ցայսօր փախուստի մէջ գտնուող Թալաաթ փաշան, ինչպէս նաեւ ընդհանուր Մէճլիսի անդամներ՝ նոյնպէս փախուստի մէջ գտնուող Էնվեր եւ Ճեմալ էֆենտիները։ Կալանքի տակ գտնուող եւ դատաքննութիւնն աւարտուած նախկին մեծ վեզիր Սայիտ Հալիմ փաշան, ինչպէս նաեւ Մէճլիսի անդամներ՝ Հայրի եւ Մուսա Քեազիմ էֆենտիները, Քեմալ, Շիւքրի եւ Իպրահիմ պէյերը եւ Ապպաս Հալիմ փաշան։

Սրանցից, Իպրահիմ պէյը, նոյնպէս դատաքննութեան է ենթարկուելու նշուած յօդուածներով, բայց նկատի են առնուելու նրա յանցանքը մեղմացնող դրտապատճառները, այն է՝ կուսակցութեան մէջ նրա ունեցած չէզոք դիրքը։ Ալի Միւնիֆ պէյը նոյնպէս կը մեղադրուի վերոյիշեալ յօդուածների հիման վրայ, բայց հաշուի կ'առնուի, որ իր ուղեւորութեան ընթացքում, Ատանայից անցնելու ժամանակ, նա պաշտօնապէս առնչութիւն չի ունեցել Ատանայի վիլայէթի տեղահանութիւնից զերծ մնացած հայերի մի մասի տարագրութեան հետ։

Այս խնդրում, յանձնաժողովը նկատի կ'առնէ Ներքին Գործերի նախարարութիւնից առաքուած հեռագրերը եւ կուսակցութեան ջանքերով տեղի ունեցած տեղահանութեան մանրամասնութիւնները։

Մեղադրեալներ՝ Խալիլ եւ Ահմետ Նեսիմի պէյերի դատաքննութեան ընթացքում, նոյնպէս հաշուի են առնուելու ամբաստանութիւնը մեղմացնող հետեւեալ պարագաները. առաջինի դատաքննութեան ընթացքում, անհրաժեշտ է նկատի առնել, որ պատերազմի սկզբում, Մէճլիսի նախագահ լինելով հանդերձ, նա չի մասնակցել ընդհանուր ժողովի քննարկումներին։ Չի մասնակցել նաեւ տեղահանութեան քննարկմանը, իսկ տեղի ունեցած ողբերգութիւն-

ների ընթացքում գտնուել է Եւրոպայում։ Ահմետ Նեսիմի պէյը, այդ դէպքերի ընթացքում, նոյնպէս եղել է Եւրոպայում։ Դատաքննութեան չենթարկուելու որոշում էր կայացուել նախարարի պաշտօնում յետագային նշանակուած Իսմայիլ Ճանփոլատի նկատմամբ, քանի որ նա ընդհանրապէս դէմ է եղել կատարուող այդ ողբերգութիւններին։ Համանման որոշում էր կայացուել նաեւ Հաշիմ, Մուստաֆա Շերեֆ եւ Ռիֆաթ պէյերի նկատմամբ։

Այնուհանդերձ, քննարկման ընթացքում տեղի ունեցած տարաձայնութիւնների պատճառով, նախագահութիւնը որոշեց բոլորին անխտիր ներկայացնել Ռազմական ատեանին։

1335 թ. (1919) Մայիսի 26

Օսմանեան պետութեան օրէնսդրութիւնը խախտելու յանցագործութիւնը կատարուած է վերոյիշեալ մեղադրեալների մասնակցութեամբ։ Նկատի ունենալով, որ այդ յանցագործութիւնները կատարուել են խմբակային, ուստի մեղադրեալներից մի քանիսի նկատմամբ դատաքննութեան ենթարկելու արգելքը չի կարող օրինական համարուել։ Այնպէս, որ պարտադիր անհրաժեշտութիւն է, որպէսզի բոլորը միատեղ եւ անյապաղ ներկայանան Ռազմական ատեան։

1335 թ. (1919) Մայիսի 26
Ռազմական արտակարգ ատեանի նախագահ՝
Գեներալ-լեյտենանտ Նազըմ։

Հիւսէյն Հաշիմ, Մուստաֆա Շերէֆ եւ Իսմայիլ Ճանփոլատ պէյերի նկատմամբ դատաքննութեան կարճման որոշումը նախագահութեան կողմից չհաստատուելու պատճառով՝ քրէական օրէնսգրքի 51-րդ յօդուածի յաւելուածի հիման վրայ վճիռ կայացուեց վերոյիշեալներին

խմբովին ներկայացնելու Ռազմական ատեանի դատաքննութեանը, իսկ մեծարգոյ Հայրի էֆենտիին անժամկէտ կալանքի տակ պահելու հարցը չեղեալ համարուեց։

1335 թ. (1919) Մայիսի 27

Takvim-i Vekayi, 3 Haziran 1335 (1919) № 3571

ԵՐԿՐՈՐԴ ԴԱՏԱՎԱՐՈՒԹԻՒՆ(102)
1919 թ. Յունիսի 3

Շէյխ ուլ-իսլամ Մուսա Քեազիմ էֆենտիի հարցաքննութիւնը

Նախագահ — Մեծարգոյ Մուստաֆա փաշան հետեւեալ հարցումն ունի. հայերի հետ կատարուած եղելութիւնը ինքն այլ ձեւով է լսել։ Բաւականաչափ թուով ընտանիքներ աքսորուել են դէպի Տամասկոս, Մոսուլ, Պաղտատ եւ յարակից այլ վիլայէթներ, մարդկանց կախաղան են բարձրացրել եւ ենթարկել դաժան բռնութիւնների։ Մի՞թէ այդ բոլորը այլ ձեւով պէտք է մեկնաբանուի։

Մուսա Քեազիմ էֆենտի — Խօսքը Տամասկոսում տեղի ունեցած մի քանի մահապատիժների մասի՞ն է արդեօք։

Նախագահ — Այո՛։

Մուսա Քեազիմ էֆենտի — Մենք այդ մասին լսեցինք։ Այդ բոլորի մասին առարկելով՝ հաւանութիւն չտուինք։ Այդ մասին ես դիմեցի Սայիտ Հալիմ փաշային եւ ասացի. «Այս ի՞նչ բան է, այս մարդուն(103) ո՞վ տուեց այդ արտօնութիւնը, մի՞թէ դրա ժամանակն է»։ Սայիտ Հալիմ փաշան պատասխանեց այսպէս. «Այդ բոլորի մասին ես էլ տեղեակ չեմ, այդ մարդը, այդ խենթ մարդը, հաւանաբար կատարել է ինքնուրոյն։ Բայց ի՞նչ կարող ենք անել, եղած

վերջացած է արդէն։ Այդ բոլորը կատարել է այդ խենթ մարդը։ Ես էլ տեղեակ չեմ եղել։ Միայն տեղի ունենալուց յետոյ իմացայ այդ մասին։ Այդպիսի արարքների մասին տեղեկանում ենք կատարուելուց յետոյ միայն։ Պատերազմն այսպէս բոլորին խելքահան է անում»։ Բաւական ժամանակ յետոյ ես էլ լսեցի, որ [հայերին] ընտանիքներով հանդերձ տեղահանում են եւ աքսորում այս ու այն կողմ։ Բայց այդ բոլորը լսում էինք ոչ թէ պաշտօնական աղբիւրներից, այլ դրսից, այս ու այն կողմերից։ Այդ ժամանակ մեր հարցումին պատասխանեցին հետեւեալ կերպ։ «Այդ բոլորը անհրաժեշտութիւն է։ Արդէն այդ մարդը այնտեղ կախաղան է բարձրացրել մի քանիսին։(104) Այս արարքը անկասկած սխալ է։ Այդ մարդիկ ազգականներ ունեն՝ ազգականներն էլ իրենց հերթին՝ բարեկամներ։ Այնպէս որ, այդ արարքների համար նրանք հանգիստ չեն մնալու։ Այդ արարքների համար ո՛չ տեղն է յարմար եւ ո՛չ էլ ժամանակը։ Այս կապակցութեամբ էլ, բանակի ապահովման, երկրի անդորրութեան համար նրանց տեղահանել եւ աքսորել են այս ու այն կողմ։ Իբրեւ թէ այդ անհրաժեշտութիւն է եղել, որ այլ միջոց չի եղել»։

Հասկանալի է, որ այս բոլորը լսելուց յետոյ հարցում անելը մտնում էր մեր պարտականութեան մէջ։ Այդ մասին, այդպիսի պատասխան ստանալուց յետոյ, մենք ի՞նչ կարող էինք անել։ Մեծարգոյ փաշա, ուզում եմ մի բան յայտնել։ Մեր շարիաթը հաշուի է առնում միմիայն տուեալ անհատի պատասխանատուութիւնը, միւսներին հաշուի չի առնում։ Այդ մասին նշուած է նաեւ սահմանադրութեան մէջ՝ «որ իւրաքանչիւր նախարար պատասխանատու է իր պաշտօնին համար, իսկ պետութեան ընդհանուր քաղաքականութեան համար պատասխանատուութիւնը խմբակային է»։ Այդ ընհանուր քաղաքականութիւնը պատերազմ յայտարարելու նման բան է։ Հետեւաբար՝ Ներքին Գործերի նախարարութեան վերաբերող

խնդրի համար Շէյխ ուլ-իսլամը պատասխանատու չէ։ Արտաքին Գործերի նախարարութեան վերաբերող խնդրի համար Շէյխ ուլ-իսլամը պատասխանատուութիւն չի կրում։ Ռազմական նախարարութեան վերաբերող խնդրի համար Շէյխ ուլ-իսլամը բոլորովին պատասխանատուութիւն չի կրում։ Եւ վերջապէս, մահմետական կրօնագիտութեան վերաբերող գործերի համար, ոչ մի նախարար չի կարող պատասխանատուութիւն կրել։ Ոմն միւֆթի ինչ-որ տեղ այսպիսի կամ այնպիսի բան է կատարել, կամ ինչ-որ միւտերրիս այն արարքն է կատարել։ Դրա համար ոչ մի տեղ, ոչ մի դատարան չի կարող ամբաստանել Ներքին Գործերի նախարարութեանը։ Մեղադրւում է Շէյխ ուլ-իսլամը։ Ես այսքան գիտեմ։ Հետեւաբար, եթէ ես իմ պարտականութեան մէջ թերանամ, ապա ես եմ պատիժ կրելու կատարուած յանցանքի համար։ Նման դէպքում, ես ի վիճակի չեմ լինի առարկելու եւ կը կրեմ ինձ համար սահմանուած պատիժը։

Նախագահ — Մեծարգոյ էֆենտի, մենք մի քիչ առաջ նշեցինք, որ նախարարների հետ առնչուող հարցերը դատաքննութեան չենք ենթարկում։

Մուսա Քեազիմ էֆենտի — Ուրեմն ինչի՞ մասին է խօսքը։

Նախագահ — Խնդիրը առաջ քաշուած հարցի մասին է։ Այդ ողբերգութեանը անձամբ տեղեակ լինելով հանդերձ, ոչ մի միջոց չէք ձեռնարկել։

Մուսա Քեազիմ էֆենտի — Ձեռնարկեցինք, էֆենտի՛։ Այդ մասին խօսեցինք։ Այդքանը՝ էֆենտի։ Էլ ի՞նչ կարող էինք անել։ Էլ ի՞նչ ասեմ։

Նախագահ — Ժամանակը ուշ է, յաջորդ դատաքննութիւնը տեղի կ'ունենայ Կիրակի օրը ժամը մէկին(105)։

Takvim-i Vekayi, 4 Haziran, 1335 (1919) *N°* 3573

ՆՈՐԻՆ ՄԵԾՈՒԹԻՒՆ ՓԱՏԻՇԱՀԻ 1335 Թ. (1919) ՄԱՐՏԻ 8-Ի ԿԱՅՍԵՐԱԿԱՆ ՀՐԱՄԱՆՈՎ ԿԱԶՄՈՒԱԾ ՌԱԶՄԱԿԱՆ ԱՐՏԱԿԱՐԳ ԱՏԵԱՆԻ ԴԱՏԱՎԱՐՈՒԹԵԱՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹԻՒՆԸ(106)։

Նախագահ՝ Գեներալ-լեյտենանտ Մուստաֆա Նազըմ փաշա.

Անդամներ՝
Գեներալ-մայոր Զեքի փաշա,
Գեներալ-մայոր Մուստաֆա փաշա,
Գեներալ-մայոր Ալի Նազըմ փաշա,
Գնդապետ Ռեճեբ Ֆերտի պէյ։

Դատի տրուած ներկայ գտնուող մեղադրեալների անունները — *Նախկին Շէյխ ուլ-իսլամ՝ Մուսա Քեազիմ էֆենտի, նախկին Շէյխ ուլ-իսլամ՝ Էսատ էֆենտի, նախկին սենատի նախագահ՝ Ռիֆաթ պէյ, նախկին Փոստի եւ Հեռագրատան նախարար՝ Հիւսէյն Հաշիմ պէյ։*

Հեռակայ կարգով դատի տրուած մեղադրեալների անունները — *Նախկին [մեծ] վեզիր՝ Թալաաթ փաշա, նախկին Ռազմական նախարար՝ Էնվեր էֆենտի, նախկին Ծովային նախարար՝ Ճեմալ էֆենտի, նախկին Հանրակրթական նախարար՝ Դոկտ. Նազըմ պէյ, նախկին Ֆինանսների նախարար՝ Ճաւիտ պէյ, Փոստի եւ Հեռագրատան նախկին նախարար՝ Օսման էֆենտի, նախկին Առեւտրի եւ Հողագործութեան նախարար՝ Սուլէյման Էլպիստանի էֆենտի, նախկին Առեւտրի եւ Հողագործութեան նախարար՝ Մուստաֆա Շերեֆ պէյ։*

ԴԱՏԱՎՃԻՌ

Սոյն դատավարութեան ընթացքում լսուեցին մեղադրող եւ պաշտպանուող երկու կողմերին, մանրակրկիտ

ուսումնասիրուեցին եւ հետաքննուեցին նաեւ բոլոր դատական փաստաթղթերը։

Թէեւ մեղադրեալները եւ նրանց դատապաշտպանները ջանացին ուրանալ գործադրուած յանցագործութիւնները եւ պահանջեցին ազատութիւն, այսուհանդերձ 1335 (1919) Մայիսի 3, 20, 22 եւ Յունիսի 9, 10, 25 թուագրութեամբ մեղադրական եզրակացութիւններով [բացայայտուեց] լուծարքի ենթարկուած «Միութիւն եւ Առաջադիմութիւն» կուսակցութեան իրաւական դէմքը եւ հաստատուեց նրա մեղաւորութիւնը կատարուած բազմաթիւ յանցագործութիւնների մէջ։

[Կուսակցութեան] իրաւական դէմքն արտայայտող ընդհանուր Մէճլիսի յիշեալ անդամները մեղսակցութիւն են ունեցել գործադրուած յանցագործութիւններում, ուստի հայց էր յարուցուել լսելու նրանց դատական գործը եւ որոշելու նրանց պատժի չափը։ Կուսակցութեան հիմնադրումից ի վեր, եթէ ծանր ու թեթեւ արուի նրա ծաւալած գործունէութիւնը, ապա այսօր էլ կարելի է նկատել յեղափոխութիւնից առաջ մի շարք անձանց մօտ հանդէս եկած հայրենասիրական զգացումների առկայութիւնը։ Այս կապակցութեամբ անհրաժեշտ է համառօտակի կանգ առնել յեղափոխութիւնից յետոյ տեղի ունեցած դէպքերի եւ ծաւալուած գործողութիւնների վրայ։

Ազատութեան եւ արդարութեան անհամբեր սպասող օսմանցիները 1324 (1908) թուականի Յուլիսի 9-ին Ռեսնէի լեռներից զուլալ ջրի նման բխած ազատութիւնը ընդունեցին երկնային սպեղանու տեղ եւ եկան այն ընդհանուր համոզմունքին եւ հաւատքին, որ միայն այդ միջոցով կարելի է բուժել զուլումի եւ կեղեքումի վէրքերը։ Այդ ցասկոտ հեղեղի հոսքը մինչեւ իր բնական տեսքի գալը, մխիթարեց բոլորին, իսկ նրա ազդեցութեան ոլորտը անարգել տարածուեց բոլոր վայրերում՝ արդարութեան եւ

ազատութեան յոյս ներշնչելով Օսմանեան կայսրութեան բոլոր շրջանների ժողովուրդներին։ Եւ մերթ ընդ մերթ լսուող այդ հոսանքի հաճելի ելեւէջները ուժ ու եռանդ էին տալիս բոլորին։

Մինչդեռ, անցած ժամանակի ընթացքում կատարուած քաղաքական յանցաւոր սխալների հետեւանքով Օսմանեան կայսրութեան բազմաթիւ երկրամասերը, տարբեր պատրուակներով ձեռքից գնացին։ Եւ այդ ուղղութեամբ, բաւականին ջանքեր գործադրուեցին, որպէսզի այդ բոլորը վերագրուի նախկին կառավարութեան վարած սխալ քաղաքականութեանը։ Կատարուում էր սպասուած յոյսերի ճիշդ հակառակը։ Չկար մի իսկական նախաձեռնութիւն, որպէսզի ի չիք դարձնէր տեղի ունեցող այդ բազմաթիւ աղէտները։

Չնայած որ ազատութեան հաստատումից յետոյ անցել էր բաւականին ժամանակ, այնուհանդերձ երկիրը լաւ հիմքերի վրայ դնելու համար չկար մի որոշակի ուղղութիւն։ Դեռ աւելին, իրար յաջորդող [հողային] կորուստները, Իտալիայի(107) եւ Պալքանեան(108) պատերազմների համար առաւել շատ վիշտ ու մտատանջութիւն էին պատճառում։ Ազգային կարիքների համար նրանց մտայղացած ծրագրերը մնացին սոսկ որպէս նախաձեռնութիւն, իսկ նենգ նպատակները իրագործելու համար նրանց մի մասը կանգնեց բոլորովին սխալ ուղու վրայ։ Այդ յուսաբեր շարժումը(109), որը զուլալ ջրի նման ազատութիւն էր բերելու ժողովրդին, սկսեց երկրի մի մասը քայքայել, իսկ միւս մասն էլ հասցնել ամբողջովին ամայացած ցաւալի վիճակին։ Եւ սրանց մօտ ծագեցին իր նմանը չունեցող անիմաստ մտքեր։ Հետեւանքը եղաւ այն, որ երկրի կառավարումը իր ուղուց շեղելով՝ սկսեցին զբաղուել անօրէն բախտախնդրութիւններով։ Եւ այդպէս, տեւական խարդաւանքով զբաղուող այդ մոլորեալ անձերից ըս-

տեղծուեց մի գործադիր յանձնաժողով, որը ենթարկելով իրեն օրինաւոր կառավարութեան նախարարների խորհրդին, աստիճանաբար երկրի ամբողջ կառավարումը վերցրեց իր ձեռքը։ Այսպէս, [կուսակցութեան] պարագլուխները սողոսկելով Մէճլիս՝ սկսեցին իրագործել իրենց ծրագրերն ու նպատակները։

24–26 Թէշրին-ի սանի 1334 [1918 թ. Նոյեմբերի] թուագրութեամբ պատգամաւորների Մէճլիսի 5-րդ մասնաճիւղի արձանագրութեան մէջ Ֆինանսների նախարար Ճաւիտ պէյի ելոյթից հասկացւում է, որ «Միութիւն եւ Առաջադիմութիւն» կուսակցութեան գործադիր կոմիտէն երկրին եւ ժողովրդին վերաբերող կենսական հարցերը քննարկելու խնդրում, կատարել է վերին աստիճանի անհանդուրժելի գործարքներ։ Պատերազմ յայտարարելու խնդրում, անհրաժեշտ չի համարել տուեալ հարցը գոնէ քննարկել պատգամաւորների Մէճլիսում, մինչդեռ, վեհապետներն անգամ տարակուսել են նման հարցում անմիջական վճիռ եւ հրաման արձակել։ Նոյնիսկ ընդդիմադիր անձինք, որոնք ինչ-որ չափով համակրութիւն են ունեցել կուսակցութեան նկատմամբ, քննադատել են նրա այդ ընթացքը, քանի որ իրենց հեռատեսութեամբ կռահել են, որ նման կառավարումը ի վերջոյ կ'ունենայ վատ հետեւանքներ։

Ցայտնի է, որ յեղափոխութեան սկզբնական շրջանում ակամայից յայտարարուած արտակարգ դրութիւնը բաւականաչափ երկար տեւեց եւ կուսակցութեան ղեկավար կազմից մի խմբաւորում յարձակուելով Բարձրագոյն Դռան վրայ՝ սպաննեց Ռազմական նախարար Նազըմ փաշային, նրա թիկնապահին եւ այնուհետեւ լուծարքի ենթարկեց Քեամիլ փաշայի դահլիճը եւ կազմեց «Միութիւն եւ Առաջադիմութիւն» կուսակցութեան դահլիճը(110)։ Փորձառու, պատուաւոր եւ կարող պաշտօնեաները հեռացուեցին եւ նրանց տեղ նշանակուեցին կուսակցութեան

անդամները, որոնց քմահաճ կառավարումը ոչնչով չէր տարբերվում ինքնակալության շրջանից։ Ինչ խօսք, որ բռնապետությունից դժգոհ էին բոլորը, յատկապէս դժգոհ էին ոչ-մահմետական տարրերը։ Նամանաւանդ մեզ բոլորիս խաղաղություն, ապահովություն եւ արդարություն բերող սահմանադրության հարցում, հայ ժողովրդի գործադրած եւ ունեցած խորը համոզմունքը նրանք ճիշդ չհասկացան եւ սկսեցին առաջ քաշել [հայերի] նախկին ազգայնական տենչանքների աճման պատճառաբանություններ, երկպառակություններ ու ոխակալություն սերմանելներ, այլ տարրերի միջեւ, եւ նոյնիսկ ազգայնական եւ ցեղային հարցեր առաջ բերել մահմետական ժողովրդների միջեւ։

Օսմանցիներին հասցուած վնասը ակնյայտ էր։ Հեռաբար, կատարուած հարցաքննությունը, մանրամասն հետաքննությունը, մեղադրական եզրակացությունը եւ ըստորեւ շարադրուած ռազմական ատեանի 5 յօդուածները լիովին հաստատում են «Միություն եւ Առաջադիմություն» կուսակցության՝ նրա իրաւական դէմքին վերաբերող յանցագործությունները եւ մենք բոլորս համոզուած ենք, որ կուսակցության պարագլուխները իրենց անհանդուրժելի արարքներով արատաւորեցին յիշեալ կուսակցության անունը։

Այսպիսով, գործադրուած յանցագործ արարքները չեն կարող վերագրուել կուսակցության բոլոր անդամներին, այլ յիշեալ յանցագործությունների հետ առնչություն կամ մասնակցություն ունեցողներին եւ նրանց հանդէպ է որ գործադրուելու են օրէնքի պահանջները։

Պաշտպանության ընթացքում դատապաշտպանը(111) նշեց, որ քաղաքական կուսակցությունների առկայությունը բխում է սահմանադրության անհրաժեշտությունից, որ այսօր էլ մեր երկրում գոյություն ունեն այլ կուսակցություններ եւ վերջապէս այն յայտարարությունը, որ «Աթիություն եւ Համաձայնություն»(112) կուսակցությունը զատուելու եւ

«Միութիւն եւ Առաջադիմութիւն» կուսակցութեան նման ունի կենտրոնական կոմիտէ, ընդհանուր ժողով եւ մասնաճիւղեր, որ այդ կուսակցութեան ղեկավարները եւս հրաւիրուում են մէջլիսներին։ Այդ մասին եզրակացնելով՝ անհրաժեշտ է նշել հետեւեալը։ Սահմանադրութեամբ կառավարուող պետութիւններում կուսակցութիւնների գոյութիւնը, եթէ անհրաժեշտութիւն է, բացարձակաբար չի կարող միջամտել կառավարութեան գործերին։ Ազգային ժողովներում մեծամասնութիւն կազմելու իրենց նպատակը իրականացնելուց յետոյ, վստահութեան արժանացած դահլիճներին պէտք է կատարելապէս ազատ թողնեն եւ բոլորովին չխառնուեն նրանց գործունէութիւններին։ [Կուսակցութիւնները] կարող են միայն ջանք գործադրել կազմուող օրէնքները իրենց ծրագրերին յարմարեցնելու խնդրում եւ իրենց դուր չեկող դահլիճները ցրելու համար ոչ թէ սպառնալիքներ, այլ գուցէ չվստահելու ջանքեր գործադրեն։

Ինչ վերաբերում է մեր երկրի կուսակցութիւններին մինչեւ Օսմանեան ազգային ժողովի բացուելը, քանի որ յայտնի է, թէ ո՞ր կուսակցութիւնն է ձայների մեծամասնութիւն հաւաքել, ուստի այն չի կարող իր ազդեցութիւնը պարտադրել կամ միջամտել կառավարութեան գործադիր կոմիտէի աշխատանքներին, սահմանադրութեան դրոյթները խախտել եւ կամ էլ օրէնքները փոփոխել։ Այսպիսի անօրէն արարքներ կատարելու դէպքում պարզ է, որ իւրաքանչիւր կուսակցութիւն նման վախճան է ունենալու։ Այսպիսով, դատավարութեան ընթացքում վերոյիշեալ դատապաշտպանի ելոյթը զուրկ է ամէն մի հիմքից։

Նախապէս յայտարարուած հինգ յօդուածները հետեւեալներն են։

Առաջին. Ռազմական ատեանի դատավարութեան վերջում բացայայտուեց, որ Տրապիզոնում, Եոզղաթում, Պոզազլեանում եւ այլուր տեղի ունեցած կոտորածները կազմակերպուել եւ գործադրուել են «Միութիւն եւ Առա-

ջադիմութիւն» կուսակցութեան պարագլուխների կողմից։ Դատապաշտպանութեան ընթացքում նշուեց, որ այդ կոտորածների մասին իբրեւ թէ նրանք տեղեկացել են գործաղրուելուց յետոյ։ Մինչդեռ, լիովին բացայայտուեց, որ այդ մասին իրազեկ դառնալուց յետոյ էլ ոչ մի միջոց չեն ձեռնարկել այդ կոտորածները կանխելու համար։

Երկրորդ. — [Մէճլիսի] ընդհանուր նախագահ, նախկին [մեծ] վեզիր Սայիտ Հալիմ փաշայի՝ Մէճլիսին յղած զեկուցագրի բովանդակութիւնից պարզւում է, որ նա պատերազմի սկզբում կենտրոնական կոմիտէի անդամներին իր ծովեզերեայ ապարանքը հրաւիրելով՝ յայտնել է պատերազմի մասնակցելու վտանգաւորութեան մասին եւ բացատրել, որ պետութեան համար առաւել նպաստաւոր դիրքորոշումը չէզոքութիւնն է, բայց չի կարողացել համոզել նրանց։ Միեւնոյն ժամանակ «Միութիւն եւ Առաջադիմութիւն» կուսակցութեան պատասխանատու ներկայացուցիչներից՝ Ռիզա պէյի հարցաքննութեան ժամանակ խոստովանեց, որ պատերազմ յայտարարելուց առաջ, Տրապիզոնում կազմակերպուած չեթէների խմբին յարձակման նպատակով ուղարկել է Ռուսաստանի խորքերը։

Ստոյգ հաստատուած է, որ պատերազմը յայտարարուել է առանց Մէճլիսի որոշման։ Տուեալ ժամանակի Ֆինանսների նախարար՝ Ճաւիտ պէյը, Հասարակական Աշխատանքների նախարար՝ Զիւրիւք Սուլի Մահմուտ փաշան, Փոստի եւ Հեռագրատան նախարար՝ Օսկան էֆենտին եւ Առեւտրի նախարար՝ Սուլէյման Էլպիստանի էֆենտին հրաժարականի խնդրանք են ներկայացրել այն պատրուակով, որ պատերազմ յայտարարելու որոշումը կայացել է «Միութիւն եւ Առաջադիմութիւն» կուսակցութեան ցանկութեամբ, այլ ոչ թէ նախարարների խորհրդում։

Երրորդ. Բերուած վկայութիւնների արձանագրութիւններից եզրակացւում է, որ նախկին մեծարգոյ վեզիր, Ռազմական նախարարութիւնից Ահմետ Իզզէթ փաշայի

հրաժարական տալը տեղի է ունեցել կուսակցութեան միջամտութեան ընթացքում տեղի ունեցած վէճերից յետոյ։

Զորրորդ. «Միութիւն եւ Առաջադիմութիւն» կուսակցութեան կենտրոնական կոմիտէի նախաձեռնութեամբ, Ստամպուլի պատգամաւոր Քեմալ պէյը պարենաւորման հարցերով նշանակուել է պաշտօնի եւ այնուհետեւ նրա պաշտօնավարութիւնը հաստատուել է ընդհանուր ժողովում եւ համագումարում։ [Քեմալ պէյի] կողմից ստեղծուել են նախ առեւտրական յանձախմբեր, յետոյ մի քանի ընկերութիւններ եւ հաստատութիւններ։ Այսպիսով, առեւտրական գործերի մենաւաճառութիւնը իրենց ձեռքը առնելով՝ սկսել են բռնագրաւել ժողովուրդի ունեցուածքը եւ յանձնել վերոյիշեալ ընկերութիւններին եւ մի շարք անձանց։ Այս պարագան պատճառ է հանդիսացել օսմանցիների աղքատացման, յուսահատութեան եւ նոյնիսկ մահուան։ Վերջապէս այդ բոլորը նպաստել են երկրի պաշտպանողական ուժի թուլացմանը։ Կառավարական մի շարք պաշտօնների նշանակումը տեղի է ունեցել «Միութիւն եւ Առաջադիմութիւն» կուսակցութեան Ստամպուլի կենտրոնի միջամտութեամբ։ Այս բոլորի մասին յայտնի է դարձել 1332 թ. [1916] համագումարում ընդունուած բանաձեւի բովանդակութիւնից, ինչպէս նաեւ այս խնդրին վերաբերող քաղաքային տեսչութեան ուղարկած ներփակ գրութիւնից։

Հինգերորդ. Երբ սենատում քննարկւում էր Շարիաթական դատարանը Արդարադատութեան նախարարութիւն փոխադրելու հարցը, Շէյխ ուլ-իսլամ Քեազիմ էֆենտին ասել է. «Իմ կարծիքը մի հարցնէք, կուսակցութիւնն այդպէս է ուզել, ուրեմն՝ այդպէս էլ պիտի լինի»։ Դատավարութեան ընթացքում այս խնդրի արծարծումը ցոյց է տալիս կուսակցութեան՝ պետական գործերին միջամտելու փաստը։

Վերեւում բերուած հինգ յօդուածները եւ զանազան

տարաձայնութիւններով տեղի ունեցած քննարկումներն ու նրանցից բխած եզրակացութիւնները ցոյց են տալիս, որ պետութեան կարեւոր գործերի մի մասը կեանքի է կոչուել իրենց իսկ նպատակների եւ մտադրութիւնների համաձայն եւ անմիջական միջամտութեամբ, առանց հաշուի առնելու պետութեան նախարարների կարծիքն ու տեսակէտը: Հետաքննութիւնը ցոյց տուեց, որ Օսմանեան պետութեան օրէնքներն ստեղծուել են «երեքի զօրութեամբ» եւ այդ օրինազանցութիւնը կատարուել է ահաբեկչական ուժ գործադրելու միջոցով: Այսպիսով, վերոյիշեալ յանցագործ արարքների անմիջական հեղինակներն են «Միութիւն եւ Առաջադիմութիւն» կուսակցութեան իրաւական դէմքն արտայայտող նրա պարագլուխներն ու ընդհանուր Մէճլիսի անդամները: Այդ թւում, փախուստի մէջ գտնուող նախկին մեծ վեզիր Թալաաթ փաշան, նախկին Ռազմական նախարար՝ այժմ զինուորական շարքերից վտարուած Էնվեր փաշան, նախկին Ծովային նախարար՝ նոյնպէս զինուորական շարքերից վտարուած Ճեմալ էֆենտին եւ նախկին Հանրակրթական նախարար Դոկտ. Նազըմ էֆենտին, որոնց անմիջական հեղինակութեամբ կատարուել են այդ յանցագործութիւնները: Տուեալ յանցագործութիւններին անուղղակիօրէն մասնակցել են նաեւ Մէճլիսի անդամներից, նոյնպէս փախուստի մէջ գտնուող նախկին Ֆինանսների նախարար՝ Ճաւիտ պէյը, ինչպէս նաեւ Առեւտրի եւ Հողագործութեան նախարար՝ Մուստաֆա Շերեֆ պէյը: Բացայայտուած է, որ կատարուած յանցագործութիւններում իրեն մեղսակցութիւն է ունեցել նաեւ նոյն ընդհանուր ժողովի անդամներից՝ դատարանում ներկայ գտնուող նախկին Շէյխ ուլ-իսլամ Մուսա Քեազիմ էֆենտին:

Թէեւ դատապաշտպանը եւ դատախազը իրենց ելոյթներում նշեցին նրա առաքինի, լաւ յատկանիշները, կրոնական գիտելիքները, բարձր նկարագրի մասին եւ տա-

րակուսանք յայտնեցին յիշեալ կոտորածների յղացման եւ մասնակցութեան հարցում նրա ունեցած դերին, այնուհանդերձ հաստատուեց, որ յեղափոխութիւնից յետոյ նա եղել է յիշեալ կուսակցութեան կարեւոր պարագլուխներից մէկը եւ ունեցել է մեծ ազդեցութիւն։

Արդ, դատախազի եւ դատապաշտպանի նման զարգացած անձնաւորութիւնները, եթէ հարկադրաբար լաւ կարծիք են արտայայտում նրա նկատմամբ եւ կուսակցութեան գործունէութիւնը համարում՝ օրինական, ապա բնական է, որ բոլորովին թիւր կարծիք պիտի ստեղծուէր նաեւ ոչ բաւարար կրթութիւն ստացած տգէտ մարդկանց մօտ։ Յայտնի է, որ Մուսա Քեազիմ էֆենտին ղեկավարել է «Միութիւն եւ Առաջադիմութիւն» կուսակցութեան կրօնագիտական մասնաճիւղը։ Երբ հարցում եղաւ շարիաթի պատուիրաններին հակառակ կատարուած արարքների ու քարոզների վերաբերեալ, նա պատասխանեց, որ նման արարքների նշաններ չկան, որ ինքը տուեալ խնդրին վերաբերող իր քարոզներում հաւանութիւն չի տուել։ Սակայն խոստովանեց նաեւ, որ յիշեալ արարքի (տեղահանութեան եւ կոտորածի — Ա.Փ.) արգելման համար էլ գործնական ոչ մի միջոց չի ձեռնարկել։ Իսկ դատավարութեան ընթացքում նրա արած այն համեմատութիւնը, որ «Միութիւն եւ Առաջադիմութիւն» կուսակցութիւնից դուրս գալը նշանակում է իսլամի կրօնից հրաժարուել, չի կարող համընկնել նրա առաքինի, լաւ նկարագիր ունենալու մտքի հետ։ Այս պարագան նոյնպէս համարւում է ծանրացուցիչ գործօններից մէկը։ Հարցաքննութիւնից եւ հետաքննութիւնից պարզուեց, որ վերոյիշեալը առաւելաբար զբաղուած լինելով կուսակցութեան կրօնագիտական հարցերով, ուղղակի չի գտնուել յիշեալ կոտորածների բուն կազմակերպիչների շարքում, այնուամենայնիւ նա ունեցել է անուղղակի մասնակցութիւն։

Այսպիսով, լիովին բացայայտուում է, որ կոտորածի

գործադրման որոշումը հիմնականում համաձայնեցուել է երեքի միջեւ։

Հետաքննութեան ընթացքում սենատի նախկին նախագահ Ռիֆաթ պէյի, «Միութիւն եւ Առաջադիմութիւն» կուսակցութեան քննարկումներին մասնակցելու հարցը չհաստատուեց։ Պարզուեց նաեւ, որ յիշեալ կոտորածների գործադրման խնդրում ինքը մասնակցութիւն չի ունեցել։ Այսպիսով, բոլորի համաձայնութեամբ, նա անմեղ ճանաչուելով՝ ազատ է արձակուում։ Բացայայտուեց նաեւ, որ Պեռլինում գտնուելու ընթացքում, առանց իր համաձայնութեան նշանակուել է [նախարարի պաշտօնում] եւ Ստամպուլ վերադառնալուց յետոյ, ինքնաբերաբար անցել է պաշտօնի։ Անհրաժեշտ է նկատի ունենալ նաեւ, որ նախարարի պաշտօնում նրա նշանակուելը զուգադիպել է «Իթթիհատի» դահլիճի վերջին տարիների գործունէութեան հետ։ Ըստ իր խոստովանութեան, երեք անգամ ներկայ է գտնուել ընդհանուր Մէճլիսի խորհրդակցութիւններին, որտեղ կանոնադրութիւնից դուրս քննարկումներ չեն եղել, եւ ինքն էլ մնալով սոսկ ունկնդրի դերում, գործունեայ մասնակցութիւն չի ցուցաբերել։ Այս արդարացուցիչ հանգամանքը նրա անմեղութեանը տեղիք տալով՝ ցուցիչ հանգամանքը նրա անմեղութեանը տեղիք տալով՝ ձայների մեծամասնութեամբ որոշուեց նրան եւս ազատ արձակել։

Վերոյիշեալ [մեղադրեալների] պատժի չափը քննարկելու ընթացքում նկատի առնուեց, որ Թալաաթի, Էնվերի, Ճեմալի եւ Դոկտ. Նազիմի կատարած յանցագործ արարքները չափազանց ծանր են, ուստի որոշուեց նրանց դատելը կայսերական քաղաքացիական քրէական օրէնսգրքի 45-րդ յօդուածի առաջին կէտով։ Ճաւիտի, Մուստաֆա Շերեֆի եւ Մուսա Քեազիմի համար նկատի առնուեց յիշեալ յօդուածի երկրորդ եւ նոյն կայսերական օրէնսգրքի 55-րդ յօդուածի վերջին մասերը, ուր ասուած է։

«Մի խումբ անձնաւորութիւններ մի ոճրագործութիւն կամ յանցանք խմբովին կատարելու դէպքում, կամ մի խումբ անձնաւորութիւններ բազմաթիւ արարքներից բաղկացած մի ոճրագործութիւն կամ յանցանք գործելիս, ոճրագործութեան ընթացքում, նրանցից իւրաքանչիւրը այդ արարքներից որեւէ մէկը կամ մի քանիսը կատարելու դէպքում, նոյնպէս գործակից են համարւում եւ պատժւում են իսկական յանցանք կատարողի նման»։

«Սահմանադրութիւնը, կառավարութեան ձեւն ու էութիւնը, կամ վսեմ սուլթանութիւնում գոյութիւն ունեցող կարգերը բռնի կերպով փոխելու կամ յեղաշրջելու նախաձեռնութեան մէջ գտնուող անձնաւորութիւնների գործունէութիւնը հաստատուելու դէպքում սահմանւում է մահապատիժ»։

«Մի ոճրագործութեան կամ յանցագործութեան ա-նուղղակի մասնակցութիւն ունեցած անձնաւորութիւնները, օրէնքի չբացայայտուած մասերում, պատժի են ենթարկւում հետեւեալ կերպ. եթէ գլխաւոր յանցագործին մահապատիժ կամ ցմահ տաժանակիր աքսոր է սահմանւում, ապա մեղսակիցներին՝ 10 տարուց ոչ պակաս ժամանակաւոր բանտարկութիւն...»։

Օրէնսգրքում այս առկայ յօդուածների հիման վրայ՝ Թալաաթը(113), Էնվերը(114), Ճեմալը(115) եւ Դոկտ. Նազիմը(116) դատապարտւում են մահուան, իսկ Ճաւիտը, Մուստաֆա Շերեֆը, Մուսա Քեազիմը՝ 15-ական տարի ժամկէտով աքսորի։ Փախուստի մէջ գտնուողներին զրկել քաղաքացիական իրաւունքներից, իսկ բռնագրաւուած ունեցուածքի հարցում գործել համաձայն օրէնքի։ Վերոյիշեալ Ռիֆաթ եւ Հաշիմ պէյերին վերաբերող անմեղութեան որոշումը ընդունուած է իրենց պաշտօններից բըխած հանգամանքների բերումով եւ հետագայում գերագոյն դատարանում ենթակայ չէ քննութեան։

Հետաքննութիւնը բացայայտեց նաեւ, որ Փոստի եւ

Հեռագրատան նախկին նախարար՝ Օսկան էֆենտին եւ Առեւտրի նախկին նախարար՝ Սուլէյման Էլպիստանի էֆենտին, երկար ժամանակ Եւրոպայում գտնուելու պատճառով, հնարաւոր չի եղել նրանց հրաւիրել դատաքննութեան։ Հաւանաբար, իրազեկ լինելու դէպքում էլ նրանք [Ստամպուլ] վերադառնալու հնարաւորութիւնը չէին ունենայ։

Սոյն դատավճիռը միաձայն ընդունուեց ի բացակայութիւն Թալաաթ, Էնվեր, Ճեմալ, Դոկտ. Նազըմ, Ճակայութիւն Թալաաթ, Էնվեր, Ճեմալ, Դոկտ. Նազըմ, Սուլիտ, ինչպէս նաեւ Մուստաֆա Շերեֆ, Օսկան եւ Սուլէյման Էլպիստանի էֆենտիների, իսկ իրենց ներկայութեամբ՝ Ռիֆաթ, Հաշիմ եւ Մուսա Քեազիմ բեյերի(117)։

5 Թեմմուզ 1335 թ.
[1919 թ. Յուլիսի 5]

Ռազմական արտակարգ ատեանի նախագահ՝ սպայակոյտի գեներալ-լեյտենանտ Նազըմ պէյ Ահմետ

Ռազմական արտակարգ ատեանի անդամ՝ սպայակոյտի գեներալ-մայոր Ալի Նազըմ

Ռազմական արտակարգ ատեանի անդամ՝ հետեւակային գնդապետ՝ Ռեճեպ Ֆերտի պէյ Մեհմետ Ալի

«Այս դատավճռին մասնակից լինելով հանդերձ՝ ես այն համոզմունքին եմ, որ մեղադրեալ Հաշիմ պէյը անուղղակի կերպով մասնակցութիւն է ունեցել նշուած յանցագործութիւններին, քանի որ իր ցուցմունքներն ու առկայ ապացոյցներն այդ են վկայում»։

Ռազմական արտակարգ ատեանի անդամ՝
սպայակոյտի գեներալ-մայոր Մեհմետ Զեքի

«Կենտրոնական կոմիտէի կողմից ձեռնարկուած կոտորածների հարցում, Մուսա Քեազիմ էֆենտին իրեն անմեղ է համարում, նկատի ունենալով, որ ինքը ծառայել է յիշեալ կենտրոնին՝ կրօնի եւ կրօնագիտութեան պարտականութիւններից ելնելով։ Ես կողմնակից եմ նրանց հետ, ովքեր հաստատում են յանցագործութեան հետ նրա ունեցած առնչութիւնը, քանի որ գործադրուած յանցագործութիւններից ոչ մէկի նկատմամբ նա արգելք չի հանդիսացել եւ նոյնիսկ չի հեռացել իր պաշտօնից։ Հաշիմ պէյի ցուցմունքներից եւս բացայայտուում է, որ նա նոյնպէս կապուած եւ հաւատարիմ է եղել յիշեալ կենտրոնին եւ վերոյիշեալ յանցագործութիւնների կատարման ընթացքում ո՛չ մէկի դէմ չի պայքարել։ Մինչդեռ դատաքննութեան օրերին, նա իրեն արդարացնում էր, որ ինքն առնչութիւն չի ունեցել յիշեալ կենտրոնի կատարած յանցագործ արարքների հետ։ Ես նոյնպէս կողմնակից եմ նրանց հետ, որոնք դատապարտում են նրան անուղղակի մասնակցութիւն ունենալու մեղադրանքով»։

Ռազմական արտակարգ ատեանի անդամ՝
սպայակոյտի գեներալ-մայոր

Մուստաֆա պէյ Ազիզ Սուլէյմանի

Հաստատուում է։

Դատավճռի սոյն արձանագրութիւնը վաւերացուած է Ռազմական արտակարգ ատեանի անդամների կնիքներով։

5 *Թեմմուզ* 1335 *թ.*
[1919 թ. Յուլիսի 5]

[կնիք]
ՌԱԶՄԱԿԱՆ
ԱՐՏԱԿԱՐԳ
ԱՏԵԱՆ

[ստորագրութիւն]
ՆԱԶԸՄ

Ռազմական արտակարգ ատեանի արձանագրական յանձնախմբի պետ՝ Ապիտին Տաւեր

Takvim-i Vekayi, 5 Temmuz 1335 (1919) *N°* 3604

برنجی دیوان حرب عرفی

محاکمهٔ ضبط جریده‌سی

رئیس: میرلوا احمد پاشا

اعضا: میرلوا احسان پاشا، میرلوا مصطفی کریمی پاشا، میرلوا اسماعیل حقی پاشا، میرآلای علیاده شاکر بك

معمورة العزیز تقتیلی محاکمه‌لری

غیاباً محاکمه‌لری اجرا ایدیلن: اتحاد وترقی جمعیتی مرکز عمومیسی اعضاسندن نشاندت تقصیرینه رئیس دولتلو بهاء الدین شاکر، اتحاد وترقی جمعیتی معمورة العزیز نائب مسئولی رسمی ناظم بك

وجاهاً محاکمه‌لری اجرا ایدیلن: دیوان حرب سابق عاجی یالوسه زاده محمد لوری، معمورة العزیز معاون حرب سابقی قدری بك

• قرار صورتی •

محاکمات جاریه وجهله استماع اولنان طرفلرك اوما واقواله، ومدافعانی بالجمله اوراق دعوی وضبطنامه حکمه مندرجات سراپا مطالعه وتدقیق وکیفیت تسبق اولندقدن صکره، ایجابندن اتحاد وترقی جمعیتی مرکز عمومیسی اعضاسندن ومعظمون علیهمدن ومقتول بهاء الدین شاکر بك تلکیفات خصوصه رئیسی صفتیله درسعادتدن طربزون وارضروم ولایتلری مناطق سائره‌یه جهت ایدرك جمعیتلاردن تحاشی ایتدیریلن قوافل جمعیتدن و سائر اشخاص یافیدن مرکب اراق اوزره ترتیب ولتکیل ایدیلن جتلرك باشنه کچردك آرمنیلرك تهجیری اثناسنده مختلف زمان و عالمده، ایقاع و ارتکاب اولنان قتل وسلب و نهب اموال جنایع اولنمالری جهتیله مذکوره یا مسافهٔ صفوت وجهالت واخود اجرای حرص ومنفعت ایچون اتحاق ایتمش اولان بعض اشخاص وهاوریه کاه اختفا وبعضاً دخی شهرایله تحریری تلفیات ولمانیات خصوصه اجراءاتمامی صورتیله دونیم نه ایصال ایدیلمکی وترتیب ایدیلمش اولان بولنم تکلیفات خصوصه افرادی آرمنیلرك افنا واتلاف امرنده استخدام ایتمش اولدقلری موس ایله بهاء الدین شاکر بك اتحاد وترقی جمعیتك معمورة العزیز کاتب مسئولی معظمون علیهمدن فراری رسمی ناظم اکی معمورة العزیز والیسی ثابت بك واعظ سیف ارضروم‌دن کتشیده ایلان اولدقلری ۲۱ - ٤ - ۳۱ تاریخلی شیفره‌لی تلغرافنامه‌ده [اوراده‌کی اولان آرمنیلرك اسمیه اولتورمق وتعزیب اولندقلری بیضره یکمکلر اشخاص معینه اعطا ایدیلمش جوقه الکزجه سول واعمالری اولتیور واتحاد وترقی] دیو اشعار ایتمش واتحاد وترقی جمعیتی مرکز عمومیسی اعضاسی حقنده‌کی دوب جانبه وجوه وتأثمدن ارضروم والیسی نیز بك: ارضروم‌دن کچن طریقده سول ارلان زنکیلر قاوه‌سنك بهاء الدین شاکر بك ترتیب کرده‌سی اولان بیك افرادی ودرسعادتلر طرفندن قتل اولندقلری وقارانه معروض قالدقلری مقدمه اولان شیفره‌لی تلغرافنامه‌سی مندرجاتی و اسبق لسعادتلو والیسی رشید پاشانك موس ایله بهاء الدین شاکر بکدن تهجیر حقنده شیفره‌لی تلغرافی آلدقنی بیان و وهیب پاشانك: آرمنیلرك قتل و اعدامی و مالکرینك یغما و غصبی اتحاد وترقی مرکز عمومیسنك نتیجهٔ مظهرانی اولوب اوجنجی اردو منطقه‌سنده انسان قصابلری تعارك واداره واستخدام ایدیلمك بهاء الدین شاکر بك اوغلنی درسعادت واتطلی متصرف سابق صبوری بك: بهاء الدین شاکر بكك ارضروم‌دن کتشیده ایدیکی شیفره‌لی تلغرافنامه‌ده (ارضروم، وان، بتلیس، دیاربکر، سیواس، طربزون حوالیسنده تك بر آدمی قالمامق اوزره موصل وزور طرفلرینه سول ایدلکلرندن آلطالیه‌ده ایلنده اولدقی) ازمش ایدوکنی برآورده؛ زمان ایلری وضبطنامه‌ده برتصریح مندرج بولنان شهره بیتمه سائرنك اخبارانك دلائل وقرائن مبسوطه‌یی مؤیده وشیه بولنمقی این مرتبانیوه داعل اولدقدن موس ایله بهاء الدین شاکر بك جنایع مجهولانك فاعلری هم فعل اولمق اوزره جریمه متعدده‌یکر معظمون علیه فراری رسمی ناظم بك کتجه؛ جهت ساکه‌ونداری ذات موس ایله ناظم بك الاده مندرج ۲۱-٤-۳۱ تاریخلی تلغرافنامه‌ده مندرجاتدن مستفاد اولدقی اوزره تهجیر اثناسنده بهاء الدین شاکر ایله عاراندہ بولنمسنه و معمورة العزیز والیسی ثابت و مرکز عمومی کاتب عمومیسی مدحت شکری بکلرك مشبوط بیاناتنه و شهود مستمعینك اخباراتنه وکندیسنك تعطیلاته شروع اولنمقی مناسب قرار ایدوب الیوم سال قرار ویرلمسی واوراق دعوی جانبنده موجود دیکر عناوین اوراقی کبی اماراته بناءً جنایع مذکوره‌ده جم فعل وایکی ذات ایله موس ایله لمریقات قانونیه‌یی ارتکابنده فاعل اصلی اولانلرك اتحاد ایدیکی واخود جرائم مذکورنك حصولی مقصدیله برکونا اقبال واجراآتنه جرأت ایتدیکی حقنده هیچ بر دلیل وامارهٔ دسقس اولنمامسنه وفقط بهاء الدین شاکر ایله بر وجه الاغاظه قیام ایتمسنه و شهود مستمعینك

(۲۲۷۱ نومرولی نظیر دفاتر صورتیدر)

Խարբերդի տեղահանութեան եւ կոտորածի դատավճռի անուանաթերթը.
(օսմաներէն, արաբատառ թուրքերէն).
Takvim-i Vekayi, 13 ocak 1336 *(13 Յունուար, 1920)* N° 3771:

ՄԱՍՆ ԵՐԿՐՈՐԴ

«ՄԻՈՒԹԻՒՆ ԵՒ ԱՌԱՋԱԴԻՄՈՒԹԻՒՆ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ ՇՐՋԱՆԱՅԻՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ՔԱՐՏՈՒՂԱՐՆԵՐԻ ՈՒ ՊԱՇՏՕՆԵԱՆՆԵՐԻ ԴԱՏԱՎԱՐՈՒԹԻՒՆԸ

ՆՈՐԻՆ ՄԵԾՈՒԹԻՒՆ ՓԱՏԻՇԱՀԻ 1335 Թ. (1919) ՄԱՐՏԻ 8-Ի ԿԱՅՍԵՐԱԿԱՆ ՀՐԱՄԱՆՈՎ ԿԱԶՄՈՒԱԾ ՌԱԶՄԱԿԱՆ ԱՐՏԱԿԱՐԳ ԱՏԵԱՆԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹԻՒՆԸ(1)

Նախագահ՝ գեներալ-լեյտենանտ Մուստաֆա Նազըմ փաշա.

Անդամներ՝ գեներալ-մայոր Զեքի փաշա,
Գեներալ-մայոր Մուստաֆա փաշա,
Գեներալ-մայոր Ալի Նազըմ փաշա,
Գնդապետ՝ Ռեճեպ Ֆերտի պէյ,
Գերագոյն դատախազի օգնական՝ Ֆերիտուն պէյ։

ԱՌԱՋԻՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹԻՒՆ
1335 թ. (1919), Յունիսի 21, շաբաթ

Դատի տրուած մեղադրեալների անունները —

«Միութիւն եւ Առաջադիմութիւն» կուսակցութեան Պրուսայի պատասխանատու քարտուղար Դոկտ. Ահմետ Միտհատ պէյ, Էսկիշեհիրի պատասխանատու քարտուղար Դոկտ. Պեսիմ Զուհտի պէյ, կուսակցութեան Էտիրնէի քննիչ-լիազօր Ապտուլ Ղանի պէյ, «Միութիւն եւ Առաջադիմութիւն» վերակազմեալ(2) կուսակցութեան Պէյօղլուի պատասխանատու քարտուղար՝ Սելահէտտին պէյ, կուսակցութեան Միրգունի մասնաճիւղի պատասխանատու քարտուղար՝ Մեհմետ Ճեմալ պէյ։

Նախագահ — (Խօսքն ուղղելով Ապտուլ Ղանի պէյին)։ — Ձեր անո՞ւնը։

Ապտուլ Ղանի պէյ — Ապտուլ Ղանի։

Նախագահ — Հայրանո՞ւնը։

Ապտուլ Ղանի պէյ — Հաճի Հիւսէյն

Նախագահ — Քանի՞ տարեկան էք։

Ապտուլ Ղանի պէյ — Քառասուն։

Նախագահ — Որտե՞ղ էք ծնուել։

Ապտուլ Ղանի պէյ — Էրզինճանում։

Նախագահ — Որտե՞ղ էք բնակւում։

Ապտուլ Ղանի պէյ — Գատը Քէօյ, Ճեվիզլիքում(3)։

Նախագահ — Ձեր կրթութի՞ւնը։

Ապտուլ Ղանի պէյ — Բարձրագոյն։

Նախագահ — Նախկինում դատուածութիւն ունեցե՞լ էք։

Ապտուլ Ղանի պէյ — Ո՛չ, էֆենտի։

Նախագահ — Ձեր ներկայ պաշտօ՞նը։

Ապտուլ Ղանի պէյ — Ներկայումս պաշտօն չունեմ։ Նախկինում եղել եմ «Իթթիհատ»-ի ներկայացուցիչ։

Նախագահ — Նախկին պաշտօնը՞։

Ապտուլ Ղանի պէյ — Զինուորական եմ եղել, լեյտենանտի կոչումով։

Նախագահ — (Խօսքն ուղղելով Պեսիմ Զուհտի պէյին)՝ Ձեր անո՞ւնը։

Պեսիմ պէյ — Պեսիմ Զուհտի։
Նախագահ — Հայրանո՞ւնը։
Պեսիմ պէյ — Զուհտի
Նախագահ — Քանի՞ տարեկան էք։
Պեսիմ պէյ — Քառասուներեք։
Նախագահ — Որտե՞ղ էք ծնուել։
Պեսիմ պէյ — Օտեմիշուում(4)։
Նախագահ — Որտե՞ղ էք բնակւում։
Պեսիմ պէյ — Էսկիշեհիրում։
Նախագահ — Ձեր կրթութի՞ւնը։
Պեսիմ պէյ — Աւարտել եմ Ռազմական բժշկական ուսումնարանը։
Նախագահ — Ձեր ներկայ պաշտօ՞նը։
Պեսիմ պէյ — Էսկիշեհիրի պատասխանատու քարտուղար։
Նախագահ — Ամուսնացա՞ծ էք։
Պեսիմ պէյ — Այո՛։
Նախագահ — Նախկինում դատուածութիւն ունեցե՞լ էք։
Պեսիմ պէյ — Ո՛չ։
Նախագահ — (Խօսքն ուղղելով Դոկտ. Ահմետ Միտհատ պէյին)՝ Ձեր անո՞ւնը։
Միտհատ պէյ — Դոկտ. Ահմետ Միտհատ։
Նախագահ — Հայրանո՞ւնը։
Միտհատ պէյ — Հաճի Հասան։
Նախագահ — Որտեղացի՞ էք։
Միտհատ պէյ — Կեսարացի։
Նախագահ — Որտե՞ղ էք բնակւում։
Միտհատ պէյ — Պրուսայում։
Նախագահ — Ձեր ներկայ պաշտօ՞նը։
Միտհատ պէյ — «Միութիւն եւ Առաջադիմութիւն» կուսակցութեան Պրուսայի պատասխանատու քարտուղար։
Նախագահ — Ձեր կրթութի՞ւնը։

Միտհատ պէյ — Բարձրագոյն։

Նախագահ — Քանի՞ տարեկան էք։

Միտհատ պէյ — Երեսունչորս։

Նախագահ — Նախկինում դատուածութիւն ունեցե՞լ էք։

Միտհատ պէյ — Այո՛, զինուորական մի հարցով դատաքննութեան եմ ենթարկուել Ռազմական ատեանում։

Նախագահ — Ի՞նչ պատճառով։

Միտհատ պէյ — Ընտրութիւնների երկրորդ շրջանում, ես Վանի պատգամաւոր էի։ Հրաժարական տալու անհրաժեշտութիւն չկար։ Քաղաքական հարցերով զբաղուելու համար Ռազմական ատեանը ինձ զրկեց զինուորական աստիճանից(5)։

Նախագահ — (Խօսքն ուղղելով արձանագրող քարտուղարին)՝ կարդացէ՛ք (քարտուղարը ընթերցում է)։

ՌԱԶՄԱԿԱՆ ԱՐՏԱԿԱՐԳ ԱՏԵԱՆԻ ՎՍԵՄ ՆԱԽԱԳԱՀՈՒԹԵԱՆԸ

Այսօր, ժամը 3:35-ին, Ռազմական արտակարգ ատեանի կողմից շտապ պահանջուած 7 անձերից Ճեմալ պէյը հիւանդութեան պատճառով գտնուում է Կիւմիւշ խանէի հիւանդանոցում։

21-6-1335 թ.
[1919 թ. Յունիսի 21]

Կալանատան տեսուչ՝ գայմագամ Ալի

Նախագահ — (Խօսքն ուղղելով գլխաւոր դատախազի օգնականին), էֆենտիներից մէկը հիւանդութեան պատճառով գտնուում է Կիւմիւշ խանէի հիւանդանոցում։ Տրուէ՛ք ձեր կարծիքը այդ մասին։

Գլխաւոր դատախազի օգնական Ֆերիտուն պէյ — Պահանջում եմ նրա դատաքննութիւնը յետաձգել։

Նախագահ — Դատաքննութիւնը յետաձգելու վճիռը հաստատւում է։ (Խօսքն ուղղելով քարտուղարին)՝ Կարդացէ՛ք։

(Արձանագրող քարտուղարը ընթերցում է մեղադրական եզրակացութիւնը)։

ՄԵՂԱԴՐԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹԻՒՆ

Ներքին ապահովութիւնը վտանգելու ամբաստանութեամբ, տարբեր ժամանակներում կալանքի տակ են վերցուել «Միութիւն եւ Առաջադիմութիւն» կուսակցութեան Մանիսայի պատասխանատու քարտուղար՝ Աւնի պէյը, վերակազմեալ կուսակցութեան Պէյօղլուի պատասխանատու քարտուղար՝ Հասան Սելահէտտին պէյը, Անգարայի նախկին պատգամաւոր՝ Հիլմի պէյը, [կուսակցութեան] Բալուի պատասխանատու քարտուղար՝ Պեսիմ Զուհտի պէյը, կուսակցութեան Հալէպի պատասխանատու քարտուղար՝ Մեհմետ Ճեմալ պէյը, Գարահիսարի նախկին պատգամաւոր՝ Աղաօղլու Ահմետ պէյը, Պրուսայի պատասխանատու քարտուղար՝ կեսարացի Դոկտ. Միտհատ պէյը, Սուարիի գայմագամութիւնից թոշակառու՝ Մումթազ պէյը, Սինոպի նախկին պատգամաւոր՝ Հասան Ֆեհմի պէյը, Սարուխանի նախկին պատգամաւոր եւ վերակազմեալ կուսակցութեան նախկին պատգամաւոր՝ Սապրի պէյը, Միրգունի Ազգային պաշտպանութեան նախագահ՝ «Միութիւն եւ Առաջադիմութիւն» կուսակցութեան պատասխանատու քարտուղարի տեղակալ՝ Ճեւտեդ պէյը, Ստամպուլի նախկին պատգամաւոր՝ Սելահէտտին Ճիմճոզ պէյը, Էրզրումի նախկին պատգամաւոր՝ Ազգային գործակալութեան տնօրէն՝ Հիւսէյն Թոսուն պէյը, Ստամպուլի պանքի ներկայացուցիչ՝ «Միութիւն եւ

Առաջադիմութիւն» կուսակցութեան Սալոնիկի նախկին պատասխանատու քարտուղար՝ Հասան Նամըք պէյը, Պրուսայի պատասխանատու քարտուղար՝ Ալի Ռիզա պէյը, Գոնիայի պատասխանատու քարտուղարի տեղակալ՝ Ապտուլ Քատիր պէյը, Գոնիայի նախկին վալի՝ Սամիհ Ռիֆաթ պէյը, Գոնիայի ոստիկանութեան նախկին պետ՝ Սատէտտին պէյը, կուսակցութեան Գոնիայի նախկին ներկայացուցիչ՝ բեռնակիրների վերակացու՝ Ֆերիտ պէյը, Աքշեհիրի Ճիհանպէյլի Նահիէի կառավարիչ՝ Ֆեհմի պէյը, Աքշեհիրի քաղաքագլուխ՝ Միւֆթի Զատէ Քեամիլ պէյը, Աքշեհիրի ոստիկանապետի նախկին տեղակալ՝ Սպարդայի բանտում կալանքի տակ գտնուող՝ Հասան Պասրի պէյը, կուսակցութեան Ատաբազարի ներկայացուցիչ՝ Համիտ պէյը, Հալէպի շրջակայքի չեթէների խմբի առաջնորդ՝ Հիւսէյն Նեճատի պէյը, կուսակցութեան Սիվասի ներկայացուցիչ՝ Ղանի պէյը, կուսակցութեան Պոլվատինի ներկայացուցիչներ՝ Միւֆթի Մեհմետ Ալի, Հաճի Աթա, եւ Գարագատը Հասան-Հիւսէյն պէյերը, կուսակցութեան Էտիրնէի ներկայացուցիչ՝ Ապտուլ Ղանի պէյը, (...)(6), Էնվեր էֆենտիի հայրը՝ Հաճի Ահմետ փաշան։

Վերոյիշեալ անձնաւորութիւններին վերաբերուող 1335 (1919) թուականի Յունիսի 10-ի որոշման մի շարք կէտերն ամբողջացնելուց յետոյ, դատարանի նախագահութեանը եւ դատախազութեանը հնարաւորութիւն տրուեց զանազան փաստաթղթերի հիման վրայ կազմելու մեղադրական եզրակացութիւնը։ Նախագահութեան որոշումով տեղի ունեցած ընդհանուր հետաքննութիւնից յետոյ պարզուեց, որ մեղադրեալ Աւնի պէյը, Մանիսայում գտնուելու ընթացքում, Հերտեմ, Իսմայիլ, Ջերքէզ Մեհմետ եւ Հաճի Հասան անուններով մարդկանցից փոխառութեան մուրհակներ առնելու ընթացքում, բռնութիւն է գործադրել եւ 1330 (1914) թուականի Յուլիսին, պատասխանատու քարտուղար նշանակուելուց յետոյ, անձամբ մաս-

նակցել է 1332 (1916), 1333 (1917), 1334 (1918) թուականներին տեղի ունեցած կուսակցութեան համագումարներին։ Կուսակցութեան Հալէպի պատասխանատու քարտուղար Ճեմալ պէյը սահմանադրութեան հռչակումից յետոյ եղել է Գոնիայի եւ Հալէպի «Միութիւն եւ Առաջադիմութիւն» կուսակցութեան պատասխանատու քարտուղարը։ Հասան Սելահէտտին պէյը 1329 (1912) թուականից սկսած կատարել է յիշեալ կուսակցութեան Ստամպուլի պատասխանատու քարտուղարի եւ Ճեմալ պէյի գրասենեակի քարտուղարութեան պարտականութիւնները։ Միրգունի ազգային պաշտպանութեան նախագահութիւնում գտնուելու ընթացքում, Ճեւտեդ պէյը միաժամանակ փոխարինել է Միրգունի պատասխանատու քարտուղար Ֆերիտ պէյին։ Պեսիմ Զուհտի պէյը 1330 (1914) թուականին, պատասխանատու քարտուղար է եղել Աֆիոն Գարահիսարում, իսկ երեք տարի անց՝ Էսկիշեհիրում։ Միտհատ պէյը Պալքանեան պատերազմից յետոյ Բալուում ստանձնել է պատասխանատու քարտուղարի պաշտօնը եւ մինչեւ 1331 (1915) թուականի վերջը գտնուել է այդ պաշտօնում, իսկ յետագայում փոխարինել է Պրուսայի պատասխանատու քարտուղար՝ Իպրահիմ պէյի տեղը նշանակուած Նեսիմի պէյին։ Ապտուլ Ղանի պէյը սահմանադրութեան հռչակումից առաջ ստանձնել է կուսակցութեան Էտիրնէի հսկիչի պարտականութիւնը։ Այսպիսով, վերոյիշեալները մինչեւ կուսակցութեան լուծարքի ենթարկուելը զբաղացրել են նշուած պաշտօնները։

Սահմանադրութեան հռչակումից յետոյ, «Միութիւն եւ Առաջադիմութիւն» կուսակցութիւնը, շարունակել է մընալ որպէս քաղաքական կուսակցութիւն եւ ուժի դիրքերից ելնելով, երկրի կառավարումը վերցրել է իր ձեռքը։ Կուսակցութեան պատասխանատու քարտուղարներն իրենց գործողութեան ընթացքում անընդհատ միջամտել եւ իրենց կամքն են թելադրել պետական բոլոր գործերում,

իսկ կարեւոր հարցերն էլ լուծուել են կուսակցութեան կենտրոնական կոմիտէի որոշումներով։ Ընդունուած յատուկ օրէնքի համաձայն, այլ վայրեր տարագրուող [հայերի] քարաւանները ոչնչացուել են ճանապարհին՝ կուսակցութեան կողմից ստեղծուած քրէական յանցագործ հրոսակախմբերի կողմից, իսկ նրանց գոյքն ու ունեցուածքը կողոպտուել եւ յափշտակուել է։

«Միութիւն եւ Առաջադիմութիւն» կուսակցութեան առաջնորդները մի ներքին ահաբեկչական ուժ ստեղծելով՝ զանազան ձեւերով այլափոխել են Օսմանեան կայսրութեան սահմանադրական օրէնքները եւ իրենց քմահաճ գործարքներն իրականացրել են վիլայէթներում «պատասխանատու քարտուղարներ» եւ «լիազօրներ» անուան տակ իրենց մարդկանց միջոցով։ Բացի այդ, հարստութիւն դիզելու մոլուցքով տարուած, օգտագործել են պատերազմական իրավիճակը, եւ ժողովրդին խիստ անհրաժեշտ պարենի հարցում, զբաղուել՝ չարաշահումներով եւ վերավաճառքով։ Իրենց այս արարքին արտաքուստ օրինական ձեւ տալով՝ գործել են ըստ անձնական շահերի։ Ինչպէս պարզաբանուած էր վերոյիշեալ Յունիսի 10 թուագրութիւնը կրող որոշման մէջ, այդ բոլորն իրենց խոստովանութեամբ բացայայտուել էր նախնական հարցաքննութեան ընթացքում։ Առաջին հերթին ուշադրութիւնը բեւեռւում է կատարուած յանցագործութիւնների անմիջական մասնակիցների, իսկ այնուհետեւ նրանց հետ անուղղակիօրէն կապ ունեցողների վրայ։

Նրանց կատարած ոճրագործութիւններն առնչւում են քրէական օրէնսդրութեան 45-րդ յօդուածի համաձայն 55-րդ յօդուածի վերջին մասին։ Միեւնոյն ժամանակ քրէական օրէնսդրութեան 89, 204 յօդուածների համաձայն, նրանք վերցուել են կալանքի, իսկ նրանց նկատմամբ յարուցուած դատական գործը նպատակայարմար է եղել լսել Ռազմական արտակարգ ատեանում։ Ինչ վերաբեր-

ւում է միւս մեղադրեալներին, ապա կուսակցութեանը նրանց [ակտիւ] ծառայելու հարցը ակնյայտօրէն չի ապացուցուած, հետեւաբար յիշեալների հետաքննութիւնը շարունակելու որեւէ օրինական պատճառ գոյութիւն չունի։ Այդ թւում Համիտ պէյի՝ սահմանադրութեան հռչակումից յետոյ, կուսակցութեան հետ առնչութիւն ունենալու հարցը չի պարզաբանուած, ինչպէս նաեւ Նեճատի էֆենտիի համագործակցութիւնը «Թեշքիլաթ-ը մահսուսէ»-ի հետ եւ Պապ-ը Ալիի(7) դէպքին նրա մասնակցութիւն ունենալու հարցը։ [Կուսակցութեան] Իզմիտի հսկիչ՝ Իսմայիլ Հաքքը պէյը եղել է Ատաբազարի հարկային տեսուչը։ Իհսան Նամըք պէյը մինչեւ 1329 (1913) թուականի Ապրիլ ամիսը եղել է Սալոնիկի «Միութիւն եւ Առաջադիմութիւն» կուսակցութեանը պատկանող դպրոցի տնօրէնը եւ կատարել է կուսակցութեան լիազօրի պարտականութիւնը։ Այնուհետեւ ստանձնել է [քաղաքի] պանքի տեսուչի պաշտօնը եւ ներքին կանոնադրութեան համաձայն, պահպանել է իր կապը կուսակցութեան հետ, բայց որոշակի ակտիւ համագործակցութիւն չի ունեցել։ Հիլմի պէյը (1330 (1914) թուականին ընտրուել է Անգարայի պատգամաւոր եւ ըզբաղուել է առեւտրի հարցերով։

Տեղահանութեան ընթացքում մի շարք մարդկանց դրամը, գոյքն ու ունեցուածքը յափշտակելու եւ կոտորածին օժանդակելու յանցանշաններով մեղադրւում են Գոնիայի նախկին վալի՝ Ռիֆաթ Սամիհ պէյը, Գոնիայի ոստիկանութեան նախկին պետ՝ Սատէտտին պէյը, գիւղատնտեսութեան տեսուչ՝ Թոսորաքի պէյը, Աքշեհիրի ճիտնտեսութեան տեսուչ՝ Թոսորաքի պէյը, Աքշեհիրի քաղաքագլուխ՝ Միւֆթի Զատէ Քեամիլ էֆենտին եւ Սպարտայի բանտում կալանքի տակ գտնուող ոստիկանապետի նախկին տեղակալ՝ Հասան Պասրի էֆենտին...։(8)

1919 թ. Յունիսի 19

Նախագահ — (Խօսքն ուղղելով մեղադրեալներին) — Պարզուում է, որ «Միութիւն եւ Առաջադիմութիւն» կուսակցութեան կենտրոնական կոմիտէի եւ Մէճլիսի անդամների գործադրած ոճրային արարքներին եւ այլ յանցագործութիւններին դուք եւս մասնակցութիւն էք ունեցել։ Այժմ ձեր մեղսակցութիւնն այդ հարցում քննուելու է գլխաւոր դատախազութեան կողմից, ուշադիր եղէ՛ք։

Գլխաւոր դատախազի օգնական Ֆերիտուն պէյ — էֆենտիներ, դատարանում ներկայ գտնուող մեղադրեալները եղել են «Միութիւն եւ Առաջադիմութիւն» կուսակցութեան կողմից վիլայէթներում եւ սանճակներում նշանակուած յատուկ լիազօրներ։ Այս անձնաւորութիւններն իրենց պաշտօնավարութեան ընթացքում «Միութիւն եւ Առաջադիմութիւն» կուսակցութեան եւ կառավարութեան կողմից ստացուած բանաւոր կամ գրաւոր հրամանների համաձայն, սերտ միջամտութիւն են ունեցել կառավարութեան գործերին։ Այս մարդիկ մասնակցել են մեղադրեալ Թալաաթ փաշայի եւ նրա գործընկերների կատարած յանցագործութիւններին, որոնց նպատակն էր՝ ուժի դիրքից, շեղել պետութիւնն իր օրինական ուղուց։

Նրանց գործադրած յանցանքի չափը բացայայտուելու է սոյն դատավարութեան ընթացքում։ Այս տեսանկիւնից պահանջում եմ նրանց ենթարկել դատաքննութեան։

Նախագահ — (Խօսքն ուղղելով մեղադրեալներին) — Դատապաշտպաններ ունէ՞ք։

Աւնի պէյ — Դեռեւս չենք ընտրել։

Նախագահ — Այդ մասին նախապէս յայտնել էինք· մի՞թէ ձեզ չեն ասել։

Աւնի պէյ — Ո՛չ, չեն ասել։ Մենք տեղեկութիւն չունէինք։

Սելահէտտին պէյ — Մեծարգոյ փաշա, մենք այսօր իմացանք այդ մասին։ Կէս ժամ առաջ յայտնեցին, որ ենթարկուելու ենք դատաքննութեան։ Ուստի հնարաւոր

չէր դատապաշտպան ընտրել։

Նախագահ — Դատաքննութիւնը յետաձգւում է մինչեւ Երկուշաբթի, ժամը մէկը։

Պատրաստ եղէ՛ք։

Takvim-i Vekayi, 21 Haziran 1335 (1919) № 3586

ԵՐԿՐՈՐԴ ԴԱՏԱՎԱՐՈՒԹԻՒՆ(9)

1335 թ. 1919 Յունիսի 23, Երկուշաբթի

Նախագահ — (Խօսքն ուղղելով մեղադրեալներին) — Այս էֆենտիներին դատապաշտպան ընտրե՞լ էք։

Մեղադրեալներ — Այո՛, էֆենտի։

[Այնուհետեւ մեղադրեալները հարցաքննութեան են ենթարկւում մէկ առ մէկ]

Կուսակցութեան Էտիրնէի(10) պատասխանատու քարտուղար Ապտուլ Ղանի պէյի հարցաքննութիւնը

Նախագահ — Էտիրնէում տեղահանութիւն տեղի ունեցա՞ւ, թէ՞ ոչ։

Ապտուլ Ղանի պէյ — Այո՛, Էտիրնէում հայերին տեղահանեցին։

Նախագահ — Ինչպէ՞ս տեղի ունեցաւ։

Ապտուլ Ղանի պէյ — Տեղեկութիւն չունեմ։ Մի օր, վաղ առաւօտեան, երբ դեռ անկողնում մէջ էի, ինձ մօտ եկան մի քանի ծանօթ հայեր եւ սկսեցին պատմել տեղի ունեցած դէպքերի մասին։ «Մերոնց մի մասին տարան, միւսներին եւս տանելու են» ասելով, ինձանից օգնութիւն խնդրեցին։ Նրանք ինձ օժանդակել էին պուլղարների նուաճման ժամանակ(11)։ Ասացի, որ կը դիմեմ վիլայէթի վարչութիւն եւ հնարաւորին չափ կ'աշխատեմ օգնել։ Այնուհետեւ միասին գնացինք վիլայէթ։ Վալիին ասացի, որ

նրանք ոչ մի առնչութիւն չունեն «Կոմիտէի»(12) հետ, որ անմեղ մարդիկ են եւ խնդրեցի նրանց տեղահանութեան չենթարկել։ Վալին ասաց. «Այս մարդկանց մասին ես էլ եմ մտահոգուած բայց հրամանը խիստ է եւ վերաբերւում է բոլորին(13) (ընդգծումը մերն է — Ա.Փ.) Հիմա այդ ուղղութեամբ ջանք եմ գործադրում, գուցէ կարողանամ մի բան անել»։ Այս խօսակցութիւնը նոյնութեամբ յայտնեցի իրենց։ Այդ մարդիկ տեղահանութեան չենթարկուեցին, բայց թէ ինչպէ՞ս եղաւ, դա ես էլ չգիտեմ։

Նախագահ — Շատ լաւ, նախքան այդ հայերի ձեզ դիմելը, ոչ մի բան չէ՞իք լսել այդ մասին։

Ապտուլ Ղանի պէյ — Ոչ մի տեղեկութիւն չունէի։

Նախագահ — Չէ՞ որ տեղահանութիւնը նրանց գալուց առաջ էր տեղի ունեցել։

Ապտուլ Ղանի պէյ — Ո՛չ։

Նախագահ — Մինչ այդ, ոչ մէկը չէ՞ր տեղահանուել։

Ապտուլ Ղանի պէյ — Ո՛չ։

Նախագահ — Շատ լաւ, այդ մասին տեղեկանալուց յետոյ որեւէ միջոց ձեռնարկեցի՞ք արդեօք «Միութիւն եւ Առաջադիմութիւն» կուսակցութեան ձեր մասնաճիւղի մէջ։

Ապտուլ Ղանի պէյ — Ո՛չ, փաշա, ոչ մի միջոց չձեռնարկեցինք։

Նախագահ — Բայց չէ՞ որ «Միութիւն եւ Առաջադիմութիւն» կուսակցութեան մասնաճիւղերը միմիայն մահմետական տարրերի համար չեն ստեղծուել, այլ Օսմանեան կայսրութեան բոլոր ժողովուրդների համար եւ բարի գործի համար աշխատողը...

Ապտուլ Ղանի պէյ — Արդէն անունը «Օսմանեան» է։ Միայն «Միութիւն եւ Առաջադիմութիւն» չէ...։

Նախագահ — Շատ լաւ, տուեալ վայրից տեղահանուող հայերի նկատմամբ ի՞նչպէս եղաւ որ ոչ մի միջոց չձեռնարկեցիք։

Ապտուլ Ղանի պէյ — Մեծարգոյ փաշա, տեղահանու-

թիւնը տեղի էր ունենում օրէնքի հիման վրայ։ Մենք կարո՞ղ էինք արդեօք հակառակուել պետութեան հաստատած օրէնքին։

Նախագահ — Օրէնքի մէջ այդպիսի բացայայտ բան կա՞յ արդեօք։

Ապտուլ Ղանի պէյ — Ինչ-որ տեղահանութեան օրէնք են ասում, դրա հիման վրայ էին կատարում։ Այն գործադրւում էր տուեալ վիլայէթի վալիի կողմից, նոյնիսկ ոստիկանութեան եւ ժանտարմի միջոցով։ Մենք ինչպէ՞ս կարող էինք միջամտել։ Չէ՞ որ օրէնք կար, ժանտարմ կար։

Նախագահ — Օրէնքի մէջ ասուած է, որ տեղահանութիւնը կատարուելու է ռազմական տեսանկիւնից անհրաժեշտ եղած վայրերում։ Միթէ դուք չէ՞ք նկատում, որ ձեզ մօտ դրա անհրաժեշտութիւնը չկար, եւ միթէ չէ՞ք կարող դրա աւելորդ լինելու հարցը քննարկել եւ ինչ-որ բան ձեռնարկել այդ ուղղութեամբ։

Ապտուլ Ղանի պէյ — Մեծարգոյ փաշա, ռազմական նպէս անհրաժեշտ լինելու կամ չլինելու մասին մենք ի՞նչ իմանայինք, որ դրա համեմատ որեւէ մի բան ձեռնարկէինք։ Վիլայէթը իր վալին ունէր, որը կառավարութեան ներկայացուցիչն էր։ Օրէնքի հիման վրայ կատարող այդ գործի համար մենք կարո՞ղ էինք արդեօք «իրաւացի ես» կամ էլ «անիրաւացի ես» ասել նրան։

Նախագահ — Վալին նոյնպէս հրաման էր ստացել։ Այդ հրամանի անտեղի լինելու մասին կարող էր յայտնել։

Ապտուլ Ղանի պէյ — Մեզ այդպիսի բան չասաց։ «Դուք ասացէք», «Գրէք ձեր կենտրոնին եւ դադարեցրէք տեղահանութիւնը» ասելով, երբեւէ կարգադրութիւն չարեց։ Վալին եթէ ասէր, գուցէ մենք էլ գրէինք այդ մասին։ Մեծարգոյ փաշա, բոլոր դէպքերում, ես չեմ ասում, որ այդ բոլորը ճիշդ էին։ Իրականում, այդ հայերը կատարեալ պատուի տէր մարդիկ էին։ Նրանք պուլղարների նուաճման ընթացքում փրկեցին բաւականին [թուրք] սպայ-

կան ընտանիքներ։ Այս բոլորը մենք շատ լաւ տեսնում էինք։ Էտիրնէն յանկարծակի հակառակորդին ձեռքն անցնելու ընթացքում, բաւականին ցաւալի դէպքեր տեղի ունեցան։ Ես ինքս վիրաւորուած վառւում էի հիւանդանոցում՝ Ջերմութեան մէջ։

Նախագահ — Յամենայն դէպս, այդքան տեղեկութիւն ունենալուց յետոյ, դուք պարտաւոր էիք անձամբ դիմելու եւ ձեր ժողովում քննարկելուց յետոյ, բոլորդ միատեղ դիմէիք...

Ապտուլ Ղանի պէյ — Մեծարգոյ փաշա, մեր ժողովներում նման հարցեր չեն քննարկւում։ Ես ինքս վալիի մօտ չեմ գնացել, որպէս «Միութիւն եւ Առաջադիմութիւն» կուսակցութեան ներկայացուցիչ, այլ այդ [հայերի] արժանիքներն են ստիպել ինձ։

Նախագահ — Բայց եւ այնպէս, օսմանցի որեւէ մէկի նկատմամբ բռնութիւն գործադրելու հանգամանքը լսելով, ինչպէ՞ս է եղել, որ ոչ մի միջոց չէք ձեռնարկել։

Ապտուլ Ղանի պէյ — Այդ հարցը մեր ժողովի հետ առնչութիւն չունի։ Դա բոլոր օսմանցիներին ուղղելու հարց է։ Ինչո՞ւ էք միմիայն ինձ հարցնում։

Նախագահ — Ո՛չ, բոլոր օսմանցիներին չի վերաբերում։ Հարցը [պատերազմական] գործողութիւնների ընթացքում հրամանատարների անհրաժեշտ գտած վայրերի տեղահանութեան մասին է։

Ապտուլ Ղանի պէյ — Ես հրամանատարների հետ որեւէ կապ չեմ ունեցել։

Նախագահ — Ես չեմ ասում, որ ունեցել ես։ Միթէ դուք չէ՞իք հասկանում, որ Էտիրնէի հայութիւնը բանակի կամ ռազմական գործողութիւնների հետ ոչ մի առնչութիւն չունէր։

Ապտուլ Ղանի պէյ — Մեծարգոյ փաշա, Էտիրնէն պատերազմական գօտու մէջ էր մտնում։

Նախագահ — Ամբողջ երկիրը պարերազմական գօտու

մէջ էր։

Ապտուլ Ղանի պէյ — Կալիպոլիի(14) վրայ յարձակուելու դէպքում, կատարելապէս պատերազմական գօտու մէջ էր գտնուելու, դրա համար էլ մենք ոչ մի բանի չէինք խառնուում։

Նախագահ — Էտիրնէից տեղահանուածները մեծ մասամբ գնացին Թեքֆուր լեռը(15), այդպէս չէ՞։

Ապտուլ Ղանի պէյ — Այդ մասին կառավարութիւնը տեղեակ էր։

Նախագահ — Բնական է, որ դուք էլ գիտէիք այդ մասին։

Ապտուլ Ղանի պէյ — Այո՛, գիտէի։ Իզմիտի կողմից եւ դարձրին եւ մեծ մասը գնաց դէպի Թեքֆուր լեռը։

Նախագահ — Էտիրնէից հանելով՝ դէպի Թեքֆուր լեռը ուղարկելը արդեօ՞ք ապահովում էր իրաւունքը։

Ապտուլ Ղանի պէյ — Մեծարգոյ փաշա, այդ արդէն վալիի գործն է։

Նախագահ — Շատ լաւ, միթէ անհրաժեշտութիւն չկա՞ր վալիի անօրինական արարմունքի մասին զեկուցելու։

Ապտուլ Ղանի պէյ — Մեծարգոյ փաշա, ի՞մ մասին է խօսքը։

Նախագահ — Կուսակցութեան մասին է։

Ապտուլ Ղանի պէյ — Կուսակցութեան համար կարող էր անհրաժեշտ չլինել։ Մեր կուսակցութիւնը երբեւէ չէր կարող միջամտել վալիի գործունէութեանը։ Դրա անհրաժեշտութիւնը նոյնիսկ չկար։ Եթէ մի բան էլ նկատէր, ապա խնդրանքի ձեւով կարող էր ասել։ Բոլոր կուսակցութիւնները այդպէս են վարուում...։

Նախագահ — Ես հրամայելու նկատառումով չասացի։ Մուստաֆա փաշան հարցնում է՝ «Բոլոր մահմեդականների օգտին» ասելով ի՞նչ էք հասկանում։

Ապտուլ Ղանի պէյ — Մեծարգոյ փաշա, ի՞նչը բոլոր մահմեդականների օգտին է։

Նախագահ — Մի քիչ առաջ ասացիք...

Ապտուլ Ղանի պէյ — Ես այդպիսի բան չասացի։ Երբ դուք «Միութիւն եւ Առաջադիմութիւն» ասացիք, ես էլ նշեցի, որ այդ իր մէջ ընդգրկում է բոլորին, քանի որ կրում է «Օսմանեան Միութիւն եւ Առաջադիմութիւն» անունը։

Նախագահ — Դուք չնկատեցի՞ք արդեօք, որ տեղի ունեցող այդ արարքները անօրինական են։

Ապտուլ Ղանի պէյ — Ի՞նչ արարքներ...

Նախագահ — Էտիրնէի տեղահանութիւնը։

Ապտուլ Ղանի պէյ — Մեծարգոյ փաշա, ես այդ գործով չեմ զբաղուել Էտիրնէում, ուստի չգիտեմ՝ այդ հարցում իրաւացի՞ էին, թէ՞ ոչ։ Ես չգիտեմ՝ տեղահանուող հայերի մէջ կայի՞ն արդեօք այնպիսի մարդիկ, որոնք առնչութիւն ունենային «Կոմիտէի» աշխատանքների հետ կամ ձգտէին խափանել ռազմական գործողութիւնները։ Այն մասին անտեղեակ լինելու պատճառով, չեմ կարող որոշակի կարծիք յայտնել։ Մեծարգոյ փաշա, ձեզ յայտնի է, որ ես Էտիրնեցի չեմ։ Ես Էտիրնէում եմ գտնուել պաշարման ժամանակ, այն էլ՝ վիրաւոր վիճակում։ Բնակչութեան հետ շփում չեմ ունեցել, որպէսզի կարողանայի կարծիք յայտնել մարդկանց լաւ կամ վատ յատկանիշների մասին։ Իմ իմացածը միայն այդ մի քանի պատուաւոր մարդիկն են, որոնք կապալառու լինելու հանգամանքով յաճախ այցելում էին իմ պառկած հիւանդանոցը։ Էտիրնէն գրաւելու ընթացքում, նրանք պուլղարներից պաշտպանեցին մեր զինուորականների տներն ու ընտանիքները։ Այդ ժամանակ, ես հասկացայ, որ այդ մարդիկ կատարելապէս լաւ օսմանցիներ են։ Պուլղարական դրօշը բարձրացնելուց յետոյ, մի շարք մարդիկ, այդ թւում եւ քրիստոնեայ մեր հայրենակիցները, պուլղարներից առաւել, սկսեցին խաղալ մահմեդականների պատուի հետ։ Հակառակ այդ բոլորին, այս մարդկանցից ոչ մէկը նման

արարք չգործադրեց։ Ուստի նրանց մասին ինչ որ գիտէի, գնացի եւ յայտնեցի վալիին։ Իսկ վալիի կատարած արարքի իրաւացի կամ անիրաւացի լինելը ոստիկանութեան տեսուչը կարող է յայտնել։ Տուեալ ժամանակ, ես բնաւ չեմ զբաղուել կարգապահական հարցերով։

Նախագահ — Պատասխանէ՛ք մեծարգոյ փաշայի հարցին։

Ցանձնաժողովի անդամ՝ գեներալ-մայոր Զեքի փաշա — Այս արարքի իրաւացի կամ անիրաւացի լինելու հարցը հասկանալու համար փայլուն օրինակ է ձեզ ծանօթ պատուաւոր մարդկանց տեղահանելու նախաձեռնութիւնը։

Ապտուլ Ղանի պէյ — Այդ նախաձեռնութեան հարցը ինձ համար մութ է։ Միտքս կիսատ մնաց։ Նրանք եկան ինձ համար մութ է։ Միտքս կիսատ մնաց։ Նրանք եկան ինձ ասացին այդ մասին, ես էլ գնացի յայտնեցի վալիին։ Ինչպէս երեւում է, դրանից յետոյ տեղահանութիւն տեղի չունեցաւ։ Ես չգիտեմ, գուցէ, իմ բարեխօսելուց յետոյ այդ երկուսի տեղահանութիւնը չկատարուեց։

Զեքի փաշա — Միթէ այդ արարքը լիովին չի՞ բացայայտում տեղահանութեան իրաւացի կամ անիրաւացի լինելու հարցը։

Ապտուլ Ղանի պէյ — Ի՞նձ նկատի ունէք, փաշա։ Ըստ իս, այդ արարքը բաւարար չէ։ Այդ երկու հոգին արդէն տեղահանութեան չենթարկուեցին։

Զեքի փաշա — Այդ պատուաւոր մարդկանցից երկո՞ւսը։

Ապտուլ Ղանի պէյ — Այո՛։

Զեքի փաշա — Այդ պատուաւոր մարդկանց տեղահանութեան ենթարկելը անիրաւացի մի արարք է։

Ապտուլ Ղանի պէյ — Հնարաւոր է։

Զեքի փաշա — Քանի որ այդ արարքը օրինական չէ, ուրեմն այդ երկու հոգու համար էլ անիրաւացի է։ Հետեւաբար ձեր [շրջանային] կուսակցութիւնը կարող էր յանձնարարել ձեր [շրջանային] կուսակցութիւնը կարող էր յանձնարարել, կամ ինչ-որ այլ ձեւով մերժել կառավարութեան

կողմից անօրինական կատարուող այդ տեղահանութիւնները։

Ապտուլ Ղանի պէյ — Մեծարգոյ փաշա, այսուհանդերձ էտիրնէում համընդհանուր տեղահանութիւն տեղի չունեցաւ։ Ես խնդրում եմ, որպէսզի դուք տարբերէք էտիրնէի դէպքը այլ վիլայէթներում տեղի ունեցած [տեղահանութեան եւ կոտորածի] հետ։ Տեղահանութիւնը առանձին գործ է։ Այդ մասին կառավարութիւնը օրէնք հրապարակեց։ Ուրեմն կառավարութիւնը, նախարարները հաւանութիւն տուել են այս խնդրին, եւ ինչի հիման վրայ հաւանութիւն տալը չի առնչւում «Միութիւն եւ Առաջադիմութիւն» կուսակցութեան էտիրնէի մասնաճիւղի հետ...(16)։

Էսկիշեհիրի պատասխանատու քարտուղար՝ Դոկտ. Պեսիմ Զուհտի պէյի հարցաքննութիւնը

Նախագահ — Էսկիշեհիրում տեղահանութիւն տեղի ունեցա՞ւ, թէ՞ ոչ։

Զուհտի պէյ — Այո՛, բայց ես տեղեակ չեմ։

Նախագահ — Դուք այդտեղ չէ՞իք։

Զուհտի պէյ — Ո՛չ։

Նախագահ — Դրա հետեւանքների մասին որեւէ բան չէ՞ք լսել։

Զուհտի պէյ — Մեծարգոյ փաշա, ինչի՞ մասին։

Նախագահ — Դուք չէ՞ք լսել, արդեօք, որ հայերի տեղահանութեան ժամանակ վատ արարքներ են կատարուել, այսինչ ճամբով են գնացել, մի մասը կոտորուել է, մի մասի նկատմամբ բռնութիւններ են գործադրուել, նրանց ունեցուածքը կողոպտուել է, եւ այլն։

Զուհտի պէյ — Մեծարգոյ փաշա, տեղեակ չեմ։

Նախագահ — Էսկիշեհիրում այդպիսի բաներ եղե՞լ են, թէ՞ ոչ։

Զուհտի պէյ — Ո՛չ։

Նախագահ — Լքեալ գոյքի մասին որեւէ բան գիտէ՞ք։

Զուհտի պէյ — Լքեալ գոյքի հարցով զբաղւում էր «Յատուկ յանձնաժողովը»։ Դրա համար էլ ես այդ հարցով չեմ զբաղուել։

Նախագահ — Նախքան Էսկիշեհիրի պատասխանատու քարտուղար լինելը, ի՞նչ պաշտօն էք ունեցել։

Զուհտի պէյ — Գարահիսարում էի։

Նախագահ — Գարահիսարում պատասխանատու քարտուղա՞ր էիք։

Զուհտի պէյ — Այո՛։

Նախագահ — Այդտեղ տեղահանութիւն տեղի ունեցա՞ւ, թէ ոչ։

Զուհտի պէյ — Այո՛, տեղի ունեցաւ։

Նախագահ — Ինչպէ՞ս տեղի ունեցաւ։

Զուհտի պէյ — Տեղի կառավարութիւնը տեղահանութեան վերաբերեալ հրաման էր ստացել, եւ դրա հիման վրայ տեղահանութիւնը կատարուեց։

Նախագահ — Բայց գիտէ՞ք որ բաւականին բռնութիւններ են գործադրուել։

Զուհտի պէյ — Մեծարգոյ փաշա, ես տեղեակ չեմ։

Նախագահ — Մենք այդ բոլորի մասին տեղեակ ենք, որովհետեւ Գարահիսարում տեղի ունեցած դէպքերի վերաբերեալ մի գործ ունենք։

Զուհտի պէյ — Ես չեմ կարծում, որ Գարահիսարում այդպիսի բռնութիւններ են տեղի ունեցել, որովհետեւ ես ինքս այնտեղ էի գտնուում։ Բոլորն էլ գոհ էին։

Նախագահ — Ձեր գտնուած տեղը Գարահիսարի Շարքին չէ՞ր(17)։

Զուհտի պէյ — Ո՛չ էֆենտի, Աֆիոն Գարահիսարն էր։

Նախագահ — Մինչեւ լքեալ գոյքի յանձնաժողովի կազմուելը, Էսկիշէհիրում մի շարք տարօրինակ արարքներ են տեղի ունեցել, Ինչպէ՞ս է եղել, որ դուք այդ

մասին տեղեակ չէք։

Զուհտի պէյ — Այդ բոլորը իմ ժամանակ տեղի չի ունեցել, գուցէ իմ պաշտօնավարութիւնից առաջ է եղել։

Takvim-i Vekayi, 23 Haziran 1335 (1919) № 3589

ԵՐՐՈՐԴ ԴԱՏԱՎԱՐՈՒԹԻՒՆ(18)

1335 թ. (1919) Յունիսի 28, Շաբաթ

Նախագահ — Ապտուլ Ղանի պէյը թող մնայ, միւսներին տարէ՛ք։ (Ապտուլ Ղանի պէյից բացի, միւս մեղադրեալները դուրս են հանւում դատարանի դահլիճից, այնուհետեւ նախագահը խօսքն ուղղելով արձանագրող Շէֆիք պէյին, ասում է).

— Մի հեռագիր է ստացուել, կարդացէ՛ք։

(Քարտուղարը կարդում է)։

ՌԱԶՄԱԿԱՆ ԲԱՐՁՐ ԱՏԵԱՆԻ ՆԱԽԱԳԱՀՈՒԹԵԱՆԸ

Թերթերում կարդացինք «Միութիւն եւ Առաջադիմութիւն» կուսակցութեան Էտիրնէի պատասխանատու քարտուղար՝ Ապտուլ Ղանի պէյի դատավարութեան մասին։ Նրա տուած ցուցմունքները բոլորովին չեն համապատասխանում իրականութեանը։ Գոյութիւն ունեցող փաստերն ապացուցում են, որ ինքը մասնակցել է Էտիրնէի հայերի տեղահանութեանը։ Օրինակ, տեղահանուածների մի մասի գոյքը յափշտակելուց յետոյ միւսներինը վաճառել են իրենց մերձաւորներին, այն էլ՝ իր արժէքի 2–3 տոկոսով։ Մեր կրած կորուստը չափազանց ծանր է։ Տարագրուածներից ետ են վերադարձել 100–ից միմիայն 30 տոկոսը։ Բոլորին յայտնի է, թէ վերոյիշեալը ինչպիսի՞

ազդու ներգործութիւն է ունեցել տեղահանութեան հարցում։ Մենք խնդրում ենք՝ արդարութիւնը միանգամայն բացայայտելու համար, մի անկողմնակալ յանձնախումբ ուղարկել Էտիրնէ։

Լեւոն Մերամէթճեան, Կարապետ Եազըճեան, Արմենակ Կիւրճեան, Ալթունեան, Ալեքսան Ճըրրքեան, Հայկ Քիւրքճեան, Ասատուր Պողարճեան, Թադէոս Օրալեան, Բիւզանդ Ջուալեան, Տիգրան Էսերեան, Գրիգոր Զաքըրեան, Արթին Օհանեան, Արթին Թերզեան, Շնորք Աւետիքեան, Խաչիկ Նազարեան։

Նախագահ — Դուք ի՞նչ կ'ասէիք այս հեռագրի մասին։

Ապտուլ Ղանի պէյ — Ի՞նչ ասեմ, այն ազգային ոխակալութեան արդիւնք է։ Իւրաքանչիւր մարդ իր ուզածի պէս կարող է արտայայտուել։ Այնուհանդերձ, բոլորն էլ պարտաւոր են իրենց ասածը փաստելու, այդպէս չէ՞, մեծարգոյ փաշա։ Հետեւաբար, նրանք պէտք է, որ դատարանի ներկայանան եւ ապացուցեն, թէ ես ի՞նչ ձեւով առնչութիւն եւ ինչպիսի ազդեցութիւն եմ ունեցել տեղահանութեան վրայ։ Մեծարգոյ փաշա, ես միշտ ասել եմ եւ կը պնդեմ ճշմարտութիւնը, որ բոլորովին առնչութիւն չեմ ունեցել տեղահանութեան հետ եւ այդ առթիւ ոչ մի ազդեցութիւն չեմ բանեցրել, ապրանք չեմ վերցրել եւ ոչ էլ չարաշահել իմ [պաշտօնը]։ Մեծարգոյ փաշա, նրանց ուղարկած հեռագիրը, ըստ էութեան, ինձ չի վերաբերում, այլ ուղղուած է իմ ազգի հասցէին, որովհետեւ իմ միջոցով ուզում են դատապարտել իմ ազգը։

Նախագահ — Տեղահանութեան ընթացքում դուք Էտիրնէո՞ւմ էիք։

Ապտուլ Ղանի պէյ — Այո՛, Էտիրնէում էի։

Նախագահ — Դուք մշտապէս այդտե՞ղ էիք գտնուում։

Ապտուլ Ղանի պէյ — Երբեմն գալիս էի Ստամպուլ։

Նախագահ — Ինչո՞ւ էիք գալիս Ստամպուլ։

Ապտուլ Ղանի պէյ — Թոյլտուութիւն էի վերցնում։ Ընտանիքս այստեղ էր։ Բարեկամներս, ազգականներս նոյնպէս այստեղ էին գտնւում։

Նախագահ — Տեղահանութիւնը որքա՞ն տեւեց։

Ապտուլ Ղանի պէյ — Ես ուշադրութիւն չեմ դարձրել դրան։ Ես ճիշդ եմ ասում։ Տեղահանութեան հետ առընչութիւն չեմ ունեցել։ Ճշմարտութիւնը կը բացայայտուի այն ժամանակ, երբ այդ հարցումները ուղղուեն էտիրնէի վալիին, ոստիկանապետին, ժանտարմին, [տեղահանութեան] յանձնաժողովին։ Հետաքննչական յանձնաժողով են պահանջում էտիրնէից։ Ես էլ եմ ուզում։ Թող մի անկողմնակալ յանձնաժողով գնայ եւ ամէն ինչ բացայայտի։

Նախագահ — (Խօսքն ուղղելով դատախազին)։ Այս հեռագրի կապակցութեամբ որեւէ հարց ունէ՞ք։

Դատախազի օգնական Սաքիբ պէյ — Ո՛չ, մեծարգոյ փաշա, հետաքննչական յանձնաժողովի անհրաժեշտութիւնը չկայ

Նախագահ — Էտիրնէում տեղահանութիւնը երկար չի տեւել։ Այդ կարճ ժամանակամիջոցում մի քանի անգամ Ստամպուլ գնալ գալը՞...

Ապտուլ Ղանի պէյ — Ո՛չ, էֆենտի, այդ մասին չգիտեմ։ Եթէ թոյլ տաք, տեղի ունեցածը կը բացատրեմ։ Ինչոր կատարւում էր, ես տեղեկանում էի թերթերից։ Այդ վայրերում, տեղահանութեան համար յատուկ օրեր էին նշանակում եւ մարդկանց զգուշացնում, որ 10–15 օր յետոյ ենթարկուելու են տեղահանութեան։ Մեծարգոյ փաշա, էտիրնէում այդպիսի բաներ տեղի չունեցան։ Ինչպէս ասացի, մի առաւօտ նկատեցինք, որ տեղահանութիւն է կատարուել։ Մի շարք վայրերում, էտիրնէն սահմանամերձ գօտուց գտնւում էր 40–50 մետր հեռաւորութեան վրայ։ «Կում» թաղամասում սահմանը գտնւում էր 50 մետր

հեռաւորութեան վրայ, ուստի բաւական թուով փա-
խըստականներ ելումուտ էին անում այդ կէտերից։ Այս
տեղահանութիւնը գոր-
ծադրուեց։ Կարծում եմ ամէն ինչ պարզ է։ Տեղահանու-
թիւնը տեղի էր ունեցել մէկ գիշերուայ ընթացքում։ Այդ
մասին իմացանք առաւօտեան։ Այնպէս որ, տեղահանու-
թիւնը ամիսներ չտեւեց։ Այն գործադրուեց մէկ գիշե-
ռուայ ընթացքում։ Մեծարգոյ փաշա, այդ օրը ես գըտ-
նուում էի Էտիրնէում։ Ես չեմ թաքցնում իրողութիւնը։
Եթէ տեղահանութեան ընթացքում Էտիրնէում գտնուելը
մի յանցանք է, ուրեմն տուեալ ժամանակ բոլոր այնտեղ
գտնուողները մասնակից պէտք է դառնային կատարուած
այդ յանցագործութեանը։

Նախագահ — Բնական է, որ Էտիրնէում գտնուելը չի
կարող յանցանք համարուել։ Տեղահանութեան ընթաց-
քում մի շարք բռնութիւններ են տեղի ունեցել, դուք
թաքցնում էք այդ բոլորը՝ «չգիտեմ» ասելով։

Ապտուլ Ղանի պէյ — Ո՛չ, փաշա, իմ չիմացած բանի
մասին ի՞նչ կարող եմ ասել։

Նախագահ — Տեսէ՛ք, դուք տեղահանութեան մասին
իրազեկ էք, իսկ գործադրուած բռնութիւնների մասին
ձեզ անտեղեակ էք ահում։

Ապտուլ Ղանի պէյ — Մեծարգոյ փաշա, տուեալ ժա-
մանակ Էտիրնէում ով գտնուէր, այդ տեղահանութեան
մասին տեղեակ պիտի լինէր։ Ես հիմա ենթարկուում եմ
հարցաքննութեան, ուստի այդ առթիւ ձեզ յայտնում եմ։
Եթէ հիմա Էտիրնէի քաղաքագլխին էլ բերէք, նա ես
նոյն պատասխանն է տալու։ Յետոյ, Էտիրնէի թաղերից
մէկում գտնուող սրճարանապետ Հասան Աղային էլ բե-
ռէք, նա ես նոյն պատասխանն է տալու։ Այս է իրո-
ղութիւնը։ Բացի այդ, «չարաշահում» են ասում, բայց չէ՞
որ այդքան ֆինանսական քննիչներ եկան եւ ստուգեցին։
Էտիրնէում կառավարական գործերը սովորական ընթացք

են ունեցել։ Այս էլ բնական է, որ կառավարությունը բացայայտում է տեղի ունեցող չարաշահումները։ Ես ի՞նչ կարող եմ ասել այդ չարամիտ հեռագրի մասին։ Կառավարության կողմից կատարուած հետաքննությամբ եթէ ապացուցուի իմ յանցագործությունը, ապա այդ ժամանակ ես ոչ մի ասելիք չունեմ։ Էտիրնէն շատ մօտ է Ստամպուլին. նոյնիսկ այդտեղ ինչ-որ կատարուում էր, Ստամպուլը անմիջապէս տեղեակ էր լինում։

Նախագահ — Էտիրնէում տեղահանությունը այլ վայրերի նման տեղի չէ ունեցել, այդպէս չէ՞։ Էտիրնէում հայերի հետ տեղահանուել են նաեւ յոյները։

Ապտուլ Ղանի պէյ — Էտիրնէո՞ւմ, փաշա. ո՛չ, այդպիսի բան տեղի չի ունեցել։

Նախագահ — Նրանք բոլորը միանգամ՞ից տեղահանուեցին։

Ապտուլ Ղանի պէյ — Էֆենտի, չեմ կարծում, որ Էտիրնէում այդպէս եղած լինի, լաւ չեմ յիշում։ «Պալքանների» «Իսթիրանճայի»(19) կողմերի ծովեզերեայ շրջանի յոյներին տեղափոխեցին մի այլ տեղ։ Այդ մասին՝ ես այդպէս եմ լսել։

Նախագահ — Էտիրնէից միայն հայերի՞ն տեղահանեցին։

Ապտուլ Ղանի պէյ — Այո՛, Էտիրնէից միայն հայերին տեղահանեցին, այն էլ ոչ ամբողջովին։

Նախագահ —Ինչո՞ւ

Ապտուլ Ղանի պէյ — Ես այդ մասին չգիտեմ։

Նախագահ — Ասում են, որ յաճախակի Ստամպուլ գնալով, դուք հրահանգներ էք ստացել կենտրոնական կոմիտէից։

Ապտուլ Ղանի պէյ — Ի՞նչ հրահանգ։

Նախագահ — Տեղահանության մասին։

Ապտուլ Ղանի պէյ — Տեղահանության ժամանակ ես ինքս տարին մէկ-երկու անգամ եմ եղել Ստամպուլում։

Այն տարի, երբ տեղի ունեցաւ տեղահանութիւնը, ես Սեպ-
տեմբերին եկայ [Ստամպուլ], որովհետեւ համագումար
կար։ Ես համագումարի համար էի եկել։ Նոյնիսկ ինձ հետ
բերեցի իմ ընտանիքը։ Թոյլտուութիւն վերցրի եւ մօտ 3
ամիս մնացի Ստամպուլում։ Տեղահանութեան
վերաբերեալ ես հրահանգ չեմ ստացել։ Տեղահանութեան
վերաբերեալ կենտրոնական կոմիտէից միայն մէկ անգամ
գրութիւն եմ ստացել։ Ըստ իմ իմացածի, այդպիսի գրու-
թիւն ստացան բոլոր [պատասխանատու քարտուղարները]։
Այն գրուած էր «ընդհանուրին» անուան տակ։ Պրուսայի
լիազօր Իպրահիմ պէյը, ինչպէս նաեւ միւս
պատասխանատու քարտուղարներից մի քանիսը,
անունները չեմ յիշում, տուն գնելու համար կուսակցու-
թիւնից հեռացուեցին։ Մի հրաման էլ եկաւ, որտեղ
ասուած էր. «Զգոյշ եղէ՛ք, ո՛չ մէկը ապրանք չվերցնի»։
Սրանից բացի ո՛չ մի հրահանգ չեմ ստացել։

Նախագահ — Դուք էտիրնէում քննի՞չ էիք։

Ապտուլ Ղանի պէյ — Այո՛։

Նախագահ — Որքա՞ն ժամանակ աշխատեցիք որպէս
քննիչ։

Ապտուլ Ղանի պէյ — Մինչեւ վերջ։

Նախագահ — Ձեր մասնաճիւղում ոչ-մահմեդական
անդամներ կայի՞ն։

Ապտուլ Ղանի պէյ — Այո՛, կային, բայց ո՛չ կենտրո-
նական յանձնախմբի մէջ։

Նախագահ — Հապա որտե՞ղ։

Ապտուլ Ղանի պէյ — Շարքայիններով մէջ։

Նախագահ — Ո՞ր ազգից։

Ապտուլ Ղանի պէյ — Հրեաներ էլ կային, այլ ազգե-
րից էլ կային։

Նախագահ — Հայերից կայի՞ն

Ապտուլ Ղանի պէյ — Կարծեմ կային, բայց չեմ
կարողանում յիշել, մեծարգոյ փաշա, շատ անուններ կա-

յին։ Բոլոր անդամների թիւը 1500-ից աւելի էր, դրա համար էլ չեմ կարողանում յիշել։ Ինչպէս գիտէք, արտակարգ դրութեան պատճառով, ժողովներ տեղի չէին ունենում, ուստի անդամների մեծ մասին չեմ ճանաչում։

Նախագահ — Այդ հայերից ոչ մէկը ձեզ չդիմե՞ց։ Տեղահանութեան ժամանակ որեւէ բողո՞ք կամ նախաձեռնութի՞ւն...

Ապտուլ Ղանի պէյ — Էֆենտի, եկան դիմեցին եւ իրենց չտարագրելու համար միջամտեցինք, այս մասին առաջին հարցաքննութեան ժամանակ էլ ասացի։ Ուրիշ որեւէ մէկը այդ հարցով չի դիմել։ Անձնական հարցերով, անկուսակցական հայեր շատ են եկել մօտս։

Նախագահ — Ոչ մէկը չբողոքե՞ց։

Ապտուլ Ղանի պէյ — Ո՛չ, մեծարգոյ փաշա, մինչեւ հիմա ոչ մի բողոք չի եղել։

Նախագահ — Ինչ-որ մի հայ պատգամաւոր է եղել Էտիրնէից, որին արտաքսել են դէպի Թեքֆուր լեռը, ճանաչո՞ւմ էք նրան։

Ապտուլ Ղանի պէյ — Այո՛, մեծարգոյ փաշա, ճանաչում եմ։

Նախագահ — Այդ անձնաւորութիւնն այդ ժամանակ աքսորո՞ւեց։

Ապտուլ Ղանի պէյ — Այո՛, փաշա։

Նախագահ — Նա տարագրուել է իր ընտանիքի՞ հետ։

Ապտուլ Ղանի պէյ — Կարծում եմ, մեծարգոյ փաշա։

Նախագահ — Այդ պատգամաւորի գոյքն ու ունեցուածքը կողոպտուել, վաճառքի է ենթարկուել եւ ընդհանրապէս ծայր աստիճան չարաշահումներ են եղել։

Ապտուլ Ղանի պէյ — Մեծարգոյ փաշա, կողոպուտից տեղեկութիւն չունեմ, բայց տեղահանուածների ամբողջ ունեցուածքը վաճառուեց։ Բնաւ չեմ կարծում, որ նրանց ունեցուածքը ենթարկուած լինի յափշտակութեան։ Ես երեք տարի պաշտօնավարել եմ տեղահանութիւնից յետոյ։

Այդ ժամանակ կողոպուտի մասին չլսեցինք, հիմա ենք լսում։ Եթէ քննութիւն կատարուի, կը բացայայտուի, որ դա լոկ խօսակցութիւն է։

Նախագահ — Խօսակցութիւն է, թէ ոչ, չգիտեմ, բայց իր խնդրանքում(20) ասում է. «...Զնայած որ աղջիկս գիտնականի կին էր, բայց միայնակ մնալով ուղարկեցին այստեղ։ Մեր տան բոլոր կահկարասիները վաճառուեցին։ Ինքս էլ մի ծեր հոգեւորական լինելով՝ զրկուած էի ապրուստի բոլոր միջոցներից։ Զնայած որ դիմեցի վալիին եւ այլ անհրաժեշտ պաշտօնատեղիներ, բայց ոչ մի արդիւնքի չհասայ։ Ի վերջոյ, աղջիկս մահացաւ քաղցից»։ Տեսնում էք, մի ծեր քահանայ տարիներով առանց ապրուստի է մնացել Թեքֆուր լեռում։

Ապտուլ Ղանի պէյ — Ես ի՞նչ կապ ունեմ դրա հետ։

Նախագահ — Հարցն այն է, որ դուք ճանաչել էք նրան։ Այսպիսի հարցով նա դիմե՞լ է արդեօք ձեզ։

Ապտուլ Ղանի պէյ — Ո՛չ, չի դիմել։

Նախագահ — Նա դիմել է մի շարք պաշտօնատեղիներ, միթէ այդ հարցով ձեզ չի՞ դիմել։

Ապտուլ Ղանի պէյ — Ո՛չ, մեծարգոյ փաշա։

Նախագահ — Այդպիսիների նկատմամբ միթէ անհրաժեշտ չէ՞ր օգնութեան ձեռք մեկնել։

Ապտուլ Ղանի պէյ — Իմ չիմացած բանի համար ինչպէ՞ս օգնէի։ Օժանդակութեան հարցով ինձ մօտ եկած որեւէ մէկին, եթէ հնարաւորութիւն լինէր, ես կ՚օգնէի։

Նախագահ — Խօսքը ոչ թէ նիւթական օգնութեան, այլ նման ծանր կացութիւնից փրկելու մասին է։ Շատ լաւ, դուրս տարէք դահլիճից։

Էսկիշէհիրի պատասխանատու քարտուղար Պեսիմ Զուհտի պէյի հարցաքննութիւնը

Նախագահ — Էսկիշէհիրում «Թեշքիլաթ-ը մահասուս»-է կա՞ր, թէ՞ ոչ։

Զուհտի պէյ — Չկար։

Նախագահ — Երբեւէ կազմակերպուե՞ց։

Զուհտի պէյ — Ո՛չ։

Նախագահ — Տուեալ վայրը գտնուում է բանուկ ճանապարհի վրայ, տեղահանութեան ընթացքում՝ ինչպիսի՞ տեսարանների ականատես եղաք, կամ ինչպիսի՞ բողոքներ եղան։

Զուհտի պէյ — Ինչպէս նախապէս նշեցի, տեղահանութեան ընթացքում, ես Էսկիշեհիրում չէի, այլ Աֆիոն-Գարահիսարում, ուստի տեղեակ չեմ, թէ ի՞նչ է տեղի ունեցել այնտեղ։

Նախագահ — Շատ լաւ, վերադարձից յետոյ ի՞նչ իմացաք այդ մասին։

Զուհտի պէյ — Ես 1333 (1917) թուականին եկայ։ Տեղահանութեան մասին ոչինչ չեմ լսել։

Նախագահ — Էսկիշէհիրում տեղահանութիւն տեղի ունեցե՞լ է արդեօք։

Զուհտի պէյ — Այո՛։

Նախագահ — Անշուշտ, դրա հետքերը պէտք է որ նկատած լինէ՞ք։

Զուհտի պէյ — Ինչպիսի՞ հետքեր, փաշա։

Նախագահ — Շատերի խանութներն են փակուել, շատերի տան կահկարասին վաճառքի ենթարկուել, շատերի տներն են բռնագրաւուել։

Զուհտի պէյ — Դա տեղի է ունեցել ամէն տեղ։ Այդ տեղ մի յանձնախումբ կար, երեւի ստացած հրամանի համաձայն, դրսից եկող գաղթականներին(21) տեղահանուած հայերի տեղերն էին բնակեցնում։ Ես չգիտեմ՝ փոխարէնը մի բան վերցնո՞ւմ էին, թէ՛ ոչ։

Նախագահ — Նրանց հանդէպ ի՞նչ կարծիք ունէիք։ Այն, ի՞նչ կատարուում էր, կարող է՞ր արդարացի համարուել։

Զուհտի պէյ — Այդ իմ պարտականութեան մէջ չէր

մտնում, մեծարգոյ փաշա, ես չեմ զբաղուել։

Նախագահ — Միթէ երկրի ամբողջ բնակչութեան վերաբերող հարցերի քննարկումը ձեր պաշտօնավարութեան մէջ չէ՞ր մտնում։

Զուհտի պէյ — Մեծարգոյ փաշա, ես զբաղւում էի ժողովների գումարման հարցերով։

Նախագահ — Միթէ այդ հարցը ժողովի օրակարգ չէ՞ր կարող դառնալ։

Զուհտի պէյ — Այն մտնում է կառավարութեան պարտականութեան մէջ։

Նախագահ — Ես չեմ ասում, որ դուք ինչ-որ բան ձեռնարկէիք, այլ այն, որ ձեր տեսած կամ լսած դէպքերն ի՞նչ միտք էին առաջացնում ձեր մօտ։ Դուք հաւանութիւն տալի՞ս էիք կատարուող իրադարձութիւններին, թէ՞ անտեղի արարք էիք համարում այն։

Զուհտի պէյ — Անկասկած, անտեղի արարք էի համարում։

Նախագահ — Այդ դէպքում, տեղի ունեցող իրադարձութիւնների շուրջ կենտրոնական կոմիտէին կամ վիլայէթի ղեկավարութեանը որեւէ զեկուցագիր կամ բանաւոր տեղեկութիւն տուեցի՞ք, թէ ոչ։

Զուհտի պէյ — Ես անհրաժեշտ չէի գտնում այդ հարցի կապակցութեամբ հարցում անել։ Ինձ թուաց, որ տեղահանութեան վերաբերեալ իմ կարծիքն էք հարցնում։

Նախագահ — Տեղահանութեան վերաբերեալ ձեր անձնական կարծիքը, եթէ յայտնէք, աւելի լաւ կը լինի։ Դուք ինչպիսի՞ միջոցներ ձեռնարկեցիք երկրում կատարուող տեղահանութիւնների եւ կամ գործադրուող բռնութիւնների նկատմամբ։

Զուհտի պէյ — Մեծարգոյ փաշա, այդ խնդիրն իմ իրաւասութեան մէջ չէր մտնում։ Ուստի այդ հարցի կապակցութեամբ ոչինչ չեմ կարող ասել։

Նախագահ — Ես հարցը դնում եմ ոչ թէ պաշտօնա-

կան պարտականութիւն ունենալու, այլ հայրենասիրական պարտքի զգացումից ելնելով, կամ էլ ժողովների օրակարգ դարձնելու տեսանկիւնից։

Զուհտի պէյ — Մեծարգոյ փաշա, ես ինքս լիազօր էի։ Գիտէք, որ լիազօրի պարտականութիւններն այնքան էլ բարձր պաշտօն չի համարւում։ Այդպիսի գործերով զբաղուողները պէտք է, որ օրէնսդրական իշխանութիւն ունենան, այսինքն՝ պատգամաւորներ կամ ծերակոյտի անդամներ լինեն։

Նախագահ — Օրէնսդրական իշխանութիւնը ձեր միջոցով տեղեակ պիտի լինի։ Նրանց ընտրել եւ այդպէս թողնելը ճիշդ չէ։

Զուհտի պէյ — Ես ինքս չգիտէի, որ օրէնսդրական իշխանութիւնը մեր միջոցով տեղեակ պիտի լինի այդ հարցերի մասին։

Նախագահ — Ես չեմ կարծում, որ այդ խնդրում չգիտենալու հարց լինի։ Չէ՞ որ դուք մասնակցում էք օրէնսդրական իշխանութիւնը կազմող պատգամաւորների ընտրութիւններին։

Զուհտի պէյ — Անկասկած։

Նախագահ — Ուրեմն՝ ընտրելուց յետոյ, պատգամաւորներին օգնելը անհրաժեշտութիւն է։

Զուհտի պէյ — Մեր պարտականութիւնը միմիայն այն է, որ նրանց շատ ձայն տրուի։

Նախագահ — Բայց չէ՞ որ նրանց քաջալերողներին է վերաբերուելու լաւ կամ վատ պաշտօնավարութեան ընթացքում ձեռք բերուած թէ՛ յաջողութիւնն եւ թէ՛ ամօթանքը։ Չէ՞ որ դուք ներքին կարգով դիմում էք ժողովրդին, «որ այս մարդը արժանի է երեսփոխան ընտրուելու համար»։ Այնպէս որ, տուեալ անձնաւորութեան լաւ պաշտօնավարութեան համար միթէ այդ թաղամասից օժանդակութիւն ցոյց տալը անհրաժեշտութիւն չէ՞ր։ Այդպիսով, ձեր ջանադրութեամբ ընտրուած պատգամաւոր-

ներին ձեր կողմից թէկուզ եւ մի փոքր տեղեկութիւն տալը, կարծում եմ, որ լաւ կը լինէր, քանի որ նրանք իրենց հերթին կ'օգնէին եւ կը բարեխօսէին նախարարներին։ Այդպիսի բան տեղի ունեցա՞ւ, թէ՞ ոչ։

Զուհտի պէյ — Ո՛չ, էֆենտի։

Նախագահ — Վերջապէս, գիտէք ինչ, [մարդիկ] եկել են այն համոզման, որ «Միութիւն եւ Առաջադիմութիւն» կուսակցութեան մի շարք ղեկավարների նախաձեռնութեամբ տեղի ունեցած տեղահանութեան եւ կոտորածի հարցում եթէ մասնաճիւղերը օժանդակութիւն ցոյց չտային նրանց, ապա այդ աստիճանի ողբերգութիւն տեղի չէր ունենայ։ Հետեւաբար, նշւում է, որ կուսակցութեան մասնաճիւղերն անուղղակի մասնակցութիւն են ունեցել [տեղահանութեան եւ կոտորածներին]։ Իսկ մասնաճիւղերի պատասխանատուութիւնն էլ ընկնում է լիազօրների վրայ։ Ի՞նչ կ'ասէք այդ մասին։

Զուհտի պէյ — Ես չեմ կարծում եւ չեմ էլ յիշում, որ իմ գտնուած վայրերում տեղահանութիւնների ընթացքում դէպքեր պատահած լինեն։

Նախագահ — Կարող է պատահել, որ տեղահանութիւնը ձեր գտնուած վայրերում էլ տեղի է ունեցել։ Ինչպէս երեւում է, հարցը լաւ չկարողացայ ձեւակերպել։ Այսպէս, ասում են, որ տեղահանութիւնների ընթացքում բաւական նաչափ կոտորածներ, կողոպուտ եւ յափշտակութիւններ են եղել։ Դա հաստատուեց նաեւ այստեղ տեղի ունեցած մի շարք դատաքննութիւններում։ Այնպէս որ, ողբերգութիւնը շատ սահմանափակ ձեւով կը կատարուէր, եթէ մասնաճիւղերը միահամուռ ձեւով չհամագործակցէին [կենտրոնական կոմիտէի] հետ։ Մեղաւորներն իրենց պատիժը կը կրէին, եւ այս հարցն էլ այսքան երկար չէր ձգձգուի։ Այսպիսով, դուք էլ, մասնաճիւղի լիազօր եւ պատասխանատու քարտուղար լինելով հանդերձ, մասնակցութիւն էք ունեցել այդ գործին։ Ի՞նչ կ'ասէիք այդ մասին։

Զուհտի պէյ — Մեծարգոյ փաշա, ձեր բացատրութիւնից ես հասկացայ, որ տեղահանութեան հետեւանքով մի շարք կոտորածներ եւ այլ բաներ են տեղի ունեցել, եւ այդ բոլորը խրախուսուել է մասնաճիւղի կողմից…:

Նախագահ — Կամ էլ օժանդակութիւն է ցոյց տրուել:

Զուհտի պէյ — Այո՛, կամ էլ օժանդակութիւն է ցոյց տրուել, ես այդպէս էլ հասկանում եմ: Ուրեմն՝ իմ շրջանում տեղի ունեցած տեղահանութեան ընթացքում կոտորած եւ այլ բռնութիւններ չլինելու պատճառով ակներեւ է դառնում, որ այդ խնդրին մասնակցութիւն կամ ազդեցութիւն չեմ ունեցել:

Նախագահ — Ես մի քիչ առաջ հարցրեցի, Էսկիշէհիրում ձեր տեսած կամ լսած վատ արարքների մասին որեւէ դժգոհութիւն յայտնեցի՞ք, կամ բողոքարկեցի՞ք, թէ՞ ոչ: Այդ մասին ասէ՛ք:

Զուհտի պէյ — Չեմ արել:

Նախագահ — Ձեզ նման լիազօրները եւ պատասխանատու քարտուղարները, եթէ բողոքէին, ապա ակնյայտ է, որ այդ խնդիրը այդպիսի լայն ծաւալ չէր ընդունի: Ինչո՞ւ որեւէ միջոց չձեռնարկեցիք: Գիտէք, որ անտարբերութեան համար դուք եւս անուղղակի կերպով մասնակից էք համարւում [յանցագործութեանը]:

Զուհտի պէյ — Ես չեմ կարծում, որ քարտուղարի պաշտօնը երկրի կառավարման համար պատասխանատուութիւն կրի:

Նախագահ — Ոչ թէ երկրի վատ կառավարման համար, այլ «Միութիւն եւ Առաջադիմութիւն» կուսակցութեան կողմից կատարուած վատ արարքների կապակցութեամբ:

Զուհտի պէյ — Այդ արարքը ոչ թէ «Միութիւն եւ Առաջադիմութիւն» կուսակցութեան կողմից է կատարուած, այլ՝ կառավարութեան կողմից:

Նախագահ — Մի՞թէ կառավարութիւնը այդպիսի վատ

արարքներ կը կատարէր։ Ասացէ՛ք, այդ վատ արարքները կառավարութեան ո՞ր պաշտօնեայի կողմից կարող էր կատարուել։

Զուհտի պէյ — Այն կատարուեց տեղահանութեան կանոնադրութեամբ։

Նախագահ — Օրէնքով կատարուած գործողութիւնների համար ոչ մէկին պատասխանատուութեան չենք ենթարկում։ Իրականութիւնն այն է, որ տեղահանութեան քողի տակ կոտորած են սարքել (ընդգծումը մերն է — Ա.Փ.)։ Ահա այս արարքի համար է, որ պատասխանատուութեան էք ենթարկւում։

Զուհտի պէյ — Իմ իրաւասութեան տակ գտնուող վայրում, եթէ այդպիսի բան տեղի ունենար, իմ խղճի թելադրանքով ես կը դիմէի, բայց ինձ մօտ այդպիսի բան տեղի չի ունեցել։

Նախագահ — Այն ժամանակ, երբ դուք Էսկիշէհիր եկաք, ձեր տեսածն արդեօք բոլորովին չազդե՞ց ձեր վրայ։

Զուհտի պէյ — Ես 1333 (1917) թուականին եկայ։ Նախկին իրավիճակը վերականգնուել էր։

(Նախագահի թելադրանքով Զուհտի պէյը դուրս է հանւում դահլիճից(22)։

Պրուսայի պատասխանատու քարտուղար՝
Դոկտ. Միտհատ պէյի հարցաքննութիւնը

Նախագահ — Այսուհանդերձ, Պրուսայում տեղեհանութիւն կատարուել է նոյնիսկ մի շարք բռնութիւններ են տեղի ունեցել։

Միտհատ պէյ — Այո՛։

Նախագահ — Դուք իրազե՞կ էք դրանց մասին։

Միտհատ պէյ — Մեծարգոյ փաշա, ես այնտեղ գնացի մէկ տարի յետոյ։

Նախագահ — Շատ լաւ, թող մի տարի յետոյ լինի։ Ոչ

մի բան չլսեցի՞ք։

Միտհատ պէյ — Այդ ընթացքում կառավարութիւնը քննող յանձնաժողով էր ուղարկել, որն արդէն աւարտել էր իր ստուգումները։ Տեղահանութեան մասին ոչ մի հարցադրում չէր եղել։ Իմ այնտեղ գտնուելու ընթացքում ո՛չ մի բողոք, ո՛չ մի վատ արարքի համար բողոքարկում չէր եղել(23)։

Նախագահ — Ասում են, որ Պրուսայում տեղահանուած հայերի տների աւերուածութիւնները չափազանց ակնյայտ են եղել։

Միտհատ պէյ — Այո՛։

Նախագահ — Ինչպէ՞ս է լինում, որ դուք չէք տեսել։

Միտհատ պէյ — Մեծարգոյ փաշա, հայերի լքեալ գոյքը գտնուում էր պետական կալուածատիրական հիմնարկութեան պաշտօնեաների իրաւասութեան տակ։ Ուստի, մենք դրա հետ առնչութիւն չունէինք։ Իսկ այնտեղ տեղաւորել էին գաղթականներին։ Անկասկած՝ այդ աւերուածութիւնները կատարուել են գաղթականների կողմից։ Այդ չինութիւնների համար պատասխանատուութիւնը ընկնում էր պետական պաշտօնեաների եւ պահակների վրայ։ Նրանք էին զբաղուում այդ խնդրով։

Նախագահ — «Միութիւն եւ Առաջադիմութիւն» կուսակցութիւնը, քանի որ հայրենիքի ծառայելու պարտականութիւնն էր ստանձնել, ուրեմն, երկրի ընդհանուր առաջընթացին եւ բարգաւաճմանը խանգարող այս խնդրում չպէտք է անտարբեր մնար։

Միտհատ պէյ — «Միութիւն եւ Առաջադիմութիւն» կուսակցութեան լիազօրները ոչ մի պատասխանատուութիւն չունեն, հետեւաբար, ոչ մի ծառայութիւն...

Նախագահ — Գործադրման տեսանկիւնից այդպէս է։ Բայց եւ այնպէս նրանք(24) կարող էին իրենց վերադասին զեկոյց ներկայացնել կամ էլ յետագայում համագումարի համար ինչ-որ բան պատրաստել։

Միտհատ պէյ — Մեծարգոյ փաշա, համագումարի հարցերով ես չեմ զբաղուել։

Նախագահ — Ոչ մի միջոց չձեռնարկեցի՞ք։

Միտհատ պէյ — Մեծարգոյ փաշա, ո՛չ։

Նախագահ — Դրա համար էլ մեղադրական եզրակացութիւնում ասուած է. «Միութիւն եւ Առաջադիմութիւն» կուսակցութեան մասնաճիւղային լիազօրները, իր ժամանակին, եթէ այդ բռնութիւնների մասին յայտնած լինէին իրենց վերադասին եւ արգելէին դրանք, այդ բռնութիւնները տեղի չէին ունենայ, եւ կոտորածն այդ աստիճանայն ծաւալ չէր ընդունի։ «Միութիւն եւ Առաջադիմութիւն» կուսակցութեան մի շարք ղեկավարների կատարած յանցագործութիւններին անուղղակիօրէն մասնակցութիւն ունենալու համար մասնաճիւղային քարտուղարները եւս պատասխանատուութիւն են կրում։

Միտհատ պէյ — Մեծարգոյ փաշա, ես ինքս պատասխանատու քարտուղար եմ եւ ոչ մի ժամանակ այդ յանցագործութեանը անձամբ չեմ մասնակցել։ Իմ հանդէպ ոչ մի բողոքարկում չի եղել։ Պատասխանատու քարտուղարները գործադիր իշխանութիւն չեն ունեցել։ Եթէ տեղանութեան ընթացքում բռնութիւններ եւ կամ լքեալ գոյքի նկատմամբ չարաշահումներ են եղել, ապա այդ բոլորի համար պատասխանատու են պետական պաշտօնեաները եւ անրաժեշտ է, որ նրանք պատիժ կրեն։ Այնպէս որ, պատասխանատու քարտուղարներն այդպիսի խնդրի հետ չեն կարող առնչութիւն ունենալ։ Ըստ իս, ես կապ չեմ ունեցել։

Նախագահ — Պատասխանատու քարտուղարները միթէ տուեալ մասնաճիւղի գործունէութիւնը չե՞ն ղեկավարում։

Միտհատ պէյ — Ո՞ր մասնաճիւղի, մեծարգոյ փաշա։

Նախագահ — Օրինակի համար Պրուսայի «Միութիւն եւ Առաջադիմութիւն» կուսակցութեան մասնաճիւղը։ Այս

մասնաճիւղն ունէր իր կենտրոնը, իր անդամներն ու ղեկավարները։ Նրա գործունէութեան ղեկավարումը միթէ պատասխանատու քարտուղարի ձեռքին չէ՞ր։

Միտհատ պէյ — Այո՛, ղեկավարում էր, բայց ինքը պետական գործերին միջամտելու իրաւասու չէր։

Նախագահ — Հարցը կառավարութեան գործերին չմիջամտելու մասին չէ։ Ասում են, որ ձեր գտնուած վայրում եւ ընդհանրապէս այլ տեղերում էլ այդպիսի վատ արարքներ են տեղի ունեցել եւ դրանց հանդէպ քանի որ ոչ մի միջոց չէք ձեռնարկել, ուրեմն, դրանով խրախուսել էք նախաձեռնողներին եւ ընթացք էք տուել նրանց կատարած դաժանութիւնների ծաւալմանը։

Միտհատ պէյ — Ես անձնապէս, եթէ իրազեկ լինէի, գուցէ միջոցներ ձեռնարկէի։ Սակայն, մեծարգոյ փաշա, ես նման քայլի չեմ դիմել որովհետեւ տեղեակ չեմ եղել ոչ մի արարքի։

Նախագահ — Նոյնիսկ ոչ մի տեղեկութիւն չունենալու դէպքում էլ, չէ՞ որ դուք Պրուսայում տեսել էիք տների աւերուածութիւնները։

Միտհատ պէյ — Գաղթականները տիրացել էին լքեալ գոյքին։ Իսկ գաղթականութիւնը ունէր իր տեսչութիւնը, կար նաեւ պետութեան կողմից նշանակուած վալին։ Հետեւաբար, եթէ աւերուածութիւններ են տեղի ունեցել, ուրեմն՝ դրանք կատարուել են գաղթականների կողմից։ Այնպէս որ, պատժել է պէտք գաղթականների գործով զբաղուող անձանց։

Նախագահ — Իսկ ինչո՞ւ իմ տուած հարցին չէք պատասխանում։ Դուք աւերուածութիւններ չտեսա՞ք։

Միտհատ պէյ — Տեսայ, մեծարգոյ փաշա։

Նախագահ — Շատ լաւ, եթէ տեսաք, ինչո՞ւ գոնէ մէկ անգամ չդիմեցիք վալիին եւ կամ գաղթականների տեսչութեանը։ Ի՞նչ է, նրանք իրաւասութիւն չունէ՞ին։

Միտհատ պէյ — Ես անձամբ առնչութիւն չունեմ, այն

իմ պարտականութեան մէջ չէր մտնում։

Նախագահ — Միթէ ձեր պարտականութեան մէջ չէ՞ր մտնում ձեր վերադասին յայտնել երկրում տեղի ունեցած ամէն մի պատահարի կամ ձեր կողմից իմացած վատ արարքների մասին։

Միտհատ պէյ — Յայտնել էր պէտք, բայց մեծարգոյ փաշա, այդ հարցերով անձամբ չեմ զբաղուել։

Նախագահ — Ստացւում է այնպէս, որ ցանկութիւն չէք ունեցել այդ անելու։

Միտհատ պէյ — Այդ վատ արարքներին, եթէ իրազեկ լինէի, արգելք կը հանդիսանայի, բայց իրազեկ չլինելու պատճառով բնական է որ...

Նախագահ — Քո տեսած այդ աւերուած տները միթէ վատ արարքների հետեւանք չէ՞ին։

Միտհատ պէյ — Մեծարգոյ փաշա, դրանց հետ առընչութիւն ունեցող պետական պաշտօնեաներ կային։

Նախագահ — «Թեշքիլաթ-ը մահսուսէ»ի համար Պրուսայից մի շարք մարդկանց էք ուղարկել։ Այդ մարդիկ ի՞նչ նպատակի համար հաւաքագրուեցին եւ ի՞նչ պայմանով ուղարկուեցին։ Զգիտէ՞ք։

Միտհատ պէյ — Մեծարգոյ փաշա, չգիտէի, ես Պրուսա եմ եկել 1337 (1918) թուականին։

Takvim-i Vekayi, 28 Haziran 1335 (1919) № 3596

ՌԱԶՄԱԿԱՆ ԱՌԱՋԻՆ ԱՐՏԱԿԱՐԳ ԱՏԵԱՆԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹԻՒՆԸ(25)

Նախագահ՝ գեներալ-մայոր Էսատ փաշա,
Անդամներ՝ գեներալ-մայոր Մուստաֆա Քերիմի

փաշա,

Գեներալ-մայոր Իսմայիլ Հաքքը փաշա,

Գնդապետ՝ Սուլէյման Շաքիր պէյ,

«ԻԹԹԻՀԱՏ ՎԷ ԹԵՐԱՔՔԻ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ՔԱՐՏՈՒՂԱՐՆԵՐԻ ԴԱՏԱՎԱՐՈՒԹԻՒՆԸ

Դատի տրուած ներկայ գտնուող մեղադրեալների անունները — Մանիսայի պատասխանատու քարտուղար՝ Աւնի պէյ, Պէյօղլուի պատասխանատու քարտուղար՝ Հասան Սելահէտտին պէյ, Էսկիշէհիրի պատասխանատու քարտուղար՝ Պեսիմ Զուհտի պէյ, Պրուսայի պատասխանատու քարտուղար՝ Դոկտ. Միտհատ պէյ, Միրգունի պատասխանատու քարտուղարի տեղակալ՝ Ճեւտեդ պէյ, Հալէպի պատասխանատու քարտուղար՝ Ճեմալ պէյ, Էտիրնէի քննիչ՝ Ապտուլ Ղանի պէյ, Գոնիայի պատասխանատու քարտուղարի տեղակալ՝ Ապտուլ Քատիր էֆենտի, Քաստամոնուի պատասխանատու քարտուղարի տեղակալ՝ Հասան Ֆեհմի էֆենտի, Գարահիսարի սանիտարական յանձնաժողովի նախկին նախագահ՝ Ակեահ պէյ, Գարահիսարի նախկին պաշտօնեայ՝ Հայրէտտին պէյ։

ԴԱՏԱՎՃԻՌ

Սոյն դատավարութեան ընթացքում լսեցին մեղադրող եւ պաշտպանուող երկու կողմերին, մանրակրկիտ ուսումնասիրուեցին եւ հետաքննուեցին բոլոր դատական փաստաթղթերն ու արձանագրութիւնները։

Պարզուեց, որ «Միութիւն եւ Առաջադիմութիւն» կուսակցութեան պատասխանատու քարտուղարներն ու լիազօրները զինադադարից անմիջապէս յետոյ, գրեթէ

երկրի բոլոր շրջաններում ծաւալել են երկպառակտչական քայքայիչ գործունէութիւն, սանձարձակօրէն սկսել են խռովութիւններ առաջացնել ժողովրդի մէջ, խանգարել մարդկանց անդորրը։ Հայրենիքը հասցրել են կործանման եզրին։

Հետաքննչական փաստաթղթերի հիման վրայ, Ներքին Գործերի նախարարութիւնը հաւանութիւն էր տուել նրանց կալանքի տակ առնելու եւ Ստամպուլի Ռազմական տեանի քննութեանը ուղարկելու որոշմանը։

Վերոյիշեալ պատասխանատու քարտուղարների եւ Միութիւն եւ Առաջադիմութիւն» կուսակցութիւնը, ամբողջ երկրի կառավարումն իր ձեռքը վերցնելուց յետոյ, երկիրը ներքաշել է համաշխարհային պատերազմի մէջ, կտարել տեղահանութիւններ, կոտորած եւ կողոպուտ։ Միեւնոյն ժամանակ զբաղուել է առեւտրի չարաշահումներով, եւ այլ անօրէն գործարքներով քայքայել է Օսմանեան կայսրութեան հզօրութիւնը, երկիրը հասցրել ծայրաստիճան թշուառութեան...։

Տեղահանուած հայերի մի քանիսի բնակարաններն ակումբի վերածելով, կահաւորել են լքեալ գոյքով։ Ընտրութիւնների ընթացքում, փոխանակ արդար մօտեցում ունենալու, բռնել են անիրաւութիւնների ուղին եւ, ուժի դիրքից ելնելով, բազմիցս միջամտել են կառավարութեան գործերին եւ ճնշումներ գործադրել ժողովրդի վրայ։ Հակառակ այս ահաբեկչական քաղաքականութեանը, սակայն [կենտրոնական կուսակցութիւն են եղել այն մարդիկ, որոնք համարձակուել են օրինականութիւնը պաշտպանել· սակայն [կենտրոնական կոմիտէի անդամները] տարբեր ձեւերով սպառնացել են նրանց։ Եւ, վերջապէս, սահմանադրութիւնը խախտելով՝ ստեղծել են նմանը չունեցող մի քմահաճ կառավարութիւն։

Նպաստ հաւաքելիս եւ ներքին փոխառութեան տոմ-

սեր վաճառելիս պատասխանատու քարտուղարները, կառավարութեան աչքի առաջ չարաշահելով իրենց դիրքը, բռնութիւններ են գործադրել եւ հակառակ օրէնքի կալանաւորել, բանտարկել են այնպիսի մարդկանց, որոնք յանդգնել են բողոքել յաւելեալ արժէքով վաճառք կատարողների դէմ։

[Պատասխանատու քարտուղարները] մասնակցել են պետութեան գործերին միջամտող «Միութիւն եւ Առաջադիմութիւն» կուսակցութեան կենտրոնական կոմիտէի կատարած վնասաբեր յանցագործութիւններին։ Նրանք յատկապէս մասնակցել են տեղահանութիւններին, կոտորածներին եւ յափշտակուած, կողոպտուած ապրանքների շնորհիւ դիզել հսկայական հարստութիւն։ 1331 (1915) թուականի Մայիսի 14-ին, տեղահանութեանը վերաբերող հրապարակուած ժամանակաւոր օրէնքն օգտագործել են անձնական շահոյթ ձեռք բերելու նպատակով։ Վերջնականապէս բացայայտուած է, թէ ինչպէս վերոյիշեալ պատասխանատու քարտուղարներից եւ լիազօրներից մի քանիսը նպաստել եւ օժանդակել են կենտրոնական կոմիտէի ծրագրին եւ իրենց մասնաճիւղերում հաւաքագրուած մարդասպանների եւ այլ յանցագործների միջոցով կազմակերպել են հայերի կոտորածը եւ կողոպտել նրանց ունեցուածքը։ Զբաղուել են հարստահարութեամբ եւ տիրացել նրանց լքեալ գոյքին։

Միւս դատավարութիւնների ընթացքում նշուեց, որ կենտրոնական կոմիտէի անդամ եւ «Թեշքիլաթ-ը մահսուսէ»-ի նախագահ Պեհաէտտին Շաքիր պէյը Էրզրումից՝ Խարբերդի պատասխանատու քարտուղար, այժմ փախուստի մէջ գտնուող՝ Ռեսնելի Նազըմ պէյին առաքուած ծածկագիր հեռագրում գրել է. «Ձեր միջոցով ուղարկուող հայերը ոնչնչացւո՞ւմ են, թէ ոչ»։ Իսկ Եոզղաթի լիվայում եւ Պօղազլեանի կազայում տեղի ունեցած կոտորածի փաստաթղթերից, ինչպէս նաեւ մեր ռազմական ատեա-

նում տեղի ունեցած դատաքննութիւններից բացայայտը-
ւեց, որ Անգարայի պատասխանատու քարտուղար Նեճա-
տի պէյի կողմից Եոզղաթի նախկին մութասարրիֆ Ճեմալ
պէյին առաջարկուած է եղել չհակառակուել հայերի բը-
նաջնջման խնդրին։ Վերոյիշեալ Ճեմալ պէյի պաշտօնան-
կութիւնից յետոյ, Պօղազլեանի գայմագամ, ներկայումս
կախաղան բարձրացուած Քեմալը նշանակուած էր եղել
Եոզղաթի մութասարրիֆի պաշտօնին։

Բերուած փաստերից պարզորոշ երեւում է, որ Քաս-
տամոնուի շրջանի հայերը, ընդհանուր բնակչութեան թւի
հետ համեմատած, շատ քիչ տոկոս են կազմել, եւ տեղա-
հանութեան օրէնքի համաձայն, նրանք չպէտք է ենթար-
կուէին տարագրութեան։ Այնուհանդերձ, այն ժամանակ՝
երբ Քաստամոնուի վալի Ռեշիտ փաշան, ըմբոստանալով
տեղահանութեան դէմ, նշել է, հետեւեալ խօսքերով՝ «Ես
իմ ձեռքերս արեան մէջ չեմ թաթախի», վերջինս իսկոյն
հեռացուել է պաշտօնից՝ նոյն Քաստամոնուի քարտուղար՝
Հասան Ֆեհմի էֆենտիի նախաձեռնութեամբ եւ առա-
ջարկով, իսկ նրա տեղ նշանակուել է Աթիֆ պէյը, որը եւ
եռանդագին իրագործել է տեղահանութիւնը եւ պատճառ
հանդիսացել ողբերգական իրադարձութիւնների։

Այս նոյն ձեւով էլ Միտհատ պէյը, գնալով
Ստամպուլ, ըմբոստութեան համար հեռացնել է տուել
պաշտօնից Բալուի մութասարրիֆի տեղակալ Ալի Իլմի
պէյին։ Իսկ Բալուի տեղահանութեան ընթացքում, պատաս-
խանատու քարտուղար Դոկտ. Միտհատ պէյը ժողովրդին
յորդորել է, ասելով, որ՝ «Հայերին չենք ուզում» եւ իր հրա-
հանգով եւ ներգործութեամբ իրականացուել է Բալուի
տեղահանութիւնը։

Ահա այս ձեւով եւ օրէնքի բուն ոգուն հակառակ,
տեղահանութիւնը համատարած կերպով ծաւալուել է բո-
լոր շրջաններում եւ առաջ բերել ողբերգական ծանր իրա-
վիճակ։ Բոլոր ապացոյցներն ու փաստերը լիովին հաս-

տատում են, որ կոտորածները անմիջականօրէն իրականացուել են «Միութիւն եւ Առաջադիմութիւն» կուսակցութեան ստեղծած «Թեշքիլաթ-ը մահսուսէ»-ի կողմից, իսկ պատասխանատու քարտուղարները իրենց մասնակցութեամբ նպաստել ու հեշտացրել են այդ գործը։

Այսպիսով կատարուած յանցագործութիւնները՝ բոլոր ամբաստանեալներին հաւասար չափով չի կարելի վերագրել։ Նրանց մասնակցութեան չափն ու աստիճանը բացայայտելու համար անհրաժեշտ եղաւ ուշադրութիւն դարձնել իւրաքանչիւրի առանձին կատարած յանցանքին։

Ըստ վկաների տուած ցուցմունքի, Քաստամոնուի նախկին վալի Ռեշիտ փաշան հեռացուել է իր պաշտօնից նոյն Քաստամոնուի պատասխանատու քարտուղար՝ Հասան Ֆեհմի էֆենտիի(26) նախաձեռնութեամբ։ Հասան Ֆեհմի էֆենտին, մահմեդական ժողովրդին շարունակաբար հրահրել է հայերի դէմ, ասելով, որ մեր վալին ամբողջ հայութեան վալին է, աւելի ճիշդ՝ անհաւատների վալին է։ Այսպիսի զառանցագին խօսքերով, խռովութիւններ է սերմանել ժողովրդի մէջ. միջամտել է պետական պաշտօնեաների գործերին, նոյնիսկ համարձակուել է իր անձնական նախաձեռնութեամբ, նրան վտարել պաշտօնից եւ վիլայէթից էլ հեռացնելու պահանջով, ծածկագիր հեռագիր է ուղարկել Ներքին Գործերի նախարարութիւն։

Մի այլ վկայ՝ զօրացրուած մայոր՝ Իսմայիլ Հաքքը պէյը յայտնել է, որ ըստ իր լսածի, Հասան Ֆեհմի պէյը եղել է այն անձնաւորութիւններից մէկը, որոնք իւրացրել են [հայերի] լքեալ գոյքից բաւականաչափ արժէքաւոր ապրանքներ։

Մէկ ուրիշի՝ հանգուցեալ մարշալ Ասաֆ Փաշազատէ Ճեմալ պէյի վկայութեամբ, Հասան Ֆեհմի էֆենտու տան մէջ եւ ակումբի հրկիզման ընթացքում ի յայտ եկած ապրանքները անհերքելի ապացոյց են, թէ նա ինչպիսի չարաշահումներ է թոյլ տուել լքեալ գոյքի կողոպտման

խնդրում։ Իսկ տեղահանութիւնը գործադրուել է նրա եւ Վալի Աթիֆ պէյի սերտ համագործակցութեամբ։

Մի այլ վկայի՝ Վահիտ էֆենտիի ցուցմունքով, նոյնպէս ապացուցւում է, որ Հասան Ֆեհմի էֆենտին եղել է տեղահանութեան անմիջական կազմակերպիչն ու գործադրողը եւ լքեալ գոյքի կողոպտիչներից մէկը։

Իններորդ կանոնաւոր զօրագնդի հրամանատարութիւնից թոշակի անցած եւ այնուհետեւ գայմագամի պաշտօնը ստանձնած Խուրշիտ պէյի զեկուցագրում նշուած է, որ Հասան Ֆեհմի էֆենտին միջամտել է պետական գործերին, իսկ Աթիֆ պէյը վալիյութեան պաշտօնը ընդունելուց յետոյ [Քաստամոնուի վիլայէթի] ամբողջ կառավարումը վերցրել է իր ձեռքը։

Քաստամոնուի նախկին ժանտարմական գումարտակի հրամանատար մայոր Մուստաֆա Շերեֆ պէյը, որն այսօր գտնւում է Սիլիֆկէի ժանտարմական գումարտակի հրամանատարութիւնում, տեղահանութեան վատ հետեւանքները կանխազգալով գժտուել է Աթիֆ պէյի հետ։ Մի այլ վկայութեամբ պարզւում է, որ Հասան Ֆեհմի պէյը հանդուցեալ Իզզէթ պէյին ասել է. «Հայութեան տեղահանութեան արգելք հանդիսանալու համար, պատմութիւնը եւ ապագայ սերունդն անիծելու է քեզ»։ Այստեղ նոյնպէս հաստատւում է, որ Հասան Ֆեհմի պէյը եղել է տեղահանութեան անմիջական կազմակերպիչն ու հրահրողը։

Մի այլ վկայութեան մէջ, Ճեւտեդ եւ Սելիմ էֆենտիները յայտնում են, որ Հասան Ֆեհմի պէյը միջամտել է լքեալ գոյքի յանձնաժողովի գործունէութեանը։ Այդ գոյքն աճուրդի հանելուց առաջ, նա յանձնախմբի անդամների ընկերակցութեամբ մտել է նշանակուած խանութները եւ իրեն անհրաժեշտ իրերն իր մարդկանց միջոցով պարկերի եւ կողովների մէջ լցնելուց յետոյ ուղարկել է իր բնակարանը։ Միմիայն այս արարքից յետոյ նա թոյլատրել է խանութները բացել եւ աճուրդի

ենթարկել լքեալ գոյքը։ Նրանք յայտնում են նաեւ, որ Հասան Ֆեհմի էֆենտիի այդ գործարքին արգելք հանդիսանալը անիմաստ էր, քանի որ տուեալ ժամանակ նա մեծ ազդեցութիւն ունէր վալիի [Աթիֆ պէյի] վրայ։

Քաստամոնուում հանրայայտ անձնաւորութիւններ՝ Հաճի Թեւֆիք պէյը, Մէճլիսի նախկին գլխաւոր քարտուղար Պեսիմ պէյը, ուսուցիչ Մեհմետ էֆենտին, առեւտրական Ահմետ էֆենտին, փաստաբան Իզզեթ էֆենտին եւ գայմագամ Ճելալ պէյը, իրենց ցուցմունքներում, նոյնպէս հաստատում են Հասան Ֆեհմի պէյի կատարած բռնութիւններն ու չարաշահումները, ինչպէս նաեւ պետական գործերին նրա ունեցած բացայայտ միջամտութեան փաստերը։

Բալուի, իսկ աւելի ուշ՝ Պրուսայի պատասխանատու քարտուղար՝ Դոկտ. Միտհատ պէյի մասին նշուած է, որ դեռեւս Բալուում պատասխանատու քարտուղար եղած ժամանակ, կառավարութեան որոշման համաձայն հայութիւնը զերծ էր մնալու տեղահանութիւնից, քանի որ բնակչութեան ընդհանուր թւի համեմատ հայերը քիչ տոկոս էին կազմում։ Սակայն իր անձնական նախաձեռնութեամբ, նա ժողովրդի մէջ ատելութիւն է սերմանել՝ «Հայերին չենք ուզում» նշանաբանով։ Իսկ երբ Բալուի մութասարրիֆի տեղակալ Ալի Իլմի պէյը հակառակուել է տեղահանութեան իրագործմանը, [Դոկտ. Միտհատը] նրան հեռացրել է պաշտօնից։ Այսպիսով, նա նպաստել է տեղահանութեան գործադրմանը եւ պատճառ հանդիսացել նրա ողբերգական հետեւանքներին։ Այս բոլորը պաշտօնապէս արձանագրուած է Բալուի մութասարրիֆութեան տեղեկագրում։ Նոյնիսկ Պրուսայում գտնուելու ընթացքում, նա իր կամքն է թելադրել կառավարութեան բարձրաստիճան պաշտօնեաներին, միջամտել պատգամաւորների ընտրութիւններին, իսկ Գեմլիկում, հանգանակութիւն հաւաքելիս [բնակչութիւնը] պաշտօնապէս բողոքարկել է նրա անօրինական վարմունքի դէմ։

«Միութիւն եւ Առաջադիմութիւն» կուսակցութեան Էտիրնէի քննիչ՝ Ապտուլ Ղանի պէյի մասին նշուած է, որ ըստ Էտիրնէի վիլայէթի 1335 (1919) Յուլիսի 27, 30 թուագրութիւնը կրող տեղեկագրի բովանդակութեան, Քիրք Քիլիսէի եւ Տէմիր Քէօյի պատգամաւորների ընտրութեան ընթացքում [Ապտուլ Ղանի պէյը] ազդել է պետական պաշտօնեաների վրայ, եւ նոյնիսկ միջամտել վիլայէթի կառավարչութեան գործերին: Նա իւրացումներ է կատարել Ազգային պաշտպանութեան դրամագլխից եւ իւրացրել [բնակչութիւնից] հաւաքուած նպաստը:

Էտիրնէի դատական քննիչի կողմից արձանագրուած հարցաքննութեան ընթացքում, Արթին (Յարութիւն) եւ Յովհաննէս Ալթունեանները, Ալեքսան Սարաֆեանը, Խաչիկ Կիւրճեանը եւ միւսները վկայութիւն են տուել, որ հայութեան ոչնչացման նպատակը հետապնդող տեղեկատուութեան խնդրում՝ Ապտուլ Ղանի պէյը եռանդագրգիռ ազդեցութիւն է գործել բոլորի վրայ: Տեղահանութեան ընթացքում, նա զինուած չեթէների հետ շրջագայել է ամէնուր: Ոստիկանատնից դուրս բերուող հայերից բռնագրաւել է նրանց փողերը: Գազազեան եղբայրների կտոր-ռեղէնի խանութը 1,000 լիրայով գնել է իր որդու Հայրուլլահի համար: Միեւնոյն ժամանակ, հայերի լքեալ գոյքը շատ չնչին գումարով վաճառել է իր համախոհներին:

Յիշեալ Ապտուլ Ղանի պէյի հարցաքննութեան տեղեկագրում նշուած է, թէ իբր նա դիմել է վալիին՝ հայերին տեղահանութեան չենթարկելու, մինչդեռ Աւետիսեան եւ Ալեքսանեան էֆենտիները իրենց տուած վկայութեան մէջ յայտնել են, որ տեղահանութեան բուն նպատակը եղել է հայութեան ոչնչացումը, եւ Ապտուլ Ղանի պէյը լինելով մարդկային առաքինութիւններից զուրկ մի անձնաւորութիւն, մեծ ազդեցութիւն է գործել տեղահանութեան խնդրում, որ նա գործարքի մէջ մտնելով տեղի առեւտրականների հետ, դիզել է մեծ հա-

ըստուերին։ Թէեւ այլ վայրերում տեղահանուողներին քիչ թէ շատ պայմանաժամ են տուել, Էտիրնէում տեղահանուողներից դրամն ու թանկարժէք իրերը վերցնելուց եւ ապրուստի միջոցներից զրկելուց յետոյ, առանց պայմանաժամի քշել են դէպի Թեքֆուր լեռը։ Դատաքննութեան ընթացքում, Ապտուլ Ղանի պէյի տուած ցուցմունքի համաձայն, իբր [տեղահանութիւնը] եղել է Էտիրնէի գրաւման ժամանակ [թուրքերի մօտ] առաջ եկած վրէժխնդրութեան զգացման հետեւանքով։ Ըստ նրա յայտնած տեղեկութեան, Էտիրնէում տեղահանութիւնն իբր տեղի է ունեցել մի գիշերուայ ընթացքում, այն էլ՝ մէկ քարաւանով։ Մինչդեռ Էտիրնէից եկած մեր հարցումի պատասխանագրում, ասուած է, որ տեղահանութիւնը տեղի է ունեցել երեք քարաւանով, որոնք ուղարկուել են մինչեւ Տէր-Զօր։

Այնպէս որ, այս խնդրում եւս նրա տուած կեղծ ցուցմունքը ակներեւ է։ Վերոյիշեալ մեղադրեալներ՝ Հասան Ֆեհմի, Դոկտ. Միտհատ, Ապտուլ Ղանի, Աւնի, Դոկտ. Պեսիմ Զուհտի, Հասան Սելահէտտին, Ճեմալ, Միւնիր, Ճեւտեդ եւ Ապտուլ Քատիր էֆենտիների եւ պէյերի ամբաստանութեանը վերաբերող նիւթերը ցոյց են տալիս, որ նրանք շեղուել են կառավարութեան օրէնքից եւ այդպիսով վտանգել՝ երկրի ներքին ապահովութիւնը։

Հասան Ֆեհմի էֆենտու, Դոկտ. Միտհատ եւ Ապտուլ Ղանի պէյերի ամբաստանութեան վերաբերող նիւթերը, ինչպէս պարզաբանուեց վերեւում, հաստատում են, որ նրանք, իրազեկ լինելով կենտրոնական կոմիտէի կատարած անօրինական գործարքներին եւ այն նախաձեռնողների բուն նպատակներին, նպաստել եւ անուղղակիօրէն մասնակցել են կոտորածի եւ կողոպուտի խնդրում կատարուած յանցագործութիւններին։

Ներքին փոխառութեան պարտատոմսեր թողարկելիս, Աւնի պէյը եւս ընդգրկուել է յանձնաժողովի կազմի մէջ։

Մի շարք մարդկանց, այդ թվում՝ Հերտեմին, մանիսացի Հաճի Հասանին, Իսմայիլին եւ Սարուխան գիւղից Մեհմետին կանչելով՝ յանձնաժողովի առաջ ծեծել են եւ հակառակ օրէնքի՝ բանտարկել։ Այնուհետեւ պարտադրել են նրանց կարողութիւնից բարձր ներքին փոխառութեան պարտատոմսեր։ Այդ մասին վկայութիւն են տուել թէ՛ լսողները, թէ՛ տուժածները, իսկ նա խոստովանել է, որ ընդգրկուած է եղել այդ յանձնաժողովի կազմի մէջ։

Այսպիսի անօրինական գործարքներով, պատասխանատու քարտուղարները յանդգնել են կառավարութեան աչքի առաջ կատարելու նման արարքներ։ Իսկ Աւնի պէյը, բերուած գրաւոր վկայութիւնների համաձայն, ձայների մեծամասնութեամբ յանցաւոր է ճանաչուում, քանի որ լինելով ազդեցիկ մարդկանցից մէկը՝ ծեծել է, ստորացրել, եւ հակառակ օրէնքի կալանաւորել մարդկանց։ Ինչ վերաբերում է Պեսիմ Զուհտի պէյի արարքներին, ինչպէս բացայայտուեց հարցաքննութեան ընթացքում, Ռաֆայէլ Շիրինեան էֆենտիից վերցրած գորգերը ոչ թէ բռնութեան հետեւանք է, այլ՝ սովորական առեւտրական գործարք, քանի որ յետագայում այդ գորգերը վերադարձուել են տիրոջը(27)։

Takvim-i Vekayi, 9 Ocak 1336 (1920) № 3772

٨ نیسان ٣٣٥ تاریخنده اراده سنیه حضرت پادشاهیسی اقترانیله ایصدار قیلنان ایکنجی نسخه

دیوان حرب عرفی

محاکمات ضبط جریده‌سی

رئیس : فریق مصطفی عاصم پاشا

اعضا : میرلوا ذکی پاشا ، میرلوا مصطفی پاشا ، میرلوا علی عاصم پاشا ، میرآلای رجب قره‌بك

یوزغاد تهجیر وتقتیلی محاکمه‌سی

ریاسنده محاکمه‌ی اجرا ایدیلن مظنونلرك اسامیسی : یوزغاد متصرف وکیلی ویوزغاد قائمقامی کامل بك ، یوزغاد تاتارمه قوماندانی یکباشی توفیق بك

قرار صورتی

محاکمات جاریه وجهه طرفینك ادعا وافادات ومدافعاتنك استماعندن ماعدا اوراق ودعوانك سراپا مطالعه وتدقیقندن عسکر ایجاب کیفیت محاکمه اولندقده کرچه مظنونین ووکیل مدافعلری انکار تهمت وطلب رأفت ایتمکده ایسه‌لرده احکام جلیهٔ اسلامیه وقوانین موضوعه‌سنجه‌سنك بر واتیسانه تبعاً بالعموم عناصری یکدیکرندن تفریق ایتمك محافظهٔ عرض وجان ومالرینك تأمینی وحقوق عامه‌نك هر کونه خطر وخللدن ایمنی کافهٔ مأمورین دولتك اقدس وظائفندن بولندیغی حالده غیرمنازع اولان بو فاجعه‌لرك قائمقامی ویوزغاد متصرف وکیل کامل ویوزغاد تاتارمه قوماندانی یکباشی توفیق بکلر دائرهٔ مأموریتلرنده تهجیری اولان ارمنیلرك عاجزه قادینلرینه وصغیر وصغیره چوجقلرینه ایجابه قدر اوامر میلهٔ رسمیه‌سی استناداری بیله کوزتمکسزین حال التهجیر سوق ایدیلکاری قافله‌لری تشکیل ایدنلرك کافه‌سی قتوه وذی قوت اشیالرندن بعد التجرید حقوق شخصیه‌لرینی نظر اعتباره آلمامسزین بو احتراسات ذاتیه‌لرینك سوقیله بعض اشخاص لیمه‌نك تبلیغات کیفیات خفیهٔ غیرمشروعه‌لرینی بالقبول مرقومك مرفهاً وسالماً محال تعیینه ایصال ایدیلمه‌یلدکاری ایچون انحاذی لازمکلان تدابیری قطعیاً ضمناً نظر اعتباره آلمامق وامر محافظه‌لرینی تحت تأمینه آلمدقدن بشقه قلیه مدافعه امکانلرینی سلب ایچون ذکورك قوالرینی باغلاتمق تصمیم برز تطبیق تعیین ایدیلان جایلك ایقاعنه میدان ویرمك وحتی جامع کورمیی بالاستخبار مکرراً استیضاح ایلین آمریته قارشو کتم حقیقته وهانك منته سد چکمك واشخاص غیرمسئوله‌یی مسئول اولان مأمور بالنظار اوزرینه آمر اولمق بالاحترام مقاصد لیمه‌نك حصولنی تأیید بول ایدمك صورتلریله حیات انسانیه ومدنیه ایله وجهاً من الوجوه تألیف اولمیان وتخصیص عند الاسلام کبائر جنایاتدن معدود اولان قتل ونهب وغارتلره سببیت ورمش اولدقلری استماع اولنان شیوعك علی الدرجات واقع اولان تناقضلی شهادتلرندن وبعض مأمورین عسکریه یانلرنده لماعی ایدیلان مخابرات رسمیهٔ تلغرافیه مندرجاتندن ومظنونین موما الیهمانك رد وجرحی تضمن ایتمین اجوبهٔ عدیده‌لری تدقیقاتندن وتهجیر قافله‌لرنده‌کی صغار ونسوانی ولی ومقربلرندن تفریق ایتدیرملری افعال مبسوطه‌سی شنوات ومقاصدلرینی اظهار ایلمکندن ولك تهمت مدافعه‌وکیلرینك ومظنونلرك استماع اولنان صوك مدافعه‌لرندن واراطرکانده وبالخصوص دشمن الکلمه وتحت اشغالده بولنان محالرنده بعض سیکمنزان قومیتجیلرك تشویق وتشجیعلریله قابیه‌لرك دشمن طرفنه توجه وحرکات اختلالیه‌سه اشتراك وقیام ایلملری محالك حمایه‌سنك دیکر طرفلرنده بولنان ملتداشلرینك افکار قاعدهٔ مزبوره‌یی مروج اولملریله دلیل اولمه‌یجق زمان زمان ظهور ایدن بو کبی تشبثات مفسدتکارانه‌یه ارمنی ملتك بر جزئی اشتراك ایلمش ومتبایننك صور عدیده‌سیله اثبات صداقت ومربوطیت ایتمش اولملریله مبرهن وهر مأمورك بالاده محرر اولدیغی وجهله حیات ملیه واغراض شخصیه‌دن تفسق تجرید ایدمدك بحسب المأموریه یاماتمه مودوع اهالینك بلاتفریق جنس ومذهب بدرمشفقلری کبی محافظهٔ حیات وحقوقلرینه حصر وجود ایتمسی برامر مطلق اولدیغی حالده موما الیه کامل بك مدافعاتنده درمیان ایتدیکی وان وارضروم وبتلیس جهتلرنده‌کی ارمنیلرك مسلمانلره قارشو روا کوردکلری مظالمك مسئولیتی شأن اهمیت حرکات اختلالیه‌ده بولنمدقلری آکلاشیلان یوزغادده متوطن ارمنیلره تحمیله جبح برجواز قانونی ووجدانی بولنمدیغی حالده مرقومون حقلرنده‌حس انتقام واغراض شخصیه اظهاری وحتی الکز زیر ادارسنده بولنان سنجاق اهالیٔ اسلامیه‌سنی وکل بالعموم اسلامك ملت مرقومه علیهنه بالغایه تقتیل فکر سقیمنده بولنلرنی طیی ومادتاً لازم کورمسی اوراق موجوده میانده بولنان ومندوجاتی اوچ شخص غیر مسئولك مأمور رسمی اوزرینه آمر وهر کونه امراریه اطاعته قانع

(٣٦١٧ نومرولی نوع واقعه مرجوعدر)

Նոգղաքի տեղահանութեան եւ կոտորածի դատավճռի անուանաթերթը· (օսմաներէն, արաբատառ թուրքերէն).

Takvim-i Vekayi, 8 Nisan, 1335 *(8 Ապրիլ, 1919)* N° 3617:

ՄԱՍՆ ԵՐՐՈՐԴ

ԵՈԶՂԱԹԻ, ՏՐԱՊԻԶՈՆԻ, ՊԷՕՅՈՒՔ ՏԷՐԷԻ ԵՒ ԽԱՐԲԵՐԴԻ ՏԵՂԱՀԱՆՈՒԹԵԱՆ ԵՒ ԿՈՏՈՐԱԾՆԵՐԻ ԴԱՏԱՎԱՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ

ՆՈՐԻՆ ՄԵԾՈՒԹԻՒՆ ՓԱՏԻՇԱՀԻ 1335 Թ. (1919) ՄԱՐՏԻ 8-Ի ԿԱՅՍԵՐԱԿԱՆ ՀՐԱՄԱՆՈՎ ԿԱԶՄՈՒԱԾ ՌԱԶՄԱԿԱՆ ԱՐՏԱԿԱՐԳ ԱՏԵԱՆԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹԻՒՆԸ

Նախագահ՝ գեներալ-լեյտենանտ Մուստաֆա Նազըմ փաշա,
Անդամներ՝ գեներալ-մայոր Զէքի փաշա,
Գեներալ-մայոր Մուստաֆա փաշա,
Գեներալ-մայոր Ալի Նազըմ փաշա,
Գնդապետ՝ Ռեջեբ Ֆերտի պէյ,

ԵՈԶՂԱԹԻ ՏԵՂԱՀԱՆՈՒԹԵԱՆ ԵՒ ԿՈՏՈՐԱԾԻ ԴԱՏԱՎԱՐՈՒԹԻՒՆԸ(1)

Դատաքննութեան ենթարկուած մեղադրեալների անունները — *Եոզղաթի մութասարըֆի տեղակալ եւ Պողազլեանի(2) գայմագամ՝ Քեմալ պէյ, Եոզղաթի ժանդարմական պետ՝ մայոր Թեւֆիկ պէյ։*

ԴԱՏԱՎՃԻՌ

Սոյն դատավարութեան ընթացքում լսեցին մեղադրող եւ պաշտպանուող երկու կողմերին, մանրակրկիտ ուսումնասիրուեցին եւ հետաքննուեցին նաեւ բոլոր դատական փաստաթղթերը։

Մեղադրեալները եւ նրանց դատապաշտպանները ջանացին ուրանալ կատարուած յանցանքը եւ պահանջեցին ազատ արձակել։ Բայց իսլամի բարձր դրոյթները, օսմանեան օրէնքները ընդհանուր են բոլոր հպատակների համար եւ պաշտպանում են նրանց կեանքն ու պատիւը, ունեցուածքը, եւ հասարակական իրաւունքները հաւասարապէս։ Եւ այս բոլորի անխափան գործադրումը կատարելապէս մտնում է պետութեան պաշտօնեաների պարտականութիւնների մէջ։

Մեղադրեալներ՝ Եոզղաթի մութասարրիֆի տեղակալ եւ Պողազլեանի գայմագամ Քեմալ պէյը, ինչպէս նաեւ Եոզղաթի ժանտարմական պետ՝ մայոր Թեւֆիկ պէյը իրենց պաշտօնավարութեան ընթացքում, առանց ուշադրութիւն դարձնելու պաշտօնապէս հաղորդուած հրամանների բացառութիւններին, տեղահանութեան են ենթարկել նոյնիսկ թուլակազմ կանանց, անչափահաս երեխաներին՝ ոտնահարելով նրանց անձնական իրաւունքները։ Ունեցուածքն ու դրամը կողոպտելուց յետոյ, նրանց քարաւանները ճամբու են դրուել կեանքի ապահովութեան բոլոր միջոցներից զուրկ։ Նոյնիսկ, մի շարք ստոր մարդկանց գաղտնի հրահանգները կատարելով, ոչ միայն ուշադրութիւն չեն դարձրել նրանց կեանքը ապահովելու խնդրին, այլ, ընդհակառակը, ամուր կապելով բոլոր տղամարդկանց ձեռքերը՝ զրկել են նրանց ինքպաշտպանութեան բոլոր հնարաւորութիւններից։ Եւ այդպէս կանխամտածուած կերպով, առիթ են տուել, որ այդ ողբերգութիւնը գործադրուի։ Մեղադրեալները նոյնիսկ ուշա-

դրութիւն չեն դարձրել սպանութիւնները կանխելու իրենց վերադասի յորդորանքներին եւ պատասխանատու պաշտօնեաների վրայ ինչ-որ պատահական մարդկանց ղեկավարելով, գաղտնաբար շարունակել են իրագործել իրենց նշանակելով, գաղտնաբար շարունակել են իրագործել իրենց բարբարոսային արարքները։ Նրանց միջոցով կատարուած այդ կոտորածներն ու կողոպուտները, իսլամի դրոյթներով մեծ մեղք եւ յանցանք համարուելով, անյարիր են մարդկութեան եւ քաղաքակիրթ աշխարհի սկզբունքներին։

Վկաների համոզիչ ցուցմունքները, բարձրաստիճան զինուորականութեան միջեւ կատարուած պաշտօնական թղթակցութիւնների եւ հեռագրերի բովանդակութիւնը, մեղադրեալների մանրակրկիտ հարցաքննութիւնը, ինչպէս նաեւ քարաւաններում գտնուող կանանց եւ երեխաներին իրենց ամուսիններից կանխամտածուած անջատումը լիովին բացայայտում է մեղադրեալների կատարած յանցանքն ու նենգ նպատակները, թէեւ դատապաշտպանները եւ մեղադրեալները իրենց վերջին խօսքերում նշեցին, որ իբրեւ թէ մի շարք թեթեւամիտ կուսակցութիւնների(3) հրահանգով եւ Օսմանեան կայսրութեան միւս կողմերում գտնուող իրենց հայրենակիցների դրդումով, յատկապէս հակառակորդի կողմից գրաւուած վայրերում, հայերը անցել են թշնամու կողմն ու միացել ապստամբական շարժումներին(4)։ Այս բացատրութիւնները չեն կարող կատարուած վայրագութիւնները արդարացնելու համար հիմք ծառայել, որովհետեւ եթէ հայ ժողովրդի մի մասը երբեմն միացել է այդ շարժումներին, ապա միւս մասը տարբեր ձեւերով արտայայտել է իր հաւատարմութիւնը [իշխանութիւններին]։

Այնպէս որ, իւրաքանչիւր պետական պաշտօնեայի համար, անկախ իր ազգայնական զգացումներից եւ անձնական վրէժխնդրութիւնից, ստիպողական անհրաժեշտութիւն է գորովագութ հօր նման, առանց ցեղային եւ կրօնական խտրականութեան, պաշտպանելու իրեն

աւանդուած բնակչութեան զգացումներն ու իրաւունքները։

Քեմալ պէյը իր պաշտօնական խօսքում արծարծեց այն միտքը, թէ իբր Եոզղաթում կատարուած այդ արարքները բխել են Վանի, Էրզրումի եւ Պիթլիսի կողմերում մահմեդականների դէմ հայերի ցուցաբերած վատ վերաբերմունքից։ Մինչդեռ, օրէնքի եւ խղճի տեսակէտից, ապստամբական շարժման հետ ոչ մի առնչութիւն չունեցող Եոզղաթի հայ բնակչութեան նկատմամբ գործադրուած վրէժխնդրութիւնն ու անձնական ոխակալութիւնն անհամատեղելի են վերոյիշեալ մտքի հետ։ Փաստերը վկայում են, որ հայերին կոտորելու համար նա նոյնիսկ ոտքի է հանել ոչ միայն իր տրամադրութեան տակ գտնուող սանճակի թուրքերին, այլեւ կոչ է արել բոլոր մահմեդականներին՝ ոտքի կանգնել հայ ժողովրդին ի սպառ ոչնչացնելու համար։

Իր ձեռագրով գրուած փաստաթղթերից մէկում, նա, անպաշտօն երեք մարդկանց վերահսկիչ նշանակելով, քարաւանները առաջնորդող պաշտօնական պահապանների վրայ, ստիպել է վերջիններին, որպէսզի հնազանդուեն եւ ենթարկուեն նրանց հրամաններին։ Բոլորովին կասկած չի յարուցում, որ նրանց տրուած հրահանգի վրայ էլ քարաւանները ենթարկուել են կոտորածի։ Այս եւ այլ հաւաստի ապացոյցները յօդս են ցնդեցնում մեղադրեալների փաստաբանների դատապաշտպանութեանը վերաբերող ջանքերը։

Քաղաքացիական քրէական օրէնսգրքի 56-րդ յօդուածի հիման վրայ, նրանց դատելու դատախազութեան պահանջը [դատական յանձնախմբի] կողմից հաւանութեան չարժանացաւ։ Յանձնաժողովը միաձայն որոշեց մեղադրեալներին դատապարտելու քաղաքացիական քրէական օրէնսգրքի 45-րդ յօդուածով։

Պատժի չափը քննարկութեան նիւթ դառնալուց յետոյ, որոշուեց ըստ կատարուած յանցագործութեան եր-

կուսին էլ առանձին-առանձին դատել 45-րդ յօդուածի հիման վրա «յանցագործութեան անմիջական մասնակցութիւն ունենալու» մեղադրանքով։

Քեմալ պէյը տուեալ սանջակի ամենաբարձր պաշտօնատար անձը լինելով, ինքն է կազմակերպել [Եոզղաթի հայութեան] կոտորածն ու ունեցուածքի կողոպուտը եւ հանդիսանում է գլխաւոր յանցագործը, քանի որ ինքն է նշանակել մի շարք անպաշտօն մարդկանց, որպէսզի ուղեկցեն քարաւաններին եւ միեւնոյն ժամանակ ստիպել է քարաւանի պաշտօնական առաջնորդ՝ Շիւքրի չավուշին, որ նա հնազանդուի եւ կատարի նրանց հրամանները։

Առկայ յանցանշանների համաձայն, վերոյիշեալ Թեւֆիկ պէյը կոտորածի եւ կողոպուտի իրականացման խնդիկ պէյը կոտորածի եւ կողոպուտի իրականացման խնդրում ուղղակի մասնակցութիւն ունենալու համար դատապարտուեց 45-րդ յօդուածով, իսկ գլխաւոր յանցագործ Քեմալ պէյը՝ կայսերական քրէական օրէնսգրքի 171-րդ եւ կայսերական քաղաքացիական քրէական օրէնսգրքի 170-րդ յօդուածների հիման վրայ։

Այսպիսով, [դատարանը] միաձայն վճիռ կայացրեց, որ Քեմալ պէյը(5) դատապարտուում է մահուան՝ ըստ 171-րդ յօդուածի, ուր ասուած է. «Եթէ մի խումբ մարդիկ կանխամտածուած ճնշում բանեցնելով, զինուած կամ զինուած կամ խորտակելով դռներն ու ցանկապատերը՝ կողոպանզէն, վաճառողի ապտեն եւ կամ փչացնեն պարենամթերքը, ինչպէս նաեւ րանքները... դատապարտուում են մահուան», կայսերական քրէական օրէնսգրքի 170-րդ յօդուածով, ուր ասուած է. «Կանխամտածուած սպանութիւն կատարողները, կամ իրենց մերձաւոր ազգականներին, լինի հայր կամ պապ, մայր կամ տատ, առանց կանխամտածուածութեան սպաննողները մահուան են դատապարտուում»։ Իսկ Թեւֆիկ պէյը դատապարտուում է 15 տարուայ տաժանակիր աքսորի, վերոյիշեալ 45-րդ յօդուածի երկրորդ մասի հիման վրայ, ուր ասուած է. «Եթէ

գլխաւոր յանցագործին մահապատիժ կամ ցմահ տաժանակիր աքսոր է սահմանւում, ապա նրա մեղսակիցներին՝ 10 տարուց ոչ պակաս ժամանակաւոր բանտարկութիւն»։

6 Ռեճեպ 1335 թ.
(1919 թ. Ապրիլի 8)
Նազըմ, Զեքի, Մուստաֆա, Ալի Նազըմ, Ռեճեպ Ֆերտի

Ռազմական արտակարգ ատեանի արձանագրող
յանձնախմբի պետ՝ Ապիտին Տաւեր

Takvim-i Vekayi, 8 Nisan 1335 (1919) № 3617

ՌԱԶՄԱԿԱՆ ԱՐՏԱԿԱՐԳ ԱՏԵԱՆԻ ԴԱՏԱՎԱՐՈՒԹԵԱՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹԻՒՆԸ

Նախագահ՝ Գեներալ-լեյտենանտ Մուստաֆա Նազըմ փաշա.
Անդամներ՝ Գեներալ-մայոր Զեքի փաշա,
Գեներալ-մայոր Մուստաֆա փաշա,
Գեներալ մայոր Ալի Նազըմ փաշա,
Գնդապետ Ռեճեպ պէյ։

ՏՐԱՊԻԶՈՆԻ ՏԵՂԱՀԱՆՈՒԹԵԱՆ ԵՒ ԿՈՏՈՐԱԾԻ ԴԱՏԱՎԱՐՈՒԹԻՒՆԸ(6)

Դատի տրուած ներկայ գտնուող մեղադրեալների անունները — Տրապիզոնի հարկային տեսուչ՝ Մեհմետ Ալի պէյ, Տրապիզոնի ոստիկանապետ՝ Նուրի պէյ, Տրապիզոնի [գաղտնի] գործակալութեան տեսուչ՝ Մուստաֆա էֆենտի, Տրապիզոնի ժանտարմի քննչական տեսուչի օգնական՝ գայմագամ Թալաաթ պէյ, Տրապիզոնի հիւրանոցի տնօրէն՝ Նիազի էֆենտի, Տրապիզոնի առողջապահութեան

տեսուչ՝ Ալի Սայիբ պէյ։

Հեռակայ կարգով դատի տրուած մեղադրեալների անունները — Տրապիզոնի վալի՝ Ճեմալ պէյ, կուսակցութեան Տրապիզոնի պատասխանատու քարտուղար՝ Նայիլ պէյ։(7)

ԴԱՏԱՎՃԻՌ

Սոյն դատավարութեան ընթացքում լսեցին մեղադրող եւ պաշտպանուող երկու կողմերին, մանրակրկիտ ուսումնասիրուեցին եւ հետաքննուեցին նաեւ բոլոր դատական փաստաթղթերը։

Մեղադրեալները եւ նրանց դատապաշտպանները ջանացին ուրանալ կատարուած յանցանքը եւ պահանջեցին ազատ արձակել։ Բայց իսլամի բարձր դրոյթները՝ Օսմանեան օրէնքները ընդհանուր են բոլոր հպատակների համար եւ պաշտպանում են նրանց կեանքն ու պատիւը, հասարակական իրաւունքները՝ հաւասարունեցուածքը եւ դրապէս։ Եւ այս բոլորի անխափան գործադրումը կատարեալապէս մտնում է պետութեան պաշտօնեաների պարտականութիւնների մէջ։

Մեղադրեալներ՝ Տրապիզոնի նախկին վալի՝ Ճեմալ Ազմի պէյը, ինչպէս նաեւ «Միութիւն եւ Առաջադիմութիւն» կուսակցութեան Տրապիզոնի պատասխանատու քարտուղար՝ Նայիլ պէյը սերտօրէն համագործակցել են ստացուած գաղտնի հրամանագրերը իրականացնելու գործում։ Արտաքուստ նրանք իբրեւ թէ գործել են տեղահանութեան օրէնքի հիման վրայ, մինչդեռ այդ գաղտնի հրահանգների համատեղ իրականացումը համարձակութիւն է տուել նրանց՝ անհրաժեշտ միջոցներ ձեռնարկելու հայերին կոտորելու եւ բնաջնջելու։

Մի շարք յանցագործ, անառակ մարդկանցից եւ նոյն

մակարդակի մի քանի ժանտարմներից նրանց կազմած հրոսակախմբերը իբրեւ թէ ուղեկցելու էին տեղահանութեան ենթարկուած հայերի քարաւանները։ Մինչդեռ տեղահանութեան ենթարկուած եւ պաշտպանութեան միջոցներից զուրկ հայերի քարաւանները քաղաքից հեռացուելուց յետոյ, ամայի վայրերում տղամարդկանց առանձնացրել են կանանցից եւ վերոյիշեալ յանցագործներից կազմուած չեթէների հրոսակախմբերը յարձակուելով՝ կողոպտել են նրանց իրերը եւ այնուհետեւ աներեւակայելի դաժանութեամբ սպաննել եւ բնաջնջել բոլորին։ Իսկ խեղճ կանանց մի այլ վայր տանելով՝ յափշտակել են նրանց զարդեղէններն ու շորերը եւ ենթարկել բռնաբարութեան։ Այնուհետեւ ամիսներով ճանապարհներին քարշ գալուց յետոյ, շատերը մահացել են՝ բոլորովին հիւծուած՝ տառապալի ուղեւորութիւնից, սովից եւ ծարաւից։ Իսկ [ողջ] մնացածներին, Էրզինճանի ճանապարհով ուղարկել են հեռաւոր վայրեր։

Տրապիզոնում մնացած կանանց եւ երեխաների մի մասին, իբրեւ թէ պաշտպանելու պատրուակով, տեղաւորել են հիւանդանոցներում եւ տերվիշների տներում(8)։ Այնուհետեւ, ծովային ճանապարհով այլ վայրեր տեղափոխելու նպատակով, խմբերով նստեցրել են նաւերը եւ տեսադաշտից հեռու ծովի խորքերը տանելով՝ գցել են ջուրը եւ խեղդելով ոչնչացրել բոլորին։ Այս դատավարութեան վերջին նիստում պարզուեց եւ մենք բոլորս համոզուած ենք, որ կոտորածն ու կողոպուտը մըտայղացուած է եղել ոչ թէ Տրապիզոնում, այլ նրա սահմաններից դուրս, այն էլ՝ կանոնաւոր ու խիստ կազմակերպուած։

Վերոյիշեալ մեղադրեալներից հարկային տեսուչ Մեհմետ Ալի էֆենտին, վաղեմի ծանօթ լինելով Ճեմալ Ազմի պէյին, սերտ համագործակցել է նրա հետ, կատարել՝ նրա հրամանները եւ նպաստել՝ վալիի կատարած չա-

բագործութիւններին եւ այդ ողբերգական արարքների իրականացմանը։ Իսկ վալի Ճեմալ Ազմի պէյը օգտագործել է նրան, նկատի ունենալով, որ նա սերտօրէն առնչուութիւն ունի լքեալ գոյքի, գոհարեղէնների, ռազմական արտակարգ հարկային պաշտօնեաների, ռազմական շինութիւնների, կապի յանձնաժողովների, զինուորական, հեռախօսային եւ անձնագրերի ստուգման տեսչութիւնների, ինչպէս նաեւ «Կարմիր մահիկ» հիւանդանոցի եւ «Կանանց ընկերակցութեան» հետ։

Մեհմետ Ալի պէյի թոյլտուութեամբ, հայ կանանց եւ աղջիկներին իբրեւ թէ «պատսպարման» քօղի տակ հապճեպօրէն հաւաքել են մարդասիրական նպատակներով կառուցուած հիւանդանոցում, տերվիշների տներում եւ այնուհետեւ հայրենասիրական գործ կատարած լինելու պատրուակով, որպէս աղախին եւ կին օգտագործելու նպատակով՝ բաժանել տարբեր մարդկանց տները։ Եւ այդպէս, նրա մեղքով շատերը կուսապղծուել եւ ենթարկուել են այլեւայլ բռնութիւնների։ Այդ դժբախտներին, տուեալ վայրերում հապճեպօրէն հաւաքելու եւ կարճ ժամանակամիջոցում քաղաքից դուրս հանելու, կուսապղծելու եւ այլ բռնութիւնների ենթարկելու մասին գոյութիւն ունեն հաւաստի վկայութիւններ։ Նոյնիսկ իրենից ստորադաս հարկային տեսչութեան քննիչը բազմիցս գրաւոր եւ բանաւոր զգուշացրել է, որ իր պաշտօնի հետ առնչութիւն չունեցող այդ ստոր գործերի մէջ խառնուելը կարող է ունենալ խիստ վտանգաւոր հետեւանքներ։ Իսկ նա (Մեհմետ Ալի էֆենտին), բոլորովին կարեւորութիւն չտալով դրան, գիտակցաբար շարունակել է օժանդակել յիշեալ Ճեմալ Ազմի պէյի քաղաքի ներսում կատարած անմարդկային, դաժան գործերին։

Ոստիկանապետ Նուրի էֆենտին, որը այլ պաշտօնանաբարոյ բոլոր յանցագործութիւններին։

Ոստիկանապետ Նուրի էֆենտին, որը այլ պաշտօնատար անձնաւորութիւնների հետ նշանակուել է հետեւելու քաղաքի կարգուկանոնին, միեւնոյն ժամանակ ընդգծեր-

կուած է եղել տեղահանութեան կազմակերպման, գաղտնի ոստիկանութեան եւ գոհարեղէնների պահպանութեան յանձնաժողովների մէջ։ Նրան է յանձնուել հաւաքելու, գրանցելու տեղահանուած հայերի լքեալ գոյքը։ Մինչդեռ նա ոչ մի գործնական միջոց չի ձեռնարկել լքեալ գոյքի պահպանման հարցում։ Աւելին, նրա թոյլտուութեամբ, հայերի լքեալ գոյքի պահեստաւորումը կատարուել է անվստահելի մարդկանց միջոցով, անկազմակերպ եւ առանց ցուցակ կազմելու։ Այսպիսով, նրանց մեղաւորութեամբ, լքեալ գոյքը յափշտակուելով մատնուել է կատարեալ կորստի։

Չնայած՝ որ նա այդ ապրանքների գողութեան մէջ մեղադրուող մի քանի պաշտօնատար անձնաւորութիւնների ուղարկել է ռազմական ատեանի հետաքննութեանը, այնուհանդերձ ո՛չ մի պաշտօնական կամ անպաշտօն միջոց չի ձեռնարկել Ճեմալ Ազմի պէյի եւ նրա պաշտօնակատարների արարքները սանձահարելու, ինչպէս նաեւ սաստելու այն ոստիկաններին, որոնք օգտուելով գիշերային պարետային ժամից, զբաղուել են թալանով եւ յափշտակութեամբ։ Նա նոյնիսկ ականատես լինելով այդ ողբերգական տեսարանին՝ ոչ մի արգելք չի յարուցել, երբ ժանտարմները եւ ոստիկանները քաղաքում մնացած կանանց եւ երեխաներին խեղդելու նպատակով նաւ բարձրացնելով՝ տարել են ծովի խորքերը։

Ըստ նրա տուած ցուցմունքի, իբրեւ թէ խորապէս ազդուելով իր ներկայութեամբ կատարուած մի շարք դէպքերից, քաշուել է իր սենեակը եւ այն աստիճան յուզմունք է ապրել, որ նոյնիսկ չի կարողացել միառժամանակ դուրս գալ փողոց։ Այդ բոլորով հանդերձ, նա աչք է փակել վալիի կատարած արարքներին եւ նոյնիսկ քաջութիւն չի ունեցել կամովին հեռանալու եւ պաշտօնը զիջելու մէկ ուրիշին, որը գուցէ կարողանար կանխել այդ յանցագործութիւնները։

[Գաղտնի ոստիկանութեան] գործակալ Մուստաֆա պէյը, միաժամանակ զինուորական լինելով, կարողացել է վաղուց ի վեր շահել Ճեմալ Ազմի պէյի համակրանքը եւ սերտ յարաբերութիւն հաստատել նրա հետ։ Օգտուելով այդ մտերմութիւնից, Մուստաֆա պէյը ձեռք է բերել զինուորական շատ կարեւոր պաշտօններ, ինչպիսիք են՝ նահանգապետային եւ առեւտրական զինուորական տեսչութիւնները։ Մուստաֆա պէյը կարողացել է նաեւ իր պաշտօնավարութիւնը երկարաձգել, շնորհիւ Ճեմալ Ազմի պէյին ենթակայ զինուորական հրամանատարների աջակցութեան եւ կենտրոնական կառավարութեան հովանաւորութեան։ Հայերից յափշտակուած գոյքի տեղափոխութեան ընթացքում, նա, չարաշահելով իր պաշտօնը, զինուորական փոխադրամիջոցները տրամադրել է վալիին եւ նրա պաշտօնակատարներին։

Նրան պաշտպանելու միտումով վկայութիւն տուողները նշեցին, որ նա լաւ յարաբերութեան մէջ գտնուելով վալիի հետ, իբր կարողացել է մի շարք հայերի ազատել տեղահանութիւնից։ Լինելով քաղաքի մեծահարուստներից մէկը, իր անձնական շահի համար չի զոհաբերել իր պատիւը։ Նոյնիսկ վալի Ճեմալ Ազմի պէյի ագահ բերանը փակելու համար, իրեն յանձնուած գանձարկղի զարդեղէնն ու դրամը առանց հաշուարկի տրամադրել է նրան եւ նիւթական վնաս կրել։

Նուրի պէյի, Մեհմետ Ալիի եւ գործակալ Մուստաֆա էֆենտիի օգտին տրուած այդ վկայութիւնները, ինչպէս նաեւ նրանց դատապաշտպանների կողմից առաջ քաշուած պարզաբանումները, իրականութեան հետ ո՛չ մի առնչութիւն չունեն եւ բոլորովին անհիմն են։

Այսպիսով [Ռազմական ատեանը] միաձայն որոշում կայացրեց, որ ոստիկանապետ Նուրի էֆենտին, [գաղտնի ոստիկանութեան] գործակալ Մուստաֆա պէյը, իրենց պաշտօնավարութեան ընթացքում կատարուած չարաշա-

հումների համար յանցաւոր են ճանաչւում։ Վալի Ճեմալ Ազմի պէյը, [հարկային տեսուչ] Մեհմետ Ալի էֆենտին մեղադրուեցին կայսերական քաղաքացիական քրէական օրէնսգրքի 45-րդ յօդուածով։

Տեղի ունեցած խորհրդակցութիւնից յետոյ [ատեանը] Ճեմալ Ազմի եւ Նայիլ պէյերին ճանաչեց որպէս յանցագործութեան անմիջական մասնակից եւ պատժի չափ սահմանեց վերոյիշեալ 45-րդ յօդուածի առաջին մասը, ուր ասուած է.

«Մի խումբ անձնաւորութիւններ, մի ոճրագործութիւն կամ յանցագործութիւն խմբովին կատարելու դէպքում, կամ մի խումբ անձնաւորութիւններ բազմաթիւ արարքներից կազմուած մի ոճրագործութիւն կամ յանցանք գործելիս, ոճրագործութեան ընթացքում նրանցից իւրաքանչիւրը այդ արարքներից որեւէ մէկը կամ մի քանիսը կատարելու դէպքում, նոյնպէս գործակից են համարւում եւ պատժւում են ուղղակի յանցանք կատարողի նման»։

Մեհմետ Ալի էֆենտին, յանցագործութեանը ուղղակի կերպով մասնակցութիւն ունենալու համար մեղադրւում է վերոյիշեալ յօդուածի երրորդ մասով, ուր ասուած է.

«Որեւէ յանցագործութեան կամ ոճրագործութեան իրականացմանը ինչ-որ ձեւով օժանդակողներին, այսինքն՝ սպառնալիքով կամ խարդաւանքով գործարքի մէջ մտնել, դրամ կամ նուէր տալ, պաշտօնը չարաշահելով ազդեցութիւն բանեցնել, զէնք, այլեւայլ գործիքներ կամ միջոցներ հայթայթելով նախապատրաստական գործունէութիւն ծաւալել, ինչ-որ ձեւով յանցագործութեանը նպաստել, դատապարտւում են այդ յանցագործութեանը կամ ոճրագործութեանը անուղղակի մասնակցութիւն ունենալու մեղադրանքով»։

Ճեմալ Ազմի եւ Նայիլ պէյերը դատապարտւում են

կայսերական զինուորական քրէական օրէնսգրքի 171-րդ եւ քաղաքացիական քրէական օրէնսգրքի 170-րդ յօդուածներով։ Յիշեալ 171-րդ յօդուածում ասուած է.

«Եթէ մի խումբ մարդիկ, կանխամտածուած ճնշում բանեցնելով, զինուած կամ անզէն՝ խորտակելով դռներն ու ցանկապատերը կողոպտեն կամ փչացնեն պարենամթերքը, վաճառքի ապրանքները... դատապարտւում են մահուան»։

170-րդ յօդուածում ասուած է.

«Կանխամտածուած սպանութիւն կատարողները կամ իրենց մերձաւոր ազգականներին, լինի հայր կամ պապ, մայր կամ տատ, առանց կանխամտածուածութեան սպանողները մահուան են դատապարտւում»։

Այս յօդուածների հիման վրայ, վերոյիշեալ Ճեմալ Ազմի(9) եւ Նայիլ(10) պէյերը դատապարտւում են մահուան, իրենց ունեցուածքի բռնագրաւումով։

Մեհմետ Ալին, վերոյիշեալ քաղաքացիական քրէական օրէնսգրքի 45-րդ յօդուածի ստորեւ բերուած երկրորդ մասի հիման վրայ դատապարտւում է 10 տարուայ բանտարկութեան.

«Մի ոճրագործութեան կամ յանցագործութեան անուղղակի մասնակցութիւն ունեցած անձնաւորութիւնները, օրէնքի չբացայայտուած մասերում, պատժի են ենթարկւում հետեւեալ կերպ. եթէ գլխաւոր յանցագործին մահապատիժ կամ ցմահ տաժանակիր աքսոր է սահմանուում, ապա մեղսակիցներին 10 տարուց ոչ պակաս ժամանակաւոր բանտարկութիւն»։

[Գաղտնի ոստիկանութեան] գործակալ Մուստաֆա էֆենտին, ոստիկանապետ Նուրի պէյը ստորեւ բերուած քաղաքացիական քրէական օրէնսգրքի 172-րդ յօդուածի հիման վրայ, դատապարտւում են մէկական տարուայ բանտարկութեան եւ երկուական տարի ժամկէտով պաշտօնազրկման։

Օրէնսգրքում լուսաբանուած յօդուածներից բացի, ինչ ձեւով էլ պատահած լինի, պաշտօնը չարաշահող անձնաւորութիւնը իր պաշտօնավարութեան աստիճանի համաձայն դատապարտւում է(...)(11) մինչեւ երեք տարի բանտարկութեան։ Եթէ մեղմացնող հանգամանքներ լինեն, 15-ից(...)(12) ոչ պակաս ժամկէտով բանտարկութիւն է հասնում, կամ էլ 15-ից մինչեւ 100 լիրա տուգանք։ Բոլոր դէպքերում, տեւապէս կամ առժամեայ պաշտօնազրկումը պարտադիր է»։

Պաշտօնական (...ilk)(13)-ից յայտնուած է, որ մեղադրեալ Նիազի էֆենտին, ծովից յայտնաբերուած ինքնաշարժ թորբեռները հաւաքելու եւ տեղափոխելու նպատակով, երկու անգամ մոթորային նաւով մեկնել է Ստամպուլ, եւ նաւը վերանորոգելու համար որոշ ժամանակ մնացել է այնտեղ։ Այնուհետեւ նրա Տրապիզոն վերադարձը չի համընկնում հայերի տեղահանութեան տարեթուի հետ։ Նրա առնչութիւնը տեղահանութեան, կոտորածի եւ լքեալ գոյքի յափշտակման հետ բաւարար ապացոյցներով չի հաստատւում։ Միայն պարզւում է, որ Ճեմալ Ազմի պէյի կարգադրութեամբ, լքեալ գոյքի մի մասը աճուրդով եւ էժան գնով ծախելու համար յանձնուել է յիշեալին։ Այս վաճառքը եւ էժան գնով ծախելու պարագան զուգադիպել է պատերազմի ամենավտանգաւոր ժամանակամիջոցին, այսինքն՝ ռմբակոծութեան շրջանին։ Բացի այդ, Ճեմալ Ազմի պէյի կարգադրութեամբ, այդ ինքնաշարժ թորբեռների տեղափոխման խնդիրը ընդհատել է վերոյիշեալ վաճառքի աշխատանքները։ Փաստեր չկան նաեւ, որ նա կաշառք կամ շահոյթ ձեռք բերելու նպատակով գործարքի մէջ մտած լինի որեւէ մէկի հետ։ Քրէական օրէնսգրքում չկայ նաեւ մի յօդուած, որը դատապարտէր աճուրդի հետ կապուած նրա գործունէութիւնը։ Հետեւաբար՝ նա պատասխանատուութիւնից դուրս է մնում, քանի որ չի մասնակցել կոտորածին, կողոպուտին եւ ընդ-

հանրապէս տեղի ունեցած այլ յանցագործութիւններին։

Կատարուած յանցագործութիւններին չի մասնակցել նաեւ գայմագամ Թալաաթ պէյը։ Դատարանում տրուած մի շարք վկայութիւնների համաձայն, «Սովորութային հարկերի»(14) հաւաքման յանձնախմբում իր պարտականութիւնները կատարել է առանց չարաշահումների։

Այսպիսով, [գայմագամ] Թալաաթ եւ Նիյազի պէյերը վերոյիշեալ յանցագործութիւնների հետ առնչութիւն չունենալու պատճառով, բանտից ազատ են արձակւում։ Մենենալու պատճառով, բանտից ազատ են արձակւում։ Մեղադրեալ՝ առողջապահութեան տեսուչ՝ Ալի Սայիպ պէյի նկատմամբ, որոշակի յանցանշան չլինելու պատճառով՝ դատաքննութիւնը կարճւում է։

[Ռազմական ատեանի] միաձայն որոշումը հրապարակուեց բոլորի ներկայութեամբ, իսկ ճեմալ Ազմի եւ Նայիլ պէյերի նկատմամբ, հեռակայ կարգով։

1919 թ. Մայիսի 22

Նազըմ, Զեքի, Մուստաֆա, Ալի Նազըմ, Ռեճեպ Ֆերտի

Ռազմական արտակարգ ատեանի արձանագրական յանձնախմբի պետ՝ Ապիտին Տաւեր.

Takvim-i Vekayi, 22 Mayis 1335 (1919) № 3616

ՆՈՐԻՆ ՄԵԾՈՒԹԻՒՆ ՓԱՏԻՇԱՀԻ 1335 թ. (1919) ՄԱՐՏԻ 8-Ի ԿԱՅՍԵՐԱԿԱՆ ՀՐԱՄԱՆՈՎ ԿԱԶՄՈՒԱԾ ՌԱԶՄԱԿԱՆ ԱՐՏԱԿԱՐԳ ԱՏԵԱՆԻ ԴԱՏԱՎԱՐՈՒԹԵԱՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹԻՒՆԸ(15)

Նախագահ՝ Գեներալ-լեյտենանտ Մուստաֆա Նազըմ փաշա.

Անդամներ՝ Գեներալ-մայոր Զեքի փաշա,

Գեներալ-մայոր Մուստաֆա փաշա,
Գեներալ մայոր Ալի Նազըմ փաշա,
Գնդապետ Ռեճեպ Ֆերտի պէյ։

ՊԷՕՅԻՒՔ ՏԷՐԷԻ(16) ՏԵՂԱՀԱՆՈՒԹԵԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹԻՒՆԸ

Դատի տրուած ներկայ գտնուող մեղադրեալների անունները — Պէօյիւք Տէրէի նախկին ոստիկանապետ՝ Քերիմ պէյ, Պէօյիւք Տէրէի մուխթար՝ Ճելալ էֆենտի, Պէօյիւք Տէրէի երեւելի մարդկանցից՝ սալոնիկցի Թեւֆիկ Հըֆզը պէյ, Պէօյիւք Տէրէի բնակիչ՝ Հաֆըզ Մահմուտ էֆենտի։

ԴԱՏԱՎՃԻՌ

Սոյն դատավարութեան ընթացքում, լսեցին մեղադրող եւ պաշտպանուող երկու կողմերին, մանրակրկիտ ուսումնասիրուեցին եւ հետաքննուեցին նաեւ բոլոր դատական փաստաթղթերը։

Մեղադրեալներ՝ Պէօյիւք Տէրէի նախկին ոստիկանապետ՝ Ապտուլ Քերիմ պէյը, սալոնիկցի Ռեֆիկ պէյը, Ռիզալի Ճելալ եւ Հաֆըզ Մահմուտ էֆենտիները, նշուած շրջանի ոչ-մահմետական բնակչութեան տեղահանութեան համար կառավարութեան կողմից նշանակուած որոշակի պայմանաժամը թաքցնելով, իրենց անձնական շահը եւ նենգ մտադրութիւնները իրականացնելու միտումով՝ տեղահանուողներին յատկացրել են շատ կարճ ժամանակամիջոց։ Այդպիսով, տեղահանուողները ստիպուած են եղել իրենց ունեցուածքը, կահկարասին թողնել եւ հեռանալ։ Այնուհետեւ նրանց լքեալ գոյքը կողոպտել են, իսկ թաքցրած ապրանքները յայտնաբերել յատուկ գործիքներով եւ իւրացրել։

Վերոյիշեալ մեղադրեալներից, Ապտուլ Քերիմ եւ Ռեֆիկ պէյերը, մարդկային խղճմտանքի նշոյլն անգամ չունենալով, կողոպուտի եւ յափշտակութեան են ենթարկել տեղահանուողների լքեալ գոյքը։ Նոյնիսկ իւրացնելու ագահութեամբ տարուած, եռանդագին ջանքեր են գործադրել յայտնաբերելու համար թաքցուած ապրանքները։

Յիշեալ մեղադրեալներից՝ Ապտուլ Քերիմ պէյը, իր պաշտօնավարութեան ընթացքում պարտաւոր էր հետեւել իսլամի վսեմ դրոյթներին, Օսմանեան օրէնքներին, եւ պաշտպանել բոլորի կեանքն ու առանց խտրականութեան պատիւը, ունեցուածքն ու հասարակական իրաւունքները, բայց պատերազմական դրութեան եւ զինուորական տեսանկիւնից անհրաժեշտ համարուող տեղահանութեան գործում, ոչ մի միջոց չի ձեռնարկել ապահովելու համար շարժական եւ անշարժ գոյքը։ Իր պաշտօնավարութեան ընթացքում, հանդէս է բերել կատարեալ անփութութիւն, անտարբերութիւն եւ, մեծ վնաս հասցնելով, կորստի է մատնել տեղահանուողների շարժական եւ անշարժ գոյքը։

Ինչ վերաբերում է Ռեֆիկ պէյին, նա կառավարութեան կողմից երբեւէ արտօնութիւն կամ իրաւունք չի ունեցել խառնուելու տեղահանութեան գործին, սակայն բարձր խաւի մարդկանց հետ սերտ շփում ունենալով, կատարել է քաղաքացիական պաշտօնատար անձնաւորութիւնների եւ սպայական անձնակազմի իրաւասութիւններին վերաբերող մի շարք առաջադրանքներ։ Այսպիսով, ականատեսների վկայութիւնները, ինչպէս նաեւ դատաքննութեան նիւթերը լիովին հաստատեցին նրա կողմից թոյլ տրուած մարդկային ամենատարրական իրաւունքների ոտնահարման փաստերը։ Այնպէս որ, դատախազութեան կողմից յիշեալին ազատ արձակելու փաստարկը, ինչպէս նաեւ դատապաշտպանների ներդրած ջանքերը համոզիչ չեն եւ չեն կարող ընդունելի համարուել։ Լիովին բացա-

յայտուեց, որ Ապտուլ Քերիմ պէյը չարաշահել է իր պաշտօնը, իսկ Ռեֆիկ պէյը առանց արտօնութեան եւ իրաւունքի, խառնուել է պաշտօնատար անձնաւորութիւնների գործերին, եւ կատարելով մի շարք գործարքներ, դարձել է մեղսակիցների մեղսակիցը։

Ապտուլ Քերիմ պէյի յանցանքը առնչւում է կայսերական քաղաքացիական քրէական օրէնսգրքի 102, իսկ Ռեֆիկ պէյինը՝ նոյն օրէնսգրքի 130-րդ յօդուածների հետ։ Այդ յօդուածում ասուած է.

«Պետական պաշտօնեաներից որեւէ մէկը իր պարտականութիւնները կատարելու ընթացքում, եթէ առանց էական պատճառի անփութութիւն եւ անտարբերութիւն ցուցաբերի եւ կամ առանց էական պատճառի չկատարի օրէնքի ուժից բխած իր վերադասի հրամանը, ապա իր պաշտօնի աստիճանի համեմատ պատժի է ենթարկւում երեքից մինչեւ 100 լիրա տուգանքով։ Եթէ անփութութեան եւ անտարբերութեան հետեւանքով եւ կամ օրէնքի ուժից բխած վերադասի հրամանը չկատարելու դէպքում վնաս հասցուի պետութեան շահերին, ապա պաշտօնի աստիճանի համեմատ կալանքի է վերցւում(...)(17) մէկ շաբաթից մինչեւ երեք տարի ժամկէտով եւ ժամանակաւորապէս կամ մշտապէս զրկւում է իր զբաղեցրած պաշտօնից։ Կատարուած այդ արարքների ընթացքում, եթէ որեւէ մէկին անձնական վնաս հասցուի, ապա մեղադրեալը տուժի է ենթարկւում այլ պատժամիջոցներով»։

«Պետութեան կողմից արտօնութիւն եւ իրաւունք չունեցող որեւէ մէկը ինքնուրոյնաբար քաղաքացիական պաշտօնատների եւ զինուորականութեան հետ գործարքի մէջ մտնելու եւ կամ նրանց գործերին միջամտելու դէպքում, բանտային պատժի է ենթարկւում երեք ամսից ոչ պակաս ժամկէտով։

Այս յօդուածներից բխած օրէնքի ուժի համաձայն, Ապտուլ Քերիմ պէյը, կալանքի տակ վերցուելու օրուանից

1919 թ. (Փետրուարի 13), պատիժ է կրելու մէկ տարի բանտարկութեան ժամկէտով եւ մէկ տարի էլ զրկուելու է իր պաշտօնից։

Ինչ վերաբերում է Ռեֆիկ պէյին, դատաքննութեան ժամանակ բացայայտուեց, որ ինքը ձկնաբուծարան ունենալու անհրաժեշտութիւնը չի ունեցել, սակայն թարմ ձուկ ուտելու համար, իբր վարձակալել է Ալօ եւ Օմեր էֆենտիներին պատկանող ձկնաբուծարանը։ Մինչդեռ իրականում, այդ ձկնաբուծարանի համաձայնագիրը ակամայից դարձել է իր անունով։ Այնուհետեւ դրանով էլ չբաւարարուելով, 35 լիրա վարձակալութեան արժէքի դիմաց, տիրացել է ամբողջ ձկնաբուծարանին, որի արժէքը ուռկաններով եւ այլ եկամուտներով կազմել է մօտ 1800 լիրա։ Այս ծանրացուցիչ յանցանքը նկատի առնելով՝ Ռեֆիկ պէյը նոյնպէս կալանքի վերցուելու օրուանից (1919 թ. Ապրիլի 22), ձայների մեծամասնութեամբ դատապարտուեց երկու տարի ժամկէտով բանտարկութեան։

Ճելալ եւ Հաֆըզ Մահմուտ էֆենտիներին վերաբերող ամբաստանութիւնը օրինականապէս չապացուցուեց, ուստի ձայների մեծամասնութեամբ, որոշուեց նրանց ազատ արձակել։

Ըստ օրինականութեան, դատաքննութեան են ենթարկուելու նաեւ այն անձինք, որոնք օժանդակել են վերոյիշեալ յանցաւոր գործարքներին։

Դատավճիռը ընթերցուեց բոլորի ներկայութեամբ։

1919 թ. Մայիսի 24
Նազըմ, Զեքի, Ալի Նազըմ, Մուստաֆա(18), Ռեճեպ Ֆերտի

Ռազմական արտակարգ ատեանի արձանագրող
յանձնախմբի պետ՝ Ապիտին Տաւեր։

Takvim-i Vekayi, 2 Mayis 1335 (1919) № 3618

ՌԱԶՄԱԿԱՆ ԱՌԱՋԻՆ ԱՐՏԱԿԱՐԳ ԱՏԵԱՆԻ ԴԱՏԱՎԱՐՈՒԹԵԱՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹԻՒՆԸ(19)

Նախագահ՝ Գեներալ-մայոր Էսատ փաշա.
Անդամներ՝ Գեներալ-մայոր Իհսան փաշա,
Գեներալ-մայոր Մուստաֆա Քերիմի փաշա,
Գեներալ-մայոր Իսմայիլ Հաքքը փաշա,
Գնդապետ Սուլէյման Շաքիր պէյ։

ԽԱՐԲԵՐԴԻ ԿՈՏՈՐԱԾԻ ԴԱՏԱՎԱՐՈՒԹԻՒՆԸ

Հեռակայ կարգով դատի տրուած մեղադրեալների անունները — «Միութիւն եւ Առաջադիմութիւն» կուսակցութեան կենտրոնական կոմիտէի անդամ, «Թեշքիլաթ-ը մահսուսէ»ի նախագահ՝ Դոկտ. Պեհաէտտին Շաքիր, «Միութիւն եւ Առաջադիմութիւն» կուսակցութեան Խարբերդի պատասխանատու քարտուղար՝ Ռեսնելի Նազըմ պէյ։

Դատի տրուած ներկայ գտնուող մեղադրեալների անունները — Տերսիմի նախկին պատգամաւոր՝ Հաճի Պալյուս-զատէ Մեհմետ Նուրի պէյ, Խարբերդի հանրակրթական նախկին տեսուչ՝ Ֆերիտ պէյ։

ԴԱՏԱՎՃԻՌ

Սոյն դատավարութեան ընթացքում լսեցին մեղադրող եւ պաշտպանուող երկու կողմերին, մանրակրկիտ ուսումնասիրուեցին եւ հետաքննուեցին բոլոր դատական փաստաթղթերը։ Կուսակցութեան կենտրոնական կոմիտէի անդամ՝ մեղադրեալ Դոկտ. Պեհաէտտին Շաքիր պէյը, որպէս «Յատուկ կազմակերպութեան» նախագահ, Ստամպուլից դուրս գալով, սկսել է շրջագայել Տրապիզոնի, Էրզրումի, եւ այլ վիլայէթներում։ Միեւնոյն ժամանակ բանտերից դուրս բերուած ոճրագործներից եւ այլ յան-

ցագործներից կազմուած հրոսակախմբերի գլուխն անցնելով՝ տարբեր ժամանակներում եւ տարբեր վայրերում կոտորել է տեղահանուած հայերին եւ նրանց ունեցուածքը ենթարկել կողոպուտի։ Նա իր նենգ ծրագրերը իրագործելու համար, այն վայրերը, ուր տեղի ունեցան այդ ողբերգական դէպքերը, ուղարկում էր նաեւ անմիանում էին վերոյիշեալ «Թեշքիլաթ-ը մահսուսէ»ին՝ ակամայ ատելութեամբ եւ շահոյթ ստանալու մոլի ցանկութեամբ համակուած։ Իր պարտականութիւնները կատարելու ընթացքում, յաճախ բանաւոր կարգադրութիւններ եւ երբեմն էլ ծածկագիր գաղտնի հրահանգներ է ուղարկել [այս ու այն կողմ] եւ «Թեշքեալաթ-ը մահսուսէ»-ի հրոսակախմբերին օգտագործել է իր անմիջական հրամանատարութեան ներքոյ՝ հայերին կոտորելու եւ բնաջնջելու նպատակով։

Յիշեալ Պեհաէտտին Շաքիր պէյը «Միութիւն եւ Առաջադիմութիւն» կուսակցութեան Խարբերդի պատասխանատու քարտուղար, այժմ փախուստի մէջ գտնուող մեղադրեալ Ռեսնելի Նազըմ պէյին, Խարբերդի վալի Սապիթ պէյի միջոցով Էրզրումից ուղարկած 1915 Մայիսի 4-ի թուագրութիւնը կրող ծածկագիր հեռագրով հարցնում է.

«Մեզ պարզորոշ տեղեկացրէք, այդտեղից ուղարկուող հայերին զտո՞ւմ էք, թէ՞ ոչ։ Վտանգաւոր մարդկանց, որոնց վտարումն ու աքսորումն էք յայտնել, ոչնչացնո՞ւմ էք, թէ՞ ճամբու էք դնում»։

«Միութիւն եւ Առաջադիմութիւն» կուսակցութեան կենտրոնական կոմիտէի կնիքը կրող թղթապանակի փաստաթղթերի մէջ գտնուող ծածկագիր հեռագրերից մէկում, Էրզրումի վալի Միւնիր պէյը յայտնում է.

«Քըղիի ճանապարհով Էրզրումից ուղարկուած հարուստ հայերի քարաւանները, յարձակման ենթարկուելով,

Պեհաէտտին Շաքիր պէյի կազմած հրոսակախմբերի եւ տերսիմցիների կողմից կոտորուել են, իսկ նրանց ունեցուածքը՝ կողոպտուել»։

Քաստամոնուի նախկին վալի՝ Ռեշիտ փաշան յայտնում է, որ ինքը յիշեալ Պեհաէտտին Շաքիր պէյից ծածկագիր հեռագիր է ստացել տեղահանութեան մասին։ Իսկ Վեհիպ փաշան(20) յայտնում է, որ «հայերի կոտորածն ու բնաջնջումը, ինչպէս նաեւ ունեցուածքի յափշտակումն ու կողոպուտը նախապէս վճռուել է «Միութիւն եւ Առաջադիմութիւն» կուսակցեան կենտրոնական կոմիտէ կողմից, որ երրորդ բանակի շրջակայքում, արնախում(21) հրոսակախմբերի կազմակերպողն ու ղեկավարողը Պեհաէտտին Շաքիր պէյն է»։

Անթալիայի նախկին մութասարրիֆ՝ Սապուր Սամի պէյը յայտնում է, որ Պեհաէտտին Շաքիր պէյը Էրզրումից ուղարկած ծածկագիր հեռագրով հետեւեալ հարցումն է արել.

«Էրզրումի, Վանի, Պիթլիսի, Տիարպեքիրի, Սիվասի, Տրապիզոնի շրջաններում ոչ մի հայ չի մնացել, բոլորը արտաքսուել են Մոսուլի եւ [Տէր] Զօրի կողմերը, իսկ դուք ի՞նչ էք անում Անթալիայում»(22)։

Ռազմական ատեանի արձանագրութիւններում հաւաստի փաստարկներով բերուած մի շարք վկայութիւններում եւս հաստատւում են վերոյիշեալ ողբերգական իրադարձութիւնների ընթացքում Պեհաէտտին Շաքիր պէյի եւ նրա համախոհների համատեղ կատարած յանցագործութիւնները։

Ինչ վերաբերում է փախուստի մէջ գտնուող մեղադրեալ Ռեսնելի Նազըմ պէյին, ռազմական ատեանի երեք անդամները նրան եւս մեղսակից ճանաչեցին վերոյիշեալ ողբերգութիւնների մէջ, քանի որ տեղահանութեան ընթացքում նա սերտօրէն համագործակցել է Պեհաէտտին Շաքիր պէյի հետ։ Դա ապացուցւում է Նա-

զըմ պէյին ուղղուած 1915 Մայիսի 4-ի թուագրութեամբ վերոյիշեալ հեռագրի բովանդակութեամբ, ինչպէս նաեւ Խարբերդի Վալի Սապիթ պէյի, [կուսակցութեան] կենտրոնական կոմիտէի գլխաւոր քարտուղար՝ Միտհատ Շիւքրի պէյի եւ այլ վկաների կատարած յայտարարութիւններից: Ուշագրաւ փաստարկ է նաեւ այն հանգամանքը, որ դատական հետաքննութեան նախօրէին, նա թաքնուեց եւ ցայսօր գտնուում է փախուստի մէջ:

Բացի այդ, փաստաթղթերի մէջ գտնուող միւս թղթակցութիւնների բովանդակութիւնից եւս հասկացուում է, որ նա մասնակցութիւն է ունեցել յիշեալ ողբերգութիւններին:

Օրէնքի տեսանկիւնով, յիշեալ յանցագործութեան ընթացքում, Նազըմ պէյը իսկական մեղսակիցների նման ընթացքում, Նազըմ պէյը իսկական մեղսակիցների նման որոշակի յանցանշան չի թողել, բայց Պեհաէտտին Շաքիր պէյի հետ նրա ունեցած թղթակցութիւնները եւ վկաների ցուցմունքները հաստատում են, որ նա անուղղակի մասնակցութիւն է ունեցել տուեալ յանցագործութեանը, քանի որ նա գիտակցօրէն օժանդակել է այդ ողբերգութեան մեղսակիցներին:

Այսպիսի իրավիճակում, օրէնքի պահանջներից ելնելով՝ ձայների մեծամասնութեամբ որոշում կայացուեց, որ Նազըմ պէյը ենթակայ է դատապարտման՝ յանցագործութեանը անուղղակիօրէն մասնակցութիւն ունենալու համբաստանութեամբ: Վերոյիշեալների կատարած յանցագործութեան պատժի չափը որոշուեց հետեւեալ կերպ: Քրէական օրենսգրքի 181-րդ յօդուածի թելադրանքով, 170-րդ յօդուածի հիման վրայ, Պեհաէտտին Շաքիր(23) պէյը դատապարտուեց մահուան, իսկ Ռեսնելի Նազըմ պէյը նոյն օրէնսգրքի 45-րդ յօդուածի 2-րդ մասով՝ 15 տարուայ տաժանակիր աքսորի: Բռնագրուած ունեցուածքը տնօրինուելու է ըստ օրէնքի: Նազըմ պէյը զրկւում է նաեւ քաղաքացիական իրաւունքից:

Միւս մեղադրեալներն են՝ Տերսիմի նախկին պատգամաւոր՝ Մեհմետ Նուրի պէյը եւ Խարբերդի նախկին հանրակրթական տեսուչ՝ Ֆերիտ պէյը։ Տրուած վկայութեան համաձայն՝ Մեհմետ Նուրի պէյի ագարակի շրջակայքում գտնուող Հոլովենկ գիւղի հայութիւնը նոյնպէս ենթարկուել է տեղահանութեան եւ կոտորուել։ Հայերին գիւղից տեղահանելու ընթացքում [Մեհմետ Նուրի պէյը] ժանտարմների ներկայութեամբ ասել է. «Ձեր բոլորին ուղարկում եմ Գեմիքլի գիւղը, իսկ այստեղ ցանելու եմ գարի»։ Այդ իրադարձութիւնների մեղադրանքով նրան ուղարկել էին Ռազմական ատեանի հարցաքննութեան։ Դատաքննութեան ժամանակ, Տիկ. Մարգարիտը ամբաստանելով նրան՝ ասաց, որ տեղահանութեան ընթացքում, Մեհմետ Նուրի պէյը երբ եկել է Հոլովենկ գիւղը, իրենց թախանձագին խնդրանքը մերժելով ասել է — «Դուք գնալու էք ձեր ամուսինների գնացած վայրը, այստեղ ես գարի եմ ցանելու»։ Նա յայտնել է նաեւ հետեւեալը. «Ո՛վ որ իր ունեցուածքը Կարապետի տանը թողնի, կարող է երեք ամիս յետոյ գալ եւ վերցնել»։ Այս մասին, իբր մի ազդագիր է փակցրել պատին եւ այնուհետեւ իր ձին նստելով՝ հեռացել։

Մի այլ գանգատուող՝ Գասպար Մովսիսեանը, որը տեղահանութեան ժամանակ գտնուել է Ստամպուլում, հաստատեց Տիկ. Մարգարիտի տուած վկայութիւնը եւ ասաց, որ Մեհմետ Նուրի պէյը դրամ է շորթել շատերից, որ Կարապետի տանն, իբօք մի ժանտարմի միջոցով կարմիր թերթիկներ է կնքել տուել։ Մի շարք կանանց պաղատագին խնդրանքը նա մերժել է եւ «այս գիւղը գարի եմ ցանել տալու» ասելով՝ ձի է նստել ու հեռացել։ Նրա գնալուց յետոյ, չեթէների հրոսակախմբերը սրընթաց յարձակուել են գիւղի վրայ։ Ցիշեալ Կարապետի տան պատի վրայ Մեհմետ Նուրի պէյի թողած ազդագրի մասին տեղեակ չլինելը տարակուսանքի ընթացք տուեց։ Այդ

կապակցութեամբ, Կարապետը դատաքննութեան ընթացքում յայտարարեց, որ [Գասպար Մովսիսեանը] սուտ է ասում, որ Մեհմետ Նուրի պէյը իրօք իր տան ճակատին մի ազդագիր փակցրել է, որ ինքը, թաքնուելով Մեհմետ պէյի չիֆթլիքում, ազատուել է տեղահանութիւնից եւ մինչեւ վերջ նրա տանը մնալով՝ փրկուել մահից: Նա յայտնեց նաեւ, որ ինքը չի նկատել, թէ Մեհմէտ Նուրի պէյի քենեկալ Ասըմ պէյը հայերից յափշտակուած ապրանքը տեղափոխել է Մեհմետ Նուրիի բնակարանը: Ինչ վերաբերում է Մեհմետ Նուրի պէյի՝ բանտում փող վերցնելու հարցին, այն կարող է այլ տեսանկիւնից ուշադրութեան արժանանալ:

Չնայած որ տուեալ ժամանակ կառավարութիւնը հրաման էր արձակել այն մասին, որ տեղահանուած հայերին իրենց տանը պատսպարող մարդկանց մահուան պատիժ է սպառնում, այնուհանդերձ, Մեհմետ Նուրի պէյը համարձակուել էր Հոլովենկ գիւղի բնակչութեան մի մասին թաքցնել իր չիֆթլիքում եւ փրկել մահից: Այս հարցում բոլորովին չէզոք կողմ հանդիսացող ամերիկացի միսսիոներ Ռեքսը նոյնպէս յայտնեց, որ տեղահանութեան ընթացքում, Մեհմետ Նուրի պէյը բաւականաչափ թուով հայերի կարողացել է ազատել՝ պատսպարելով իր ագարակում: Դա հաստատուեց նաեւ միւս վկաների ցուցմունքով:

Կառավարութեան կողմից կազմակերպուած համընդհանուր տեղահանութեան եւ կոտորածին մասնակցելու խնդրում, ստոյգ յանցանշաններ չլինելու պատճառով, հանրակրթական տեսուչ՝ Ֆերիտ պէյը ազատ է արձակուում: Մեհմետ Նուրի պէյը նոյնպէս անմեղ է ճանաչուում, նկատի ունենալով, որ նա առնչութիւն չի ունեցել Հոլովենկ գիւղի հայ բնակչութեան տեղահանութեան եւ կոտորածի խնդրում: Նրա քենակալ Ասըմ պէյը, հայերի ունեցուածքը տեղափոխելու եւ Մեհմետ Նուրի պէյի տա-

նը պահելու ամբաստանութիւնից անմեղ է ճանաչուում։

Այսպիսով, Ռազմական ատեանի միաձայն որոշումը հրապարակուեց Մեհմետ Նուրի պէյի եւ Ֆերիտ պէյի ներկայութեամբ, իսկ Պեհաէտտին Շաքիր եւ Ռեսնելի Նազըմ պէյերի նկատմամբ՝ հեռակայ կարգով։

13 Քանունի Սանի 1336 թ. Մուստաֆա Քերիմի, Իհսան (1920 թ. Յունուարի 13)

«Մենք միանալով այս դատավճռին, այն կարծիքին ենք, որ մեղադրեալ Ռեսնելի Նազըմ պէյը նոյն աստիճանի յանցագործ է, ինչ Պեհաէտտին Շաքիր պէյը»։

Սուլէյման Շաքիր, Իսմայիլ Հաքքը, Էսատ։

Takvim-i Vekayi, 13 Ocak 1336 (1920) *N°* 3771

ԾԱՆՕԹԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱՌԱՋԱԲԱՆ

1. *Թուրքական մոլի ազգայնական կուսակցութիւն։ Կազմաւորուել է 1889-ին Կ. Պոլսում։ 1908 թուականի յեղափոխութիւնից յետոյ անցաւ իշխանութեան գլուխ։ Առաջին համաշխարհային պատերազմից յետոյ կուսակցութիւնը ենթարկուեց ինքնալուծարքի։*

2. Mevlan Zade Rifat, Türkiye Inkilabinin iç yüzü, I-ci fasil, Halep, 1929, s. 119 (*արաբատառ*)։

3. *Եուրի Բարսեղով, «Հայերի Ցեղասպանութիւնը յանցագործութիւն է մարդկութեան դէմ», («Լրաբեր» ՀՀ. ԳԱ, Երեւան, 1987, թիւ 4, էջ 34)։*

4. Osman Nuri, Abdul Hamid Sani ve devri saltanati, Istanbul, 1327, s. 838 (*արաբատառ*)։

5. *Նոյն տեղում, էջ 582։*

6. *«Փորձ» ազգային եւ գրական միամսեայ հանդէս, թիւ 7-8, Տփղիս, 1879, էջ 204-205։*

7. Osman Nuri, *նշւ. աշխ., էջ 828, 858։*

8. Osman Nuri, *նշւ. աշխ., էջ 866։ Տե՛ս նաեւ* Sadik Shahid bey, Islam, Turkey and Armenia, and how they happened. Turkish Mysteries Unveiled. St. Louis, 1898, p. 207.

9. Celal Nuri, Osmanli Imparatorlugun tarih-i tedennisi, Istanbul, 1331, s. 90 (*արաբատառ*)։

10. *Հայերի Ցեղասպանութիւնը Օսմանեան կայսրութիւնում, խմբ. Մկրտիչ Ներսիսեանի, Երեւան, 1966, էջ 202, (ռուսերէն)։*

11. *Ե. Ղ. Սարգսեան, Թուրքիան եւ նրա նուաճողական քաղաքականութիւնը Անդրկովկասում, 1914-1918 թթ. Երեւան, 1964, էջ 67-72։*

12. *Ա. Ալպոյաճեան, «Անհետացող դէմքեր», Գրիգոր Զոհրապ, Կ.*

Պոլիս, 1919, էջ 210։

13. Aram Andonian, The Memoirs of Naim bey, Watertown, AHRA, 1960, pp. 33-34։

14. Mevlan Zade Rifat, նշ. աշխ. էջ 108։

15. Տե՛ս Ս.Մ. Յակոբեան, «Հայերի Յեղասպանութիւնը Օսմանեան կայսրութիւնում եւ իմպերիալիստական Գերմանիայի պատասխանատուութեան հարցը («Պատմա-բանասիրական հանդէս», 1963», թիւ 1, էջ 62)։

16. Նոյն տեղում, էջ 64։

17. Memoirs of Halide Edip. New York – London, p. 389.

18. Mevlan Zade Rifat, նշ. աշխ., էջ 145։

19. Falih Rifki Atay, Zeytindagi, Istanbul, 1957, s. 79։

20. Ա. Հ. Փափազեան, վաւերագրական նիւթեր արեւմտահայերի մասին, ՀՀ ԳԱ ինֆորմացիոն Պիւլեդէն, Երեւան, 1983, թիւ 2, (56), էջ 16–18։

21. Զաւէն Արքեպիսկոպոս, «Պատրիարքական յուշերս», վաւերագրեր, Գահիրէ, 1917, էջ 318։

22. Morgenthau Henry, Ambassador Morgenthau's Story. New York, 1918. Մէջբերուում է ըստ՝ Ամերիկեան դեսպան՝ Մորկընթաուի յիշատակները եւ հայկական եղեռնին գաղտնիքները, գրքից, Կ. Պոլիս, 1919, էջ 258։

23. Լեւոն Վարդան, «Հայկական Տասնհինգը եւ Հայերու լքեալ գոյքերը», Պէյրութ, 1979. էջ 94–100։

24. Հ. Գ. Ինճիկեան, «Օսմանեան կայսրութեան անկումը», Երեւան, 1984, էջ 301։

25. Ջ. Ս. Կիրակոսեան, «Երիտթուրքերը պատմութեան դատաստանի առաջ», գիրք երկրորդ, 1983, էջ 174։

26. Լլոյտ Ջորջ՝ «Ճշմարտութիւնը խաղաղութեան պայմանագրերում», հատ. 2, Մոսկուա, 1957, էջ 200 «ռուսերէն)։

27. Որոշումը կայացրել է Ահմետ Թեւֆիկ փաշայի կազմած նոր դահլիճը (1918 թ. Մարտի 4–ը)։

28. Այդ նիւթերի կարեւոր մասը հաւաքել եւ հրատարակել է Գրիկէրը։ Տե՛ս «Եոզղաթի Հայասպանութեան վաւերագրական պատմութիւնը, Նիւ Եորք, 1980, էջ 11–67։ Մամուլի նիւթերը մանրամասն վերլուծուած են Ջոն Կիրակոսեանի գրքում։ Տե՛ս «Երիտթուրքերը պատմութեան դատաստանի առաջ», հ. 2։

29. Տե՛ս Գրիկէր, նշ. աշխ., էջ 309–310։

30. Տուեալ ժամանակ դահլիճը գլխաւորում էր Տամատ Ֆերիտ Փաշան (1919 թ. Մարտի 4–ից Հոկտեմբերի 1–ը։

31. Մեր ձեռքի տակ գտնուող նիւթերում 6-րդ նիստից յետոյ բացակայում են 114-116 էջերը։

32. «Թաքվիմ-ի Վեքայի, 13 Յունուար, 1920, թիւ 3771, էջ 246։

33. Թաքվիմ-ի վեքայի, 27 Ապրիլ, 1919 թ. թիւ 3540, էջ 5։

34. Talât pasanin hatirlari, Istanbul, 1946, s 72-73:

35. Halide Edip, նշ. աշխ., էջ 387։

36. «Թաքվիմ-ի Վեքայի», 12 Մայիս 1919 թ. թիւ 3554, էջ 35։

37. «Թաքվիմ-ի վեքայի», 12 Մայիս 1919 թ. թիւ 3554, էջ 33։

38. «Թաքվիմ-ի վեքայի», 5 Յուլիս 1919 թ. թիւ 3604, էջ 219։

39. Գաւառներին վերաբերող դատաքննութիւնների արձանագրութիւնները կանոնաւոր լոյս չեն տեսել թուրքական մամուլում։ «Թաքվիմ-ի վեքայի»-ում ամբողջապէս լոյս են տեսել միայն դատավճիռները։

40. «Թաքվիմ-ի վեքայի», 22 Մայիս 1919 թ. թիւ 3616, էջ 50։

41. Տե՛ս "Documents relatifs aux atrocités commises par les Arméniens sur la population musulmane", publication du Congrès National ", Constantinople, 1919.

42. «Թաքվիմ-ի վեքայի», 25 Յունիս, 1919, թիւ 3594, էջ 189։

43. "Takvim-i Vekayi", (Լրաբեր), — (բառացի «Իրադարձութիւնների օրացոյց»), 1831 թ. սկսած Օսմանեան կայսրութիւնում առաջին թուրքերէն լեզուով հրատարակուող լրագիրը։

44. Jean-Marie Carzou, "Un Génocide Exemplaire", p. 233-246.

45. «Հայերի Ցեղասպանութիւնը Օսմանեան կայսրութիւնում», երկրորդ լրացուած հրատ. Երեւան, 1982, էջ 557-575, (ռուսերէն)։

46. Գրիկէր, նշ. աշխ., էջ 297-304։

47. Տե՛ս Գրիկէր, նշ. աշխ., էջ 33։

ՄԱՍՆ ԱՌԱՋԻՆ

1. «Թաքվիմ-ի վեքայի», 27 Ապրիլ 1919 թ., թիւ 3540, թերթի ծանօթագրութեան մէջ նշուած է, որ հարցաքննութիւնը արձանագրել է նոյնութեամբ եւ ոճական որոշ ձեւակերպումներից բացի ոչ մի ուղղում չի կատարուել։

2. Այստեղ եւ յետագայում, քառակուսի փակագծերի մէջ տրուած են մեր ծանօթագրութիւնները։

3. Թաղամաս Կ. Պոլսում։

4. Գտնւում է Փոքր Ասիայի հարաւ-արեւմտեան մասում։

5. Թաղամաս Կ. Պոլսում։

6. Թաղամաս Կ. Պոլսում

7. Քաղաք Տարտանելի նեղուցի արեւելեան ափին։

8. Թաղամաս Կ. Պոլսում։

9. Թաղամաս Կ. Պոլսում։

10. Թաղամաս Կ. Պոլսում։

11. Նկատի ունի «Տրապիզոնի տեղահանութեան եւ կոտորածին» վերաբերող դատաքննութիւնը։

12. Թաղամաս Կ. Պոլսում։

13. Գիւղաքաղաք Միջերկրական Ծովի ափին, Մերսին քաղաքի մօտակայքում։

14. Թաղամաս Կ. Պոլսում։

15. Թաղամաս Կ. Պոլսում։

16. Թաղամաս Կ. Պոլսում։

17. Թաղամաս Կ. Պոլսում։

18. Նկատի ունի այն թուրք պաշտօնեաներին, որոնք հրաժարւում էին իրագործել կուսակցութեան ղեկավարների նենգ ծրագրերը։

19. Այստեղ եւ յետագայում խօսքը Ռազմական Արտակարգ ատեանի տրամադրութեան տակ գտնուող մեղադրական փաստաթղթերի մասին է։ Այդ փաստաթղթերը ամփոփուած են եղել 293 թղթապանակներում։ Տե՛ս Գրիկէր, նշւ. աշխ., էջ 33։

20. Խօսքը վերաբերում է հայերի ինքնապաշտպանութեան կըռիւներին։

21. "Tasvir-i efkar" (Գաղափարների տեսութիւն)։ Լոյս է տեսել Կ. Պոլսում 1861 թուականից։

22. Նկատի ունի Տերսիմի քրտերին։

23. Փաստերը ցոյց են տալիս, որ դեռեւս 1915 թ. Յուլիսի 12-ին, Վանկենհայմը Բարձրագոյն Դռանը յղել է մի յուշագիր, որտեղ կտրականապէս պահանջել է միջոցներ ձեռք առնել Տիարպեքիրի վալի՝ Դոկտ. Ռեշիտ պէյի դէմ, որպէսզի նրա դաժան քաղաքականութիւնը չյանգեցնի այդ շրջանի քրիստոնեաների գլխովին ոչնչացմանը։ (Ռ. Գ. Սահակեան, Նոր փաստաթղթեր 1915 թ. Եղեռնում կայսերական Գերմանիայի մասին. «Բանբեր Հայաստանի արխիւների», Երեւան, 1970, թիւ 2, էջ 139)։

24. Ճելալ պէյը դէմ է եղել Գոնիայի հայերի տեղահանութեանը։

25. Տուեալ ժամանակ մայորի աստիճանով կատարում էր «Ցատուկ կազմակերպութեան» հրահանգչի պարտականութիւնը։

26. Այսինքն՝ «Միութիւն եւ Առաջադիմութիւն» կուսակցութեան եւ «Ցատուկ կազմակերպութեան» միջեւ։

27. Ցօդուածների բովանդակութիւնը տրուած է դատավճիռներում։

28. Մեղադրական եզրակացութեան ռուսերէն թարգմանութիւնը տե՛ս «Հայերի ցեղասպանութիւնը Օսմանեան կայսրութիւնում», էջ 557-568։

29. Իրականում մահմետականութիւնը մշտապէս քարոզել է տեւական սրբազան պատերազմ (ճիհատ) մղել անհաւատների, այսինքն՝ ոչ-մահմետական դաւանանքին յարողների դէմ, նուաճել նրանց երկիրը եւ ստրկացնել նրա ժողովրդին։

30. Դատախազը բացայայտ արդարանալու փորձեր է կատարել։ Դրանք եղել են ոչ թէ սովորական բախումներ, այլ կառավարութեան կողմից կազմակերպուած ջարդեր։ Յատկապէս 19-րդ դարում զանգուածային կոտորածի ենթարկուեցին սերպերը (1812 թ.), յոյները (1826 թ.), հայերը (1894-1896 թթ.) եւ Օսմանեան կայսրութեան տակ գտնուող այլ հպատակներ։

31. Հաւանաբար նկատի ունի ինքնապաշտպանական կռիւներին մասնակցած հայերին։

32. Սուլթան Մեհմետ Վահիդէտտին VI (1918-1922)։

33. Նկատի ունի Ռազմական Արտակարգ ատեանը։

34. Իրենց ելոյթներում նոյն միտքն են արտայայտել նաեւ միւս դատապաշտպաններ՝ Սատէտտին Ֆերիտ պէյը, Մահմուտ Մահիր էֆենտին, Ճեմալ Մոնլու պէյը։

35. «Թաքվիմ-ի վեքայի», 4 Մայիս 1919 թ., թիւ 3543։ Այս դատավարութեան սկզբում, պաշտօնավարութեան հարցի վերաբերեալ դատարանը հաւաստի փաստարկներով որոշում է կայացնում մեղադրեալների դատաքննութիւնը լսել Ռազմական արտակարգ ատեանում։ Այնուհետեւ սկսւում է մեղադրեալների հարցաքննութիւնը։ Առաջին հերթին հարցաքննութեան են ենթարկւում Միտհատ Շիւքրի պէյը, Զիա Գէօքալփը, Քիւչիւկ Թալաաթը, իսկ այնուհետեւ դահլիճ են բերում Ճեւատ պէյին։ Վերոյիշեալների հարցաքննութեան ընթացքում, Նազըմ փաշան ուշադրութիւնը կենտրոնացնում է «Միութիւն եւ Առաջիդումութիւն» կուսակցութեան ներքին կարգապահական հարցերին, համագումարների գումարմանը, ընդունուած որոշումների գործադրմանը, շրջանային մասնաճիւղերի գործունէութեան եւ այլն։

36. Այսինքն՝ կուսակցութեան կողմից հաւաքուած փոխառութիւնների հաշուին։

37. Նախագահի հարցը ընթեռնելի չէ։

38. Խօսքը վերաբերւում է Պեհաէտտին Շաքիրին, Դոկտ. Նազըմին։ Տե՛ս «Տրապիզոնի տեղահանութեան եւ կոտորածի դատավարութիւնը»։

39. Ինվեր փաշայի հօրեղբայրը։ 1916-18 թթ. 6-րդ բանակի հրամանատարն էր, իսկ 1918 թ.՝ «Արեւելեան գօրքերի հրամանատար»։

40. Նկատի ունի «Ցատուկ կազմակերպութիւն»ը։

41. Մի շարք վալիներ, վախենալով յետագայ պատասխանատուութիւնից, պահանջել են օրինականացնել կալանաւորներին բանտից ազատ արձակելու հարցը։

42. Կասկած չկայ, որ 2-րդ եւ 3-րդ կէտերում խօսքը վերաբերւում է արեւմտահայութեան կոտորածն իրականացնող «Ցատուկ կազմակերպութեան»ը, որն իր ջարդարարական գործունէութիւնը ծաւալեց 1915-1916 թթ.։ Այս հարցը մանրակրկիտ հետաքննութեան ենթարկուեց դատավարութեան 5-րդ եւ 6-րդ նիստերում։

43. Մէկ փողանի հրացան։

44. Նկատի ունի Լիպիական Թրիփոլին (Trablusgarb):

45. Այստեղ, պատճէնաւորուած օրինակում կան անընթեռնելի բառեր։

46. «Թաքվիմ-ի վեքայի», 6 Մայիս 1919 թ., թիւ 3547։

47. Այստեղ առեւտրին եւ զանազան ընկերութիւններին վերաբերող հարցաքննութեան նիւթերը զանց են առնուած։

48. Հարկ է նշել, որ 1916 թուականի Սեպտեմբերի 28-ին, «Միութիւն եւ առաջադիմութիւն» կուսակցութեան համագումարում քննարկուել էին հայերի հանդէպ գործադրուած բռնութիւնները եւ որոշուել էր ստուգող յանձնաժողովներ ուղարկել։ Իրականում, այդ նախաձեռնութիւնը ձեւական բնոյթ էր կրում, քանի որ գործնականում ոչ մի միջոց չձեռնարկուեց կոտորածներին վերջ տալու հարցում։ (Տե՛ս Ջ. Կիրակոսեան, «Երիտթուրքերը պատմութեան դատաստանի առաջ», հ. 2, էջ 159)։ Ընդհակառակը, համաշխարհային հասարակութիւնը երբ իրազեկ դարձաւ հայ ժողովրդի հանդէպ գործադրուած վայրագութիւններին, թուրքական կառավարութիւնը, որպէսզի արդարացնի իր չարանենգ գործունէութիւնը, հրապարակեց «Հայ կոմիտէների յեղափոխական շարժումներն ու ծրագրերը» գիրքը, որն զրպարտանք ու կեղծիք էր արեւմտահայութեան հասցէին։ Տե՛ս «Ermeni komitelerinin amal ve harekat-i ihtilalyasi, Istanbul», 1331 (արաբատառ)։ Ֆրանսերէն թարգմանութիւն, "Aspirations et agissements révolutionnaires des comités Arméniens", Constantinople, 1917.

49. «Թաքվիմ-ի վեքայի», 6 Մայիս 1919 թ., թիւ 3549։

50. Չորրորդ դատավարութեան ընթացքում, հարցաքննութեան են ենթարկուել նաեւ՝ Միտհատ Շիւքրի, Ռիզա, Ամիֆ, Քիւչիւկ Թալաաթ եւ Ճեւատ պէյերը։ Նախագահը հիմնականում կանգ է առել

առեւտրական կազմակերպութիւնների հետ կենտրոնական կոմիտէի ունեցած կապի, կուսակցութեան դրամագլխի, կատարուած ծախսումների եւ այլ հարցերի վրայ։

51. Այս հարցերը նոյնութեամբ եւս տրուել են նաեւ միւս մեղադրեալներին։ Նրանք եւս ստելով ձեւացնում են, թէ իբր անտեղեակ են։

52. «Թաքվիմ-ի վեքայի», 12 Մայիս 1919 թ., թիւ 3554։

53. Հաւանական է, որ գալաթացի Խալիլը պատժուել է տեղահանութեան եւ կոտորածի խնդրում կուսակցութեան կենտրոնական կոմիտէի հրահանգը չկատարելու համար։ Դատաքննութեան ընթացքում բերուած փաստերը ցոյց են տալիս, որ այդ գումարը յատկացուել է այն ընտանիքներին, որոնց ամուսինները հաւաքագրուած են եղել «Յատուկ կազմակերպութեան» մէջ։

54. Նկատի ունի Ներքին Գործերի նախարարութիւնը։

55. Հաւանաբար նկատի ունի 15-րդ հետեւակային զօրամասի շտաբի հրամանատար՝ գնդապետ Քերքուք Իսմայիլ Հաքքը պէյին։

56. Նշուած շրջանը այն ժամանակ գտնուում էր Ռուսաստանի տիրապետութեան տակ։

57. Միտհատ Շիւքրի պէյի խօսքերը չի կարելի անկեղծ համարել, քանի որ հայերի տեղահանութիւնն ու կոտորածը որոշուեց անմիջապէս պատերազմի սկզբում։

58. Իրականում, Թուրքիան առաջինը ռազմական գործողութիւններ սկսեց Ռուսաստանի դէմ։ Էնվեր փաշայի հրամանով, Սեւ Ծովում գնդակոծուեցին Սեւաստապոլ, Թեոդոսիա եւ Նովորոսիսկ քաղաքները։

59. «Յատուկ կազմակերպութեան» հրոսակախմբերից իւրաքանչիւրը բաղկացած է եղել 50 հոգուց։

60. Շարժիչով նաւ։

61. Ահմետ Ռիզա պէյ (1859-1930) — Երիտթուրքական շարժման յայտնի գործիչներից մէկը։ 1889 թուականից մինչեւ Ապտուլ Համիտի տապալումը, ապրել եւ գործել է Փարիզում։ 1895 թ. սկսել է թուրքերէն եւ ֆրանսերէն լեզուներով հրատարակել «Մեշվերեթ» («Խորհուրդ») եւ « Շուրա-ի ումմետ» («Ազգային ժողով») թերթերը։

62. Այստեղ Միտհատ Շիւքրի պէյը աշխատել է խուսանաւելու։ Փաստերը վկայում են, որ այդ գումարի մի մասը յատկացուել է «Յատուկ կազմակերպութեան» միջոցառումներին եւ հաւաքագրուած չեթէների ընտանիքներին։

63. Զիա Գէօքալպը բացայայտ ասել է։ «Եէնի մէջմուա»ն հիմնուած է եղել իր կողմից 1909 թ. Կ. Պոլսում, Մալթայի աքսորավայրից

վերադառնալուց յետոյ (1922 թ), նա Տիարպէքիրում սկսել է հրատարակել «Քիւչիւկ մէջմուա» («Փոքր հանդէս») հանդէսը։ Տե՛ս I. A. Gôvsa, Türk meshurlari ansiklopedisi. Ankara, 1946, s. 152։

64. Մոլի ազգայնական գաղափարախօսութիւն, որի նպատակն էր միաձուլել թուրքական բոլոր ժողովուրդներին Թուրքիայի գլխաւորութեամբ մէկ պետութեան մէջ։ Փանթուրքիզմը Թուրքիայի քրիստոնեայ ազգաբնակչութեան բռնի թուրքացման խնդրում երիտթուրքերի կուսակցութեան գլխաւոր զէնքերից մէկն էր։ Փանթուրքիզմի գաղափարախօսութիւնը աշխուժացաւ յատկապէս առաջին համաշխարհային պատերազմի տարիներին Ռուսաստանից հողային տարածքներ նուաճելու ձգտումով։ Այնպէս որ, արդարանալու միտումով բերուած Զիա Գէօքալպի մեկնաբանութիւնները կեղծ են։ Մանրամասն տե՛ս Ե. Ղ. Սարգսեան, Փանիսլամիզմի եւ փանթուրքիզմի դոկտրինաները երիտթուրքերի ներքին քաղաքականութեան մէջ (Արեւելագիտութեան հարցեր, պրակ. 1–2, Երեւան, 1983, էջ 5–19)։

65. «Օսմանիզմ»ի յետադիմական տեսութիւնը ծնունդ է առել ԺԹ դարի վերջին՝ Թուրքիայի այլազգի բոլոր ժողովուրդների բռնի թուրքացնելու նպատակով։ 1903 թ. յեղափոխութիւնից յետոյ, «Օսմանինզմ»ը դարձաւ երիտթուրքերի պաշտօնական գաղափարախօսութիւնը. այն է՝ միաձուլել Թուրքիայի ոչ-մահմեդական ժողովուրդներին մէկ «Օսմանեան» ազգութեան մէջ։ Իրականում այդ ժխտում էր ոչ թուրք ժողովուրդների ազգային ինքնորոշման իրաւունքը։ (Մանրամասն տե՛ս Ռ. Ա. Սաֆրաստեան, «Օսմանիզմի դոկտրինան Օսմանեան կայսրութեան քաղաքական կեանքում», Երեւան, 1985 (ռուսերէն)։

66. Բառը ջնջուած է։ Հաւանաբար նկատի ունի Զեչենիան։

67. Մէկը՝ հայութեան կոտորելու, միւսը՝ Զեչենիայում ժողովրդին գրգռելու։

68. Նախագահը հարցեր է տալիս նաեւ Իսնաֆի, առեւտրական ընկերութիւնների հետ կուսակցութեան ունեցած յարաբերութեան, կուսակցութեան փաստաթղթերի անհետացման վերաբերեալ։

69. Կրկին կարդացւում են վերոյիշեալ հեռագրերը։ Հարցաքննութեան ընթացքում նախագահը կանգ է առնում կենտրոնական կոմիտէի եւ «Ցատուկ կազմակերպութեան» միջեւ գոյութիւն ունեցող կապի վրայ։ Ռիզա պէյը եւս միւսների նման խուսափում է ճշգրիտ պատասխաններ տալուց։ Տուեալ հացաքննութիւնից բերել ենք առաւել ուշադրութեան արժանի հատուածը։

70. «Թաքվիմ-ի վեքայի», 14 Մայիս 1919 թ., թիւ 3557։

71. Միտհատ Շիւքրի պէյը եւ միւսները բացայայտօրէն ստում

են։ Տեղահանութեան եւ կոտորածի հրամանները չկատարելու համար պաշտօնից հեռացուել են նաեւ Եօզղաթի նախկին մութասարրիֆ՝ Ճեմալ պէյը, Գոնիայի եւ այնուհետեւ Հալէպի վալի՝ Ճելալ պէյը, Քէօթահիայի մութասարրիֆ՝ Ֆայիք Ալի պէյը, Բալուի մութասարրիֆի տեղակալ՝ Ալի Իլմի պէյը եւ ուրիշներ։

72. Հիւսէյն Հիլմի փաշա (1855–1921) — Օսմանեան կայսրութեան վերջին մեծ վեզիրներից մէկը։ Առաջին համաշխարհային պատերազմի ընթացքում, եղել է Թուրքիայի դեսպանը Վիեննայում։

73. 1918 թուականի վերջերին, անգլիական, իսկ այնուհետեւ ֆրանսիական զօրքերը գրաւեցին Կիլիկիան։

74. Նախկին Հասարակական անվտանգութեան նախարար, «Ցատուկ կազմակերպութեան» անդամ, որը հեռակայ կարգով դատի էր տրուած Ռազմական Արտակարգ ատեանի կողմից։

75. Նկատի ունի գերմանական «Կէօպէն» եւ Պրեսլաու» հածանաւերը, որոնք իբրեւ թէ վաճառուելով Թուրքիային, վերանուանուեցին «Եաւուզ Սելիմ» եւ «Միդիլլի»։ 1914 թուականի Հոկտեմբերի 29-ին, այս հածանաւերը իրենց գերմանական անձնակազմով մուտք գործեցին Սեւ Ծով։ Տե՛ս նաեւ ծանօթ. թիւ 58։

76. Նկատի ունի «Միութիւն եւ Առաջադիմութիւն կուսակցութեան ակումբները։

77. Միտհատ Շիւքրի պէյը խուսափում է ստոյգ պատասխանից։ Հաւանական է, որ խօսքը վերաբերում է Էնվերին։

78. Նկատի ունի «Միութիւն եւ Առաջադիմութիւն» կուսակցութեան կենտրոնական կոմիտէն։

79. Այս եւ յաջորդ փաստաթղթերից պարզ երեւում է, թէ ինչպէս Առաջին համաշխարհային պատերազմի նախօրէին, երիտթուրքերը փանթուրքիստական մեծապետական իրենց ծրագրերը իրագործելու համար, Ռուսաստանի մահմետականներով բնակեցուած շրջաններն էին ուղարկում մեծ թւով գործակալներ ու լրտեսներ։ Այդ նպատակներով ստեղծուած «Ցատուկ կազմակերպութեան» գործակալների քայքայիչ գործունէութեան նպատակներից մէկը անշուշտ Անդրկովկասն էր։ Նրանց հիմնական պարտականութիւնն էր թուրքական գլխաւոր շտապի համար տեղեկութիւններ հաւաքել, իսկ Ռուսաստանի դէմ հնարաւոր պատերազմի դէպքում, մահմետական ազգաբնակչութեանը նախապատրաստել ապստամբութեան։ Մանրամասն տե՛ս Ե. Ղ. Սարգսեան, «Թուրքիան եւ նրա նուաճողական քաղաքականութիւնը Անդրկովկասում», էջ 101–127։

80. Հայերին տեղահանելու եւ կոտորելու համար, Ներքին Գործերի նախարարութիւնը հաւաքագրել է բանտերում գտնուող մար-

դասպաններին եւ այլ քրէական յանցագործներին։

81. Հաւանաբար նկատի ունի Պրուսայի վիլայէթի վալիին։

82. Նկատի ունի Ներքին Գործերի նախարարութիւնը։

83. Հաւանաբար այստեղ վրիպակ է թոյլ տրուած, քանի որ հարցաքննութիւնը ընդհատւում է։ Բոլոր դէպքերում, Միտհատ Շիւքրի պէյը ի զուր է փորձել արդարանալ որեւէ մէկի նկատմամբ յղում չլինելու պատրուակով։ Իրականում, «Յատուկ կազմակերպութեան» յանձնախումբը բաղկացած էր կենտրոնական կոմիտէի անդամներից։

84. Նկատի ունի Անգարայի պատգամաւոր՝ Ամիֆ պէյին։

85. Հարցաքննութեան ընթացքում, այդ հարցերը տրւում են նաեւ Ռիզա, Ֆիւչիւք Թալաաթ եւ Ճեւատ պէյերին, որոնք տալիս են համապատասխան պատասխաններ՝ իրենց անտեղեակութեան մասին։

86. «Թաքվիմ-ի վեքայի», 3 Յունիս 1919 թ., թիւ 3571։

87. Եօթանասունեօթ մեղադրեալների Մալթա կղզի աքսորելու կապակցութեամբ առաջին փուլի դատաքննութիւնները ընդհատւում են։ 1919 թուականի Յունիսի 3-ից սկսւում է միւս մեղադրեալների նկատմամբ երկրորդ փուլի դատաքննութիւնը։

88. Յաջորդ դատական նիստերի խորագրերում նշւում է նաեւ հեռակայ կարգով դատի տրուած միւս մեղադրեալների անունները։

89. Թաղամաս Կ. Պոլսում։

90. Թաղամաս Կ. Պոլսում։

91. Մեղադրեալների մի մասին Կ. Պոլսի կալանատնից Մալթա կղզի տեղափոխելու փաստը ցոյց է տալիս, որ դաշնակիցները տատանողական դիրք են ունեցել յանցագործներին դատարանով պատժելու հարցում։ Ֆրեզնոյում հրատարակուող «Մշակ» թերթը շատ տեղին գնահատական է տուել անգլիացիների այդ երկերեսանի արարքին. «Մալթայի մէջ այդ աքսորականները կերան, խմեցին, յղփացան եւ մէկ-մէկ գործիքներ դարձան Անգլիայի ձեռքին՝ անոր քաղաքական եւ տնտեսական շահերը ապահովելու համար Թուրքիոյ մէջ։ Մալթան արդարութեան օջախը չհանդիսացաւ։ Մալթան ամօթի եւ նախատինքի համազօր թատերաբեմը եղաւ միայն»։ (Մէջբերումն արուած է Ջ. Կիրակոսեանի գրքից։ Տե՛ս «Երիտթուրքերը պատմութեան դատաստանի առաջ», հ. 2, էջ 253)։

92. Սայիտ Հալիմ փաշան Մալթայի աքսորավայրից ազատ արձակուելուց յետոյ, 1921 թուականին, Հռոմում սպաննուեց ժողովրդական վրիժառու՝ Արշաւիր Շիրակեանի կողմից։

93. 1917 թուականի Փետրուարի 5-ին, երբ Թալաաթը նշանակուեց մեծ վեզիրի պաշտօնին, Ջանփոլատը յաջորդեց նրան։

94. Մեղադրական եզրակացութեան սկզբում, խօսւում է կուսակցութեան օրինազանցութիւնների եւ չարաշահումների մասին։

95. Տե՛ս հեռագիրը, էջ 73։

96. Նկատի ունի 1915 թուականի Մայիսի 14 (27)-ին հրապարակուած տեղահանութեան վերաբերող հետեւեալ օրէնքը.

Յօդուած 1 — Պատերազմի ընթացքում կառավարական հրամանատարներին, երկրի պաշտպանութիւնն ու խաղաղութիւնը ապահովելու միջոցառումներին բնակչութեան կողմից որեւէ ձեւով դիմադրութիւն եւ կամ զէնքի միջոցով ըմբոստութիւն ցուցաբերելու դէպքում, բանակի զօրամիաւորների, տիվիզիաների հրամանատարները, նրանց տեղակալները, ինչպէս նաեւ ինքնուրոյն վայրերի ղեկավարները, իրաւունք ունեն եւ պարտաւոր են անմիջապէս զինուորական ուժերի միջոցով խստագոյն կերպով եւ կատարելապէս ոչնչացնելու այդ դիմադրութիւնը։

Յօդուած 2 — Բանակի, ինքնուրոյն զօրամիաւորումների եւ դիվիզիաների հրամանատարները կարող են զինուորական [գործողութիւնների] անհրաժեշտութիւնից ելնելով, լրտեսութիւն եւ դաւադրութիւն ցուցաբերող գիւղերի եւ գասապանների բնակչութիւնն անհատապէս եւ կամ հաւաքականապէս տեղահանելու եւ բնակեցնելու այլ վայրերում։

Յօդուած 3 — Այս օրէնքն ուժի մէջ է հրապարակման օրից։ Տե՛ս Mevlan Zade Rifat, Türkiye inkilabinin iç yüzü, birinci fasil, Halep), 1929, s. 118-119 (արաբատառ)։

97. Նկատի ունի «Թեշքիլաթ-ը մահսուսէ»-ն։

98. Նկատի ունի 1919 թուականի Ապրիլի 12-ի մեղադրական եզրակացութիւնը։

99. «Թանին» (Ահազանգ) — 1908 թուականից սկսած երիտթուրքերի կուսակցութեան կենտրոնական կոմիտէի օրգանն է եղել, լոյս է տեսել Կ. Պոլսում։

100. Հաշտութեան պայմանագիրը կնքուեց Պրեստ-Լիտովսկում 1918 թուականի Մարտի 3-ին, Սովետական Ռուսաստանի եւ Քառեակ միութեան երկրների (Գերմանիա, Աւստրո-Հունգարիա, Պուլկարիա եւ Թուրքիա) միջեւ։ Ըստ պայմանագրի, Ռուսաստանը, այլ հողային մեծ տարածքների հետ, կորցնում է նաեւ Կարսի, Արտահանի եւ Պաթումի շրջանները։ Սովետական կառավարութիւնը, ամրապնդելով իր ուժերը, եւ ելնելով Անդրկովկասում Թուրքիայի նուաճողական քաղաքականութիւնից, 1918 թուականի Սեպտեմբերի 26-ին չեղեալ յայտարարեց պայմանագիրն ամբողջութեամբ։

101. Այս արտայայտութիւնը չի համապատասխանում իրակա-

նութեանը, քանի որ թուրքական իրաւական սիստեմը իր էութեամբ ծայրաստիճան անարդար էր քրիստոնեայ հպատակների հանդէպ։ Ոչ միայն հայ ժողովուրդը, այլեւ Օսմանեան կայսրութեան միւս ոչ մահմետական ժողովուրդները տեւապէս պայքարել են թուրքական բռնակալութիւնից ազատագրուելու համար։

102. «Թաքվիմ-ի վեքայի», 4 Յունիս 1919 թ., թիւ 3573։

103. — Նկատի ունի Ներքին Գործերի նախարար Թալաաթին։

104. Հաւանաբար նկատի ունի 1915 թուականի Յունիսի 15-ին Կ. Պոլսում Պայազիտի հրապարակում երիտթուրքերի կողմից կախաղան բարձրացուած հնչակեան կուսակցութեան 20 ղեկավարներին։

105. Յաջորդ նիստերի ընթացքում, նախագահը հարցաքննում է Մուսա Քեազիմ, Հալիմ եւ Ռիֆաթ էֆենտիներին եւ հիմնականում կանգ է առնում «Միութիւն եւ Առաջադիմութիւն» կուսակցութեան հետ նրանց ունեցած առնչութեան եւ ընդհանրապէս պատերազմի ընթացքում կուսակցութեան գործունէութեանը, պատերազմին մասնակցելու նախաձեռնութեան եւ գործադրուած չարաշահումների վրայ։ 6-րդ նիստում, լսւում է դատապաշտպան Ալի Ռեշատ պէյի ելոյթը, իսկ 7-րդ նիստում՝ ձայնը տրւում է դատապաշտպան Ալի Հայտար պէյին։ Նա «Միութիւն եւ Առաջադիմութիւն» կուսակցութեան գործունէութիւնը արդարացնելու նպատակով, կանգ է առնում կուսակցութիւնների կառուցուածքի եւ իրաւական կանոնների վրայ։ Այնուհետեւ ձգտում է արդարացնել Շէյխ ուլ-իսլամ Մուսա Քեազիմ էֆենտիին եւ Փոստ-հեռագրատան նախարար Հիւսէյն Հաշիմ պէյին։ Սակայն տարօրինակ է, որ նա իր ելոյթում ոչ մի խօսք չի ասում հայերի տեղահանութեան եւ կոտորածների մասին։ (Տե՛ս «Թաքվիմ-ի վեքայի», 26 Յունիս 1919 թ., էջ 195-203)։

106. «Թաքվիմ-ի վեքայի», 5 Յուլիս 1919 թ., թիւ 3604։

107. Նկատի ունի 1911-1912 թթ. իտալա-թուրքական պատերազմը, որի ընթացքում Թուրքիան կորցրեց Թրիպոլիտանիան ու Կիրենաիկան։

108. Նկատի ունի 1912-1913 թթ. պալքանեան պատերազմը, որն աւարտուեց Թուրքիայի պարտութեամբ։ Թուրքիան կորցրեց եւրոպական իր բոլոր տիրոյթները, բացառութեամբ՝ Ստամպուլի եւ Արեւելեան Թրակիայի։

109. Նկատի ունի երիտթուրքերի նախայեղափոխական շռայլ խոստումները։

110. Նկատի ունի 1913 թ. Յունուարի 23-ին «Միութիւն եւ Առաջադիմութիւն» կուսակցութեան կատարած յեղաշրջումը։ «Հիւրրիէթ վէ իթիլաֆ» («Ազատութիւն եւ համաձայնութիւն») կուսակ-

ցութեան կողմից կազմուած դահլիճը, որը գլխաւորում էր Քեամիլ փաշան, տապալուեց։

111. Նկատի ունի 7-րդ դատական նիստում դատապաշտպան՝ Ալի Հայտար պէյի արտասանած ճառը։

112. Նկատի ունի «Ազատութիւն եւ համաձայնութիւն» լիպերալ ընդդիմադիր կուսակցութիւնը, որը պաշտօնապէս կազմաւորուեց 1911 թ. Նոյեմբերի 21-ին։

113. Թալաաթը սպաննուեց ժողովրդական վրիժառու Սողոմոն Թեհլիրեանի ձեռքով 1921 թ. Մարտի 15-ին, Պերլինում։

114. Էնվերը սպանուեց 1922 թ. Օգոստոսի 4-ին Միջին Ասիայում, Կարմիր բանակի զօրամասերի հետ պասպաշների ընդհարման ժամանակ։

115. Ճեմալը սպաննուեց ժողովրդական վրիժառուներ՝ Պետրոս Տէր-Պօղոսեանի եւ Արտաշէս Գէորգեանի կողմից, 1922 թ. Յուլիսի 25-ին, Թիֆլիսում։

116. Դոկտ. Նազիմը կախաղան բարձրացուեց 1926 թ. Անգարայում, Քէ. Աթաթուրքի դէմ մահափորձ կազմակերպելու մեղադրանքով։

117. Դատավճիռը վաւերացուել է սուլթան Վահիտէտտինի կողմից 1919 թ. Յուլիսի 13-ին։ Տե՛ս Լեւոն Վարդան, նշ. աշխ., էջ 175։

ՄԱՍՆ ԵՐԿՐՈՐԴ

1. «Թաքվիմ-ի վեքայի», 21 Յունիս 1919 թ., N° 3586:

2. 1918 թ. Հոկտեմբերի 14-19-ը տեղի ունեցած «Միութիւն եւ Առաջադիմութիւն» կուսակցութեան վերջին համագումարում, ձայների մեծամասնութեամբ որոշուեց ծրագրի որոշ փոփոխութեամբ շարունակել կուսակցութեան գործունէութիւնը «Թեճետտիւտ» («Վերակազմեալ») անուան տակ։

3. Բառացի «ընկուզենու անտառ» Թաղամաս Կ. Պոլսում։

4. Գտնւում է Իզմիրի արեւելեան մասում։

5. Սելահէտտին, Աւնի եւ Հիւսէյն Ճեւտեդ պէյերի հարցաքննութեան նիւթերը չենք ընդգրկել, քանի որ դրանք հիմնականում առնչւում են առեւտրական չարաշահումների հետ։

6. Բառը վատ պատճէնաւորման պատճառով հնարաւոր չեղաւ ընթերցել։

7. Տե՛ս Առաջին Գլխին N° 110 ծանօթագրութիւնը

8. Այնուհետեւ խօսւում է շրջանային այն քարտուղարների եւ լիազօրների մասին, որոնց նկատմամբ յարուցուած ամբաստանութիւնը

լիովին չի հաստատում բերուած յանցանշաններով։ Դատախազը պահանջում է կարճել այդպիսիների դատաքննութիւնը։ Կարճւում է նաեւ դաշնակիցների կողմից Մալթա կղզի աքսորուած հետեւեալ պատասխանատու քարտուղարների դատաքննութիւնը. Բալուի պատասխանատու քարտուղար՝ Միտհատ պէյ, Գարահիսարի պատասխանատու քարտուղար՝ Աղաօղլու Ահմետ Աղաեւ, Սուարիի գայմագամութիւնից, Թոշակի անցած Մումթազ պէյ, Սինոպի պատասխանատու քարտուղար՝ Հասան Ֆեհմի պէյ, Սարուխանի պատասխանատու քարտուղար՝ Սապրի պէյ, Ստամպուլի պատասխանատու քարտուղար՝ Սելահէտտին Ճիմճոզ պէյ, Էրզրումի պատասխանատու քարտուղար՝ Հիւսէյն Թոսուն պէյ, Պրուսայի պատասխանատու քարտուղար՝ Ալի Ռիզա պէյ, Գոնիայի պատասխանատու քարտուղար՝ Ֆերիտ պէյ, Սիվասի պատասխանատու քարտուղար՝ Ղանի պէյ եւ Էնվեր էֆենտիի հայրը՝ Հաճի Ահմետ փաշա։

9. «Թաքվիմ-ի վեքայի», 23 Յունիս 1919 թ., N° 3589։

10. Ատրիանապոլիս։

11. Խօսքը 1911–1913 թթ. պալքանեան պատերազմի մասին է։

12. Նկատի ունի հայկական ազգային կուսակցութիւնները։

13. Անկասկած, խօսքը հայերի տեղահանութեան եւ կոտորածին վերաբերող գաղտնի հրամանի մասին է։

14. Նկատի ունի դաշնակիցների նաւատորմի յարձակումը Տարտանելի վրայ, որն սկսուեց 1915 թուականի Փետրուարի 25-ին, անգլիական ռազմական գերագոյն խորհրդի նախաձեռնութեամբ։ Այդ գործողութիւնը յաջողութիւն չունեցաւ եւ աւարտուեց դաշնակիցների պարտութեամբ։

15. Թեքիրտաղ։

16. Ապտուլ Ղանի պէյը ստում է։ Դատավճռում փաստերը լիովին հաստատում են նրա մեղսակցութիւնն ու կատարած յանցագործութիւնը։ Տե՛ս դատավճիռը։

17. Աֆիոն Գարահիսարը գտնւում է Էսկիշեհիրի հարաւային մասում, իսկ Գարահիսար-ի Շարքին կամ Շապին Գարահիսարը՝ Տրապիզոնի հարաւարեւմտեան մասում։

18. «Թաքվիմ-ի վեքայի», 28 Յունիս 1919 թ., N° 3596։

19. Լեռնաշղթայի եւ քաղաքի անուն։ Գտնւում է Պալքանեան թերակղզու հարաւ-արեւելեան մասում։

20. Istida — Բառացի նշանակում է արդարութեան հատուցման պահանջագիր։

21. Խօսքը թուրք գաղթականների մասին է։

22. Դատավարութեան նիւթերի 211–212 էջերը բացակայում են։

23. Ի՞նչ բողոքի մասին կարող էր խօսք լինել, քանի որ ոչ մի հայ չէր մնացել։

24. Մասնաճիւղային լիազօրներն ու պատասխանատու քարտուղարները։

25. «Թաքվիմ-ի վեքայի», 9 Յունուար 1920 թ., N° 3772։

26. Հասան Ֆեհմի պէյի, ինչպէս նաեւ դատավճռում նշուած միւս պատասխանատու քարտուղարների հարցաքննութեան վերաբերող նիւթերը չեն հրապարակուել։

27. Թերթի վատ պահպանման հետեւանքով (էջ 56) դատավճռի շարունակութիւնը հնարաւոր չեղաւ թարգմանել (սիւնակների վերեւի մասից եւ կողքից կան բաց թողնուած տողեր եւ բառեր)։ Թերթի անվնաս մնացած մասում հնարաւոր եղաւ թարգմանել հետեւեալը. «Քրէական օրէնսգրքի 170-րդ յօդուածի համաձայն, 45-րդ յօդուածի երկրորդ մասի հիման վրայ, Հասան Ֆեհմի եւ Միտհատ պէյերը դատապարտուում են 10 տարի ժամկէտով տաժանակիր աքսորի (կալանաւորման օրից հաշուած)։ Իսկ Աւնի պէյի համար քաղաքացիական քրէական օրէնսգրքի 203 յօդուածի համաձայն սահմանուում է 9 ամիս ժամկէտով բանտարկութիւն»։

Դատավճիռը ընդունուել է 1920 թուականի Յունուարի 8-ին եւ հաստատուած է նախագահի եւ անդամների ստորագրութիւններով։

ՄԱՍՆ ԵՐՐՈՐԴ

1. «Թաքվիմ-ի վեքայի», 8 Ապրիլ 1919 թ., թիւ 3617։ Ֆրանսերէն թարգմանութիւնը տե՛ս Jean-Marie Carzou, "Un génocide exemplaire, Arménie", 1915, Paris: Flammarion, 1975, p. 233-236. Արեւմտահայերէն թարգմանութիւնը հրատարակել է Գրիկէրը, տե՛ս Եոզղաթի հայասպանութեան վաւերագրական պատմութիւնը, Նիւ Եորք, 1980, էջ 297-304։ Գրիկէրի գրքում բերուած են նաեւ Եոզղաթի դատաքննութեանը վերաբերող այլ փաստաթղթեր եւս։

2. Գտնուում է Եոզղաթից ոչ հեռու՝ հարաւային մասում։

3. Նկատի ունի հայկական կուսակցութիւնները։

4. Նկատի ունի Եոզղաթի հայութեան ինքնապաշտպանական կռիւները։

5. Քեմալի մահավճիռը վաւերացուեց սուլթան Մեհմետ Վահիտէտտինի կողմից։ Նրան կախեցին Կ. Պոլսի Պայազետի հրապարակում, 1919 թուականի Ապրիլի 11-ին։

6. Թաքվիմ-ի վեքայի», 22 Մայիս 1919 թ. թիւ 3616։ Ռուսերէն թարգմանութիւնը տե՛ս «Հայերի ցեղասպանութիւնը Օսմանեան

կայսրութիւնում», էջ 236-242։ Ֆրանսերէն թարգմանութիւնը՝ Jean-Marie Carzou, նշ. աշխ., էջ 236-242։

7. Բնագրում բաց է թողնուած։

8. Բնագրում "baba evleri" — (բառացի՝ «հայրական տներ»)։ Այստեղ նկատի ունի տերվիշների օտարանոցները։ «Պապա էին կոչւում սուֆիզմի գաղափարախօսութեան առաւել յայտնի հետեւորդները։ Տերվիշները մենաստաններում 12 տարի 6 ամիս ապաշխարհելուց յետոյ ձեռք էին բերում «Պապա» տիտղոսը եւ ըստ հնարաւորութեան կարող էին «Թեքքէներ» (մենաստաններ) հիմնել (տե՛ս M. Z. Pakalin, Osmanli tarih deyimleri ve terimleri sözlugu, c. I, 2-ci basilis, 2-ci fasikül, Istanbul, 1971, s. 136)։

9. Ճեմալ Ազմիին եւ Պեհաէտտին Շաքիրին սպաննեցին 1922 թուականի Ապրիլի 17-ին, Պերլինում ժողովրդական վրիժառուներ՝ Արամ Երկանեանը եւ Արշաւիր Շիրակեանը։

10. Նայիլ պէյը կախաղան բարձրացուեց 1926 թուականին, Անգարայում։

11. Բառը ընթեռնելի չէ։

12. Բառը ընթեռնելի չէ։

13. Բառի սկիզբը ջնջուած է, հաւանական է, որ նախարարութիւն լինի bakanlik.

14. Թուրքիայում բոլոր հարկերը բաժանւում էին երկու հիմնական խմբի՝ շարիաթական հարկեր rusum-i seriye եւ սովորութային հարկեր rusum-i örfiye, tekalif-i örfiye: Շարիաթական հարկերի մէջ մտնում էին աշարը, խարաջը, զեքաթը եւ սրանց վրայ հիմնուած բազմատեսակ այլ հարկեր։ Սովորութային հարկերը նշանակւում էին սուլթանների յատուկ հրամաններով, երկրի բացառիկ կարիքների համար, յատկապէս պատերազմների ժամանակ։

15. «Թաքվիմ-ի վեքայի», 2 Մայիս 1919 թ., թիւ 3618։

16. Կ. Պոլսի արուարձաններից մէկը։ Գտնւում է Պոսֆորի եւրոպական ափին։ Բնակչութեան մեծ մասը եղել են յոյներ, հայեր եւ քրիստոնեայ այլ հպատակներ։

17. Բառը ջնջուած է։

18. Դատավճիռը ստորագրելով հանդերձ, Մուստաֆա փաշան յայտնել է այն կարծիքը, որ Ապտուլ Քերիմ եւ Ռեֆիկ պէյերը ազատ արձակուեն, այն պատճառաբանութեամբ, որ նրանցից առաջինը իբր կատարել է վերադասի հրամանը, իսկ երկրորդի կատարած գործարքը մեկնաբանել է ոչ որպէս քրէական յանցագործութիւն։

19. «Թաքվիմ-ի վեքայի», 13 Յունուար 1920 թ., թիւ 3771։ Ռուսերէն թարգմանութիւնը տե՛ս «Հայերի ցեղասպանութիւնը

Օսմանեան կայսրութիւնում»։ Ֆրանսերէն թարգմանութիւնը Jean-Marie Carzou, *նշ. աշխ.*, *էջ* 572–575։

20. *Գեներալ-լեյտենանտ Վեհիպ Մեհմետ* (1877–1940)։ 1916 *թըւականի Մարտին նշանակուեց կովկասեան ճակատի Երրորդ բանակի հրամանատար։*

21. *Բնագրում գրուած է «մսագործ»։*

22. *Սապուր Սամի պէյը իր բացատրագրում (Հարցաքննութեան թղթապանակ, էջ* 44), *նշել է, որ ինքը այս հեռագրի պատճէնը ուղարկել է Թալաաթին, բայց ոչ մի պատասխան չի ստացել (Տե՛ս «Թաքվիմ-ի վեքայի», թիւ* 3540։

23. *Տե՛ս թիւ* 9 *ծանօթագրութիւնը։*

٨ مایس سنه ٣٣٥ تاریخلی اراده سنیه حضرت پادشاهیه ایله احداث اولنان محکمه

دیوان حرب عرفی

محاکماتی نشر جریده سی

رئیس : لیوا مصطفی کاظم پاشا

اعضا : میرلوا ذکی پاشا ، میرلوا مصطفی پاشا ، میرلوا علی کاظم پاشا ، میرآلای رجب اردی بک

طربزون تهجیر وتقتیلی محاکمه سی

وجاقاً محاکمه اجرا ایدیلن مقتولرک اسامیسی : طربزونه متصرفی محمد علی بک ، طربزونه پولیس مدیری نوری بک ، طربزونه آجنه قومیسیونی رئیسی ، طربزونه ژاندارمه طابور قومانداری کاظم بک ، طربزونه اوتعبی تاری افندی ، طربزونه صحیه مدیری علی صائب بک

غیاباً محاکمه سی اجرا ایدیلن مقتولرک اسمی : طربزونه والیسی جمال عزمی بک

قرار صورتی

محاکمات جاریه وجمله طرفلرک ادعا وافادات ومدافعاتک استماعندن وبالجمله اوراق دعوانک سرایا مطالعه وتدقیقندن عسکری ایجاب کیفیت محاکمه اولندقده کرپ مقتولین ورکیل مدافعلری انکار تهمت وطلب برائت ایلمکده ایسه‌لرده احکام جلیه اسلاب ولوایح مدونه جنابانک اجرا واثبات تیقن السوم عناصر جنایاتی یکدیگرندن تفریق ایچون عائطه عرض وبیان ومالریک تأمین وحفظی مامانک خطر و حملدن وقایه سی کافه مأمورین دولتک الدم وطائفه‌دن بولندیغی حالده جرمیتلری طلب اولنان اشخاصدن اسبق طربزون والیسی جمال عزمی بک خفیاً تبلیغ ایجری اوامره توفیق حرکت وطربزون انحاء وثرل کاب مسئول قالمش کلده آلدیغی اوامر خلیه امتثالاً کندیسیه مشارکتده بولنمسندن طفولیت ایدوک ظاهراً تهجیر قانونی لدی ایفک و حفیظه اوامر جلیه خلیه موجبنجه اوجنایتلری تفتیش واثبات ایلمکاروزه لازم کان تحریاتی برارلندیروب برطاقم اختلال روبت وجرائم عسکریه اصابتندن وبونلرک شریک مساعی ایدیلیجک زاندارمه افرادندن تشکیل ایدکلری قانه مانطقری واسطه‌سیله لاجل التهجیر سوق ایتدیردکلری اسباب مدافعه‌دن عدم برائتلرینی ارتیلرلا شهردن ازالاتنجه هجری واتخاذ اولدقجه مخرب موادلرینه ذکر وبیان ایدیلدکدن بعد الطریق بنه اوطوره کیسه‌لردن یاب جیسدود چتلری معرفتیله اوزرلرنده بولنان اشیا نهب وغارت ایدکدن عسکره انواع مظالم ایله قتل وانسا ایتدیردکلری وجاجزه جنازلری وحتی حال سائره‌یه کوتوروب کذلک حیات وقوه‌دن واکثریتی ذوات بولنان ایاب واشیای سائره‌لردن ناشجریدر جونلرینک عسکریت عی نجاوز ایدکدن عسکره ماشیاً آیلرجه برقره سوردکلرنه دوجاسنده دیرودنوب بی تاب وتوان قالش ورجونلری آچلمدن وصوسزلقدن وسفال سفریدن ترک حیات ایتش اولدقلری سائره ارزنجان طریقیه حال بعیده‌یه سوق ایتدیردکلری وطرزونده آیلوبدیردقلری بر لدم نسوان ایله ٨١ اولرت و خسته خانه‌لره کوا صانلنه مقصدیله توزیع ایتدیردکلری ذکور وانات جوجقلری وحتی براکتمده صورتیله بعضاً مواقع سائره‌یه سوق ایدیلوب شکنده ماغره وبوغره سوق ایتدیردکلری دکزه آچیلدقدن وکوزدن نهان اولدقدن عسکره طرفلرنا ایفکلر جوقدیروب هو ایتدیردکلری وآنجق تفتیل وتهب وغارت لسلری طرزون شهری داخلنده وقوعه کتیرلش اولوب جان کاملا خارجنده وصاحب پرصورتده اجرا ایدلش اولدیغی بابون محاکمات صفحاتندن عیان اولمش وجهه مزبوره قانعت معروضه کلدکده مقتولین موسی الیهمدن وسومات مدیری محمد علی افندیک شاهت لدیه‌سی بولندیغی وال جمال عزمی بک امریله اموال متروکه ، تجومرات ، تکالیف حربیه ، انتالات عسکریه ، اجمالات حربیه لوجیستیقلرینه وعسکری نفوس مأمورلنه وکجوب جیفاتلرک ایسابورطلرق تدلیل ایچون لیو مأمورلنه و هلال احمر خسته خانه‌سی ناظر منشکنه داخل بولندیغندن وال موسی الیهک مقاصد احتراسکارانه‌سیله وقوعه کتیرلان اولان وه استعمالات وجوشسزلقلره خدمت ایتش ومقصد انسانیکارانه ایله تأسیس ایتش اولان مذکور خسته خانه‌ده کوا بر وظیفه رطب اوزال اولزره اوتی قاپنلرینه لیزلرینک اوراده و ایالق طاشرنده لاجل الحاجت طوبلاندیریلدقلری شوقدر بونک تزوج وباخدیت مقصدلریله خانه‌لرینه آلنان اولزوسنده بولنانلره صرفولمالری توزیع و تسلیم ایتمکلر اولمالی بکر وباخود صور سائره‌لرک دوچار صدمات وبربعدان اولمالرینه سبیت ویرمش و حال مذکوره کجرنلرلا پرآز وساده چیقماسی ومذکور خسته خانه‌ده ازاله بکر ایدلش اولمسی حقندکی شهادات خصوصیه

(٢٩١٦ نومرولی نامه دولت سرویسی)

Տրապիզոնի տեղահանութեան եւ կոտորածի դատավճռի անուանաթերթը. (օսմաներէն, արաբատառ թուրքերէն).
Takvim-i Vekayi, 22 Mayıs, 1335 *(22 Մայիս, 1919)* № 3616:

ՏԵՐՄԻՆՆԵՐԻ ԲԱՌԱՐԱՆ

Աշար — *Տասանորդի հարկ։*

Դաւթար — *Գրանցման մատեան։*

Զեքաթ — *Մզկիթի համար գանձուող հարկ։*

Թաքրիր — *Զեկուցագիր, կրօնական համայնքի առաջնորդների կողմից Բարձրագոյն Դռանը ուղղուած գրութիւն։*

Ժանտարմա — *Ոստիկանութիւն։*

Լիվա — *Վիլայէթի մէջ մտնող վարչական միաւոր։ Ղեկավարն էր մութասարրիֆը կամ՝ միրլիվան։*

Լիրա — *Դրամական միաւոր Թուրքիայում, հաւասար է 100 ղուրուշի։*

Խալիֆա — *Մուհամմէտի յաջորդն ու փոխարինողը, որը համարւում էր աշխարհի բոլոր մուսուլմանների իմամն ու շարիաթի հովանաւորողը։*

Խարաջ — *Գլխահարկ, հողային հարկ։ Տեքստում ոչ-մահմեդական հպատակներից զինուորական ծառայութեան փոխարէն գանձուող հարկ։*

Կազա — *Վարչական միաւոր, մտնում էր սանճաքի մէջ։*

Գայմագամ — *Նահիէի կառավարիչ։*

Գասապա — *Գիւղաքաղաք, աւան։*

Հաֆըզ — *Ղուրան կարդացող։*

Մէճլիս — *Պետական գործերի քննութեան եւ որոշման համար գումարուած ժողով։*

Մէճլիս-ի Մեպուսան — *Պատգամաւորների ժողով, պառլամենտ։*

Միրլիվա — *Սանճաքի կամ լիվայի կառավարիչ, գեներալ-մայոր։*

Մուխթար — *Գիւղական տանուտէր. թաղային ռէս, աւագ։*

Միւֆթի — *Մահմեդական կրօնական աստիճանաւոր. կրօնապետ։ Շարիաթական սկզբունքների համաձայն՝ ֆեթվա տուող անձ։*

Մութասարրիֆ — *Սանճաքի կառավարիչ, որն ունէր քաղաքացիական եւ զինուորական իշխանութիւն։ Մութասարրիֆի աստիճան էին ունենում նաեւ վիլայէթի կառավարիչները։*

Նահիէ — *Գաւառակ, սանճաքի վարչական միաւոր։*

Շեյխ ուլ-իսլամ — *Օսմանեան կայսրութեան մէջ շարիաթական գործերին հսկող մահմետական առաջնորդ, որը պետութեան մէջ մեծ վեզիրից յետոյ ամենամեծ պաշտօնն է։*

Զաւուշ — *Ենթասպայ։*

Զեթէ — *Հրոսակ։*

Զիֆթլիք — *Ագարակ. մեծ տնտեսութիւն, որն ունէր ընդարձակ տարածութեամբ հողեր, արօտավայրեր, անտառներ, շինութիւններ։*

Ճիհատ — *Սրբազան պատերազմ։*

Սանճաք — *Վիլայէթի մէջ մտնող վարչական միաւոր, մարզ. կառավարիչն էր մութասարրիֆը. նաեւ սանճաքպէյ, միրլիվա։*

Վալի — *Վիլայէթի կառավարիչ։*

Վիլայէթ — *Նահանգ. Օսմանեան կայսրութիւնում, վարչական ամենամեծ միաւոր։*

Ֆեթվա — *Մահմետական հոգեւոր առաջնորդի վճիռ։*

THE GENOCIDE OF ARMENIANS ACCORDING TO THE DOCUMENTS OF THE TRIAL OF THE YOUNG TURKS

SUMMARY

Tragic fate fell upon Western Armenians in the years of World War I. In those difficult years, Western Armenians faced ruthless extermination due to the barbarous genocide policy of the Young Turk government.

Merciless mass deportations and massacres of Armenians from towns and villages in Western Armenia, as well as from localities with Armenian populations in Asia Minor had entirely nothing to do with the measures being taken for military reasons, as the question of annihilating the Armenian people had been worked out and settled beforehand by the Central Committee of the "Ittihad ve Terakki" (Union and Progress) Party. To solve the Armenian problem, they had chosen the total extermination of Western Armenians. The war presented a suitable occasion for them to annihilate Armenians once and for all as well as to settle accounts with other peoples so that the Empire became purely Turkish.

Soon the news of mass deportations and atrocious massacres of Western Armenians spread all over the world, stirring up a violent wrath and protest everywhere. Representatives of progressive mankind and organizations condemned the policy

of barbarous genocide carried out by the Young Turks and demanded putting an immediate end to it, to return the deported Armenians to their homes. On May 24, 1915, the governments of Great Britain, France and Russia jointly warned the Sublime Porte that they regarded persecutions and massacres of Armenians in Turkey as an appalling action against humanity and civilization, and its perpetrators would be held strictly responsible. Unfortunately, this initiative likewise did not have any results. The Young Turk government continued widely and mercilessly to carry out its adopted policy, the victim of which became more than one and a half million Armenians.

When World War I came to an end, the broad masses of the people all over the world demanded the Turkish criminals to bear the responsibility of their organizing, Western Armenians slaughter. Outstanding political figures, men of science and cultural workers of different nationalities in condemning articles and publications raised their voices of protest.

Yielding to this strong wave of protest and aspiring to detach from the discredited Young Turk government, the new cabinet formed just after the Moudros Armistice of 1918, with the leadership of Ahmed Izzet Pasha, adopted a resolution to institute legal proceedings against the Young Turk government leaders, as well as the members of the Central Committee of the Union and Progress Party for drawing the Ottoman Empire into war and organizing the deportation and massacre of Armenians. Subsequently, upon the decree of December 16, 1918, inquiry courts were formed (whose chairman was Mazhar Bey, the former vali of Ankara), which began to collect accusatory evidences: concerning massacres of Western Armenians cryptographed telegrams, official documents, instructions and orders, also eye-witness accounts. Provinces

in the Ottoman Empire were divided into ten investigatory districts, appointing for each prosecutors, examining judges and secretaries. At the same time the press promoted extensive work to reveal the criminals and bring them to trial.

A number of Young Turk ministers and party leaders, district executive secretaries, commissioners, governors, servicemen and other officials were arrested. However, immediate initiators and organizers of Armenian massacres had time to flee, taking refuge in Germany.

First, second, third extraordinary court martials were formed in Istanbul on January 8, 1919. Though the law made provisions to try criminals at places where the crime had been committed, however, on February 5, 1919, the extraordinary court martial of Istanbul, at its first session of the process about the Yozghat deportation and massacre criminals, adopted a special resolution to try the accused in Istanbul.

On March 8, 1919, by a special edict of Sultan Mehmed VI Vahiddeddin (1918-1922), the Young Turk party leaders and ministers were submitted to investigation at the extraordinary court martial of Istanbul.

The trial of the Young Turk government leaders and members of the Central Committee of the Union and Progress Party began in Istanbul, on April 28, 1919 and went on intermittently till June 26. During the sessions that took place in May, those subjected to examination were basically the members of the Central Committee of the Union and Progress Party, Grand Vezir Said Halim Pasha and several ministers. But under inexplicable circumstances, on May 28, seventy-seven persons were exiled by the English headquarters from prison to Malta, and the trial ceased. It recommenced in June with new accusatory testimonies. At the seven sessions of the process in June, state officials Husseyin Hashim Bey, the minister for Communications, Rifat Bey, the Senate President,

also (Sheikh-ul-Islams), Esad, Hayri and Musa Kiazim effendis, the ecclesiastic leaders of the country came up for trial. The sentence was passed on July 5, 1919. During these trials eleven party figures and statesmen of high standing were accused by default, and twenty present at the proceedings.

According to the trial procedure, Major-General Mustafa Nazim Pasha, Chairman of the Committee, first certified the identity of the accused, also the presence of their advocates. At the same time he declared that at extraordinary court martials the law did not make provisions for the presence of advocates during the trial for the defense of those accused. Then Shefik Bey, the judicial secretary, read the bill of indictment. At the same time, on the basis of item 372 of the criminal code, the chief prosecutor Mustafa Nazmi Pasha expressed approval to try those absents by default. In view of the advocates' objections both at the beginning and during the course of the trial, that "judicial questions connected with ministers and other high-ranking state officials are subject to discussions at the Supreme Court, not at extraordinary court martials". Mustafa Nazmi Pasha pointed out in his speech that crimes specified in the bill of indictment had occurred not by virtue of office, but by their becoming participants in the crimes carried out by the Central Committee of the Party and its plenums.

Documents – cryptographed telegrams and letters brought in the first and successive accusatory acts testify that deportations and massacres of Western Armenians had not been military or disciplinary measures of limited and local character: they were aforethought and implemented absolutely on the initiative of the Party Central Committee, on the instructions and secret orders of a special centre. In the bills of indictment and during investigatory sessions, the main stress was put upon the massacre of Western Armenians.

Lieutenant-General Vehib Pasha, the former commander

of the Third Army at the Caucasian front, stated in his testimony at the trial that the question of exterminating Armenians and plundering their property was resolved by the Central Committee of the Union and Progress Party, and that Behaeddin Shakir Bey was the organizer and leader of bloodthirsty bands, about the Third Army.

"Teshkilati Mahsuse" (Special organization), executing the massacre of Western Armenians, an organization put into life on special resolution of the Central Committee of the Union and Progress Party members, was submitted to examination at the second, fifth and sixth sessions of the trial. The trial revealed that Midhat Shukri Bey, the Chief President of the Central Committee of the Party and its members: Dr. Behaeddin Shakir, Dr. Nazim, Riza Bey, Atif Bey, the deputy for Ankara, Shukri Bey, minister of Education, Halil, President of the Chamber of Deputies, Aziz Bey, the Security Supervisor, and Djevad, the commandant of Istanbul, participated in the criminal activity of "Teshkilati Mahsuse", Talaat, Minister of the Interior, being the head of these criminals.

Two secret organizations worked under the name of "Teshkilati Mahsuse", one military, set up on the order of the War Ministry, with Suleiman Askeri Bey as leader. With the purpose of breeding strife against Russia among the Caucasian Moslems, this organization had the task of recruiting people familiar with the territory of the Caucasus and speaking languages of the native populations, and sending them secretly in groups over the border.

The Ministry of the Interior had immediate disposal of the second "Teshkilati Mahsuse" which implemented the deportation and massacre of Western Armenians, with Behaeddin Shakir at the head.

Investigation materials ascertain that important documents concerning the Central Committee of the Union and

Progress Party and "Teshkilati Mahsuse" were for the most part destroyed. Mainly, Dr. Nazim was guilty of this. He carried off the party archives to conceal the dealings and the perpetrated crimes of the Committee. However, with all prudence (instructions were often given orally) a fair amount of telegrams, letters and written material fell into the hands of the extraordinary court martial that indisputably confirmed the collaboration among the Central Committee of the Union and Progress Party, the Ministry of the Interior and "Teshkilati Mahsuse" during the deportation and massacre of Armenians and showed the intense activity of district executive secretaries in recruiting criminals for "Teshkilati Mahsuse".

The court found the officials guilty of being well informed about massacres and other violences, and not taking any practical step to avert them. On the contrary, their abstention promoted to the continuation of the tragedy. For instance, Sheikh-ul-Islam Musa Kiazim effendi, who could have had a great influence in hampering ferocities as an ecclesiastic leader, did not take any essential step.

In the sentence passed on July 5, 1919, stress was put upon the details of massacres of Western Armenians and plunder of their property, facts were pointed out about violations of the constitution by Party Central Committee and government leaders. One of the important evidences was the question of participation in World War I without the Medjlis resolution, as well as abuses and speculation in trade and especially in provisional matters.

According to the first point under item 45 of the civil criminal code, the court pronounced a death sentence for Talaat, Enver, Djemal and Nazim, and by the second point under item 45 and the last point under item 55, Djavid, Mustafa Sheref and Musa Kiazim were condemned to exile for a period of 15 years.

Trial sessions of the Union and Progress Party district executive secretaries and other officials took place on June 21, 23 and, 28, 1919. The sentence was pronounced very late, on January 8, 1920, by the committee of the First extraordinary court martial in Istanbul. Thirty-six persons were prosecuted according to the data of the bills of indictment and the sentence.

In the bill of indictment of June 19, 1919, it was pointed out that district executive secretaries, in the course of their activity, upon the oral and written secret orders received from the Party Central Committee and the government, had illegally intervened in government matters and participated in the crimes committed by Talaat Pasha and his associates.

During the examination of executive secretaries, the main stress was likewise put upon the question of deportation and massacres of Western Armenians, plunder of their property. To alleviate their guilt, the executive secretary of Edirne and other defendants tried to find ways of justifying themselves, that deportation was carried out according to the law and governmental orders. Mustafa Nazim Pasha, the committee chairman, refuting their false testimony, revealed that deportation was a mere pretext to execute the extermination of Armenians.

In the sentence passed on January 8, 1920, it is noted that some of the executive secretaries and commissioners mentioned above contributed to the initiative of the Central Committee and organized the massacre of Armenians and plunder of their property by means of the murderers and other criminals recruited in their branches.

During the above-mentioned trials the extraordinary court martial in Istanbul also made a thorough investigation of the immediate executors of deportation and massacres in the provinces. By default for their perpetrated grave crimes, the

court also condemned to death a number of executive secretaries and others to imprisonment for ten and more years.

The records and resolutions of the proceedings were issued in small circulation in the supplements of the Turkish official newspaper "Takvimi Vekayi" (in Arabic script). All the titlepages had the following heading: "The record of the trial at extraordinary court martial formed upon His Majesty Padishah's imperial order of March 8, 1335 (1919)".

Materials of the trial of the Central Committee of the Union and Progress Party members, the Young Turk government leaders, party district executive secretaries and officials that are connected with the deportation and massacres of Western Armenians are fully translated from the original into Armenian and were published with commentaries and introduction by the author in 1988 for the first time. (The book has been translated and published in English and Arabic languages as well). The translation does not include materials concerning the Party conferences, disciplinary questions, as well as abuses in provisional and trade matters.

Of course, the trial materials are not complete, as not all the examination records had been published in the supplements of "Takvimi Vekayi", Documentary materials (telegrams, instructions, preliminary examination records of the accused, eye-witness accounts), referring to the deportation and massacre of Western Armenians had been concentrated in 293 paper-files of the extraordinary court martial. Naturally, its complete publication would have more thoroughly revealed the brutalities of the Young Turks.

The trial materials give a definite view of the organization and execution of the deportation and massacres of Western Armenians. However, the process did not, in fact solve and couldn't solve the retribution for one and a half million martyred Armenian blood and the recompensation of

material losses of the property abandoned which reached billions. The Armenian people became deprived of its homeland, Western Armenia.

Judges, of course, not in all cases demonstrated the necessary consistency. Many of them, being connected with the Young Turks, were often inclined not to delve deeply into the accomplished facts and not to adopt strict resolutions. Derelictions were made in the course of the trial. For instance, the process over district executive secretaries took place in June 1919, while the sentence procrastinating, was confirmed in January 1920. If there does not arise any doubt in condemning to death the defendants brought to trial by default, unwarranted forbearance was shown in inflicting punishment upon those present.

Facts show that Ittihadists had set up insidious traps to pervert, the natural course of the trial. They especially endeavored to influence the members of the court martial, to alleviate the guilt of the accused. It must be noted that the policy of persecuting and annihilating the debris of Western Armenians, continued during the nationalistic movement of Kemalists in 1919-1922. Turkish armies organized new massacres in Western and Eastern Armenia, as well as in some parts of Turkey during which 250.000 Armenians were martyred.

In our day, the Turkish ruling circles and historians continue to persistently reject the genocide of Western Armenians and on the whole, they aim at falsifying the history of the Armenian people with various means and anti-scientific publications. In their opinion, Armenian-Turkish collisions were evoked by the crafty design of big states. They consider the trial of Young Turk leaders that took place in Istanbul in 1919, the result of an inter-party enmity between Ittihadists and Ittilafists.

Notwithstanding the ill-intentioned attempts of Turkish

falsificators, world public opinion condemned and condemns the crime committed against the Armenian people. Naturally after the end of the war, the trial of Young Turk leaders was a great occurrence from the point of view of revealing the persecutions and genocide of Western Armenians to all mankind.

ՀԵՂԻՆԱԿԻ ՀՐԱՏԱՐԱԿԱԾ ԱՇԽԱՏՈՒԹԻՒՆՆԵՐԸ

1) Քեաթիպ Չելեպիի «Ճիհան-Նիման» եւ «Ֆեզլեքէն», որպէս աղբիւր Հայաստանի Պատմութեան (17-րդ դար), Երեւան, 1973, ռուսերէն:

2) Վաւերագրական նիւթեր արեւմտահայերի մասին (ՀՀ ԳԱ հասարակական գիտութիւնների գիտական տեղեկատուութեան բաժին), Երեւան, 1983, № 2(56).

3) Հայերի ցեղասպանութիւնը ըստ երիտթուրքերի դատավարութեան փաստաթղթերի, Երեւան, 1988, 1989:

4) Հայերի ցեղասպանութիւնը Օսմանեան կայսրութիւնում, Լոս Անճելըս, 1996:

5) Թուրքական վաւերագրերը Հայաստանի եւ հայերի մասին (16/19-րդ դարեր), Երեւան, 1999:

6) Հայկական հարցը եւ Մեծ Եղեռնը 1876-2000, ժամանակագրութիւն, երեւան, 2000:

7) Ցեղասպանութիւն եւ գոյատեւման պայքար, Երեւան, 2000:

8) Հայերի ցեղասպանութիւնը թուրք քաղաքական գործիչների յուշագրութիւններում, Երեւան, 2001:

9) Թուրքական վաւերագրական նիւթեր՝ Օսմանեան կայսրութեան ոչ-մահմետական ժողովուրդների մասին (1839-1915 թթ.), Երեւան, 2002:

10) Պայքար յանուն արդարութեան, հատ. Ա. Երեւան, 2003:

11) Պայքար յանուն արդարութեան, հատ. Բ., Երեւան, 2004:

Ունի մօտ 300 յօդուածներ, լոյս տեսած Երեւանի ակադեմական պարբերականներում եւ Լոս Անճելըսի հայ մամուլում:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Պատմական նշանակութիւն ունեցող դատավարութիւն,
որի վճիռներն անբեկանելի են
(Փրոֆ. Նիքոլայ Յովհաննէսեան) I
Երկու Խօսք 7
Առաջաբան 11
ՄԱՍՆ ԱՌԱՋԻՆ
Երիտթուրքական կառավարութեան ղեկավարների
եւ «Միութիւն եւ Առաջադիմութիւն»
կուսակցութեան կենտրոնական կոմիտէի անդամների
դատավարութիւնը 45
ՄԱՍՆ ԵՐԿՐՈՐԴ
«Միութիւն եւ Առաջադիմութիւն» կուսակցութեան
շրջանային պատասխանատու քարտուղարների
ու պաշտօնեաների դատավարութիւնը 183
ՄԱՍՆ ԵՐՐՈՐԴ
Եոզղաթի, Տրապիզոնի, Պէօյիւք Տէրէի
եւ Խարբերդի տեղահանութեան եւ
կոտորածների դատավարութիւնները 231
ԾԱՆՕԹԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ 257
Տերմինների բառարան 275
Անգլերէն ամփոփում 277

ՆԿԱՐ ԵՒ ՓԱՍՏԱԹՂԹԵՐ

Սուլթան Մեհմետ 6-րդ Վաէիտէէտին 44
Խարբերդի: (Մամուրեթ ուլ Ազիզ) դատավճռին պատճէն .182
Եոզղաթի դատավճռին պատճէն 230
Տրապիզոնի դատավճռին պատճէն 274

ԱԻԵՏԻՍ ՓԱՓԱԶԵԱՆ

ՀԱՅԵՐԻ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԻՒՆԸ ԸՍՏ ԵՐԻՏԹՈՒՐՔԵՐԻ ԴԱՏԱՎԱՐՈՒԹԵԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ

Գրքի կազմն ու համակարգչային շարուածքը՝
M&N GRAPHICS
(Անթուան Գարամանլեան)

Հրատարակութեան պատասխանատու՝
«ՆՈՐ ՀԱՅԱՍՏԱՆ» օրաթերթի
հրատարակիչ եւ գլխաւոր խմբագիր՝
Վահան Վահանեան

Տպարան Արաքս, Փասատինա, Գալիֆորնիա
Կազմատուն՝ V.A. Bindery, Փասատինա, Գալիֆորնիա

ՀԵՂԻՆԱԿԻ ՄԱՍԻՆ

A II 90887

Աւետիս Փափազեանը ծնուել է 1931 թ. Սիրիայի Լաթաքիա քաղաքում: Սկզբնական կրթութիւնը ստացել է տեղի Ս. Յակոբեանց Ազգային երկսեռ վարժարանում եւ այնուհետեւ՝ Պէյրութի Ս. Նշան դպրոցում:

1946 թ. ընտանեօք հանդերձ ներգաղթել է Հայաստան եւ հաստատուել քաղաքամայր Երեւանում: Բարձրագոյն ուսումը ստացել է 1955-1960 թթ. Երեւանի Պետական համալսարանի Ռոմանօ-գերմանական բաժնում:

1961 թ. ընդունուել է Հայաստանի Գիտութիւնների Ակադեմիայի Արեւելագիտութեան ինստիտուտի թուրքական բաժինը եւ բարեյաջող յանձնելով ասպիրանտուրայի քննութիւնները մեկնել է Մոսկուա, Միութենական Գիտութիւնների Ակադեմիայի Արեւելագիտութեան ինստիտուտ, ուր 3 տարուայ ուսումնառութիւնից յետոյ պաշտպանել է գիտական աւարտաճառը՝ «Քեաթիբ Չելեպիի ճիհան նիւման եւ Ֆեզլեքէն որպէս աղբիւր Հայաստանի պատմութեան» 17-րդ դար խորագրով եւ ձեռք բերել միջնադարի Թուրքիայի պատմութեան աղբիւրագէտ-պատմաբանի մասնագիտութիւնը: Այնուհետեւ 32 տարի շարունակաբար աշխատել է Հայաստանի Գիտութիւնների Ակադեմիայի Արեւելագիտութեան ինստիտուտում: 1988-92 թթ. ղեկավարել է ինստիտուտի աղբիւրագիտական բաժինը:

1968-75 թթ. Երեւանի Պետական համալսարանի Արեւելագիտութեան բաժնում դասաւանդել է Թուրքիայի պատմութիւնն ու օսմաներէն լեզուն (արաբատառ թուրքերէն):

Իր հրատարակութիւնների մեծ մասը նուիրուած է Հայաստանի եւ Հայ ժողովրդի մասին միջնադարի թուրք պատմագիրների հաղորդած նիւթերի ուսումնասիրութեանը, ինչպէս նաեւ Հայոց Ցեղասպանութեան հարցերին: Օսմաներէնի գիտակ աղբիւրագէտ պատմաբանը 1983 թուականից սկսել է զբաղուել հայերի ցեղասպանութեան հարցերով:

Գիտական զեկուցումներով հանդէս է եկել միջազգային մի շարք գիտաժողովներում: Փրոֆ. Աւետիս Փափազեանն այսօր էլ բուռն կերպով շարունակում է զբաղուել միջնադարի թուրքական աղբիւրների, արխիւային նիւթերի, ինչպէս նաեւ հայկական հարցին եւ Մեծ Եղեռնին վերաբերող նիւթերի ուսումնասիրութեամբ: